ԼԵՋՎԻ ԵՎ ՈՃԻ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր
Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս է. Բ. ԱՂԱՅԱՆԸ, բանասիրական գիտությունների թեկնածուներ Ս. Ա. ԳԱԼՍՏՅԱՆԸ, Ա. Գ. ԲԱԴԻԿՅԱՆԸ, Ն. Ե. ՍԱՐԳՍՅԱՆԸ, Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆԸ, Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆԸ, Ն. Մ. ՍԻՄՈՆՅԱՆԸ և Բ. Կ. ՂԱՋԱՐՅԱՆԸ

Ժողովածուում քննվում են ժամանակակից հայերենի բարդ նախադասությունների որոշ տիպերի հոմանիշ կառույցները, վիճակագրական բնութագրության են ենթարկվում հայերենի նախամասնիկավոր բառերը, բացահայտվում են հայերենի հնչերանգի՝ որպես շարակարգային կապակցելիության միջոցի յուրահատկությունները, ինչպես նաև փորձառական ուսյալների համաձայն նորովի են մեկնաբանվում և դասակարգվում հնչերանգային հաղորդակցման տիպերը ժամանակակից հայերենում։ Ուսումնասիրված են նաև IV—V դարի հնդիկ բանաստեղծ Կալիդասայի «Ամպ-ավետաբեր» պոեմի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները։

Հասցեագրվում է ժամանակակից հայոց լեզվի, ինչպես նաև լեզվի պատմության հարցերով գրաղվողներին։

4602010000
Ի ————————72—84
703 (02)—85

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1985

Լ. Գ. ԹԵԼՑԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՐՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Քերականական հոմանիշության երևույթը, որի մասնավոր դրսևորումն է շարահյուսական հոմանիշությունը, համեմատաբար ավելի ուշ է սկսել զբաղեցնել լեզվաբանների ուշադրությունը։ Ռուս քերականագիտության մեջ «քերականական հոմանիշ» տերմինի առաջին գործածությունը և այդ երևույթի մասին առաջին դիտական դիտողությունները կապվում են Ա. Մ. Պեշկովսկու՝ 1927 թվականին հրատարակված մի հոդվածի հետ[1]։ Նշված լեզվական երևույթը ավելի քիչ է ուսումնասիրված հայագիտության մեջ։ Հայոց լեզվի մեջ շարահյուսական, և ընդհանրապես քերականական հոմանիշությանը նվիրված առաջին ուսումնասիրությունը Ն. Պառնասյանի «Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում» աշխատությունն է, որը հրապարակ է իջել 1970 թվականին և որով փաստորեն սկզբնավորվում է քերականական հոմանիշության գիտական քննությունը մեղանում։ Շարահյուսական հոմանիշությանը վերաբերող բոլոր դիտողություններն ու հիշատակությունները, որ հանդիպում են այդ աշխատությանը նախորդած հայագիտական գրականության մեջ, բերվում և քննվում են նույն այդ աշխատության՝ հարցի պատմությանը նվիրված բաժնում, ուստի և այստեղ հատուկ քննության չեն ենթարկվում։ Հարկ է նշել միայն, որ բոլոր այդ դիտողությունները սփռված են քերականական այլ հարցերի նվիրված աշխատություններում, մեծ մասամբ թռուցիկ նշումներ են միայն, և, իբրև այդպիսիք, այնքան էլ առատ նյութ չեն տալիս ուսումնասիրողին։

Ն. Ա. Պառնասյանի նշված աշխատության մեջ մանրամասն քննության են արժանացել պարզ նախադասությունների ոլորտում գործող շարահյուսական համանիշների երկու մեծ խումբ՝ 1. նախադասու-

բյան կառուցվածքի և բնույթի, և 2. նախադասության անդամների բերականական արտահայտության հետ կապված համանիշներ[2]։ *Առաջին խմբի մեջ դիտարկված են միակազմ և երկկազմ, թերի և լրիվ նախադասությունների հոմանիշ կառուցվածքները, դրական և ժխտական կառուցվածքի հոմանիշ պարզ նախադասությունները, ինչպես նաև պատմողական և հարցական, հարցական և հրամայական, հրամայական և պատմողական բնույթի հոմանիշ նախադասությունները։ Երկրորդ խմբի մեջ միավորվում են այն պարզ նախադասությունները, որոնց միջև հոմանիշական կապը հիմնված է որևէ անդամի (ստորոգյալի, ենթակայի, գոյականական և բայական անդամների լրացումների) արտահայտության ձևերի հոմանիշության վրա։ Այսպիսի դեպքերում առաջանում է ամբողջ նախադասությունների կառուցվածքների փոփոխություն, այնպես որ հոմանիշությունն այստեղ վերագրվում է ոչ թե առանձին անդամների, այլ ամբողջական նախադասություններին։*

Քանի որ Ն. Պառնասյանի այս աշխատության մեջ շարահյուսական հոմանիշության երևույթը դիտարկված է պարզ նախադասությունների համակարգում, ուստի տարբեր կարգի նախադասությունների միջև հոմանիշական կապի դրսևորման կոնկրետ առանձնահատկությունների քննության վերլուծությունը դուրս է մնում մեր հիմնական խնդրի շրջանակներից։ Մեզ համար առավել կարևորը հեղինակի՝ շարահյուսական հոմանիշության երևույթի ըմբռնումն է, ուսումնասիրության տեսական հայեցակետը, որը կարող է կիրառելի լինել նաև շարահյուսական այլ միավորների միջև հոմանիշական կապերի քննության ընթացքում։

Ընդհանուր գծերով բնութագրելով հոմանիշության լեզվական երևույթի էությունը, հեղինակն ամենից առաջ մատնացույց է անում բառական և քերականական համանիշների տարբերությունը։ «Ի տարբերություն բառական համանիշների, քերականական համանիշները կապված են ոչ թե առարկաների, երևույթների, հատկանիշների իմաստների հետ, այլ դրանց՝ իրականության մեջ գոյություն ունեցող և տվյալ լեզվի ու հասարակական գիտակցության մեջ արտահայտված կապերի, հարաբերությունների հետ, դրանց դրսևորման տարբեր միջոցների հետ։ Այլ կերպ ասած՝ Ֆերականական համանիշները միևնույն ֆերականական իմաստների, ֆերականական հարաբերությունների դրսևորումն են տարբեր ֆերականական միջոցներով, որոնք ունեն իմաստային կամ ոճական երբեքերանգներ, և որոնց հիմքում ընկած են միևնույն առարկայական հարաբերությունները»[3]։ Տարբերակելով միմյանցից նաև «համանիշություն» և «նույնանիշություն» հասկացությունները, ճշտվում են լեզվական տարբեր միավորների միջև համանիշական կամ նույնանիշական կապերի դրսևորման յուրահատկությունները։ Համանիշ լեզվական միավորների

միջև իմաստային կամ ոճական նրբերանգային տարբերությունը պարտադիր է, մինչդեռ նույնանիշները «իրենց իմաստով, ինչպես նաև արտահայտած իմաստների ծավալով լրիվ համընկնում են»[4]։ Պարզվում է, որ լեզվի բառային և շարահյուսական մակարդակների միավորներին առավել հատուկ են համանիշական կապեր, մինչդեռ ձևաբանության մեջ հիմնականում առկա է քերականական ձևույթների նույնանիշությունը։ Այս երևույթը պայմանավորված է հենց լեզվական միավորի բնույթով։ Միևնույն քերականական իմաստն արտահայտող ձևույթները նրբիմաստային կամ ոճական տարբերություններ ի հայտ բերել չեն կարող, քանի որ նրանք տարբերվում են միայն իրենց ղուգորդելիությամբ (համմտ. սեռական ի, ու, ոջ... նույնանիշ վերջավորությունները)։ Մինչդեռ միևնույն իմաստն արտահայտող տարբեր բառերի կամ միևնույն իմաստային հարաբերությունն արտահայտող շարահյուսական տարբեր կառուցների գոյությունը լեզվի մեջ արդարացվում է նրանով, որ տվյալ լեզվով հաղորդակցվողներին հնարավորություն է տալիս ընտրություն կատարել դրանց միջև՝ հաղորդակցման նպատակներին համապատասխան իմաստային կամ ոճական երանգներ արտահայտելու համար։ Հենց այս իմաստով էլ պետք է հասկանալ այն դրույթը, թե հոմանիշ միավորների առատությունը տվյալ լեզվի ճոխության ու ճկունության ապացույցներից մեկն է։

Երկու նախադասությունների միջև հոմանիշական կապի առկայության ամենակարևոր պայմանն այն է, որ նրանք «քերականական տարբեր միջոցներով արտահայտում են առարկաների, երևույթների միջև եղած նույն հարաբերությունները»[5]։ Պարզ նախադասությունների համակարգում հնարավոր են կառուցվածքի երկու կարգի հոմանիշական փոփոխություններ։ Առաջին դեպքում նախադասության կառուցվածքը հիմնական փոփոխության չի ենթարկվում, և հոմանիշ նախադասությունները տարբերվում են միայն որևէ անդամի քերականական ձևավորման յուրահատկություններով (օր. գիրքը դրված է սեղանին— գիրքը դրված է սեղանի վրա և այլն), իսկ երկրորդ դեպքում հոմանիշ նախադասությունները ներկայացնում են տարբեր կառուցվածքային տիպեր (օր. ներգործական և կրավորական կառույցները՝ ես ջարդեցի սեղանը և սեղանը ջարդվեց իմ կողմից)։

Շարահյուսական հոմանիշների մյուս կարևոր առանձնահատկությունը Պառնասյանի աշխատության մեջ համարվում է համեմատվող նախադասությունների հիմնական բառակազմերի նույնականությունը։ Այս սկզբունքը ճիշտ և կիրառելի է շարահյուսական մակարդակի բոլոր միավորների՝ բառակապակցության, պարզ և բարդ նախադասությունների դեպքում, քանի որ, ի տարբերություն բառերի, սրանք օժտված են

շարահյուսական կառուցվածքներով։ Բարդ նախադասությունների համանիշ կառույցների բառային միավորների նույնականությունը որոշ դեպքերում կարող է խախտվել՝ դրանցից մեկի մեջ եղանակավորող բառերի, հարաբերյալների կամ որոշակի մակբայների հավելյալ առկայությամբ։

Իբրև շարահյուսական հոմանիշներին բնորոշ յուրահատկություն նշվում է սրանց միջոցով խոսողի տարբեր վերաբերմունքի դրսևորման հնարավորությունն իր հաղորդածի նկատմամբ, որն էլ փաստորեն արտացոլվում է հոմանիշության հիմքը կազմող իմաստային և ոճական նրբերանգների մեջ։ Այսպես, օրինակ, հարցական բնույթի նախադասության միջոցով դրսևորվում է խոսողի հուզական վերաբերմունքն իր հաղորդածի նկատմամբ (Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի, Քան թե կսկիծը որդեկորույս մոր), իսկ նրան հոմանիշ պատմողական նախադասության մեջ հուզական գունավորումը ակնհայտորեն թույլ է (Ոչինչ չկա ավելի ծանր ու խղճալի...)։ Խոսելով շարահյուսական հոմանիշների՝ մեկը մյուսով փոխարինելու հնարավորության մասին, աշխատության հեղինակը իրավացիորեն հակադրվում է լեզվաբանական գրականության մեջ հաճախ հանդիպող այն տեսակետին, ըստ որի փոխադարձ փոխարինելիությունը համարվում է շարահյուսական հոմանիշների որոշման չափանիշ. Հոմանիշ նախադասություններն, անշուշտ, խոսքի մեջ կարող են իրար փոխարինել, սակայն այդ հանգամանքը նրանց հոմանիշության հիմունքը չէ, այլ հետևանքը։ «Թե՛ բառական և թե՛ հատկապես շարահյուսական մակարդակում մեկ համանիշը մյուսով փոխարինելը հաճախ իր հետքերում է ոճական, հուզաարտահայտչական, իսկ հաճախ նաև նուրբ իմաստային տարբերություններ, մի բան, որ կարող է անդրադառնալ հաղորդման նպատակի, խոսքի վրա»[6]։ Շարահյուսական հոմանիշների որոշման առավել հուսալի միջոց է համարվում փոխակերպությունը։ Սա կառուցվածքային-քերականական այն փոփոխությունն է, «որի ընթացքում շարահյուսական հարաբերությունների հիմքում ընկած առարկայական հարաբերությունները մնում են նույնը՝ ձեռք բերելով միայն ոճական, նրբերանգային տարբերություններ»[7]։ Այս դրույթը ևս, մեր կարծիքով, ընդհանրական արժեք ունի և կարող է օգտակար լինել շարահյուսական մակարդակի բոլոր միավորների քննության ընթացքում։ Հեղինակի՝ վերոբերյալ ելակետային դատողությունները հանրագումարված են շարահյուսական համանիշների՝ նրա տված սահմանման մեջ. «Շարահյուսական համանիշները նույն հիմնական բառակազմն ունեցող այն բառակապակցություններ, նախադասություններ և ավելի մեծ շարահյուսական կառուցվածքներն են, որոնք տարբեր եղանակներով արտահայտում են բնության երևույթների, առարկաների միջև գոյություն ունեցող նույն հարաբերություններն ու կապերը, հավասարարժեք են իրար

և միաժամանակ դրսևորում են խոսողի տարբեր վերաբերմունքը, հարաբերությունը հաղորդվածի նկատմամբ»[8]։ Այս սահմանումը, ինչպես տեսնում ենք, տարածվում է շարահյուսական բոլոր միավորների վրա, և, բնականաբար, կարող է ուղեցույց լինել նաև բարդ նախադասությունների հոմանիշության ուսումնասիրության ընթացքում։

Ինչպես արդեն նշել ենք, բարդ նախադասությունների հոմանիշության հարցը հայ քերականագիտության մեջ հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել։ Սակայն բարդ նախադասության շարահյուսությանը նվիրված աշխատություններում կարելի է հանդիպել որոշ ակնարկների հատկապես շաղկապավոր և անշաղկապ նախադասությունների հոմանիշության վերաբերյալ։ Դրանք բնական են այն իմաստով, որ հարաբերակից անշաղկապ և շաղկապավոր բարդ նախադասությունների արտահայտած իրական և քերականական հարաբերությունների նույնությունը ակնհայտ է։ Անշաղկապ և շաղկապավոր, երբեմն նաև նույն եղանակով կապակցված բարդ նախադասությունների հոմանիշական առնչությունների մասին ակնարկների կարելի է հանդիպել Ն. Պառնասյանի «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (Երևան, 1961) և «Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում» (Լեզվի և ոճի հարցեր, հ. II, Երևան 1964), Վ. Դ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն» (հտ. Բ, Երևան, 1964), Ա. Հ. Պապոյանի «Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում» (Երևան, 1968), Բ. Հ. Վերդյանի «Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն» (Երևան, 1970) և այլ աշխատություններում։ Խոսելով միավորական հարաբերություն արտահայտող բարդ համադասական նախադասությունների անշաղկապ և շաղկապավոր կապակցության մասին, Ս. Գ. Աբրահամյանը, օրինակ, նշում է, որ դրանց քերականական դերն այնքան մոտ է լինում, որ «երբեմն նույնիսկ կարելի է շաղկապավոր կապակցությունը դարձնել անշաղկապ և ընդհակառակը»[9]։ Որ այս կարգի նախադասությունները նա համարում է շարահյուսական համանիշներ, երևում է հետագա շարադրանքից. «կան դեպքեր, երբ շաղկապական և շարահարական կապակցությունները հեշտությամբ չեն կարող ըմբռնվել որպես շարահյուսական համանիշներ»[10]։ Բարդ նախադասությունների հոմանիշության խնդիրները շոշափված են նաև Ռ. Մ. Ավետիսյանի «Քերականական հոմանիշությունը Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում» թեկնածուական դիսերտացիայի մեջ[11]։ Հեղինակը Թումանյանի ստեղծագործության ընձեռած լեզվական նյութի հիման վրա քննում է տարբեր շաղկապներով ձևավորված՝ պայմանի, ժամանակի ու նպատակի նշանակություններ արտահայտող բարդ նախադասությունների հոմանշային առանձնա-

հատկությունները, նշում է տարբեր կառույցների միջև առկա իմաստային և ոճական նրբերանգներ։ Ստորադասական շաղկապավոր կառույցները դիտարկելիս հեղինակը հոմանիշական կապ է տեսնում դրանց երկրորդական նախադասությունների միջև միայն։ Հոմանիշության տեսանկյունից քննված են նաև ստորադասական անշաղկապ և շաղկապավոր, ինչպես նաև համադասական կառուցվածքի բարդ նախադասությունները Թումանյանի լեզվում։

* * *

Մեր նպատակներից դուրս է, անշուշտ, ռուս քերականագիտության մեջ շարահյուսական հոմանիշության երևույթի ուսումնասիրության պատմությունը ներկայացնելը։ Այդ բանը մասամբ արված է Ն. Ա. Պառնասյանի՝ վերը քննված աշխատության մեջ։ Մենք այստեղ կանդրադառնանք մի քանի աշխատանքների միայն, որոնք կամ անմիջականորեն վերաբերում են բարդ նախադասությունների հոմանիշության խնդրին, կամ էլ շարահյուսական հոմանիշության երևույթի տեսական մեկնաբանության առումով կարևոր են թվում մեզ։

Շարահյուսական հոմանիշության ըմբռնման և հոմանիշների առանձնացման չափանիշների ճշգրտման տեսակետից բավական հետաքրքրական է Ի. Ի. Կովտունովայի «Շարահյուսական հոմանիշության մասին» ընդարձակ հոդվածը։ Հեղինակն այն համոզումն ունի, որ «հոմանիշությունը շարահյուսական միավորների յուրաքանչյուր տիպի սահմաններում, սկզբունքորեն, ունի իր առանձնահատկությունը։ Յուրաքանչյուր կոնկրետ բնագավառում շարահյուսական հոմանիշության շատ հարցերի ոչ միայն լուծումը, այլև հարցադրումն ինքնին պահանջում է համապատասխան նյութի խոր և մանրազնին քննություն»[12]։

Հոդվածը մեզ համար հետաքրքրություն է ներկայացնում նրանով, որ հեղինակն իր որոշ կարևոր հետևությունների հանգել է բարդ նախադասությունների նյութի քննությամբ։ Մասնավորապես այդ բնագավառի առանձնահատկություններն են հաշվառված հոդվածի համար առանցքային նշանակություն ունեցող երեք հարցերի քննության ընթացքում, որոնք ձևակերպվում են այսպես. «1. Ի՞նչն է թույլ տալիս հոմանիշներ անվանել շարահյուսական միավորների շարքը. բովանդակության ընդհանրությունը, թե՞ քերականական նշանակության ընդհանրությունը։ 2. Շարահյուսական հոմանիշներ համարե՞լ արդյոք շարահյուսական կառուցվածքների մասերը, թե՞ (միայն) ամբողջական շարահյուսական կառույցները։ 3. Շարահյուսական հոմանիշներ համարել կառուցվածքով իրարից տարբերվող շարահյուսական միավորները, թե՞ անպայման նման կառուցվածք ունեցողները»[13]։ Քանի որ մեր սույն աշխատանքի

տեսական սկզբունքները սահմանելիս անհրաժեշտաբար պետք է պատասխաններ վերը նշված հարցերին, ուստի նպատակահարմար ենք գտնում մի փոքր ավելի հանգամանորեն կանգ առնել հեղինակի տեսակետների վերլուծության վրա։

Առաջին հարցի պատասխանը կարող է ճշգրտություն մտցնել շարահյուսական հոմանիշների ըմբռնման, ինչպես նաև դրանց ընդգրկման սահմանների որոշման հարցերում։ Շարահյուսական հոմանիշության նախորդ ուսումնասիրողները, ըստ Կովտունովայի, այս հարցում եղել են անհետևողական, իրենց գործնական ուսումնասիրություններում իբրև հոմանիշության հիմք ընդունել են մերթ շարահյուսական միավորների արտահայտած առարկայական բովանդակությունը, մերթ դրանց քերականական իմաստները։ Դրությունն ավելի է խճճվել, երբ որպես շարահյուսական հոմանիշների որոշման չափանիշ ընդունվել է կառուցվածքների փոխադարձ փոխարինելիության հատկանիշը։ Չէ՞ որ տեքստի մեջ միմյանց կարող են փոխարինել ոչ միայն քերականական իմաստներով ու դրանց արտահայտության միջոցներով, այլև բառային կազմով տարբերվող շարահյուսական միավորներ։ Այս ամենը հաշվի առնելով, հեղինակը որոշակի հստակությամբ դնում է շարահյուսական հոմանիշության խիստ քերականական շրջանակների մեջ քննելու անհրաժեշտության խնդիրը։ Հակառակ դեպքում, ըստ Կովտունովայի, «այն կդադարի գոյություն ունենալ իբրև ինքնուրույն պրոբլեմ և իբրև լեզվաբանական պրոբլեմ ու կլուծվի տեքստի իմաստային և ոճաբանական վերլուծության մեջ»[14]։ Այս պահանջը սերտորեն կապվում է քերականական հոմանիշների՝ հեղինակի կողմից ընդունվող մյուս առանձնահատկության հետ։ Եթե քերականական հոմանիշների հիմքում ընկած է նրանց քերականական իմաստների ընդհանրությունը, ապա դրանք միմյանցից տարբերող հատկանիշը ևս պետք է լինի քերականական իմաստի որևէ երբեմնագ։ «Շարահյուսական հոմանիշությունն ուսումնասիրողի առջև կանգնում է մի խնդիր՝ քննել քերականական նշանակության ամենանուրբ երանգները և յուրաքանչյուր առանձին դեպքում պարզել նրա վրա ազդող գործոնները»[15]։ Այս մոտեցումը հեղինակին թույլ չի տալիս շարահյուսական հոմանիշներ համարել մինչև այդ այդպիսիք դիտված շարահյուսական այնպիսի կառուցվածքներ, ինչպես, ասենք, միևնույն քերականական նշանակությունն արտահայտող բարդ ստորադասական և համապատասխան դերբայական դարձվածով պարզ նախադասությունները (Համմո՝ Նա դասի չեկավ, որովհետև ճիվաղ էր և նա դասի չեկավ ճիվաղ լինելու պատճառով)։ Սրանց ընդհանրությունն, իրոք, քերականական միևնույն իմաստն (տվյալ դեպքում՝ պատճառահետևանքային) արտահայտելն է, սակայն դրանց տարբերությունը, ըստ հեղինակի, ոչ մի կապ

չունի քերականական իմաստի հետ։ Այդ երկու կառույցները լիովին նույնական են և՛ իրենց արտահայտած քերականական իմաստով, և՛ ոճական-կիրառական յուրահատկություններով։ Տարբերությունը սոսկ կառուցվածքային է, չի շոշափում դրանց հիմքում ընկած ընդհանուր քերականական իմաստը, հետևաբար նշված կառույցները շարահյուսական հոմանիշներ համարվել չեն կարող։ Այս եզրահանգումը, ըստ երևույթին, բխում է նաև հեղինակի մյուս ելակետային դրույթից, ըստ որի հոմանիշ շարահյուսական միավորները պետք է կառուցվածքներով անպայման նման (զուգահեռ) լինեն իրար (այսինքն՝ բացառվում է պարզ և բարդ նախադասությունների հոմանիշությունը)։ Կառուցվածքային մյուս բոլոր տարրերի զուգահեռության դեպքում հոմանիշ նախադասությունները տարբերվում են միայն տվյալ քերականական նշանակության արտահայտման եղանակի կամ միջոցի ընտրությամբ։ Այսպես, պատճառային նշանակությամբ բարդ նախադասությունները կարող են հոմանիշ համարվել, եթե դրանց տարբերությունը միայն պատճառահետևանքային նշանակությունը դրսևորող լեզվական միջոցներն են. օրինակ՝

Նա տուն չգնաց, որովհետև անձրև էր գալիս։
Նա տուն չգնաց, քանի որ անձրև էր գալիս։
Նա տուն չգնաց. անձրև էր գալիս։

Բավական է սակայն փոխել որևէ այլ հատկանիշ, ասենք, երկրորդական մասի ստորոգյալի ժամանակը, և տվյալ նախադասությունը դուրս է մնում հոմանիշների տվյալ շարքից՝ մտնելով հոմանիշների մի այլ շարք։ Այսպես՝

Նա տուն չգնաց, որովհետև անձրև է գալիս։
Նա տուն չգնաց, քանի որ անձրև է գալիս և այլն։

Քանի որ նախադասության կառուցվածքը կարող է ենթարկվել քերականական անվերջ փոփոխությունների, հետևաբար «հոմանիշական շարքերի քանակը տեսականորեն անվերջ է, սակայն յուրաքանչյուր շարքի ներսում հոմանիշների քանակը կարող է ճշգրիտ որոշվել»[16]։

Շարահյուսական հոմանիշների մեկնաբանությունը բացառապես շարահյուսական միավորների քերականական նշանակությունների հետ կապելը, անշուշտ, հոդվածի առանցքային խնդիրն է և ամենից արժեքավոր դրույթը։ Քերականական նշանակության (սա հոդվածում սահմանվում է իբրև «հարաբերության տիպ, որն իր արտահայտման համար ունի քերականական հատուկ ցուցիչ»[17]) և առարկայական բովանդակության խիստ տարբերակում չունենալու հետևանքով շարահյուսական հոմանիշներ կարող են դիտվել քերականական իմաստով բոլորովին տար-

բեր կառուցներ, իսկ այս դեպքում դրեթե անհնար է հոմանիշների առանձնացման չափանիշներ գտնել և որոշել դրանց ընդգրկման սահմանները։ Այդ դեպքում հոմանիշ կարող են համարվել, օրինակ, այսպիսի բարդ նախադասություններ.

Ես նրան տեսա, երբ մտնում էր սրճարան։
Ես տեսա, որ նա մտնում էր սրճարան և այլն։

Հետևելով վերը նշված գիտական սկզբունքին, հեղինակը, սակայն, ծայրահեղության է հասնում հատկապես հոմանիշներին կառուցվածքային լիակատար զուգահեռություն վերագրելու հարցում։ Նման մոտեցմամբ ակնհայտորեն սահմանափակվում է շարահյուսական կառույցների միջև հոմանիշական կապեր դիտելու հնարավորությունը։ Միևնույն քերականական նշանակությունն արտահայտող պարզ և բարդ նախադասությունները, մեր կարծիքով, շարահյուսական հոմանիշներ են. եթե իմաստային տեսակետից սրանց միջև իրոք դժվար է նրբերանգային տարբերություններ նշել, ապա ոճական-կիրառական առումով սրանք ակնհայտորեն տարբերվում են։ Հարցի ավելի տրամաբանական լուծում է առաջարկում Լ. Յու. Մաքսիմովը՝ տարբերակելով շարահյուսական հոմանիշների 2 խումբ՝ ա) միևնույն մակարդակին վերաբերող և բ) տարամակարդակ հոմանիշներ[18]։ Պարզ և բարդ հոմանիշ նախադասությունները այս մոտեցմամբ մտնում են հոմանիշների երկրորդ խմբի մեջ։

Կառուցվածքային զուգահեռության հատկանիշի բացարձակացման վկայություն է Ի. Ի. Կովտունովայի այն դրույթը, թե հռետորական հարցում պարունակող պատճառային բարդ անշաղկապ նախադասությունները հոմանիշներ ունենալ չեն կարող[19]։ Մեզ թվում է, որ տվյալ դեպքում անշաղկապ նախադասությունը կարող է հոմանիշական զույգ կազմել շաղկապավոր այն նախադասության հետ, որի՝ հռետորական հարցում արտահայտող մասը փոխարինված է համապատասխան պատմողական հոմանիշով. օրինակ՝ Մի նախատեք նրան, մի՞թե նա ընդունակ է վատ արարքի և Մի նախատեք նրան, որովհետև նա ընդունակ չէ վատ արարքի։ Նշված հոդվածի կարևոր դրույթներից մեկն էլ այն է, որ շարահյուսական հոմանիշներ պետք է համարվեն ամբողջական շարահյուսական կառույցները և ոչ թե դրանց առանձին մասերը։ Այս կապակցությամբ հեղինակը քննում է հոմանիշ բարդ նախադասությունների կազմում գործառող շաղկապների հարաբերության հարցը (հմմտ., օրինակ, որովհետև և քանի որ պատճառի շաղկապները)։ Սրանք շարահյուսական հոմանիշներ համարվել չեն կարող, որովհետև բառային միավորներ են, սակայն բառային հոմանիշներ նույնպես չեն կարող կոչվել, որովհետև

դրանց նշանակությունները ի հայտ են գալիս շարահյուսական մակարդակում։ «Նրանց (շաղկապների և կապերի— Լ. Թ.) ծագումը, զարգացումը և գործառությունը ամենասերտ և անքակտելի կերպով կապված են կառույցների կյանքի հետ, այնպես որ շաղկապների և կապերի առանձին ուսումնասիրությունը նշանակությունների ու սրանց նրբերանգների տեսակետից անհնար է և անիմաստ»[20]։ Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ հոմանիշ կառույցների մեջ իբրև դրանց բաղադրիչներ հանդես եկող բառերն ու բառաձևերը, ինչպես նաև բարդ նախադասություններ ձևավորող շաղկապները ոչ թե հոմանիշ են, այլ հնարավորություն են տալիս ստեղծել հոմանիշ կառույցներ՝ իրենց շարահյուսական հատկանիշների ընդհանրության հիման վրա[21]։ Շաղկապների ոճական առանձնահատկությունները ևս պայմանավորված են շարահյուսական այն կառույցների առանձնահատկություններով, որոնցում նրանք գործառում են։

Ինչպես տեսնում ենք, Ի. Ի. Կովտունովայի տեսական եզրակացությունների շատերը անմիջաբար առնչվում են բարդ նախադասությունների հոմանիշության խնդրին։ Այդ հարցին է նվիրված նաև Ա. Ֆ. Միխեևի «Շարահյուսական հոմանիշությունը պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների համակարգում ժամանակակից ռուսաց գրական լեզվում»[22] աշխատությունը։ Այստեղ առաջադրված է շարահյուսական հոմանիշության բավական լայն ըմբռնում։ Հեղինակը հնարավոր է համարում և՛ պարզ ու բարդ նախադասությունների, և՛ տարբեր կառուցվածքներ ունեցող բարդ նախադասությունների հոմանիշությունը։ Պատճառահետևանքային նշանակությամբ բարդ նախադասությունների նյութի քննությունը հեղինակին հանգեցնում է այն հետևության, որ «նույն կամ մերձավոր իմաստներ արտահայտող շարահյուսական կառույցների փոխհարաբերությունների համակարգում պետք է առանձնացնել փոխհարաբերությունների երեք հիմնական տեսակ. զուգահեռություն, հոմանիշություն (նեղ իմաստով (синонимизм) և հարակցություն (смежность)»[23]։ Առաջին երկուսը համարվում են շարահյուսական հոմանիշության մասնավոր դրսևորումները, իսկ հարակցությունը՝ «հոմանիշությանն ուղեկցող երևույթ»[24]։ Զուգահեռությունը «միևնույն շարահյուսական կարգի» շրջանակներում գործառող կառույցների, այսինքն՝ միևնույն մակարդակին և կառուցվածքային նույն տիպին վերաբերող միավորների միջև առկա հոմանիշությունն է (բառակապակցություններ, պարզ նախադասություններ, բարդ համադասական նախադասություններ, բարդ ստորադասական նախադասություններ և այլն)։ Նեղ իմաստով հոմանիշություն առկա է արդեն տարբեր մակարդակի ու կառուցվածքային տիպերի միավորների միջև (պարզ և բարդ

նախադասությունների, բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների, բարդ նախադասության անշաղկապ և շաղկապավոր տեսակների և այլն)։ Հարակցության դեպքում նույն իրական հարաբերությունները արտահայտող միավորների միջև առկա է քերականական տարբերություն։ Բարդ նախադասությունների մեջ հարակցության հարաբերությամբ են կապված, օրինակ, հետևանքի և ձևի կամ չափի երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունները (օր. Նա այնպես էր երգում, որ դահլիճը հիացմունքից fարացել էր և նա լավ էր երգում, այնպես որ դահլիճը հիացմունքից fարացել էր)։

Ընդունելով շարահյուսական տարբեր կառույցների միջև հոմանիշական հարաբերությունների հնարավորությունը, հեղինակը դրանք միավորում է մեկ հոմանիշական դաշտի մեջ՝ ըստ նրանց քերականական իմաստների ընդհանրության։ Սրանց հետ հարակցության հարաբերությամբ կապվող նախադասությունները, միանալով հոմանիշներին, կազմում են մի ավելի մեծ դաշտ, որ հեղինակն անվանում է նախադասության համասեռ դաշտ։ Աշխատության հիմնական նպատակն է ճշտել պատճառահետևանքային հարաբերությունների դրսևորման բովանդակային ընդհանրությամբ միավորվող կառույցների համասեռ դաշտը։

Բարդ նախադասությունների հոմանիշության քննությանն է նվիրված նաև Ն. Ի. Ֆորմանովսկայայի «Բարդ նախադասության ոճաբանությունը»[25] աշխատության մի ընդարձակ բաժինը։

Ինչպես վերնագրից էլ երևում է, բարդ նախադասություններն այստեղ քննվում են ոճաբանության դիրքերից։ Հոմանիշ բարդ նախադասություններն էլ, բնականաբար, առաջին հերթին դիտված են իրենց ոճական նկարագրի և գործառական առանձնահատկությունների տեսանկյունից։ Սա, անշուշտ, բարդ նախադասությունների հոմանիշության ուսումնասիրության շատ կարևոր հայեցակետերից մեկն է և արժանի է ամենալուրջ ուշադրության։ Միաժամանակ պետք է նշել, որ աշխատության մեջ կարևոր տեղ է հատկացված հոմանիշության քերականական կողմի վերհանմանը, և դա բնական է։ Հոմանիշական զույգեր կազմող բարդ նախադասությունները յուրաքանչյուր դեպքում հանդես են բերում կամ իմաստային, կամ ոճական, իսկ հաճախ էլ միաժամանակ և՛ իմաստային, և՛ ոճական նուրբ տարբերություններ, այնպես որ երևույթը գնահատելիս այդ երկու կողմերն էլ հավասարապես պետք է նկատի առնվեն։

Բարդ նախադասությունների կոնկրետ տիպերի հոմանիշական կապերի քննությունից առաջ հեղինակը մի ընդհանուր տեսական ակնարկով անդրադառնում է բարդ նախադասության նշանակության, այդ նշանակության նրբերանգների, հոմանիշական դաշտի և նրա դերիշխող անդամի առանձնացման հարցերին։

Բարդ նախադասության քերականական իմաստը (կամ քերականական նշանակությունը), ինչպես նշվում է դրքում, ստացվում է արդեն իսկ սեփական քերականական նշանակություններն ունեցող միավորների փոխգործողությամբ[26]։ Իմաստի տեսակետից բարդ նախադասությունն այսպիսով, համատեղում է երկու կարգի երևույթներ՝ յուրաքանչյուր բաղադրիչի մեջ արտահայտված նշանակություններ և այդ բաղադրիչների կապի հիման վրա ծագող ընդհանուր նշանակություն։ Բարդ նախադասության համար կարևորը վերջինն է, հենց դա էլ ձևավորում է բարդ նախադասության իմաստային նկարագիրը։ Յուրաքանչյուր առանձին տիպային նշանակության սահմաններում կարելի է դիտել նշանակության նրբերանգներ, որոնք ներմուծվում են հարաբերության արտահայտող քերականական միջոցի, հատկապես շաղկապների փոփոխությամբ[27]։ Համանիշ բարդ նախադասությունների քննության ընթացքում ամենակարևորը հենց այդ նրբերանգների նկարագրությունն է։ Թեև նյութի գործնական քննության ընթացքում հեղինակը համանիշների և այսպես կոչված տարբերակների (նույնանիշների) առանձնացում չի կատարում, համենայն դեպս ներածության մեջ տալիս է դրանք միմյանցից տարբերելու իր սկզբունքը։ «Համանիշը, որպես կանոն, ազդարարում է այս կամ այն կապող միջոցի կողմից բարդ նախադասություն մուծվող նշանակության նրբերանգը։ Տարբերակը հնարավորություն չի տալիս դիտել նշանակության հստակ նրբերանգը։ Սրանք մեծ մասամբ հենց նշանակության միևնույն նրբերանգի՝ քերականական լրացուցիչ միջոցներով (օրինակ՝ ոչ կառուցվածքային հարաբերական դերանվամբ), դինամիկ ցուցանիշներով (օր. մասերի շարադասությամբ) ստացվող տարատեսակներն են»[28]։

Հեղինակը, մեր կարծիքով, ճիշտ է բնութագրում համանիշների շարքի գերիշխող անդամը։ «Բարդ նախադասությունների համանիշական շարքում, որը կարելի է պատկերացնել իբրև տիպային նշանակության յուրօրինակ հարացույց, կա գերիշխող նախադասություն։ Այն տվյալ նշանակությունն արտահայտում է. ա) առավել տիպական և ընդհանրական (առանց նրբերանգների) կերպով, բ) առավել հաճախ, գ) ոճականորեն չեզոք»[29]։

Այս աշխատության կարևոր արժանիքներից մեկն այն է, որ նրանում համակարգված քննության են արժանացել ռուսերենի բարդ նախադասության կառուցվածքաիմաստային բոլոր տեսակների հոմանիշական խմբերը։ Սրանք նախ տրվում են առանձին աղյուսակների տեսքով, ապա յուրաքանչյուր անդամի համար նշվում են իմաստային և ոճական առանձնահատկություններ։

Համանիշությունն իրրև լեզվական երևույթ անմիջաբար առնչվում է լեզվական միավորների ձևի և բովանդակության, այլ կերպ ասած՝ արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության խնդրին։ Բառային մակարդակում, օրինակ, համանիշ ընդունված է համարել այն միավորները (բառերը), որոնք, ունենալով լեզվական տարբեր ձևավորում, բովանդակությամբ մոտ են կամ նույնական և, միաժամանակ, հանդես են բերում ոճական կամ գործառական յուրահատկություններ[30]։ Ինքնին հասկանալի է, որ ինչպես բառային, այնպես էլ քերականական համանիշության քննությունը հիմնվում է ամենից առաջ լեզվական տվյալ միավորի համար «ձև» և «բովանդակություն» հասկացությունների ըմբռնման վրա։ Այս տեսակետից բառային համանիշության քննության միասնական սկզբունք մշակելը ավելի հեշտ է այն առումով, որ բառի իմաստային կողմն ավելի «շոշափելի» է և մանավանդ այն պատճառով, որ բառային իմաստաբանության հարցերը լեզվաբանության մեջ ավելի հիմնավոր ու հանգամանալից ուսումնասիրության են ենթարկվել։ Դեռևս Ֆ. դը Սոսյուրը, խոսելով լեզվական նշանակման էության մասին, գտնում էր, որ նշանի բովանդակային կողմը որևէ նյութական բան չէ, այլ՝ մտածական, գիտակցական էություն։ Արտաքին աշխարհի առարկաներն ու երևույթները արտացոլվում են մարդկային գիտակցության մեջ և վերջինիս միջնորդությամբ ստանում լեզվական որոշակի ձևավորում։ Իրրև ամենից բնորոշ և ամենից կարևոր լեզվական նշան, բառը ավելի տիպականորեն է ցուցադրում այս օրինաչափությունը։ Եվ բառային համանիշության քննության ժամանակ ուսումնասիրողին անհրաժեշտ է համանիշների առանձնացման հեշտ չափանիշներ ընտրել՝ բառային միավորի նշանակության դենոտատային (իրական-առարկայական) և սիգնիֆիկատիվ (մտածական-հասկացական) կողմերի և դրանց փոխհարաբերության բազմակողմանի հաշվառմամբ։

Վիճակն առավել բարդ է շարահյուսական մակարդակի միավորների և հատկապես բարդ նախադասությունների համանիշության քննության դիպքում։ Բանն այն է, որ լեզվի շարահյուսական մակարդակի հիմնական միավորը՝ նախադասությունը, որոշակի կառուցվածք է, բառերի ու բառաձևերի որոշակի հարաբերություն։ Ընդունված է ասել, որ բառը լեզվական-անվանողական միավոր է, իսկ նախադասությունը՝ լեզվահաղորդակցային։ Այս տեսակետից նախադասության իմաստային կողմն ավելի բարդ երևույթ է, որովհետև այն բաղադրվում է իմաստակիր ավելի պարզ միավորներից՝ բառերից։

Բնականաբար ավելի դժվար է բարդ նախադասության իմաստային կողմի (նշանակության)[31] բացահայտման խնդիրը, քանի որ սա արդեն բաղադրված է որոշակի նշանակություններով օժտված շարահյուսական միավորներից՝ պարզ նախադասություններից։ Հաշվի առնելով նախադասության իմաստային կողմի պատկերացման կարևորությունը շարահյուսական հոմանիշության նվիրված որևէ ուսումնասիրության համար, անհրաժեշտ ենք համարում նախ անդրադառնալ նախադասության իմաստի մեկնաբանությանը լեզվաբանական որոշ աշխատություններում և մեզ համար ելնելով բարդ նախադասության ձևի և նշանակության ըմբռնումը։

Լեզվաբանության մեջ հանդես եկած տրամաբանական ուղղության կողմից նախադասությունը համարվել է տրամաբանական դատողության լեզվական ձևավորում։ Նախադասության իմաստային կողմի մեկնաբանության հարցում տրամաբանական մոտեցումը հետագայում ավելի խորացվել է ու մանրամասնվել։ Հետագա ուսումնասիրություններում, սակայն, ընդունվել է, որ դատողության և նախադասության կառուցվածքների միջև հաճախ ուղղագիծ համապատասխանություն չկա, տրամաբանական սուբյեկտն ու պրեդիկատը միշտ չէ, որ համապատասխանում են լեզվական ենթակային և ստորոգյալին, և ընդհանրապես նախադասության լեզվական կազմն ավելի հարուստ է, քան համապատասխան դատողության տրամաբանական կազմը։

Վերջին ժամանակներս լեզվի և մտածողության կապի յուրահատկությունների բացահայտման դիրքերից խոսվում է ավելի հաճախ նախադասության լեզվական և իմաստային կառուցվածքների փոխհարաբերության մասին։ Նախադասությունը համարելով լեզվական յուրահատուկ նշան, նրա բովանդակային նկարագրի մեջ դիտում են երկու կողմ՝ դենոտատային և սիգնիֆիկատիվ։ Նախադասության՝ իբրև լեզվական նշանի ըմբռնման, նրա նշանակային կողմի բաղադրիչների առանձնացման մասին հետաքրքրական են մասնավորապես Ի. Պ. Սուսովի դիտողությունները։ Լեզվական բոլոր նշանները, այդ թվում և նախադասությունները, ըստ Ի. Պ. Սուսովի, ծառայում են արտալեզվական փաստերի արտացոլմանը, ըստ որում վերջիններս կարող են ունենալ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ բնույթ[32]։ Լեզվական նշանը, ինչպես ընդունված է, ունի երկու կողմ՝ նշանակիչ և նշանակելի։ «Նշանակիչը կազմում է նշանի միայն մեկ, այն է՝ նյութական կողմը։ Նշանի մյուս կողմը նշանակությունն է»[33], լեզվական ցանկացած նշանի նշանակությունը բնութագրելով իբրև լեզվական նշանակիչի և արտալեզվական նշանակելիի հարաբերություն, հեղինակն առանձնացնում է դենոտատը և սիգնիֆիկատը, առաջինը

բնութագրելով իբրև «նշանակելի օբյեկտիվ շարքում (в объективном ряду)» իսկ երկրորդը՝ «նշանակելի սուբյեկտիվ շարքում» կամ դիտակցության ոլորտում։ Այս հիմունքով էլ դենոտատիվ նշանակությունը բնութագրվում է իբրև «նշանակիչի հարաբերությունը դենոտատին, այսինքն օբյեկտիվորեն տրված առանձին առարկայի, հատկանշի, հարաբերության, որևէ ընդհանուր հատկանիշով միավորված առարկաների բազմության, իրադրության՝ իբրև արտաքին աշխարհի բարդ, տարբեր տիպի տարրեր ընդգրկող դրվագի և այլն», մինչդեռ սիգնիֆիկատիվ նշանակությունը «նշանակիչի հարաբերությունն է սիգնիֆիկատին, այսինքն՝ արտաքին որևէ փաստի արտացոլմանը գիտակցության մեջ»[34]։ Գիտակցության ակտիվ դերով է պայմանավորված այն հանգամանքը, որ սիգնիֆիկատիվ նշանակությունը հաճախ հարուստ է լինում դենոտատիվ նշանակությունից, այսինքն իր մեջ պարունակում է հավելյալ այնպիսի հատկանիշներ, որպիսիք են ստորոգումը, եղանակավորությունը, խոսողի զգացական-կամային վերաբերմունքը խոսքի նկատմամբ։ Ընդ որում եթե պարզ նշանների՝ բառերի համար իմաստային այսպիսի կառուցվածքը առկա է ոչ բոլոր դեպքերում, ապա նախադասության համար դա անհրաժեշտ օրինաչափություն է։

«Բանն այն է, որ նախադասության սիգնիֆիկատի մեջ ընդգրկվում է հաղորդակցման տեսակետից կարևոր բաղադրիչների ավելի մեծ քանակ, քան նրանով (նախադասությամբ— Լ. Բ.) արտահայտված դենոտատի, այսինքն՝ որևէ եզակի էմպիրիկ իրադրության մեջ»[35]։ Մեզ համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում վերոբերյալ դատողություններն ընդհանրացնող այն դրույթը, որ յուրաքանչյուր նախադասության սիգնիֆիկատիվ նշանակության մեջ որոշակիորեն առանձնանում են երկու բաղադրիչներ՝ ռեֆերենտային (կամ միջուկային) և ձևավորիչ (модифицирующее) կամ եզրային)[36]։ Առաջինը սիգնիֆիկատիվ նշանակության այն մասն է, որ անմիջաբար և ուղղադծորեն հարաբերակցվում է դենոտատին, իսկ երկրորդը՝ գիտակցության կողմից հավելվում, մակաշերտվում է գիտակցության մեջ արտացոլված դենոտատի վրա։ Նախադասության իմաստային կառուցվածքի այսպիսի մեկնաբանությունը որոշ առումով կարող է նպաստավոր լինել նախադասությունների հոմանիշության սկզբունքներն առանձնացնելիս։ Այս մոտեցմամբ հոմանիշ նախադասությունների տվյալ շարքի համար իմաստային անփոփոխակ կդիտվի նույն ռեֆերենտային նշանակությունը (ըստ որում այն ավելի անխառն արտահայտող նախադասությունը կկոչվի շարքի դերիշխող անդամ), իսկ շարքի յուրաքանչյուր նշույթավոր անդամ կտարբերվի մյուսից ձևավորիչ նշանակությամբ։ Իհարկե, այս դեպքում «ձև-

վավորիչ նշանակությունը» ավելի լայն իմաստով է կիրառվում՝ ընդգրկելով նրբիմաստային բազմազան տարբերություններ։ Հետաքրքրական է նաև Սուսովի կողմից կոնկրետ նախադասությունների և նախադասության հիմքը կազմող կառուցվածքային սխեմաների մեկնաբանությունը, որը դարձյալ բխում է լեզվական նշանի յուրահատուկ ըմբռնումից։

Լեզվական բոլոր նշանները, այդ թվում նաև նախադասությունները հեղինակը բաժանում է երկու տեսակի՝ կոնկրետ և վերացական նշաններ։ Առաջինները նյութական մեծություններ են և ենթակա են զգայական ընկալման։ Սրանց միջոցով էլ իրականանում են վերացական նշանները, որոնք ինքնին անմիջական փորձի մեջ տրված չեն և վերաբերում են լեզվական իրականության «խորքային» ոլորտին։ Այս տեսակետից «վերացական նախադասությունը մաքուր շարահյուսական փաստ է, այսինքն՝ դիրքային կառուցվածք, որին ամենից առաջ բնորոշ է ենթակայի և ստորոգյալի դիրքերի առկայությունն և որը վերացած է դիրքերի բառային տեղադրումից, ձևաբանական ցուցիչներից և առոգանական ձևավորումից, այսինքն բոլոր այն հատկանիշներից, որոնք անհրաժեշտաբար առկա են կոնկրետ նախադասության մեջ։ Լինելով ոչ այլ բան, քան կառուցվածքային սխեմա, «կաղապար», վերացական նախադասությունը, այսպիսով, օժտված է միայն շարահյուսական նշանակությամբ։ Մինչդեռ կոնկրետ նախադասությունը, որ ծառայում է սրա իրականացմանը մակերևույթային ոլորտում, ունի ինչպես բուն շարահյուսական կողմ, որը հենց հարաբերակցում է այն (կոնկրետ նախադասությունը— Լ. Բ.) համապատասխան վերացական նախադասությանը, այնպես էլ վերշարահյուսական կողմ, որի կազմիչներն են բառային, ձևաբանական և առոգանական միջոցները»[37]։ Մեզ թվում է, որ նախադասության՝ իբրև լեզվական յուրահատուկ նշանի, իմաստային և ձևական-կառուցվածքային կողմերի այսպիսի ըմբռնումը բավական հստակ է և գիտական և կարող է ուղեցույց լինել հոմանիշ նախադասությունների ուսումնասիրության տեսական հարցերի ձևակերպման ընթացքում։ Պետք է նշել, որ նախադասության ձևական կողմի նկարագրության մեջ կառուցվածքային սխեմայի հասկացության օգտագործումը բավական լայն տարածում է ստացել, սակայն այս կարգի ուսումնասիրությունները գերազանցապես վերաբերում են պարզ նախադասության շարահյուսությանը։ Պարզ նախադասության քննությունն այս հայեցակետով է կատարված մասնավորապես 1970-ին լույս տեսած «Ժամանակակից ռուսաց գրական լեզվի քերականության» մեջ։ Կառուցվածքային սխեմաները հանգում են կոնկրետ նախադասությունների կառուցվածքների հիման վրա կատարված լեզվական վերացությունների, որոնցում պայմանական նշանների մի-

ջոցով արտահայտվում են նախադասության տվյալ կառուցվածքային տիպի ձևավորման անհրաժեշտ բաղադրիչները։

Բանաձևերի կիրառումը բարդ նախադասությունների կառուցվածքային կողմի նկարագրության կողմի մեջ դեռևս արմատավորված չէ, սակայն այս ուղղությամբ ևս որոշակի աշխատանք կատարվում է։

Բարդ նախադասության կառուցվածքի և նշանակության փոխհարաբերությունը քննելիս վերացական կառուցվածքային սխեմաներին դիմելու կարևորությունն է ընդգծում Վ. Ա. Բելոշապկովան իր «Բարդ նախադասությունը ժամանակակից ռուսերենում» գրքի մեջ և մի շարք հոդվածներում։ Բարդ նախադասության կառուցվածքը, ըստ նշված աշխատության, նրա վերացական սխեման է, որի մեջ պետք է արտացոլված լինեն բարդ նախադասության այն բոլոր կառուցվածքակազմիչ հատկանիշները, որոնք ընդհանրական են (անհատական, մասնավոր բնույթ չունեն) և տարբերում են բարդ նախադասության տվյալ տիպը մյուսներից։ Այստեղից էլ բարդ նախադասության նշանակությունը դիտվում է իբրև կառուցվածքային սխեմայի մեջ արտահայտված այն ընդհանուր շարահյուսական նշանակությունը, որը վերացարկված է նախադասության կոնկրետ բովանդակությունից կամ կառուցվածքի բառային տեղադրումից։ Հեղինակը էական տարբերություն է տեսնում պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքային սխեմաների կազմության սկզբունքների միջև։ Պարզ նախադասության կառուցվածքային բանաձևը հանգում է նրա ստորոգելիական կենտրոնի արտահայտմանը՝ նրա ձևաբանական բնութագրության միջոցով։ Մինչդեռ «բարդ նախադասությունը կազմված է մեկից ավելի ստորոգական միավորներից, որոնք կառուցված են պարզ նախադասության բանաձևով, հետևաբար բարդ նախադասության բանաձևը պետք է արտացոլի պարզ նախադասությունների միացման կանոնները։ Այդ կանոնները սահմանելու համար անհրաժեշտ է գտնել բարդ նախադասությունների առանձին տիպերը կազմավորող հատկանիշները՝ համադրելով դրանք միմյանց հետ և առանձնացնելով մեկ տիպը մյուսից տարբերող հատկանիշների հարաբերակից շարքերը»[38]։ Բարդ նախադասության հիմնական տիպերի առանձնացման համար հեղինակը անհրաժեշտ և բավարար է համարում հարաբերակից կառուցվածքային հատկանիշների հետևյալ չորս շարքերը։ 1. Բարդ նախադասության պոտենցիալ քանակային կազմը (կառուցվածքի բաց կամ փակ լինելը) 2. Բարդ նախադասության բաղադրիչների (պարզ նախադասությունների) կառուցվածքային առանձնահատկությունները և նրանց բառային տեղադրման հնարավոր սահմանները, 3. Բարդ նախադասության մասերի միացման և նրանց միջև հարաբերությունների արտահայտման միջոցները և 4. Բարդ նախադասության մասերի շարադասական

հնարավորությունները (կառուցվածքի ճկունությունը)[39]։ Ցանկացած բարդ նախադասության կառուցվածքում այս հատկանիշներն առկա են որոշակի համակցությամբ, որն էլ պետք է արտահայտվի կառուցվածքային բանաձևի մեջ։ Սա, մեր կարծիքով, բարդ նախադասության կառուցվածքի բաղմակողմանի ներկայացման, բանաձևի միջոցով նրա բոլոր յուրահատկությունների արտացոլման գիտական և իրավացի պահանջ է։ Սակայն տեսական այս ճշմարտացի դրույթի գործնական կիրառության խնդիրը դուրս է մնացել հեղինակի ուսումնասիրության ոլորտից։ «Ռուսերենի բարդ նախադասության շարահյուսության արդի վիճակում,— գրում է Բելոշապկովան իր մի այլ աշխատանքի մեջ,— այս խնդիրը անլուծելի է նույնիսկ շաղկապավոր կառուցվածքների նկատմամբ, որոնք առավել ուսումնասիրված են»[40]։ Իսկապես, բարդ նախադասության համար կառուցվածքային արժեք ներկայացնող բոլոր հատկանիշների ընդգրկումը մեկ հստակ սխեմայի մեջ գործնականորեն դրեթե անհնար է։ Այս տեսակետից դժվար է չհամաձայնել Ն. Յու. Շվեդովայի՝ նշված հարցի մասին արտահայտած այն կարծիքին, թե «...Բանաձևի մեջ դրսևորվելիք հայեցակետերի բաղմաքանակությունն ու բարդությունը չեն տեղավորվում հեշտությամբ դիտվող և պարզագույն սխեմայի մեջ դասավորվող տարրական հատկանիշների համակարգում, հետևաբար և օբյեկտի ներքին կազմակերպումը բացահայտելու համար բավարար սիմվոլների պարզ շարքում»[41]։

Բարդ նախադասության կառուցվածքը բնութագրող նշված չորս հատկանիշներից մեզ համար ամենից կարևորը երրորդն է՝ բարդ նախադասության բաղադրիչների միջև եղած հարաբերության լեզվական արտահայտության ձևերն ու միջոցները։ Քանի որ մենք քննելու ենք միայն երկբաղադրիչ բարդ կառուցվածքները, ուստի բարդ նախադասության բաղադրիչների պոտենցիալ քանակային կազմի հատկանիշը սույն աշխատանքում ընդգրկված հարցերի շրջանակում դառնում է հավելյալ։ Բարդ նախադասությունների հոմանիշական շարքը կառուցվածքային սխեմաների ձևով ներկայացնելիս կարևոր չէ նաև յուրաքանչյուր դեպքում սխեմաների մեջ արտացոլել բարդ նախադասության առանձին բաղադրիչների կառուցվածքային ու բառատեղադրման յուրահատկությունները այն պարզ պատճառով, որ հոմանիշ համարվող բարդ նախադասություններն ունեն միևնույն հիմնական բառակազմը և մեծ մասամբ միմյանց նուագահեռ կառուցվածքներ։ Հոմանիշության տեսանկյունից այսպիսով, առաջին պլան է մղվում մասերի մեջև արտահայտվող իմաստային հարաբերությունը, որը լեզվական տարբեր միջոցներով արտահայտվելիս ստանում է զանազան նրբերանգներ։ Վերջիններիս արձանագրումը և բնութագրումը բարդ նախադասությունների հոմանիշու-

թյան կարևորագույն խնդիրն է։ Մասերի բառակազմի առանձնահատկությունները այս դեպքում կարող են հաշվի առնվել, եթե դրանք պայմանավորում են մասերի իմաստային կապի դրսևորման յուրահատկությունները։ Վ. Ա. Բելոշապկովայի նշած չորրորդ հատկանիշը՝ բարդ նախադասության մասերի շարադասական հնարավորությունները ևս հոմանիշության տեսանկյունից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, որովհետև բարդ նախադասության շարադասական տարբերակները, արտահայտելով միևնույն իմաստը, սովորաբար ունենում են հաղորդման նպատակի հետ կապված ոճական և իմաստային խիստ նուրբ տարբերություններ և այդ հիմունքով էլ դիտվում են իբրև հոմանիշներ։

Բարդ նախադասությունների հոմանիշության քննության ընթացքում կառուցվածքային սխեմաների կամ բանաձևերի օգտագործումը նպատակահարմար կարող է լինել լեզվական այդ հետաքրքիր երևույթն ավելի տեսանելի ու հստակ ներկայացնելու իմաստով։ Այս բանաձևերը պետք է արտացոլեն բարդ նախադասությունների կառուցվածքի այն կողմերը, որոնց միջոցով դրսևորվում են հոմանիշության հիմքը կազմող իմաստային և ոճական նրբերանգները։ Վերջիններս, ինչպես նշեցինք, վերաբերում են բարդ նախադասության մասերի միջև առկա իմաստային հարաբերություններին։ Հայերենի լեզվական փաստերի դիտարկումը բերում է այն համոզման, որ բարդ նախադասությունների հոմանիշական շարքերի անդամների գերակշիռ մասը կարող է արտացոլվել կառուցվածքային պարզագույն սխեմաներով։ Եթե բարդ նախադասության երկու մասերի բառակազմերն ու կառուցվածքային առանձնահատկությունները անմիջականորեն չեն աղդում այդ մասերի միջև իմաստային-քերականական հարաբերությունների ձևավորման վրա, ապա կարելի է վերանալ մասերի կոնկրետ կազմից և դրանք նշանակել պայմանական նշաններով։ Այս աշխատանքում մենք կիրառում ենք այդպիսի պարզ սխեմաներ՝ հիմնականում կառույցների հոմանիշ շարքերը ամփոփ և տեսանելի ներկայացնելու միտումով։ Օրինակ, պատճառահետևանքային հարաբերություններ դրսևորող բարդ նախադասությունների շարքը ընդհանուր ձևով ներկայացվում է P⟶որովհետև P, P⟶ֆանի որ P, P⟶այն պատճառով, որ P P⟶մանավանդ P...տեսքով։ (⟶նշանը ցույց է տալիս մասերի միջև ստորադասական հարաբերության առկայություն և ուղղված է գերադաս մասից դեպի ստորադասվողը)[42]։ Ցուրաքանչյուր կառույցի համար տրվում են մեկնաբանություններ, ճշտվում են իմաստային և ոճական այն նրբերանգներն ու առանձնահատկությունները, որոնցով շարքի տվյալ անդամը հակադրվում է մյուս անդամներին։ Հատուկ ուշադրություն է դարձվում այն դեպքերին, երբ բանաձևով արտահայտված կառույցի ոչ բոլոր կոնկրետ իրացումներն են մտնում հոմա-

նիշական տվյալ շարքը։ Վերը վկայակոչված հոմանիշական շարքում, օրինակ, նշվում է նաև P⟶nr P կառույցը, որը շարքի մյուս անդամներին հոմանիշ կարող է լինել գլխավոր մասի ստորոգյալի՝ որոշակի իմաստային խմբի բառերով արտահայտված լինելու դեպքում (դրանք գլխավորապես հույզեր, հոգեկան ապրումներ արտահայտող բառեր են)։ Կառույցի իրացման հարցում կարևոր է նշել նաև մասերի ստորոգյալների եղանակաժամանակային հատկանիշների հարաբերակցության թույլատրելի սահմանները։ Այս վերջին հանգամանքը բարդ նախադասությունների տարբեր տիպերի կառուցվածքների ձևավորման հարցում խիստ մեծ կարևորություն ունի և կարող է նյութ դառնալ հատուկ ուսումնասիրության։ Իմաստային-քերականական այս կամ այն հարաբերությունն արտահայտող բարդ նախադասությունների համար գոյություն ունեն նրանց մասերի մեջ գործառող բայաձևերի եղանակային և ժամանակային որոշակի օրինաչափ համապատասխանություններ։ Նպատակի հարաբերություն արտահայտող բարդ ստորադասական նախադասությունների համար, օրինակ, երկրորդական մասի ստորոգյալը միշտ արտահայտված է լինում ըղձական ապառնի կամ անցյալի ապառնի ձևերով։

Արդի հայերենի բարդ ստորադասական նախադասությունների կազմում եղանակային ձևերի կիրառության օրինաչափությունների մասին որոշակի պատկերացում կարող է տալ ստորադասական շաղկապների իմաստային դասակարգման հարցի և դրանց բաշխման քննությունը ակադ. Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ։ Քանի որ, ըստ հեղինակի, «շաղկապները ցույց են տալիս առաջին հերթին բայիմաստների հարաբերություններ»[43], ուստի շաղկապների դասակարգման համար կարևոր է նաև եղանակային ձևերի հետ (բուն եղանակային ձևերից բացի այստեղ նկատի են առնվում նաև հաստատականությունն ու ժխտականությունը) դրանց ղեկավորելիության հաշվառումը[44]։

Բայաձևերի կիրառության սահմանափակումներն ավելի բնութագրական են պարագայական նշանակություններ դրսևորող բարդ կառույցներին։ Բարդ նախադասությունների որոշ տիպերի դեպքում, ըստ երևույթին, հնարավոր է մասերում գործառող բայաձևերի եղանակային և ժամանակային փոխհարաբերության լիակատար ազատություն։ Մեր նպատակից դուրս է բարդ նախադասության կառուցվածքի այս հետաքրքիր կողմի մանրամասն քննությունը։ Այստեղ անհրաժեշտ է միայն ընդհանուր գծերով անդրադառնալ բարդ նախադասության մասերի այսպես կոչված «ժամանակային պլանների» փոխհարաբերության խնդրին հատկապես այն պատճառով, որ դա անմիջականորեն առնչվում է մեզ հա-

մաբ կարևոր մի հասկացության՝ բարդ նախադասության հարացույցի ըմբռնմանը։ Ժամանակային պլան ասելով պետք է հասկանալ բարդ նախադասության կազմի մեջ մտնող պարզ նախադասությունների մեջ արտահայտված գործողության ժամանակային նկարագիրը[45]։ Ժամանակային պլանն ստեղծվում է հիմնականում բայի քերականական ժամանակի հիման վրա։ Սա նշանակում է, որ բայի ժամանակի ձևաբանական կարգը նախադասության մեջ ստանում է շարահյուսական իմաստ և գործառություն։ Ժամանակային պլանի ձևավորմանը կարող են մասնակցել նաև բառային միջոցներ, ընդ որում սրանց իմաստը կարող է համանշանակ լինել բայի միջոցով արտահայտված քերականական ժամանակին կամ հակադրվել նրան։ Այս վերջին դեպքում ժամանակային պլանն ստեղծում են այդ բառային միջոցները (օրինակ՝ վաղը գնում եմ տուն՝ ապառնիի ժամանակային պլան է)։

Բարդ նախադասության երկու մասերի ժամանակային պլանների բոլոր հնարավոր հարաբերությունների միասնությունը կազմում է բարդ նախադասության տվյալ տիպի ժամանակային հարացույցը[46]։ Համմտ. օրինակ ժամանակային հարաբերություն (համաժամանակություն) արտահայտող հետևյալ նախադասությունները՝

Երբ Արայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է (ներկա—ներկա)

Երբ Արայիկը դաս էր պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում էր (անց. անկատար—անց. անկատար)

Երբ Արայիկը դաս է պատասխանել, ուսուցիչը գոհ ժպտացել է (վաղ.—վաղ.)

Երբ Արայիկը դաս պատասխանի, ուսուցիչը գոհ կժպտա (ապ.—ապ.) և այլն։

Ի՞նչ տեղ ունեն ժամանակային պլանների տարբեր փոխհարաբերությամբ բնութագրվող այս նախադասությունները ժամանակային նշանակություն արտահայտող բարդ նախադասությունների ընդհանուր հարացույցում։

Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է ճշտել նախադասության հարացույցի ըմբռնումը և դրա հիման վրա էլ առանձնացնել բարդ նախադասության կառուցվածքային այն տարբերակները, որոնք պետք է միավորվեն մեկ ընդհանրական հարացույցի մեջ։ Սրանով կպարզվի նաև վերը բերված նախադասությունների միջև առկա հարաբերության առնչությունը շարահյուսական հոմանիշության։

Նախադասության, և գլխավորապես պարզ նախադասության համակարգում հարացուցային հարաբերությունների ուսումնասիրությանը վե-

րաբերող աշխատություններից մեզ համար ուղեցուցային է հանդիսացել Գ. Ա. Զոլոտովայի «Ռուսերենի գործառական շարահյուսության ակնարկ» աշխատությունը։ Պարզ նախադասության հարացույցի մեջ հեղինակն ընդգրկում է տվյալ տիպային նշանակությունն արտահայտող անփոփոխական (ելակետային) կաղապարի երեք կարգի ձևափոխություններ. 1) քերականական ձևափոխություններ 2) կառուցվածքամասնային ձևափոխություններ և 3) շարահյուսական հոմանիշներ[47]։ Առաջին կարգի ձևափոխությունները ելակետային տիպի՝ միմյանցից եղանակավորման, ժամանակի, դեմքի քերականական նշանակություններով տարբերվող ձևերն են, որոնք միավորված են և՛ կաղապարի, և՛ նրա տիպային նշանակության նույնությամբ (Հյուրերը գնում են, Հյուրերը գնացին, Հյուրերը գնալին և այլն)։ Երկրորդ դեպքում ելակետային կառույցը հիմք է դառնում այնպիսի տարբերակների համար, որոնք միմյանցից տարբերվում են սուբյեկտի և գործողության կամ գործընթացային հատկանիշի եղանակակամային հարաբերություններով, փուլային նշանակությամբ, արտահայտչական, հարցական և ժխտական նշանակություններով (Նա ֆիզիկոս է, Նա դարձավ ֆիզիկոս, Նա ուզում է ֆիզիկոս լինել, Մի՞թե Նա ֆիզիկոս է և այլն)։ Այստեղ նույնպես, ըստ հեղինակի, պահպանվում է կաղապարի և տիպային նշանակության նույնությունը, մինչդեռ երրորդ դեպքում, երբ ելակետային կաղապարի ձևափոխությունները ներկայանում են իբրև շարահյուսական հոմանիշներ, խախտվում է կաղապարի միասնականությունը, այսինքն՝ միևնույն տիպային նշանակությունը արտահայտվում է տարբեր կաղապարների միջոցով (Նա ֆիզիկոս է, Նա ունի ֆիզիկոսի մասնագիտություն, Նա զբաղվում է ֆիզիկայով և այլն)։

Նախադասության հարացույցի մեկնաբանության՝ Գ. Ա. Զոլոտովայի վերը շարադրված մոտեցումը կիրառելով բարդ նախադասությունների համակարգի նկատմամբ, կարելի է արձանագրել, որ բարդ նախադասության տվյալ տիպի հարացույցն ընդգրկում է մասնավորապես նրա կառուցվածքի երկու կարգի ձևափոխություններ՝ 1) քերականական, երբ փոփոխվում է բարդ նախադասության մասերի ժամանակային պլանների (նաև ստորոգյալը բնութագրող քերականական այլ կարգերի՝ եղանակի, հաստատականության— ժխտականության) փոխհարաբերությունը, և 2) հոմանիշական, երբ մասերի բառակազմի և կառուցվածքների նույնության պայմաններում փոխվում է մասերի միջև իմաստային-քերականական հարաբերության դրսևորման լեզվական ցուցիչը։ Առաջին դեպքում փոփոխվում են բարդ նախադասության երկու մասերի մեջ պարունակված քերականական իմաստները՝ չանդրադառնալով ամբողջ բարդ նախադասության տիպային նշանակությանը, մինչդեռ երկրորդ դեպքում

փոխվում է բարդ նախադասության համար կառուցվածքային կարևոր դեր կատարող տարրը՝ մասերն իրար շաղկապող լեզվական միջոցը, որն էլ մեծ մասամբ ծնում է բարդ նախադասության իմաստի որոշակի նրբերանգ՝ միևնույն տիպային նշանակության սահմաններում։ Այսպիսով՝

Երբ Աբայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է։
Երբ Աբայիկը դաս էր պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում էր։
Երբ Աբայիկը դաս պատասխանի, ուսուցիչը գոհ կժպտա։
Որ Աբայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է։
Քանի Աբայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է։

Երբ որ Աբայիկը դաս է պատասխանում, ուսուցիչը գոհ ժպտում է և այլ նման կարգի նախադասություններ մտնում են բարդ նախադասության միևնույն տիպի՝ համաժամանակության արտահայտող բարդ նախադասության ընդհանուր հարացույցի մեջ։ Դրանցից առաջին երեքը ներկայացնում են մասերի ժամանակային պլաններով տարբերվող տարբերակներ, մինչդեռ վերջին երեքը տարբերվում են մասերը իրար կապող շաղկապներով և հոմանիշ նախադասություններ են։ Սրանց միջև առկա են իմաստային և ոճական նուրբ տարբերություններ միևնույն՝ համաժամանակության տիպային նշանակության շրջանակներում։ Այսպես, **եաև**-ով ձևավորված կառույցը **երբ**-ով կառույցից տարբերվում է միաժամանակ կատարվող երկու գործողությունների պարբերական կրկնության նշումով, **որ**-ով կապակցվող կառույցը՝ դերազանցապես խոսակցական ոճում կիրառվելու յուրահատկությամբ և այլն։

Բարդ նախադասությունների կառուցվածքային տարբերակների այսպիսի դասակարգումը արդարանում է նաև իմաստային դաշտի տեսության դիրքերից։ Բառապաշարի իմաստաբանական քննության ժամանակ սովորաբար առանձնացվում են երկու կարգի իմաստային դաշտեր՝ ստորակցական (гипонимическое) և հոմանիշական։ Երկու դեպքում էլ տվյալ դաշտի հիմքում ընկած է գերիշխող անդամը, որը ներկայանում է իբրև իմաստային անփոփոխակ ամբողջ դաշտի համար[48]։ Ստորակցական դաշտի դեպքում գերիշխող անդամը բուն դաշտը կազմող անդամներից մեկ աստիճան բարձր է, այնպես որ դաշտ կազմող անդամների և գերիշխող անդամի իմաստները գտնվում են տեսակ-սեռ հարաբերության մեջ (հմմտ.՝ գունային անվանումների դաշտը՝ գույն–գերիշխող անդամով)։ Հոմանիշական դաշտի գերիշխող անդամը մտնում է նույն այդ դաշտի մեջ (հմմտ.՝ վախ, երկյուղ, սարսափ... շարքը վախ գերիշխող անդամով)։ Եթե այս հայեցակետով դիտարկենք վերը բերված նախադասությունները, ապա կպարզվի, որ առաջին երեքն արտահայտում են լիակատար համաժամանակության իմաստային հարաբերությունը տարբեր ժամանակա-

հատվածների համար (լիակատար համաժամանակություն ներկայում, լիակատար համաժամանակություն անցյալում և այլն), այսինքն սրանց նշանակությունները կազմում են ստորակցական իմաստային դաշտ։ Իրրև այսպիսի դաշտի գերիշխող անդամ պետք է ընդունել բարդ նախադասության տվյալ տիպի կառուցվածքային սխեման։ Վերջինիս նշանակությունը նույն հարաբերությունն արտահայտող կոնկրետ նախադասությունների հիման վրա կատարված վերացություն է, վերացական շարահյուսական իմաստ, և իրրև այդպիսին, միշտ մեկ աստիճան բարձր է իր մասնավոր իրացումների կոնկրետ նշանակություններից և դրանց նկատմամբ դրսևորում է սեռ-տեսակ տրամաբանական կապի մեջ։ Բերված վերջին երեք նախադասություններն, ինչպես տեսանք, հոմանիշներ են և կմտնեն հոմանիշական իմաստային դաշտի մեջ։ Սրանց գերիշխող անդամը, որ երբ-ով կապակցվող կառույցն է, իրոք մտնում է դաշտը կազմող անդամների թվի մեջ և իմաստային անփոփոխակի դեր է կատարում համաժամանակության իրական հարաբերության առավել համարժեք լեզվական դրսևորման, ոճական չեզոքության և գործածության հաճախականության շնորհիվ։

Վերադառնալով բարդ նախադասության իմաստային կողմի կամ նշանակության խնդրին, վերն արված դատողությունների հիման վրա կարող ենք պնդել, որ բարդ նախադասության նշանակությունը հիմնականում նրա բաղադրիչների միջև գոյություն ունեցող իմաստային հարաբերությունն է։ Բարդ նախադասությունը կազմող պարզ նախադասությունների նշանակություններն – առանձին-առանձին, իհարկե, որոշակի դեր ունեն ամբողջ բարդ նախադասությամբ արտահայտված իմաստային հարաբերության ձևավորման գործում, սակայն այդ դերը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբեր է և պետք է առանձին քննությամբ որոշվի։ Բարդ նախադասության մասերի միջև առկա իմաստային հարաբերությունն ամենից ավելի հստակ է արտահայտվում բառային որոշակի նշանակությամբ օժտված շաղկապների միջոցով։ Եթե շաղկապի կամ հարաբերական բառի դերը ղուտ կապակցական-քերականական է, ապա իմաստային հարաբերության որոշման հարցում առավել մեծ արժեք են ձեռք բերում մասերի բառակազմերն ու կոնկրետ նշանակությունները։ Անշաղկապ կապակցության դեպքում իմաստային հարաբերության դրսևորումը իրենց վրա են վերցնում բառային և կառուցվածքային որոշակի հատկանիշներ և միջոցներ։ Այս իմաստով հետաքրքրական է Տ. Մ. Նիկոլաևայի մի առաջարկությունը՝ բարդ նախադասության մասերի համար աննշույթ և նշույթակիր բառակազմեր տարբերակելու մասին[49]։

Բարդ նախադասության մասերի կապակցման համար գործածվող շաղկապների թույլատրելի քանակը նա համարում է մասերի բառակազմի

նշութավորվածության չափանիշ։ Որքան մեծ է այդ շաղկապների թիվը, այնքան ավելի ազատ (աննշույթ) են մասերի բառակազմերը, և ընդհակառակը՝ ինչքան այդ շաղկապների թիվը փոքր է, այնքան մեծ է մասերի բառակազմերի նշույթավորված լինելու աստիճանը[50]։

Ի. Պ. Սուսովի՝ քննված աշխատության դրույթներին համապատասխան բարդ նախադասության համար էլ պետք է տարբերել դենոտատիվ և սիգնիֆիկատիվ նշանակություններ։ Իբրև բարդ նախադասության դենոտատ հանդես է գալիս բարդ իրադրությունը, այսինքն այնպիսի իրադրություն, որի տարրերը թելադրում են ստորոգում արտահայտող լեզվական մեկից ավելի միավորներ (բայեր)։ Բարդ նախադասության նշանակութիչ ամենից կարևոր առանձնահատկությունն է։ Հենց այս մակարդակում է, որ գիտակցության կողմից արձանագրվում և ապա լեզվական իրացում են ստանում իրական երկու դեպքերի, գործողությունների կամ իրողությունների միջև գոյություն ունեցող այս կամ այն մտային հարաբերությունները։ Վերցնենք, օրինակ, իրական երկու գործողություններ՝ Արևը մայր մտավ և գյուղացիները շարժվեցին։ Այս երկու փաստերն իրենց մեկ բարդ իրադրության բաղադրիչներ կարող են կազմել որևէ բարդ նախադասության դենոտատը, դառնալ նրա նշանակության իրական հիմքը։ Սակայն հաղորդողի կողմից այս իրական գործողությունները կարող են ընկալվել մտային տարբեր հարաբերություններով, ինչպես, ասենք ժամանակային (Երբ արևը մայր մտավ, գյուղացիները շարժվեցին), պատճառային (Գյուղացիները շարժվեցին, քանի որ արևը մայր մտավ), պայմանական (Թեև արևը մայր մտավ, գյուղացիները շարժվեցին) և այլն։ Այս հարաբերություններն, իհարկե, նույնքան իրական են, ինչքան հարաբերվող եզրերը՝ իրականության գործողություններն ու իրողությունները, սակայն դրանք արժեքավորվում և հստակորեն ըմբռնվում են միայն գիտակցության կողմից՝ միաժամանակ ստանալով համապատասխան լեզվական ձևավորում։

Բարդ նախադասությունների հոմանշային կապերի բացահայտման տեսակետից առաջնային արժեք է ստանում նրանց նշանակության հենց այդ կողմը, այսինքն՝ իմաստային-տրամաբանական այն հարաբերությունները, որոնք գիտակցության կողմից մակաշերտվում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող բարդ իրադրության բաղադրիչների վրա։ Իմաստային այդպիսի յուրաքանչյուր հարաբերություն դառնում է բարդ նախադասության առանձին կառուցվածքաիմաստային տիպի նշանակային հիմքը (տիպային նշանակությունը)։ Բարդ նախադասության դենոտատիվ և սիգնիֆիկատիվ նշանակությունների այսպիսի սահմանազատումը մոտավորապես համապատասխանում է Ի. Ի. Կովտունովայի կողմից գոր-

ծածված «իրական-առարկայական նշանակություն» և «քերականական նշանակություն» հասկացություններին։ Սակայն գիտակցության մեջ տարբերակված իրական հարաբերությունը, որ լեզվական ձևավորում է ստանում բարդ նախադասության միջոցով, մեր կարծիքով տարբեր է այդ նախադասության քերականական իմաստի հասկացությունից։ Իրականության մեջ, օրինակ, «արևը մայր մտավ» և «գյուղացիները շարժվեցին» իրողությունների միջև չտարորոշված կերպով առկա է և ժամանակային, և պատճառային, և ղիջական հարաբերությունների հնարավորությունը։ Եթե հաղորդողի գիտակցության մեջ այդ երկու դատողությունների միջև հաստատվում է, ասենք, ժամանակային կապ, ապա պարզ է, որ «երբ արևը մայր մտավ, գյուղացիները շարժվեցին» նախադասության նշանակելին դառնում է տվյալ գործողությունների միջև եղած ժամանակային կապը։ Այն հանգամանքը, որ ժամանակային այդ կապը կարող է դրսևորվել ժամանակի տարբեր շաղկապներով կապակցվող բարդ ստորադասական նախադասությունների միջոցով, ինչպես նաև համադասական կամ անշաղկապ կառուցվածքներով, վերաբերում է արդեն տվյալ նշանակության դրսևորման լեզվական-քերականական կողմին։ Հոմանիշ ասելով մենք հասկանում ենք հենց բարդ նախադասության այս տարբեր կառույցները, այսինքն՝ գիտակցության փաստի վերածված իրական տվյալ հարաբերության կառուցվածքային-քերականական տարբեր ձևավորումները։

Բարդ նախադասությունները առանձին հոմանշային շարքերի մեջ խմբավորելիս նրանց համար իբրև իմաստային անփոփոխակ դիտվում է տվյալ շարքի գերիշխող անդամը կամ կառույցը։ Շարքի մյուս անդամները ստացվում են գերիշխող անդամի որոշակի փոխակերպումներով։ «Փոխակերպում» կամ «փոխակերպություն» տերմինը այստեղ դործածվում է Ն. Ա.. Պաոնասյանի վերոհիշյալ աշխատության մեջ ընդունված իմաստով։ Բարդ նախադասության դեպքում փոխակերպություններ են համարվում կառուցվածքային այնպիսի փոփոխությունները, որոնք, չփոխելով բարդ նախադասության տիպային նշանակությունը, այսինքն՝ նրանում արտահայտված իմաստային հարաբերության բնույթը, այդ հարաբերությանը տալիս են որոշակի նրբերանգներ կամ էլ նշում են տվյալ նախադասության ոճակիրառական որևէ առանձնահատկություն։ Ժամանակակից փոխակերպական քերականությունների մեջ փոխակերպության հասկացությունը այլ նշանակությամբ է կիրառվում։ Այն այսպես կոչված «խորքային» կառուցվածքներից որոշ կանոնների օգնությամբ մակերեսային կառույցների սերման գործողությունն է։ Այս տեսակետից խորքային կառուցվածքը և նրա փոխակերպները կարծես թե զուգահեռ են հոմանիշա-

կան շարքի գերիշխող անդամի և նրա հոմանիշ տարբերակների հասկացությունների, սակայն, քննությունը ցույց է տալիս, որ ոչ բոլոր փոխակերպներն են բավարարում հոմանիշության պահանջներին։ Թվում է, որ հոմանիշների ըմբռնմանն ավելի համապատասխանում են խորքային և մակերեսային կառուցների այնպիսի մեկնաբանություններ, որոնք տրված են սովետական որոշ լեզվաբանների աշխատանքներում։ Մասնավորապես Լ. Ս. Բարխուդարովը, վերանալով «խորքային» և «մակերեսային» տերմինների՝ սերող քերականությունների մեջ ունեցած իմաստներից, գտնում է, որ խորքային և մակերեսային կառուցները գտնվում են այն հարաբերության մեջ, ինչ, ասենք, հնչույթը և հնչյունները կամ ձևույթը և այլաձևակները[51]։

Վ. Գ. Գակը, ելնելով նախադասության նշանակության դենոտատային մեկնաբանության դիրքերից, խորքային է համարում այն կառուցվածքը, որը համարժեք է իրադրությանը։ Խորքային կառուցի մեջ նախադասության անդամները ուղղակիորեն «արտացոլում» են իրական էնթական, իրական խնդիրները, գործողությունները, հանգամանքները, մինչդեռ մակերեսային կառուցներում նախադասության անդամների այս արտացոլող ուժը թուլանում է և առաջնային է դառնում նրանց կառուցվածքային դերը[52]։

Խորքային և մակերեսային կառուցվածքների բոլոր մեկնաբանությունները ըստ էության ծառայում են շարահյուսության մեջ ձևի և բովանդակության փոխհարաբերության հարցի որոշակի կոնկրետացմանը։ Պարզ նախադասության համակարգում այս կարգի ուսումնասիրությունները շարունակվում են, սակայն բարդ նախադասության ոլորտում փոխակերպության մեթոդի կիրառման սկզբունքներ դեռևս մշակված չեն։ Ուստի, ինչպես նշեցինք, «փոխակերպություն» տերմինը մենք գործածում ենք որոշ պայմանականությամբ՝ նշելու համար բարդ նախադասության հիմնական իմաստի նրբերանգներն արտահայտող կառուցվածքային ձևափոխությունները։ Բարդ նախադասության հոմանիշական փոխակերպությունը հիմնականում հանգում է մասերը իրար շաղկապող միջոցի փոփոխության։ Առանձին մասերի կառուցվածքային փոփոխությունները հոմանիշության տեսակետից արժեք ունեն այնքանով, որքանով որևէ նրբերանգային կամ ոճական փոփոխություն են ծնում նախադասության ընդհանուր տիպային նշանակության շրջանակներում։

Ընդհանրացնելով վերն ասվածները, մենք կարող ենք բարդ նախադասությունների հոմանիշությունը սահմանել հետևյալ կերպ.

Հոմանիշ են կոչվում այն բարդ նախադասություններ, որոնք արտահայտում են իրական երկու գործողությունների կամ իրողությունների

միջև առկա իմաստային միևնույն հարաբերությունը և մասերի հիմնական բառակազմերի նույնության պայմաններում արտահայտում են այդ հարաբերության իմաստային որոշակի նրբերանգ կամ ունենում են ոճական, կիրառական առանձնահատկություններ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ

Իբրև իմաստային կողմի բաղադրիչ, ժամանակային գործոնը առկա է գրեթե բոլոր, հատկապես՝ պարագայական զանազան հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների նշանակությունների մեջ: Այս կարգի բարդ նախադասությունների բաղադրիչների միջև առկա իմաստային կապը, ի վերջո, նրանց ստորոգյալների միջոցով արտահայտված գործողությունների հարաբերությունն է, իսկ այդ գործողությունները կամ իրողությունները, բնականաբար, ժամանակից դուրս իրականանալ չեն կարող: Ինչպես արդեն նշվել է, բարդ նախադասության յուրաքանչյուր իմաստաքերականական տիպ դրսևորում է մասերի ժամանակային պլանների փոխհարաբերության որոշակի օրինաչափություններ, որոնք արտահայտվում են հիմնականում մասերի ստորոգյալների քերականական ժամանակների փոխհարաբերության միջոցով: Այսպես, նպատակի նշանակությամբ բնութագրվող բարդ ստորադասական նախադասության երկրորդական մասի գործողությունը սովորաբար հաջորդում է դրխավորի գործողությանը, պատճառահետևանքային իմաստ արտահայտող բարդ նախադասություններում մեծ մասամբ պատճառ արտահայտող մասի գործողությունը նախորդում է հետևանք արտահայտող մասի գործողությանը, պայմանի հարաբերություն արտահայտող նախադասություններում ևս գոյություն ունի պայման և նրանից բխող հետևանք ցույց տվող մասերի ժամանակների նույնպիսի հաջորդում (այստեղ կարող է առկա լինել նաև համաժամանակության հարաբերություն) և այլն: Իրենց մեջ պարունակելով երկու գործողությունների ժամանակային փոխհարաբերության իմաստ, նշված կարգի բարդ նախադասություններն, այնուամենայնիվ, ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների իմաստային-քերականական տիպին վերաբերել չեն կարող, որովհետև նրանց նշանակության մեջ գերիշխողը նպատակի, պատճառի, պայմանի և այլ հարաբերություններն են: Ժամանակային

գործոնը սրանց իմաստային կողմի բնորոշման հարցում վճռական դեր չունի։ Համանիշության տեսանկյունից բարդ նախադասությունները քննելիս առաջին հերթին պետք է ըստ հնարավորին պարզել և ճշգրտել տվյալ կառույցի համար առավել բնութագրական իմաստային հարաբերությունը՝ ելակետ ունենալով այդ հարաբերության քերականական ձևավորումը, նաև մասերի բառակազմն ու համատեքստի մեջ կառուցվածքի դրսևորած հիմնական իմաստը։ «Պատերազմ սկսվեց և երկիրն ընկավ ծանր դրության մեջ» նախադասության մեջ առկա է երկու գործողությունների ժամանակային հաջորդման իմաստ, սակայն այս նախադասության համար բնորոշ իմաստային հարաբերությունը այդ գործողությունների պատճառահետևանքային կապն է, որ բխում է մասերի կոնկրետ բովանդակությունից։ Մինչդեռ «Երբ պատերազմ սկսվեց, երկիրն ընկավ ծանր դրության մեջ» նախադասության համար առաջնայինը ժամանակային իմաստն է՝ պայմանավորված երբ շաղկապի[1] գործածությամբ (Համմտ. նաև՝ «Երկիրն ընկավ ծանր դրության մեջ, որովհետև պատերազմ սկսվեց» նախադասությունը, որի մասերի միջև առկա պատճառային իմաստն առավել ընդգծված է որովհետև շաղկապի կիրառությամբ)։ Համանիշության որոշման քերականական չափանիշի գործադրմամբ ժամանակային նախադասությունների համանիշական շարքի մեջ պետք է միավորվեն այն բարդ նախադասությունները, որոնց մեջ ժամանակային այս կամ այն հարաբերության իմաստը կառույցի համար գլխավորն է, այսինքն՝ երկու գործողությունների միջև հնարավոր տարբեր իմաստային հարաբերություններից հաղորդման համար առավել կարևորը տվյալ տեքստի մեջ դրանց ժամանակային կապն է։ Ժամանակի շաղկապներով ձևավորված կառույցներում նշված իմաստային հարաբերությունը համեմատաբար անխոտան է դրսևորվում, մինչդեռ համադասական և անշաղկապ կապակցության դեպքում ժամանակային իմաստը հաճախ բարդացվում է իմաստային այլ երանգներով։ Այս երևույթը պայմանավորող ամենակարևոր գործոնը բարդ նախադասության մասերի բառակազմների միջոցով արտահայտված կոնկրետ բովանդակություններն են։ Հետևաբար ժամանակի հարաբերություն դրսևորող համադասական և անշաղկապ կառույցների սխեմաները վերաբերում են այդ սխեմաներն իրացնող նախադասությունների մի մասին միայն, այսինքն այն դեպքերին, երբ նախադասության մասերի բառակազմերը չեն խոչընդոտում տվյալ կառույցի փոխակերպմանը ժամանակային նշանակությամբ կառույցների հոմանիշական շարքի գերիշխող (հիմնական) անդամին։ Այս հանդամանքի հաշվառմամբ մենք տվյալ հոմանիշական շարքի լիարժեք անդամներ ենք համարում այնպիսի նախադասությունները, որոնք իմաստային մեկ-

նույն հարաբերության (տվյալ դեպքում՝ ժամանակային) շրջանակներում թույլատրում են նշված հոմանիշական փոխակերպումը։

Իրական երկու գործողությունների, եղելությունների, իրադարձությունների միջև ժամանակային տեսակետից կարող են առկա լինել տարբեր բնույթի փոխհարաբերություններ։ Սա պայմանավորված է իրական ժամանակի և նրա տրամաբանական արտացոլման յուրահատկություններով։ Ժամանակի իրական հոսքի մեջ, նրա տարբեր հատվածներում տեղի ունեցող գործողությունների և իրողությունների միջև հնարավոր դանազան կապերը կազմում են ժամանակային նշանակություն արտահայտող բարդ նախադասությունների դենոտատային հիմքը և, իրրև այդպիսին, թելադրում են այդ նախադասությունների կառուցվածքային և քերականական առանձնահատկությունները։ Այս առումով ժամանակի նախադասություններն առանձնանում են պարագայական այլ նշանակություններ դրսևորող բարդ նախադասություններից։ Պատճառահետևանքային իմաստային հարաբերությունն, օրինակ, տրամաբանական տեսակետից միատարր է և բարդ նախադասության տարբեր կառուցվածքներով դրսևորվելիս հանդես է բերում իմաստային կամ ոճական նրբերանգներ՝ տրամաբանական այդ նույն հարաբերության շրջանակներում։ Այս հիմունքով էլ պատճառահետևանքային հարաբերություն դրսևորող բոլոր բարդ նախադասությունները կարող են միավորվել հոմանիշների մեկ շարքի մեջ, թեև նրանցով արտահայտվում են զանազան կարգի և բազմաթիվ իմաստային երանգներ։ Սակայն երբ խոսքը վերաբերում է ժամանակային հարաբերություններին, պետք է հաշվի առնել, որ գիտակցական-տրամաբանական մակարդակում արդեն սրանք տրոհվում են տարբեր տեսակների ու ենթատեսակների, որոնցից յուրաքանչյուրը պահանջում է լեզվական ուրույն ձևավորում։ Սա նշանակում է, որ իրական գործողությունների միջև հնարավոր ժամանակային հարաբերությունների տրամաբանական տարատեսակությունները ձևավորող բարդ կառուցվածքները ևս պետք է տրոհվեն իմաստային տարբեր հիմունքներով միավորված հոմանիշ կառույցների առանձին խմբերի կամ շարքերի։

Բարդ նախադասության տարբեր կառույցներ ձևավորելու տեսակետից լեզվական արժեք են ներկայացնում ժամանակային հարաբերությունների հետևյալ տրամաբանորեն հնարավոր տեսակները.

1) երկու գործողություններ կատարվում են միաժամանակ՝ ժամանակի միևնույն հատվածում, ընդ որում այդ գործողություններն իրենց տևողությամբ համընկնում են (լիակատար համաժամանակություն),

2) երկու գործողություններ կատարվում են ժամանակի միևնույն հատվածի շրջանակներում, սակայն տևողությամբ հավասար չեն իրար,

այսինքն՝ մեկը կատարվում է մյուսի որոշակի պահին (մասնակի համաժամանակություն)։

3) երկու գործողություններ ժամանակի մեջ հաջորդում են միմյանց (տարժամանակություն կամ ժամանակային հաջորդում)։

Մեր նպատակն է այս երեք հարաբերություններից յուրաքանչյուրի համար առանձնացնել դրանք արտահայտող բարդ նախադասությունների համանիշական շարքերը և բնութագրել յուրաքանչյուր շարքի անդամների իմաստային և ոճական-կիրառական առանձնահատկությունները։

ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակային այս հարաբերությունը կարող է դրսևորվել բարդ նախադասության տարբեր կառուցվածքների մեջ՝ ստորադասական, համադասական, շաղկապավոր և անշաղկապ։ Լիակատար համաժամանակություն սովորաբար չեն արտահայտում ստորադասական անշաղկապ նախադասությունները[2]։

ա) Ստորադասական կառույցներ

Այս դեպքում, ինչպես նաև ժամանակային այլ հարաբերությունների դրսևորման ժամանակ, իմաստային հարաբերությունն ավելի հստակ լեզվական արտահայտություն է գտնում երբ շաղկապի միջոցով ձևավորված բարդ նախադասություններում։ Այս շաղկապն իր բառային իմաստով ժամանակ է նշանակում, թեև տարբեր բնույթի երկրորդական նախադասություններ կապակցելու դերով հաճախակի կիրառվելը նրան ինչ-որ տեղ ընդհանրական կապակցական արժեք է հաղորդել[3]։ Սրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ երբ-ը ժամանակային բարդ նախադասությունների մեջ կիրառվելիս անտարբեր է համաժամանակություն-տարժամանակություն իմաստային հակադրության նկատմամբ, այսինքն գործածվում է իմաստային այդ հարաբերություններից յուրաքանչյուրի ձևավորման դերով։ Ժամանակի ընդհանուր իմաստը երբ շաղկապին հնարավորություն է տալիս աղատորեն կիրառվելու ժամանակակից հայերենի միանգամայն տարբեր ոճերում։ Այն բարդ նախադասությունների ձևավորման իր դերով շատ հաճախադեպ է և՛ գեղարվեստական խոսքում, և՛ հրապարակախոսական ու գիտական տեքստերում, և՛ առօրյա խոսակցական լեզվում ու գրական հայերենի խոսակցական տարբերակի մեջ։ Ժամանակային հարաբերությունների, մասնավորապես համաժամանակության իմաստային հարաբերության առավել համարժեք լեզվական դրսևորման, ոճական չեզոքության և գործածության հաճախականության հատկանիշները հիմք են տալիս այս շաղկապով ձևավորված ժամանակային կառույցը դիտելու համաժամանակու-

թյուն արտահայտող բարդ նախադասությունների հոմանշային շարքի գերիշխող (հիմնական) անդամ։ Սա հանդես է գալիս իբրև իմաստային անփոփոխակ այս շարքի մյուս անդամների համար, որոնք գերիշխող անդամին հակադրվում են ժամանակային իմաստի որևէ հավելյալ երանգով կամ արտահայտչական ու ոճակիրառական բնույթի առանձնահատկություններով։

Ինչպես նշվեց, եբ-ի կիրառությունն ինքնին չի նշում իրենով ձևավորված բարդ ստորադասական նախադասության երկու մասերի միջև համաժամանակության կամ տարժամանակության կոնկրետ հարաբերությունների առկայությունը։ Սրանց տարբերակման հարցում այս դեպքում շատ կարևոր դեր են ստանձնում բարդ նախադասության մասերի ժամանակային պլանների (հիմնականում՝ մասերի ստորոգյալների քերականական ժամանակների) որոշակի փոխհարաբերությունը և կառույցի երկու մասերը լրացնող բառերի կոնկրետ բովանդակությունները։ Դիտարկումները ցույց են տալիս, որ լիակատար համաժամանակություն արտահայտող նախադասությունների երկու մասերում մեծ մասամբ կիրառված են լինում սահմանական եղանակի ներկա կամ անցյալի անկատար ժամանակները։ Ներկա ժամանակի կիրառությամբ բարդ նախադասության մեջ կարող է դրսևորվել ոչ միայն խոսելու պահին կատարվող երկու գործողությունների կամ եղելությունների միաժամանակության իմաստը, այլև ընդհանրապես ժամանակի մեջ միմյանց ուղեկցող, սովորաբար միաժամանակ կատարվող գործողությունների կամ իրողությունների համաժամանակությունը։ Մասերի մեջ անցյալի անկատարով արտահայտված ստորոգյալներ[4] ունեցող բարդ նախադասության միջոցով արտահայտվում է անցյալ ժամանակի մեջ սովորաբար իրար հետ կատարվող գործողությունների համաժամանակության իմաստ[5]։ Օրինակ՝

Երբ Հովհաննես Թումանյանը գրում էր, գրագետները քիչ էին, քչերն էին գրում, ճանաչվելը հեշտ էր (15, 375)։

Իմաստային այս հարաբերությամբ բնութագրվող բարդ նախադասություններին հատուկ է կառուցվածքի ճկունությունը. եբ-ով կապվող երկրորդական նախադասությունը կարող է ունենալ նախադաս, միջադաս կամ ետադաս դիրք։ Գերիշխող կամ հիմնական անդամին, ըստ երևույթին, ավելի բնորոշ է երկրորդական նախադասության նախադաս դիրքը, որ ժամանակակից հայերենի նորմայի տեսակետից ավելի բնական և կանոնական է ընդհանրապես ժամանակային իմաստով օժտված բարդ ստորադասական նախադասությունների համար[6]։ Լիակատար համաժամանակություն արտահայտող բարդ նախադասությունների հոմանշային շարքի գերիշխող անդամի կառուցվածքը կարող ենք արտա-

հայտել երբ P ← P պայմանական բանաձևով կամ սխեմայով։ Շարադասական մյուս երկու տարբերակները հոմանիշ են դերիշխող անդամին և իմաստային առումով վերջինիս հետ շատ ավելի սերտ կապի մեջ են գտնվում, քան հոմանշային շարքի մյուս անդամները։ Ժամանակային նույն հարաբերության երբերանդների արտացոլման տեսակետից, սրանք, ըստ էության, ընդգծված տարբերություններ չունեն, որի հետևանքով էլ սրանց միջև եղած իմաստային կապը շատ մոտ է նույնանիշությանը։

Գերիշխող անդամի շարադասական տարբերակների միջև կարելի է նշել հաղորդման իրադրության հետ կապվող նուրբ տարբերություններ, որոնք ինչ-որ չափով անդրադառնում են դրանց կիրառության և ոճական նկարագրին։ Հիմնական կառուցվածքը՝ երբ P← P, ինչպես նշեցինք, ամենից գործածականն է ժամանակակից հայերենում։ Ոտադաս երկկորդական նախադասության կառույցը խոսքի մեջ նվազ հաճախական է, և, թվում է, ավելի տարածված է դեղարվեստական խոսքի մեջ (նաև կենդանի խոսակցական լեզվում), քան, ասենք, գիտական կամ պաշտոնական տեքստերում։ Հաղորդման նպատակի և իրադրության տեսակետից այս դեպքում գլխավոր նախադասության հաղորդվող գործողության կամ իրադարձության կարևորությունը խոսքի համար ավելի ընդգծվում է, և շեշտվում է երկրորդական նախադասության պարզաբանող ու լրացնող դերը։ Միշտ ոտադաս երկկորդական նախադասության կառույցը խոսքի մեջ ավելի սակավ է գործածվում։ Սրա յուրահատկությունն այն է, որ հաղորդման հիմնական բովանդակությունը կազմող գլխավոր նախադասությունը անսպասելիորեն ընդմիջվում է վերջինիս միտքը պարզաբանող երկրորդական նախադասությամբ, և բնական է, որ այսպիսի կառուցվածք ունեցող բարդ նախադասություններ հանդիպում են հիմնականում խոսակցական լեզվի մեջ։ Շարադասական երեք տարբերակների դեպքում էլ գլխավոր նախադասության մեջ կարող են հանդես գալ հարաբերչական դեր կատարող ղանաղան բառեր կամ բառակապակցություններ (ինչ, այժմ, այն ժամանակ, միշտ և այլն), սակայն պետք է նշել, որ սրանք ավելի հաճախ են հանդիպում նախադաս գլխավոր նախադասություններում։ Բերենք օրինակներ նշված շարադասական տարբերակներից յուրաքանչյուրի համար.

երբ P ← P Երբ անձրև է գալիս, առաջինը ինքն է զգում շրջակա դաշտերի բույրը... (Ա, 138, 1980)։

P ⟶ երբ P Հիշում է այն ժամանակ, երբ փոստատարը թոշակ է բերում (1,12)։

P ⟶ |երբ P|[7] Ամռանը, երբ քաղցրանում են պտուղները, սկսվում է վեճը (ԳԲ, 48, 1982)

Կառուցվածքային այս տիպերի հոմանիշությունը հաստատվում է փոխակերպության միջոցով, եթե, իհարկե, կառուցվածքի կոնկրետ բառային բովանդակությունը թույլատրում է հոմանիշական այդպիսի փոխակերպում։

Այսպես՝

Երբ P← P երբ լողանալուց հետո բարձրանում էինք բլուրը, Հարոն լուռ էր (16, 29)։

P—→երբ P Հարոն լուռ էր (այն ժամանակ), երբ լողանալուց հետո բարձրանում էինք բլուրը։

P⟶(երբ P) Հարոն, երբ լողանալուց հետո բարձրանում էինք բլուրը, լուռ էր։

Երբ— ով ձևավորված համաժամանակություն արտահայտող կառույցին կարող է հոմանիշ լինել ավելի ընդհանրական իմաստ ունեցող or շաղկապով ձևավորված կառույցը, եթե վերջինս լրացնող բառային միջոցների շնորհիվ ամբողջ բարդ նախադասությունն արտահայտում է ժամանակային հարաբերություն։ Հոմանշային շարքի այս անդամը կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասության ազատության տեսակետից նման է գերիշխող անդամին։ Իրրև իմաստային-նրբերանգային առանձնահատկություն սրա համար պետք է նշել թերևս այն, որ or շաղկապով կապակցվող ժամանակի պարագա երկրորդական նախադասության մեջ մեծ մասամբ երկրորդարար արտահայտված է լինում նաև պատճառի (հիմունքի) կամ պայմանի նշանակության որոշակի երանգ Համմտ՝ «Նրան or տեսնում եմ, հիշում եմ մեր վաղեմի բարեկամությունը»։ Հոմանիշների շարքում այս անդամը, սակայն, առանձնանում է ոչ թե հիմնականում իմաստային կողմի յուրահատկությամբ, այլ ոճական ընդգծված գունավորմամբ։ Այս կառուցվածքի նախադասությունները հատուկ են բանավոր-խոսակցական լեզվին, գեղարվեստական խոսքի մեջ հանդիպելիս էլ պահպանում են իրենց այդ առանձնահատկությունը և ծառայում են գլխավորապես ոճավորման նպատակներին։ Համաժամանակություն արտահայտող այս կառույցը շատ գործածական է հատկապես ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ՝ համմտ. Օձի դլուխը որ ցավում է, բերում դնում է ճամփի մեջտեղը և այլն։ Այսպիսով՝

Որ P ← P Ձեր էն բաղի կողքով or անց եմ կենում, քթիցս մխում է (2, 494)։

Երբ P ←P Երբ ձեր էն բաղի կողքով անց եմ կենում, քթիցս մխում է։ Որ-ը կարող է միանալ նաև երբ շաղկապի հետ՝ ստեղծելով ժամանա-

կի իմաստ արտահայտող մի բաղադրյալ շաղկապ՝ երբ nr: Սա, բարդ նախադասություններ կազմավորելիս, ստեղծում է գերիշխող անդամի հետ նույն առանձնահատկություններն ունեցող կառույց, որի իմաստը նույնպես շատ սերտ է գերիշխող կառույցի իմաստին: Պետք է նշել միայն, որ այս դեպքում էլ գերիշխող անդամը ստանում է որոշակի խոսակցական երանգ, Համմ՝

P⟶երբ P Ու թեթև ցնցվում էր, երբ մտերմական, բայց անխղճահար ձեռքով նետված ծնագնդին խցում էր որևէ մեկի բերանը կամ աչքը (Դ, 5, 1980):

P⟶երբ nr P Ու թեթև ցնցվում էր, երբ որ մտերմական, բայց անխղճահար ձեռքով նետված ծնագնդին խցում էր որևէ մեկի բերանը կամ աչքը:

Բարդ ստորադասական նախադասության գլխավոր և երկրորդական մասերի միջև համաժամանակության իմաստային հարաբերությունն նշող միջոցներից է քանի ստորադասական շաղկապը[8]: Սրանով ձևավորված նախադասությունները հոմանիշ են նույն իմաստային հարաբերությունը դրսևորող վերոբերյալ կառույցներին, սակայն հակադրվում են դրանց իմաստային մի ընդգծված առանձնահատկությամբ: Այս կարգի բարդ նախադասության մասերի միջև առկա համաժամանակությունը վերաբերում է մի ավելի տևական ժամանակամիջոցի[9]: Երկրորդական նախադասությամբ նկարագրվող գործողությունն այս կառուցվածքի դեպքում իր տևողությամբ որոշակի ժամանակային շրջանակների մեջ է դնում գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողությունը, իրենով սահմանափակում է վերջինիս ժամանակը: Օրինակ՝ Քանի ամուսինս կենդանի էր, ես ոչ մի կարուտություն չէի քաշում, (18, 1, 252):

Իմաստային այս յուրահատկությունը թելադրում է այս կարգի բարդ նախադասությունների մեջ բայ-ստորոգյալների ժամանակային ձևերի բազմազան փոխհարաբերություններ: Այսպիսի համաժամանակությունը կարող է վերաբերել անցյալ ժամանակին և արտահայտվել բարդ նախադասության մասերի մեջ կիրառված վաղակատար ժամանակի ձևերով, Համմ. Քանի եկել է, այցելել է ընկերոջը: Նույնպիսի հարաբերություն է արտահայտվում երկրորդական և գլխավոր նախադասությունների մեջ համապատասխանաբար ըղձական և պայմանական եղանակների կիրառությամբ, որոնք տվյալ դեպքում հանդես են գալիս իրենց երկրորդական գործառույթներով և ցույց են տալիս անցյալում պարբերաբար և միաժամանակ կատարված իրադարձություններ ու գործողություններ: Օրինակ՝ Քանի տեսներ, կմոտենար ու ջերմ կբարևեր: Քանի-ով ձևավորված կառույցի մեջ համաժամանակության իմաստային հարաբերությունը ընդհանրապես ունի ևս մեկ լրացուցիչ նրբերանգ. նշված նախադասություններն արտահայտում են ոչ թե մեկ անգամ միաժամանակ կատար-

ված գործողություններ, այլ այդպիսի միաժամանակյա գործողությունների՝ մեկից ավելի անգամ կրկնվելը։ Երբ-ով կազմավորված հոմանիշ կառույցներից այս կարգի նախադասություններին ավելի սերտ են երկրորդական նախադասության մեջ ամեն անգամ, միշտ, ամեն ժամանակ և նման բառեր ու բառակապակցություններ պարունակող բարդ նախադասությունները։ Համմտ.

Քանի մեր տուն գար, միշտ կոնֆետ կբերեր ինձ համար (15, 2, 158)

Ամեն անգամ, երբ մեր տուն էր գալիս, միշտ կոնֆետ էր բերում ինձ համար։

Ինչպես երևում է, ըղձական և պայմանական անցյալի ձևերը միայն Քանի շաղկապով կառուցված նախադասություններում են դրսևորում անցյալի անկատարի իմաստով գործածվելու և ժամանակային նշված հարաբերության իմաստն արտահայտելու իրենց կարողությունը։ Հետևաբար, երբ-ով փոխակերպվելիս, նման կարգի նախադասություններում վերջականգնվում են սահմանական եղանակի անցյալի ձևերը։

Քանի-ով ձևավորվող բարդ նախադասություններում մասերի ժամանակային պլաններն նույնությունը պարտադիր չէ։ Դա ևս բխում է նրա միջոցով արտահայտվող համաժամանակության յուրահատուկ բնույթից։ Համմտ՝ Քանի դու կալանավոր ես, այդքան ժամանակ լսարանում քո նստարանի վրա կդնեն եղևնյա պսակ (2, 615)։ Իմաստային նույն հարաբերությունը կարող է ձևավորվել նաև ինչհան, որհան դերանուններով, Քանի անգամ կապակցությամբ։ Գործողությունների պարբերական կրկնության իմաստը պահպանվում է երբ-ով կառույցի մեջ, եթե վերջինիս երկրորդական նախադասությունը անենթակա է՝ ըղձական երկրորդ դիմքի ստորոգյալով։ Օր. Քանի գնում եմ՝ զբաղված է, Ինչհան գնում եմ՝ զբաղված է և երբ գնաս՝ զբաղված է։ Իբրև այս շաղկապով ձևավորված բարդ կառույցի ոճական առանձնահատկություն պետք է նշել նրա տարածված լինելը ժողովրդախոսակցական լեզվում։ Ոճական տեսակետից այս կառույցին հակադրվում է իմաստային նույնպիսի հարաբերություն դրսևորող հոմանիշ մեկ այլ կառույց, որը ձևավորվում է Քանի դեռ շաղկապով։ Սա որոշ իմաստով նախորդ կառույցի գրական տարբերակն է, գործածվում է գեղարվեստական գրականության մեջ, հրապարակախոսական երկերում, ավելի սակավ՝ գիտական և պաշտոնական բնույթի տեքստերում։ Ի տարբերություն Քանի-ով կապվող բարդ նախադասությունների, այս կառույցը չի թույլատրում միաժամանակ կատարվող գործողությունների պարբերական կրկնության իմաստային նրբերանգի դրսևորում։ Քանի դեռ շաղկապի դեռ բաղադրիչը ավելի է ընդգծում գլխավոր նախադասության գործողության՝ երկրորդականի գործողության տևողությամբ սահմանափակվելու հանգամանքը, այսինքն՝ գլխավոր

նախադասության մեջ նկարագրված գործողությունը կամ իրողությունը տեղի ունի այնքան ժամանակ, քանի դեռ կատարվում կամ տեղի է ունենում երկրորդականով տրված գործողությունը, իրողությունը, վիճակը։

Քանի դեռ P← P քանի դեռ տևում է պատերազմը, գերիներին ետ չեն տալիս (25, 7, 377)։

Երբ P← P երբ դեռ տևում է պատերազմը, գերիներին ետ չեն տալիս։ Այս կառուցվածքն ունեցող, ինչպես և քանի շաղկապով ձևավորված բարդ նախադասությունների մեջ արտահայտվող համաժամանակության իմաստը բավական աղոտ և անորոշ է դրսևորվում, երբ երկրորդական նախադասության ստորոգյալը ժխտական ձևով խոնարհված բայ է։ Այս դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալի միջոցով արտահայտված գործողությունը կամ իրողությունը կարող է տեղի ունենալ այնքան ժամանակ, քանի դեռ չի սկսվել կամ չի կատարվել երկրորդական նախադասության ստորոգյալի բովանդակությունը կազմող գործողությունը կամ իրողությունը։ Օրինակ՝ Օրիորդը չկամեցավ վերադառնալ տուն, քանի դեռ սպասված գումարը չէր ստացել (17, 1, 13)։ Այսպիսի նախադասությունների մեջ երկրորդական և գլխավոր մասերի միջև եղած ժամանակային հարաբերությունը, որպես կանոն, ուղեկցվում է հիմունքի (կամ պայմանի) և հետևանքի իմաստային հարաբերության որոշակի երանգով։ Նման կարգի նախադասությունների հոմանիշական փոխակերպությունների ժամանակ պետք է դիմել բառային օժանդակ միջոցների, որոնք ճշտում կամ ավելի որոշակի են դարձնում ժամանակային հարաբերության իմաստը։

Այսպես՝ նա շտապում էր անել այդ, քանի դեռ բանակը չէր շարժվել յուր տեղից (25, 7, 463)։ Նա շտապում էր անել այդ այն ժամանակ, երբ դեռ բանակը չէր շարժվել յուր տեղից։

Քանի և քանի դեռ շաղկապներով ձևավորված բարդ նախադասությունները նույնպես ունեն մասերի շարադասության փոփոխությամբ ստացվող կառուցվածքային տարբերակներ։ Նկարագրված վերջին տիպի դեպքում երկրորդական նախադասությունը գերազանցապես ետադաս դիրք ունի, իսկ մնացած դեպքերում ավելի բնական է նշված շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասության առաջադաս կիրառությունը։ Միջադաս դիրքում դրանք հանդես են գալիս շատ հազվադեպ։

Այս շաղկապներով ստացվող կառույցների մեջ, դրանք խոսքի մեջ իրացնող բարդ նախադասությունների միջոցով արտահայտվում է միայն գործողությունների և իրողությունների միջև լիակատար համաժամանակության հարաբերություն։ Այս պատճառով էլ դրանց գլխավոր և երկրորդական մասերի ժամանակային պլանների փոխհարաբերությունը

տվյալ իմաստն արտահայտելու տեսակետից լեզվական-կառուցվածքային ծանրաբեռնվածություն չունի։ Նույնը չի կարելի ասել մինչ և մինչդեռ շաղկապներով ձևավորվող կառույցների մասին, որոնց միջոցով կարող է արտահայտվել և՛ լիակատար, և՛ մասնակի համաժամանակություն՝ կապված մասերի ստորոգյալների ժամանակային որոշակի համապատասխանության հետ։ Լիակատար համաժամանակություն արտահայտող կառույցների հոմանշային շարքը մտնելու համար դրանց գլխավոր և երկրորդական մասերի ժամանակային պլանները պետք է համընկնեն։ Օրինակ՝ Մինչ ես շարունակում եմ իմ քայլամոլոր երթը, դռներից մեկի մոտ օդանավակայանի համազգեստով սևուկ մի աղջիկ ինչ-որ բան է հարցնում ուղևորներին (12, 10)։

Այս կառույցը ունի ժամանակային սահմանափակման իմաստային նույն երանգը, ինչ fանի, fանի դեռ շաղկապներով ձևավորվող նախադասությունները։ Իբրև հոմանիշներ սրանց տարբերությունը հիմնականում ոճական բնույթի է. մինչ-ով կառույցները բնորոշ են գեղարվեստական խոսքին։ Սրանց միջև առկա է նաև որոշակի տարբերություն կառուցվածքների խոսքային իրացման հնարավորությունների առումով։ Քանի, fանի դեռ շաղկապները ավելի հաճախ զուգորդվում են ժխտական ստորոգյալների հետ, որով դրանց արտահայտած համաժամանակությունը ուրույն բնույթ է ստանում։ Մինչ շաղկապով ձևավորվող նախադասությունների համար առավել բնական է երկրորդական մասի դրական խոնարհմամբ ստորոգյալ։ Համմտ՝ Քանի նա չէր եկել, ես չէի կարողանում որոշել անելիքս, և Մինչ նա չէր եկել, ես չէի կարողանում...։ Երկրորդը բնական չէ։ Մինչդեռ շաղկապով ձևավորված կառույցն իր արտահայտած իմաստային երանգով և ոճական նկարագրով գրեթե նույնանիշ է մինչ-ով կառույցին։ Սրանց միջև թերևս կարելի է նշել իմաստային մի շատ նուրբ տարբերություն. մինչդեռ շաղկապն իր բազմիմաստության շնորհիվ համաժամանակության հարաբերությանը հաղորդում է նաև հակադրության աղոտ նրբերանգ, որը ժամանակի գերիշխող իմաստի մեջ մնում է դրեթե աննկատ։ Համմտ՝ Մինչդեռ (մինչ) անծանոթ տեղը և յուր հովիվը մտերմական խոսակցության մեջ էին, լուսինը արդեն բավական բարձրացել էր հորիզոնից և լուռ ու խաղաղ շրջակայքը հանգչում էր սքանչելի լուսավորության մեջ (25, 7, 330)։ Մինչդեռ լուսանկարիչը դեռ թոնթորում էր իր գլխին գցած սև լաթի տակ, լճափին իրենց օրը խոսքուզրույցով անցկացնող կանայք հիանում էին Միտյայի աչքերով (Գ, 5, 1980)։ Իմաստային նշված նրբերանգի առկայությունը կարող է հաստատել մինչդեռ ժամանակային և իսկ հակադրական շաղկապներով կազմավորված կառույցների իմաստային առնչության փաստը (Համմտ՝ լուսանկարիչը դեռ թոնթորում էր իր գլխին գցած սև լաթի տակ,

իսկ չհափին իրենց օրը խոսքուղրուլցով անցկացնող կանայք հիանում էին Միտյայի աչքերով)։ Ժամանակային մյուս շաղկապներով կապակցվող կառուլցների դեպքում իմաստային այս կապը անհամեմատ թույլ է (բառակազմերի նույնության պայմաններում)։ Իրրև կառուցվածքային առանձնահատկություն պետք է նշել նաև, որ մինչ և մինչդեռ շաղկապներով երկրորդական նախադասությունները ետադաս և միջադաս դիրքերում դրեթե չեն հանդիպում։ Այսպիսով, համաժամանակության կառուլցների հոմանիշական շարքը լրացվում է այսպիսի անդամներով՝

Երբ Р ← Р *Երբ վիպագրությունը անդրկովկասյան հայերի մեջ այդ դրության մեջ էր, սարերի մյուս կողմում, հեռավոր Մոսկվայում, հրատարակվում էր «Հյուսիսսափայլը»։*

Մինչ Р ← Р *Մինչ վիպագրությունը անդրկովկասյան հայերի մեջ այդ դրության մեջ էր...*

Մինչդեռ Р ← Р *Մինչդեռ վիպագրությունը անդրկովկասյան հայերի մեջ... (25, 10, 117)*

բ) Համադասական կառուլցներ

Համաժամանակությունը և ընդհանրապես ժամանակային հարաբերությունները իրենց առավել լիարժեք լեզվական արտացոլումը դտնում են ստորադասական շաղկապներով կառուցվող բարդ նախադասությունների մեջ։ Եվ դա միանգամայն հասկանալի է, քանի որ այդ շաղկապներն իրենք արդեն օժտված են ժամանակի ընդհանուր կամ որոշակիորեն մասնավորված իմաստներով։ Բարդ նախադասության մասերի կապակցման դերով կիրառված շաղկապի իմաստը այդ մասերի միջև իմաստային հարաբերության ձևավորման ամենագլխավոր պայմանն է, թեև, ինչպես վերևում նշել ենք, այդ հարաբերությունը կոնկրետ և որոշակի դրսևորելու հարցում անկարևոր չեն նաև նախադասության կառուցվածքային այլ հատկանիշներ, և, հատկապես, մասերի բառային կոնկրետ բովանդակությունները։ Այս վերջին կարգի գործոնները բարդ նախադասության իմաստային կողմի նկարագիրը ձևավորելու տեսակետից վճռական են դառնում հատկապես շաղկապավոր համադասական և անշաղկապ կառուլցների մեջ։

Ընդհանրապես համադասական և ստորադասական քերականական հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշության մասին խոսելիս պետք է նկատի առնել այն հանգամանքը, որ դրանց քերականական հակադրության հիմքում ընկած են հաղորդակցական և իմաստային բնույթի տարբերություններ, և դրանք հոմանիշ կարող են դիտվել այն դեպքում միայն, եթե քերականական կախման

առկայությունը կամ բացակայությունը պայմանավորված չէ բարդ նախադասությունների իմաստային հիմքը կազմող դենոտատային տարբեր հարաբերություններով։ Լինելով շարահյուսական կարգեր, համադասությունը և ստորադասությունը բարդ նախադասության մասերի շարահյուսական կապը կազմավորելուց բացի «մասնագիտացած» են նաև իմաստային հարաբերությունների տարբեր տեսակների հետ հարաբերակցվելու տեսակետից։ Համադասական կառույցներով դրսևորվող հարաբերությունները ընդունված է բաժանել միավորական, ներհակական, տրոհականև նավելական տեսակների[10]։ Ինչպես ստորադասական տիպի դեպքում, այստեղ էլ լեզվական նշված իմաստները կարող են ձևավորվել հատուկ շաղկապներով կազմավորված և անշաղկապ կառուցվածքի բարդ նախադասությունների միջոցով։ Այս դեպքում նույնպես բարդ նախադասության մասերի միջև հանդես եկող հիմնական հարաբերության իմաստը իր մեջ ընդգրկում է նաև այդ մասերի մեջ արտահայտված գործողությունների կամ իրողությունների ժամանակային կապը՝ ստորոգյալների քերականական ժամանակների փոխհարաբերությամբ և բառային հատուկ միջոցների շնորհիվ։ Քանի որ բարդ համադասական նախադասություններ ձևավորող միջոցների շարքում չկան ժամանակի իմաստ ունեցող հատուկ շաղկապներ, ուստի համադասական տվյալ նախադասության համար ժամանակային իմաստի գերիշխող լինելը պայմանավորված է հիմնականում նրա կոնկրետ բառակազմի՝ հաղորդման տվյալ իրադրության մեջ արտահայտած բովանդակությամբ։

«Երբ Համլիկը երգում էր, ընկերուհիները ուշադիր լսում էին նրան» և «Համլիկը երգում էր, իսկ ընկերուհիները ուշադիր լսում էին նրան» նախադասությունները չեն կարող միավորվել համաժամանակություն արտահայտող կառույցների հոմանիշական շարքում, որովհետև երկրորդ նախադասության մեջ գերիշխողը ոչ թե համաժամանակության, այլ գործողությունների հանդիպադրման լեզվական իմաստն է, թեև վերջիններիս միաժամանակ կատարվելու հանգամանքը ևս որոշակի տեղ ունի այդ նախադասության իմաստային նկարագրի մեջ։ Համադասական կառուցվածքով արտահայտված ժամանակային հարաբերությունները այդ կառույցի իմաստային կողմի համար որոշակի կշիռ են ձեռք բերում հատկապես միավորական հարաբերությամբ կապված համազոր նախադասությունների դեպքում, որը մեզ հիմք է տալիս հոմանիշների նույն շարքի մեջ դնել ժամանակային իմաստ արտահայտող ստորադասական և միավորական հարաբերություններ դրսևորող համադասական կառույցները։ Սակայն այստեղ մեկ անգամ ևս պետք է շեշտել, որ այդպիսի հոմանիշությունը բացարձակ չէ, այլ խստորեն պայմանավորված է այդ կառույցների խոսքային իրացումը հանդիսացող նախադասությունների

կոնկրետ առանձնահատկություններով։ Ճիշտ է, լեզուն հնարավորություն է տալիս միևնույն հարաբերությունն արտահայտելու համար ընտրություն կատարել տարբեր կառուցվածքներ ունեցող և շարահյուսական տարբեր տիպերի վերաբերող նախադասությունների միջև, սակայն ինչ-որ չափով նաև կանխորոշում է դրանցից յուրաքանչյուրի կիրառության խոսքային պայմաններն ու ոլորտները։ Այս իմաստով համադասական և ստորադասական հոմանիշ կառույցները միշտ չէ, որ կարող են փոխարինել միմյանց։

Եթե ժամանակային հարաբերություններ արտահայտող ստորադասական կառույցների մասերի միջև առկա քերականական կախումը պայմանավորված է դրանց իմաստային սերտ առնչակցությամբ, ապա համադասական կառույցների մասերի քերականորեն համազոր լինելը արդյունք է դրանց հարաբերական անկախության։ Այս է պատճառը, որ, ասենք, միավորական և, ու շաղկապներով կապվող համադասական կառույցի մեջ կարող են դրսևորվել իմաստային տարբեր ու ոչ միանշանակ հարաբերություններ։ Այս շաղկապների բառային իմաստը հանդում է շարահյուսական տարբեր միավորներ կապելու իրենց գործառույթանը, թեև խոսքից դուրս էլ դրանք որոշակիորեն ակնարկում են թվարկման կամ հավելման հարաբերություններ։ Ահա այս առանձնահատկությունների շնորհիվ ժամանակային հարաբերություններ արտահայտող համադասական կառույցները երբեմն չեն փոխակերպվում նույն իմաստով բնութագրվող երբ-ով ստորադասական կառույցի։ Համմտ. Բարդինները խշշացին, աղբյուրները լաց եղան (22, 429) անշաղկապ նախադասությունը, որի մեջ արտահայտված համաժամանակության հարաբերությունը երբ-ով փոխակերպվելու դեպքում կվերածվի ժամանակային հաջորդման (Երբ բարդինները խշշացին, աղբյուրները լաց եղան), քանի որ վերջին կառույցը այդ հարաբերությունը դրսևորելիս անցյալ կատարյալ ժամանակաձևերի զուգորդում հիմնականում չի թույլատրում։

Այսպիսով, համաժամանակության իմաստային հարաբերություն արտահայտող հոմանիշ կառույցների շարքում տեղ գրավելու համար և, ու շաղկապներով կազմավորված համադասական նախադասությունների մասերի մեջ պետք է կիրառված լինեն այնպիսի բայաձևեր, որոնք համապատասխանում են գերիշխող ստորադասական կառույցի մեջ կիրառված՝ նույն այդ հարաբերության արտահայտմանը ծառայող բայաձևերին։ Դրանք, ինչպես նշել ենք, ամենից հաճախ սահմանական ներկայի և անցյալի անկատարի ձևերն են։ Մասերի ստորոգյալների ժամանակային այլ փոխհարաբերության դեպքում համադասական կառույցի հոմանիշական փոխակերպումը գերիշխող կառույցին կամ անհնար է, կամ էլ փոխակերպման հետևանքով փոխվում է նաև ժամանակային հա-

բաբերության բնույթը։ Հմմտ. Նստել էին շարեշար՝ թմբլիկ, սիրունատես, տաքուկ հագնված, ու ես խոսում էի նրանց հետ (10, 4)։ Հնարավոր չէ՝ երբ նստել էին շարեշար..., ես խոսում էի նրանց հետ, կամ երբ խոսում էի նրանց հետ..., նստել էին շարեշար... փոխակերպումը։ Ընդհանրապես պետք է նշել, որ այսպիսի փոխակերպումների ժամանակ համադասական քերականական հարաբերությունը փոխվում է լրացական կախման, որը մեծ մասամբ դժվար և ինչ-որ չափով արհեստական է դարձնում նման բնույթի փոխակերպումը։ Այդպիսի հոմանիշական փոխակերպմանը խոչընդոտել կարող են նաև իմաստային այն լրացուցիչ երանգները, որ համատեղվում են ժամանակի իմաստի հետ։ Հմմտ՝ Խեղճուկրակ էին դահլիճի բոլոր աղջիկներն ու բոլոր կանայք և ամաչում էին նայել միմյանց (15, 22)։ Այստեղ առկա պատճառային կապը ավելի հնարավոր է դարձնում որովհետև-ով փոխակերպումը և խանգարում է երբ-ով փոխակերպմանը։ Խանգարիչ հանգամանքների թվում է նաև երկու մասերի միևնույն ենթական Հմմտ՝ Ես չէի հասկանում, թե ինչու է հրաժարվում և համառությունը վերագրում էի արվեստագետի խորված արժանապատվությանը (6, 11)։ Այնուամենայնիվ դերիշխող անդամին փոխակերպվելու կարողությունը բոլոր դեպքերի համար մնում է հոմանիշության որոշման միակ վստահելի չափանիշը։ Եթե համադասական տվյալ կառույցը չի թույլատրում հոմանիշական փոխակերպում երբ շաղկապով, ապա նշանակում է, որ նրա բառակազմի միջոցով արտահայտված բովանդակությունը հաղորդողի կողմից զուտ ժամանակային չի դիտվում։ Նրանում կարող են հաղորդման տեսակետից կարևորություն ստանալ միաժամանակ թվարկման իմաստը կամ պատճառահետևանքային ու պայմանահետևանքային հարաբերությունները։ Իմաստային այս առանձնահատկություններին զուգահեռ հիմնականում համադասական նախադասություններին հատուկ կառուցվածքային հատկանիշներ, ինչպիսիք են, օրինակ, համաժամանակության դրսևորումը անցյալ կատարյալի կամ վաղակատարի ձևերի զուգորդումներով, մասերի քերականական անկախությունը և այլն։ Ասվածը կարելի է հաստատել օրինակներով։ Այսպես՝ Մարդկանց հետ չես շփվում և գրում ես հին գյուղի եղած-չեղած ծերունիների մասին (15, 73) նախադասությունը, մեր կարծիքով տեղ չունի ժամանակային իմաստ արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշական շարքում, որովհետև նրա մասերի միջև որոշակիորեն առկա է պատճառահետևանքային կապ, և, միաժամանակ, մասերը ունեն միևնույն ենթական։ Վերցնենք այլ օրինակ. Կովը վիզը ծալել, գլուխը դրել է նրա ուսին և միասին քնում են (15, 76)։ Այստեղ առկա համաժամանակության իմաստը դրսևորված է բայական այնպիսի ձևերի զուգորդությամբ (վաղակատար և ներկա),

որոնք իրենց այդ դերով բնական չեն բարդ ստորադասական նախադասությունների մեջ (Համմո՝ երբ կովը վիզը ծալել, գլուխը դրել է նրա ոտին, միասին քնում են), այնուհետև, հաղորդողի համար այս նախադասության նկու մասերի մեջ պարունակված բովանդակությունները դիտվում են իրրև հավասարապես կարևոր, որի պատճառով էլ դժվարանում է փոխակերպման միջոցով դրանց միջև հաստատել քերականական կախման հարաբերություն։

Վերն արված ընդհանուր դիտողությունները, այսպիսով, ցույց են տալիս, որ բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների միջոցով արտահայտված նույն բնույթի ժամանակային կապը հաճախ իմաստային այնպիսի առանձնահատկություններ է հանդես բերում, որոնք չեն տեղավորվում նրբիմաստային հոմանիշական տարբերությունների շրջանակներում և իրավունք չեն տալիս այդ նախադասությունները միավորելու հոմանիշների միևնույն շարքում։ Նշված տիպի բարդ նախադասությունների միջև հոմանիշական կապն իրականանում է այն դեպքերում միայն, երբ դրանց բառային և կառուցվածքային հատկանիշները չեն խոչընդոտում այդ կառուցվածքների փոխադարձ փոխակերպմանը։ Մեզ համար կարևոր են հենց այս դեպքերը, ուստի անցնենք դրանց դիտարկմանը։

Համաժամանակություն արտահայտող համադասական և ստորադասական կառույցները հոմանիշ կարող են լինել ներկայի ժամանակային պլանում։ Երկու մասերի միջև այս դեպքում կիրառված են սահմանականի ներկայի ձևերը։

Երբ Р ← Р *Երբ երգում է, խոշոր աչքերից գլոր-գլոր կաթում է արցունքը։*

Р—և(ու)—Р *Երգում է, ու խոշոր աչքերից գլոր-գլոր կաթում է արցունքը։ (12, 30—31)։*

Հոմանիշ այս նախադասությունների միջև կարելի է տեսնել իմաստային մի նուրբ տարբերություն. առաջինն՝ ստորադասական կառույցի մեջ արտահայտված համաժամանակությունը ենթադրում է նաև այդ գործողությունների պարբերական կրկնություն, մինչդեռ համադասական կառույցը այդպիսի առանձնահատկություն կարող է ձեռք բերել միայն հատուկ համատեքստի մեջ։ Համադասական և ստորադասական բարդ կառույցները կարող են հոմանիշ լինել նաև անցյալի ժամանակային պլանում։ Այս դեպքի համար բնական է անցյալի անկատար ժամանակի կիրառությունը երկու կառույցների մասերի մեջ։ Այսպես.

Р—և—Р *Հետո սանդքարի կշտին մանուշակն էր դողում, և ալուչան ծիրանենու տնազն էր անում (3, 10)։*

Երբ Р ← Р *(Հետո), երբ սանդքարի գլխին մանուշակն էր դողում, ալուչան ծիրանենու տնազն էր անում։*

Անցյալ ժամանակին վերաբերող այլ բայաձևերի զուգորդմամբ համադասական և ստորադասական նախադասությունները համաժամանակություն արտահայտելու տեսակետից սովորաբար հոմանիշական զույգ չեն կազմում։ Դրանց միջև հոմանիշություն կարող է հաստատվել տարժամանակային հարաբերություններ դրսևորելու դեպքում։

Ապառնիի ժամանակային պլանում բարդ նախադասությունների միջոցով արտահայտվող համաժամանակությունը նույնպես սակավ հանդիպող երևույթ է։ Ապառնի ժամանակին վերաբերող բայաձևերի զուգորդությունը նույնպես ավելի հաճախ տարժամանակային հարաբերություն կարող է դրսևորել։ Օր. **Երբ** *գնամ, նրան պիտի հանդիպեմ և այլն։ Համադասական նախադասությունների մեջ արտահայտված ապառնի համաժամանակությունը սովորաբար զուգակցված է լինում թվարկման նշանակությամբ։ Սրանց և ստորադասական տիպի նախադասությունների հոմանիշությունը տեղի ունի դարձյալ ոչ բոլոր դեպքերում։ Դրան կարող են նպաստել մասնավորապես մասերի ստորոդյալների բառային իմաստները և մասերի մեջ կիրառված տարբեր եղանակները։ Համմտ.* Р—և—Р *Մենք առավոտները ընտանիքով սուրճ կխմենք և մեր քաղաքավարի երեխաները չեն խոսի սեղանի շուրջը (7, 16)։*

Երբ Р ← Р *Երբ մենք առավոտները ընտանիքով սուրճ կխմենք, մեր քաղաքավարի երեխաները չեն խոսի սեղանի շուրջը։*

Միմյանց հետ հոմանիշական զույգ կազմող համադասական և ստորադասական բարդ նախադասությունների միջև իմաստային տարբերությունը համաժամանակության իմաստի՝ մի դեպքում ավելի հստակ ու որոշակի (ստորադասական տիպ) մյուս դեպքում համեմատաբար թույլ և իմաստային այլ երանգներով զուգակցված (համադասական տիպ) արտահայտվելու մեջ է։ Ոճական առումով ևս սրանք տարբերվում են։ Համադասական կառույցները անհամեմատ ավելի հաճախական են գեղարվեստական խոսքում, բանավոր-խոսակցական, առօրյա ոճերում, քան, ասենք, գիտական կամ պաշտոնական խոսքում։ Դա բացատրվում է նրանով, որ վերջին դեպքում բարդ նախադասության մասերի իմաստային կապը ձգտում է առավել հստակ դրսևորման, և բնական է, որ այդ ոճերում ավելի շատ կիրառվում են բարդ ստորադասական տիպի կառույցներ։ Համադասական տիպի ներսում և և ու շաղկապներով կապակցվող նախադասությունները միմյանց նկատմամբ գրեթե նույնանիշական կապի մեջ են։ Հնարավոր է թերևս սրանց միջև նշել գործառական բնույթի որոշ տարբերություն. ու-ով կազմավորված համադասական կառույցը գիտական և պաշտոնական տեքստերում կիրառվելու հաճախականու-

Ցյան տեսակետից ակնհայտորեն զիջում է և-ով ձևավորված կառույցին։

Համաժամանակության իմաստային հարաբերություն դրսևորելու գործառությամբ հաճախ հանդես են գալիս ճամադասական անշաղկապ նախադասությունները։ Իբրև բարդ նախադասության առանձին կառուցվածքային տիպ, սրանք շարահյուսական իրենց առանձնահատկություններով տարբերվում են և՛ ստորադասական (շաղկապավոր և անշաղկապ), և՛ համադասական շաղկապավոր կառույցներից։ Երկբաղադրիչ համադասական անշաղկապ նախադասությունները գերազանցապես բաց կառուցվածքներ են, թույլատրում են այլ բաղադրիչների հավելում։ Այս առանձնահատկությունը պայմանավորված է նրանց բովանդակային կողմի մեջ թվարկման նշանակության առկայությամբ, որը մշտապես ուղեկցում է համաժամանակության (նաև ժամանակային այլ հարաբերությունների) իմաստին։ Համադասական շաղկապավոր կառույցները համաժամանակություն արտահայտելիս գրեթե միշտ կարող են փոխակերպվել իրենց անշաղկապ տարբերակներին, և այդ դեպքում նրանց մեջ առավել ընդգծվում է թվարկման իմաստային երանգը։ Հմմտ՝ Վարսիկը գոհունակ ժպտում է և հյուրերին սեղանի շուրջ հրավիրում և Վարսիկը գոհունակ ժպտում է, հյուրերին սեղանի շուրջ հրավիրում։ (12, 54)։ Ստորադասական շաղկապավոր կառույցների (մասնավորապես երբ-ով կառույցի) հետ հոմանիշական զույգ կազմելու համար համադասական անշաղկապ կառույցը դարձյալ պետք է բավարարի խոսքային իրացման որոշակի պահանջների։ Դրանցից ամենակարևորները նույնն են համադասական շաղկապավոր նախադասությունների համար նշված բառային և կառուցվածքային հատկանիշների հետ։ Այստեղ էլ հոմանիշության բավարար պայման է մասերի ստորոգյալների ներկա-ներկա կամ անցյալի անկատար-անցյալի անկատար համապատասխանությունը, կառուցվածքի ոչ միավորյալ լինելը (մասերի մեջ տարբեր ենթակաների առկայությունը), և, վերջապես, ստորոգյալների և կառույցը լրացնող մյուս բառերի իմաստների որոշակի սահմանափակումները։ Այս վերջին հանգամանքը մեծ դեր ունի ընդհանրապես բարդ նախադասությունների և մասնավորապես անշաղկապ համադասական կառույցների իմաստային նկարագիրը որոշելու հարցում։ Այսպես, վերը նշեցինք, որ վաղ-կատարի ձևերի զուգորդմամբ արտահայտվող համաժամանակությունը դրսևորվում է սովորաբար համադասական կառույցի միջոցով և ստորադասական կառույցի փոխակերպվելիս համաժամանակությունը փոխվում է հաջորդման (Հմմտ՝ Մենավոր խցի փայտե ու պողպատե դռները բացվել էին, պատերը վերացել էին կարծես... (7, 52) և Երբ մենավոր խցի փայտե ու պողպատե դռները բացվել էին, պատերը վերացել էին կարծես)։ Սակայն կան որոշ դեպքեր, երբ ստորոգյալների իմաստային

առնչակցությունը թույլատրում է վաղակատար ժամանակների զուգորդմամբ համաժամանակություն դրսևորել նաև ստորադասական կառույցի միջոցով։ Դա տեղի ունի մասնավորապես այն դեպքում, երբ համադասական նախադասության առաջին բաղադրիչի ստորոգյալը որևէ վիճակ կամ տևական գործողություն նշանակող բայ է, իսկ երկրորդ ստորոգյալը իր իմաստով հաստատում է առաջինի նշանակած վիճակը կամ գործողությունը և պայմանավորված է նրանով։ Համմտ.՝

Նկեղեցին գործել է էջմիածնի հովանու տակ, ծխականները լի օրերին իրենց գործ ու արհեստով են զբաղվել (12, 32)։

Երբ եկեղեցին գործել է էջմիածնի հովանու տակ, ծխականները լի օրերին իրենց գործ ու արհեստով են զբաղվել։

Իհարկե, նման նախադասություններն էլ հոմանիշ կարելի է կոչել վերապահությամբ, այն դեպքերում միայն, երբ համատեքստի մեջ ստորոգյալների արտահայտած գործողությունները դիտվում են իբրև միմյանցով փոխպայմանավորված և չեն բերվում իբրև միաժամանակ կատարված անկախ գործողությունների թվարկում։

Բերենք անշաղկապ համադասական նախադասությունների այլ օրինակներ, որոնք իբրև հոմանիշներ մտնում են համաժամանակության հոմանիշական շարքը։

ա) Ներկայի ժամանակային պլանում.

Р—Р Ուսանողը պատասխանում է հարցերին, քննողները գոհունակությամբ լսում են նրան։

Երբ Р ← Р Երբ ուսանողը պատասխանում է հարցերին, քննողները գոհունակությամբ լսում են նրան։

բ) Անցյալի ժամանակային պլանում.

Р—Р Գնչխեղդ շները մոտ-մոտ էին անում, գոռում, Ավեն քշում էր շներին... (3, 26)։

Երբ Р ← Р Երբ գնչխեղդ շները մոտ-մոտ էին անում, գոռում, Ավեն քշում էր շներին։

Անշաղկապ համադասական կառույցի դեպքում մասերի քերականական կապը ավելի թույլ է դրսևորվում, քան շաղկապավոր կառույցներում։ Սա նշանակում է, որ անշաղկապ նախադասություններն ավելի քիչ հնարավորություններ ունեն փոխակերպվելու ստորադասական կառույցի և հոմանիշային զույգ կազմելու վերջինիս հետ։

Համադասական (անշաղկապ և շաղկապավոր) և ստորադասական կառույցների հոմանիշության դեպքերը քննելիս մենք իբրև համեմատության եղր ընդունեցինք համաժամանակության նրբերանգներն արտահայտելու տեսակետից չեզոք՝ երբ շաղկապով ձևավորվող գերիշխող կառույցը։ Քանի որ վերջինս այն գլխավոր առանցքն է, որի շուրջը միա-

վորվում են մյուս հոմանիշ կառույցները, ապա պետք է ընդունել, որ առանձին-առանձին դերիշխող կառույցի հետ հոմանշային զույգեր կազմող նախադասությունները հոմանիշ կարող են լինել նաև միմյանց նկատմամբ։ Համադասական կառույցների միջոցով, օրինակ, համապատասխան համատեքստի մեջ կարող են դրսևորվել իմաստային այն նրբերանգները, որոնք սովորաբար արտահայտվում են ստորադասական շաղկապներով (ֆանի, ֆանի դեռ, մինչդեռ և այլն) ձևավորված կառույցներում։ Այս դեպքերում համադասական նախադասության մեջ կարող են հանդես գալ բառային օժանդակ միջոցներ հմմտ՝ Շավոյի կինը քանի կենդանի է, չի թողնի, որ աղան այս տնից աղջիկ տանե (25, 3, 135) և Շավոյի կինը դեռ կենդանի է ու չի թողնի, որ աղան այս տնից աղջիկ տանե, Շավոյի կինը դեռ կենդանի է, չի թողնի, որ աղան այս տնից աղջիկ տանե։

Բարդ ստորադասական և համադասական նախադասությունների միջև հոմանիշական կապի առկայությունն ստուգելու միջոց կարող է ծառայել դրանցից յուրաքանչյուրի փոխակերպումը պարզ նախադասության։ Եթե վերջինիս միջոցով երկու դեպքում էլ դրսևորվում է իմաստային նույն հարաբերությունը (տվյալ դեպքում՝ համաժամանակություն), ապա փոխակերպված բարդ նախադասությունները միմյանց հոմանիշ են։ Հմմտ.՝

Երբ ես մտածում եմ պրոֆեսոր Էյնշտեյնի մասին, զգում եմ, որ արդեն մենակ չեմ այս աշխարհում (Գ, 4, 1979)։

Ես մտածում եմ պրոֆեսոր Էյնշտեյնի մասին և զգում եմ, որ արդեն մենակ չեմ այս աշխարհում։

Պրոֆեսոր Էյնշտեյնի մասին մտածելիս ես զգում եմ, որ արդեն մենակ չեմ այս աշխարհում։

Այսպիսով, լիակատար համաժամանակության իմաստային հարաբերություն դրսևորող բարդ կառույցների հոմանիշական շարքը ունի այսպիսի տեսք.

Կառույցներ	Օրինակներ
Երբ P←P	Երբ Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ։
Երբ որ P←P	Երբ որ Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ։
որ P←P	Արան որ գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ։

Կառույցներ	Օրինակներ
Քանի P—P	Քանի Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ:
Քանի դեռ P←P	Քանի դեռ Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ:
Մինչ P←P	Մինչ Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ:
Մինչդեռ P←P	Մինչդեռ Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ:
P—և /ու/—P	Արան գիրք էր կարդում, և Հակոբը խաղում էր ընկերների հետ:
P—P	Արան գիրք էր կարդում, Հակոբը խաղում էր ընկերների հետ:

ՄԱՍՆԱԿԻ ՀԱՄԱԺԱՄԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու գործողությունների կամ իրողությունների միջև հնարավոր ժամանակային կապի այս տարատեսակն արտահայտող բարդ նախադասությունները կարող են միավորվել հոմանիշ կառույցների մի առանձին շարքի մեջ, քանի որ սրանց բովանդակությունը կազմող մասնակի համաժամանակության հարաբերությունը չի կարող դիտվել իբրև լիակատար համաժամանակության հոմանշային նրբերանգ: Բարդ նախադասության միջոցով մասնակի համաժամանակության իմաստ է դրսևորվում այն դեպքում, երբ նրա մասերից մեկի մեջ արտահայտված է տևական գործողություն, իսկ մյուսում՝ դրա որևէ պահին կատարվող մեկ այլ գործողություն: Իմաստային այս առանձնահատկությունը թելադրում է բարդ նախադասության մասերի ժամանակային պլանների համապատասխան փոխհարաբերություն: Ժամանակակից հայերենի համար մասնակի համաժամանակություն դրսևորելու բնորոշ եղանակը անցյալի անկատար և անցյալ կատարյալ բայական ժամանակների զուգորդումն է բարդ նախադասության կառուցվածքում: Գլխավոր նախադասության գործողությունը նշելու գործառույթամբ հաղվադեպ կարող են հանդես գալ նաև վաղակատար ժամանակի բայաձևեր: Համադասական կառույցների մեջ մասնակի համաժամանակություն կարող է դրսևորվել նաև ժամանակային միևնույն ձևերի զուգորդմամբ (ներկա–ներկա, անց. անկատար–անց. անկատար և այլն). այս դեպքում ժամանակային նշված իմաստը արդյունք է մասերի կոնկրետ բառային բովանդակությունների փոխհարա-

յներության. օրինակ՝ 1968-ի աշունն էր, տոնվում էր Երևանի ծննդյան 2750-ամյակը *(12,37)* *կամ՝* Արյուն է եղել աշխարհում, եղել է եղեռն ու կոիվ, Սրև է երգել ու գարուն այս հիվանդ, հանճարեղ պատանին *(19, 234)*

ա) Ստորադասական կառույցներ

Մասնակի համաժամանակությունը ստորադասական շաղկապավոր կառույցների միջոցով դրսևորվելիս շաղկապող հատուկ միջոցներ չի պահանջում։ Մասերի ժամանակային պլանների մասնակի համապատասխանությունը, ինչպես նշեցինք, արտահայտվում է բայերի որոշակի ձևերի զուգորդմամբ, իսկ դրանց շարահյուսական կապն իրականանում է լիակատար համաժամանակության կառույցներ ձևավորող շաղկապների։ Իմաստային այս հարաբերության արտահայտմանը ծառայում են ամենից առաջ երբ ընդհանրական շաղկապը՝ երբ որ և որ ոճական տարբերակների հետ, ինչպես նաև մինչ, մինչդեռ (որոշ դեպքերում՝ մինչ) շաղկապները։ Քննենք այդ կառույցներն առանձին-առանձին։

Երբ, երբ որ, որ շաղկապներով մասնակի համաժամանակություն արտահայտող կառույցները հանդես են բերում մի հետաքրքրական առանձնահատկություն։

Նրանց միջոցով արտահայտված ժամանակային իմաստը հաճախ կախված չէ մասերի միջև քերականական կախման բնույթից։ Ստորադասական հարաբերություն նշող շաղկապը կարող է միանալ բարդ նախադասության մասերից յուրաքանչյուրին, և, փոխելով քերականական կախման ուղղվածությունը, չանդրադառնալ կառույցի մեջ դրսևորված իմաստային հարաբերության վրա։ Համեմատենք, օրինակ, հետևյալ նախադասությունները։

Այս մտքերի մեջ նա քայլում էր ակումբի առաջ, երբ այնտեղ եկավ դիրեկտոր Փոլադյանը (11, 65)։

Երբ այս մտքերի մեջ նա քայլում էր ակումբի առաջ, այնտեղ եկավ դիրեկտոր Փոլադյանը։

Երբ մենք թերթում էինք դասարաններից մի քանիսի մատյանները, պարզեցինք հետևյալը (Ա, 41, 1981)։

Մենք թերթում էինք դասարանների մի քանիսի մատյանները, երբ պարզեցինք հետևյալը։

Ժամանակային հարաբերություններ արտահայտող բարդ նախադասությունների համար ընդհանրապես ընդունված է ասել, որ երկրորդա-

կան նախադասության մեջ նկարագրված գործողությամբ լրացվում, ավելի որոշակի է դառնում գլխավոր նախադասության գործողության ժամանակը։ Վերը բերված նախադասությունների մասերի միջև լրացական այդպիսի հարաբերություն գոյություն ունի այն դեպքերում, երբ տևական գործողությունը նկարագրված է երկրորդական, իսկ սրա որևէ պահին կատարվող գործողությունը՝ գլխավոր նախադասությամբ։ Առաջին նախադասության մեջ օրինակ, երկրորդական նախադասության մեջ նկարագրված գործողությունը (Նա քայլում էր ակումբի առաջ), իրոք, պարզաբանում, ավելի որոշակի է դարձնում գլխավոր նախադասությամբ նկարագրված գործողության (երևաց դիրեկտոր Փոլադյանը) ժամանակը։ Նույնը չի կարելի ասել այն դեպքերի համար, երբ գլխավոր նախադասության սաորոգյալը արտահայտում է կարճատև, այսինքն՝ երկրորդական նախադասության գործողության որևէ պահին կատարվող գործողությունը։ Այստեղ արդեն գլխավոր նախադասությունն է, որ մտային առումով լրացական դեր է կատարում երկրորդականի նկատմամբ, այսինքն ավելի որոշակի և կոնկրետ է դարձնում սրա մեջ նկարագրված գործողության կամ իրողության ժամանակը[11] (Համմտ՝ Երբ հանդիպեցինք, ես նոր էի գրական ասպարեզ մտնում... (6, 231)։ Այս կարգի բարդ նախադասությունների մասերի միջև առկա իմաստային կախումն, այսպիսով, քերականական համարժեք ձևավորում չի ստանում[12], Մեր կարծիքով, բարդ նախադասության մասերի միջև առկա քերականական հարաբերությունը որոշելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել այդ հարաբերության քերականական ձևավորման չափանիշը, այսինքն՝ երկրորդական համարել բարդ նախադասության այն բաղադրիչը, որի կազմի մեջ է մտնում ստորադասական շաղկապը։

Վերը բերված բարդ նախադասություններն ու դրանց փոխակերպներն, այսպիսով, ժամանակային հարաբերության դրսևորման տեսակետից նկատելի տարբերություններ հանդես չեն բերում և պետք է դիտվեն իբրև հոմանիշներ։ Ասենք նաև, որ շաղկապով կապակցված երկրորդական մասը մասնակի՝ համաժամանակություն արտահայտող կառույցներում ունի ազատ շարադասություն, այսինքն՝ նշված երկու կարգի նախադասություններից ամեն մեկը իր հերթին կարող է ունենալ շարադասական երեք տարբերակ։

Ժամանակային այս հարաբերությունն արտահայտող բարդ նախադասությունների երկու փոխակերպները կարելի է արտահայտել կառուցվածքային մեկ ընդհանուր բանաձևով՝ /Ներբ/P ⇆ P.

/Ներբ/ P ⇆ P ևկան այս ափերը, երբ դեռ չահել էին, չլապինդ (12, 27)։

Երբ նկան այս ափերը, դեռ ջահել էին, չլապինդ։

Պետք է նշել, որ այսպիսի փոխակերպումները ոչ միշտ են հնարավոր կամ բնական։ Մասնակի համաժամանակություն դրսևորելու ավելի տարածված եղանակը դիմավոր և երկրորդական մասերի մեջ համապատասխանաբար անցյալ կատարյալ և անցյալի անկատար բայական ժամանակների զուգորդումն է։ Երբեմն նշված բայաձևերի միջոցով կարող է դրսևորվել նաև տարժամանակային հարաբերություն։ Ճմմտ՝ երբ Վիվանն անկողին ընկավ, Կալենցները այցելում էին իրենց բարեկամին, հույս էին տալիս, թե շուտով ոտքի կկանգնի (6, 50)։ Մասնակի համաժամանակություն արտահայտելիս նշված կառույցը կարող է չենթարկվել վերը նկարագրված փոխակերպմանը և հոմանիշական դույզ չկազմել ստորադասական կապի հակառակ ուղղվածությամբ բնութագրվող տարբերակի հետ։ Դա տեղի ունի մասնավորապես այն նախադասություններում, որոնց դիմավոր մասի անցյալ կատարյալով արտահայտված ստորոգյալը ժխտական խոնարհման բայ է. համեմատենք, օրինակ, հետևյալ նախադասությունները։

Իսկ ես նրա անունը չտվի, երբ ուրիշ թեկնածուներ էին առաջադրվում (Գ, 5, 1980)։

Երբ ես նրա անունը չտվի, ուրիշ թեկնածուներ էին առաջադրվում։

Ինչպես արդեն նշել ենք, մասնակի համաժամանակություն դրսևորող կառույցների հոմանիշական շարքի գերիշխող անդամը երբ-ով ձևավավորված կառույցն է։ Իբրև այդպիսին վերջինս ոճական տեսակետից չեզոք է և ամենից հաճախականն է ժամանակակից հայերենում։ Իմաստային տեսակետից սրան ավելի մոտ է երբ որ-ով հոմանիշ կառույցը, որը օժտված է շարադասական նույն առանձնահատկություններով և ունի փոխակերպման նույնպիսի հնարավորություններ։ Սրանց հոմանիշական հակադրության հիմքը երբ որ շաղկապով կառուցված նախադասությունների խոսակցական երանգն է։

/Երբ/ P ⇆ P Գրիչ էի փնտրում, երբ հեռախոսն աղմկեց (Գ, 4, 1979)։

Երբ գրիչ էի փնտրում, հեռախոսն աղմկեց։

/Երբ որ/ P ⇆ P Գրիչ էի փնտրում, երբ որ հեռախոսն աղմկեց։

Երբ որ գրիչ էի փնտրում, հեռախոսն աղմկեց։

Գերազանցապես բանավոր-խոսակցական ոճում է գործածում ժամանակային նույն հարաբերությունն արտահայտող՝ որ շաղկապով ձևավորված կառույցը։ Սա գերիշխող կառույցի խոսակցական տարբերակն

է և գրական ոճերում կիրառվելու դեպքում խոսքին կենդանի խոսակցական երանգ է հաղորդում։ Օրինակներ՝ Որ նախաճաշում էինք, մայրը մի դեպք պատմեց։ Ես Կալենցների տանն էի, որ նկարիչը կտավն ամրացրեց նկարակալին, դիմացն ունենալով մի երիտասարդ տիկնոջ (6, 44)։ Սրանք ևս կառուցվածքային առանձնահատկություններով նման են վերը նկարագրված կառույցներին, այսինքն՝ օժտված են շարադասական ճկունությամբ և հնարավորություն են տալիս ստորադասական կախման փոփոխությամբ ստացվող փոխակերպումների։ Այսպիսով, երբ, երբ որ, որ շաղկապներով ձևավորվող մասնակի համաժամանակության կառույցները միասնաբար կարող են ունենալ 18 հոմանիշ տարբերակներ, որոնք միավորվում են կառուցվածքային 3 սխեմաների մեջ։ Փորձենք ներկայացնել հոմանիշների այդ շարքը։

/Երբ/ P⇆P Երբ գերիներին տանում էին դեպի արևելք, (այն ժամանակ) նա փախավ։

Նա փախավ այն ժամանակ, երբ գերիներին տանում էին դեպի արևելք։

Այն ժամանակ, երբ գերիներին տանում էին դեպի արևելք, նա փախավ։

Երբ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։

Գերիներին տանում էին դեպի արևելք, երբ նա փախավ։

Այն ժամանակ, երբ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։

/Երբ որ/ P⇆P Երբ որ գերիներին տանում էին դեպի արևելք, նա փախավ։

Նա փախավ (այն ժամանակ), երբ որ գերիներին տանում էին դեպի արևելք։

Այն ժամանակ, երբ որ գերիներին տանում էին դեպի արևելք, նա փախավ։

Երբ որ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։

Գերիներին տանում էին դեպի արևելք, երբ որ նա փախավ։

Այն ժամանակ, երբ որ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։

/որ/ P⇆P Որ գերիներին տանում էին դեպի արևելք, (այն ժամանակ) նա փախավ։

Նա (այն ժամանակ) փախավ, որ գերիներին տանում էին դեպի արևելք։
Այն ժամանակ, որ գերիներին տանում էին դեպի արևելք, նա փախավ։
Որ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։
Գերիներին տանում էին դեպի արևելք, որ նա փախավ։
Այն ժամանակ, որ նա փախավ, գերիներին տանում էին դեպի արևելք։

Մասնակի համաժամանակություն արտահայտող բարդ նախադասությունները կարող են ձևավորվել նաև մինչ շաղկապով։ Ժամանակային հարաբերության բնույթը այս կառուցվածքի նախադասություններում ևս արդյունք է մասերի ժամանակային պլանների վերը նկարագրված համապատասխանության։ Իմաստային տեսակետից սրանք երբ-ով կառույցներին հակադրվում են գլխավոր նախադասության գործողության՝ երկրորդականի գործողությունը փոքր-ինչ կտրուկ ընդմիջելու, որոշ առումով նաև վերջինիս հետ իմաստային հակադրություն կազմելու նրբերանգով։ Այս առանձնահատկությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ մինչ շաղկապը սովորաբար կապակցում է խոնարհված բայերով արտահայտված ստորոգյալներ ունեցող երկրորդական նախադասություններ և գրեթե չի զուգորդվում տևական վիճակ կամ դրություն ցույց տվող բաղադրյալ ստորոգյալների հետ։ Վերջիններս մեծ մասամբ կապվում են երբ-ով։ Համմտ՝ Առաջին նկարը գնվեց նրանից, երբ դեռ տասներեք-տասնչորս տարեկան էր (6, 57) և մինչ նա տասներեք-տասնչորս տարեկան էր...։ Վերջինը բնական չէ։ Ընդհանրապես պետք է ասել, որ տարբեր շաղկապներով կապակցվող հոմանիշ բարդ նախադասություններում շաղկապի կիրառությունը կախված է ոչ միայն մասերի ժամանակային պլանների, այլև ստորոգյալների բառային իմաստների փոխհարաբերություններից։

Հոմանիշական շարքի մեջ մինչ-ով կառույցը առանձնանում է նաև ոճական առումով. այն գրեթե չի հանդիպում առօրյա խոսակցական լեզվում և առավել հաճախական է գեղարվեստական և հրապարակախոսական տեքստերում։

Երբ P ← P *Երբ նա զբաղված էր ինձ խելքի բերելու գործով, հարևանները միլիցիոներ կանչեցին։*

Մինչ P ← P *Մինչ նա զբաղված էր ինձ խելքի բերելու գործով..., հարևանները միլիցիոներ կանչեցին (Գ, 4, 1979)։*

Այս կառուցվածքի նախադասությունների համար բնական է երկրորդական մասի առաջադաս դիրքը։ Գրեթե նույն առանձնահատկու-

թյուններն ունեն միևդեռ շաղկապով կառուցված նախադասություններ։ Սրանք թերևս առանձնանում են խիստ ընդգծված գրական երանգով, ինչպես նաև գլխավոր ու երկրորդական մասերի միջև որոշակի հակադրություն նշելու իմաստային յուրահատկությամբ։ Երկրորդական նախադասության ետադաս դիրքի դեպքում միևդեռ-ով կառույցը կորցնում է ժամանակային հարաբերության իմաստը և վերածվում է հակադրություն արտահայտող համադասական կառույցի[13]*։ Այսպիսով՝*

Երբ P ← P *Երբ սա ընթերցանությամբ էր զբաղված, երկու ուրիշ վաճառականներ սկսան շարունակել իրենց վիճաբանությունը։*

Մինչդեռ P ← P *Մինչդեռ սա ընթերցանությամբ էր զբաղված... (17, 2, 471)։*

Հետաքրքրական է մինչև շաղկապի կիրառությունը մասնակի համաժամանակություն արտահայտող բարդ նախադասություններում։ Սա հիմնականում տարժամանակության կառույցներ ձևավորող շաղկապ է, սակայն կարող է կապակցել նաև մասնակի համաժամանակությամբ կապված գլխավոր և երկրորդական նախադասություններ։ Այսպիսի բարդ նախադասությունների երկրորդական մասի ստորոգյալը պայմանական եղանակի անցյալի ապառնիով դրված բայ է, որն այս կառույցի մեջ արտահայտում է սահմանական անցյալի անկատարի իմաստ, իսկ գլխավոր նախադասության ստորոգյալը սովորաբար անցյալ կատարյալ ժամանակի բայ է։ Մինչև-ով կապակցվող բարդ նախադասություններն, այսպիսով, մասնակի համաժամանակություն արտահայտում են մասերի ստորոգյալների ժամանակների այս կայուն համապատասխանության դեպքում։ Այսպիսի կառույցները լեզվում այնքան էլ հաճախական չեն, գործածվում են հիմնականում կենդանի խոսակցական ոճում և գեղարվեստական խոսքում։

Փոխակերպման ժամանակ երկրորդ նախադասության ստորոգյալի պայմանական անցյալի ձևը փոխարինվում է անցյալի անկատար ժամանակաձևով.

Համմտ.

Մինչև P ← P *Մինչև նա կանցներ փողոցը, ընկերները հեռացան։*
Երբ P ← P *Երբ նա անցնում էր փողոցը, ընկերները հեռացան։*

Մինչև-ով կապվող այս կարգի կառույցները իմաստային առումով ավելի սերտ առնչվում են մինչ-ով կառույցներին, համմտ՝ Մինչ նա անցնում էր փողոցը, ընկերները հեռացան։ Սրանց, իբրև հոմանիշների, իմաստային տարբերությունն այն է, որ մինչ-ով նախադասությունների

երկրորդական մասում անցյալի անկատար ժամանակաձևի միջոցով դրսևորվում է սկսված և ընթացքի մեջ գտնվող գործողություն, մինչդեռ մյուս կառույցի մեջ միևնույն շաղկապը և պայմանական եղանակով դրված բայը ավելի ընդգծում են գործողության անավարտ լինելը, այնպես որ որոշակի համատեքստում երկրորդականի գործողությունը կարող է դիտվել իբրև դեռևս չսկսված, և այս դեպքում կառույցը դուրս կմնա մասնակի համաժամանակություն արտահայտող նախադասությունների հոմանիշական շարքից։

Սառարադասական անջաղկապ նախադասություններում ևս մասնակի համաժամանակությունն արտահայտվում է հիմնականում անցյալի անկատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերի դուգորդմամբ. «Այս դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը ցույց է տալիս անցյալում դրսևորված որևէ դրություն, վիճակ, որի հետևանքով կամ լինում է բաղադրյալ (ստորոգելիական հանգույցը դրված է լինում անցյալ ժամանակով), կամ դրություն ցույց տվող բայի անցյալ անկատար, անցյալ հարակատար ժամանակներով արտահայտված պարզ ստորոգյալ։ Ստորոգյալի մոտ, որպես օժանդակ միջոց, հանդես է գալիս դեռ, երբեմն նաև (սակավ դեպքերում) տակավին մակբայը»[14]։ Այս կառուցվածքն ունեցող նախադասությունները սովորաբար հոմանիշ են լինեում իրենց երբ-ով տարբերակներին, երբեմն կարող են փոխակերպվել նաև համադասական կառուցվածքների։ Համմտ.՝

P ← P *Արամը դեռ դասերն էր սովորում, ևերս մտավ Հակոբը։*

/*Երբ*/ P ⇆ P *Երբ Արամը դասերն էր սովորում, ևերս մտավ Հակոբը։*

(Երբ Հակոբը ևերս մտավ, Արամը դասերն էր սովորում)

բ) Համադասական կառույցներ

Համադասական շաղկապավոր կառույցները մասնակի համաժամանակություն դրսևորում են սովորաբար մասերի ստորոգյալների ժամանակային պլանների՝ վերը նկարագրված հարաբերության դեպքում (անցյալի անկատար-անցյալ կատարյալ)։ Համադասական որոշ նախադասություններում ժամանակների մասնակի համապատասխանություն կարող է արտահայտվել նաև միևնույն ժամանակաձևերի՝ առենք, ներկա-ներկա կամ վաղ.-վաղ. դուգորդմամբ։ Այստեղ նշված հարաբերությունը պայմանավորված է մասերի ստորոգյալների բառային իմաստների փոխհարաբերությամբ, ինչպես նաև ամբողջ նախադասության՝ տվյալ համատեքստում արտահայտած բովանդակությամբ։ Այսպես՝

Շուրջդ աշխատանքային եռուզեռ, և դու հանկարծ եղնիկներ ես նկարում (6, 20)։

Ասաց, որ երեկ երեկոյան նկարիչների ժողով է եղել և մի, թե երկու արվեստաբան քննադատել են իր դեղանկարչական գործերից «Կոմունիստների ընդհակահարությունը Տաթևում» (6, 23)։

Մասնակի համաժամանակության դրսևորմանը ծառայող այս կարգի նախադասությունները, ինչպես երևում է բերված օրինակներից էլ, տրվյալ նշանակությունը կարող են արտահայտել կառույցների ոչ բոլոր բառային իրացումների դեպքում։ Եթե անցյալի անկատար և անցյալ կատարյալ ժամանակների զուգորդմամբ տևական գործողությունը և սրա մի որոշակի պահին կատարվող գործողությունը նշվում են բայ-ստորոգյալների քերականական իմաստների միջոցով, ապա միևնույն ժամանակաձևերի զուգորդումով արտահայտվող մասնակի միաժամանակությունը պայմանավորվում է ստորոգյալների բառային իմաստների մեջ պարունակվող տևական և ոչ տևական գործողությունների դաղափարներով։

Այս վերջին դեպքում ավելի բնական են համադասական կառույցները։ Ստորադասական կառուցվածքի (մասնավորապես շարքի գերիշխող անդամին) սրանք հաճախ չեն փոխակերպվում կամ էլ փոխակերպման հետևանքով մասնի միչև առկա իմաստային հարաբերությունը կարող է աղճատվել։

Մասնակի համաժամանակություն դրսևորելու տեսակետից բնական՝ անցյալի անկատար և անցյալ կատարյալ ժամանակների զուգորդումով կառուցված համադասական շաղկապավոր նախադասությունները մեծ մասամբ հոմանիշային զույգ են կազմում համապատասխան ստորադասական կառույցի հետ։

Համմտ. օրինակ.

P— և —P Ես լսում էի երամի ղողանջը աշնան մաքուր երկնքում, և կարծես թե մորս ձայնն էլ լսեցի։ (15, 32)։

Երբ P ← P Երբ ես լսում էի երամի ղողանջը աշնան մաքուր երկնքում, կարծես թե մորս ձայնն էլ լսեցի։

P— և —P Թաց տակաշորերի մեջ երեխան թպրտում էր, և ինքը ծղրտաց՝ Իշխան։ (15, 343)։

Երբ P ← P Երբ թաց տակաշորերի մեջ երեխան թպրտում էր, ինքը ծղրտաց՝ Իշխան։

Այսպիսի կառույցների փոխադարձ փոխակերպելիությանը կարող է խոչընդոտել համադասական նախադասության՝ տևական գործողությունն արտահայտող մասում կիրառված բաղադրյալ ստորոգյալը, որը ցույց

է տալիս մի այնպիսի դրություն կամ վիճակ, որի առկայության պայմաններում կատարվում է ավելի կարճատև գործողությունը։

Բաղադրյալ ստորոգյալի մեջ դրսևորված դրությունը կամ վիճակը հաճախ նաև պատճառն է իր տևողության որևէ պահին կատարվող գործողության, և այս դեպքում համադասական կառույցը կարող է հոմանիշական զույգ կազմել ոչ թե ժամանակային, այլ պատճառահետևանքային նշանակություն արտահայտող ստորադասական կառույցի հետ։

Համմտ՝

P— և —P խրճիթում խավար էր, և տանտերը վառեց ճրագը։

P—→ որովհետև P Տանտերը վառեց ճրագը, որովհետև խրճիթում խավար էր։

Պատճառահետևանքային իմաստի գերիշխող լինելը խանգարում է նրբ խրճիթում խավար էր, տանտերը վառեց նրագը տիպի փոխակերպություններ։ Մասնակի համաժամանակություն դրսևորող համադասական նախադասությունը համապատասխան ստորադասական հոմանիշ չի կարող ունենալ այն դեպքում նաև, երբ տևական գործողություն կամ վիճակ ցույց տվող մասում կիրառված է ոչ մակբայական ժամանակի պարագա։

Համմտ. Ոչկու օր շարունակ իմ շուրջը մարդիկ էին և ես տեսա իմ շատ ծանոթների, որոնց տարիներով չէի տեսել (20, 7)։

Նշված կարդի համադասական և ստորադասական շաղկապավոր կառույցների, իբրև հոմանիշների, տարբերությունը ոճական է. ինչպես մյուս համադասական կառույցների դեպքում, մասնակի համաժամանակություն դրսևորող համադասական կառույցներն էլ ավելի հաճախական են գեղարվեստական խոսքում։ Ինչպես երևում է նաև վերը բերված հոմանիշ զույգերի համեմատությունից, սրանց ստորադասական տարբերակները բավական ծանրացնում են գեղարվեստական խոսքը, հյուծեղ և արտահայտիչ լինելու տեսակետից զիջում են համադասական կառուցվածքի նախադասություններին։

Կենդանի-խոսակցական և գեղարվեստական խոսքին են հատուկ նաև ճամադասական անշաղկապ նախադասությունները։ Մասնակի համաժամանակություն արտահայտելու դեպքում սրանք մասերի բառակազմի ու ստորոգյալների քերականական նկարագրի տեսակետից չեն տարբերվում իրենց շաղկապավոր տարբերակներից։ Իբրև նրբիմաստային առանձնահատկություն պետք է նշել անշաղկապ համադասական կառույցների մեջ ղգալի թվարկման իմաստը, որը արտահայտվում է նաև հնչերանգի միջոցով։ Կարելի է ասել, որ մասնակի համաժամանակություն դրսևորող համադասական անշաղկապ նախադասությունների գերակշիռ մասը ունի իր շաղկապավոր տարբերակները և ստորադասական

տիպի մեջ հոմանիշ զույգ ունենալու համար պահանջում է կառուցվածքի խոսքային իրացման նույն պայմանները։

Համմտ.՝ P — P *քննության էր գնալու, փայտ էր ջարդում, ոտքը կտրեց (15, 337)։*

P — և —P... *փայտ էր ջարդում և ոտքը կտրեց։*

Երբ P ← P... *Երբ փայտ էր ջարդում, ոտքը կտրեց։*

Համադասական անշաղկապ նախադասություններում էլ, բաղադրյալ ստորոգյալների առկայությամբ հաճախ ժամանակային իմաստը ետին պլան է մղվում՝ տեղի տալով պատճառահետևանքային նշանակությանը. համմտ.

Ես հասկանում էի, որ դա ծանր մի բեռ է իմ տկար ուսերի համար, բայց երիտասարդ էի, թափով գործի կպա (6, 9)։ Քերականական իմաստների այսպիսի սինկրետիկ համատեղումը, ինչպես նշել ենք, հատուկ է անշաղկապ շատ կառուցվածքների. այդ հանգամանքը պայմանավորում է ստորադասական տարբեր կառուցվածքների հետ դրանց հոմանիշական առնչության հնարավորությունը։

Համադասական անշաղկապ կառուցվածքում դրսևորվող մասնակի համաժամանակությունը հաճախ նշվում է երկրորդ բաղադրիչի մեջ (որը սովորաբար արտահայտում է կարճատև գործողությունը) հանդես եկող բառային հատուկ միջոցներով։ Շաղկապի բացակայության պայմաններում սրանք ծառայում են մասերի միջև առկա հարաբերությունն ավելի կոնկրետ ու հստակ արտահայտելուն։

Գործողությունների միաժամանակության մասնակի բնույթը շեշտող այդպիսի միջոցներից են ժողովրդախոսակցական երանգ ունեցող մեկ էլ, մեկ էլ տեսար, մեկ էլ տեսնում ես կապակցությունները։ Գրական չեզոք ոճում նման դեպքերում կիրառվում է հանկարծ մակբայը։ Համմտ. Ես տանկ էի վարում, մեկ էլ դեմս երկու երեխա ելան, կանգնեցին ուղիղ տանկի առաջ (ԳԹ, 2. 10. 81), (Երբ ես տանկ էի վարում, դեմս երկու երեխա ելան...)։ Մեկ էլ տեսար կայուն կապակցությունը հանդիպում է հիմնականում խոսակցական լեզվում և գեղարվեստական խոսքի մեջ կիրառվող անշաղկապ նախադասություններում։ Սրանց առաջին բաղադրիչի ստորոգյալը սովորաբար երկարատև և պարբերաբար կրկնվող գործողություն կամ վիճակ է արտահայտում, իսկ երկրորդը՝ այդ գործողության ընթացքում սովորաբար և պարբերաբար հանդես եկող գործողություն։

Գործողությունների պարբերականության այդ նրբերանգը կարող է առկա չլինել, եթե նշված կապակցության մեջ տեսնել բայը կիրառվում է իր բուն նշանակությամբ (ցույց է տալիս կոնկրետ դեմք)։ Համմտ. Գլուխս

կախ եւ թակարդովն էի ընկած, մին էլ տեսնեմ վեր կացավ կաղին տալով փախավ (8, 3, 105)։

Համմտ. նաև բարբառային որոշակի երանգ ունեցող այս կարգի նախադասություններ.

Երգում էր մայրիկ կկուն, մին էլ ըեր, աղվեսն եկավ (8, 1, 308)։
(Երբ մայրիկ կկուն երգում էր, աղվեսը եկավ)։

Ինչպես երևում է, այս կարգի բառային-բառակապակցական միջոցները իրենց այս կիրառություններով կայունացած են անշաղկապ կառույցների նշված տիպերի մեջ և հաճախ խոչընդոտում են սրանց հոմանիշական փոխակերպմանը շաղկապավոր ստորադասական կառույցների։ Այդպիսի փոխակերպման հնարավորության դեպքում բառային այդ միջոցների դերը սովորաբար ստանձնում է շաղկապը, այնպես որ ստորադասական նախադասության մեջ դրանք կարող են արդեն ավելորդ լինել։

Ընդհանրացնելով, կարելի է ներկայացնել մասնակի համաժամանակության նշանակությամբ միավորվող կառույցների հոմանշային շարքը.

Կառույցներ	Նմուշներ
Երբ/ P⇄P	*Երբ Արամը դաս էր սովորում, եկավ Հակոբը։* *Երբ Հակոբը եկավ, Արամը դաս էր սովորում։*
/Երբ որ/ P⇄P	*Երբ որ Արամը դաս էր սովորում, Հակոբը եկավ։* *Երբ որ Հակոբը եկավ, Արամը դաս էր սովորում։*
/որ/ P⇄P	*Որ Արամը դաս էր սովորում, Հակոբը եկավ։* *Որ Հակոբը եկավ, Արամը դաս էր սովորում։*
Մինչ P←P	*Մինչ Արամը դաս էր սովորում, եկավ Հակոբը։*
Մինչդեռ P←P	*Մինչդեռ Արամը դաս էր սովորում, Հակոբը եկավ։*
Մինչև P←P	*Մինչև Արամը դաս կսովորեր, Հակոբը եկավ։*
P←P	*Արամը դաս էր սովորում, Հակոբը եկավ։*
P— *և (ու)*—P	*Արամը դաս էր սովորում, և Հակոբը օգնեց նրան լուծելու խնդիրը։*
P—P	*Արամը դաս էր սովորում, Հակոբը նրան օգնեց լուծելու խնդիրը։*
P — *մեկ էլ* — P	*Արամը դաս էր սովորում, մեկ էլ հայտնվեց Հակոբը։*
P — *մեկ էլ տեսար* — P	*Արամը դաս էր սովորում, մեկ էլ տեսար հայտնվեց Հակոբը։*
P — *մին էլ ըհը* — P	*Արամը դաս էր սովորում, մին էլ ըհը, հայտնվեց Հակոբը։*

Իրական աշխարհում տեղի ունեցող զանազան գործողությունների ու երևույթների միջև առկա կապը ամենից հաճախ տարժամանակալին է։ Այս պատճառով էլ ժամանակի նշանակություն արտահայտող բարդ նախադասությունների գերակշիռ մասը ժամանակային հենց այս հարաբերության դրսևորմանն է ծառայում։ Ժամանակի մեջ երկու գործողությունների հաջորդումն արտահայտող բարդ նախադասությունները իրենց քերականական կազմավորման տեսակետից բազմազան են. սա վերաբերում է և՛ նրանց մասերի ժամանակային պլանների փոխհարաբերությանը, և՛ մասերի շարադասությանը, և, որ ամենակարևորն է, դրանց կապակցմանը ծառայող լեզվական միջոցներին։ Ինչպես արդեն նշել ենք, երբ շաղկապով կապվող ստորադասական կառույցը իբրև ժամանակի իմաստ արտահայտող ամենատարածված և ոճական առումով չեզոք կառույց, գերիշխող անդամ կարող է լինել նաև տարժամանակության արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշական շարքի համար։ Միայն գերիշխող անդամի՝ երբ-ով կապակցված կառույցի մասերի ժամանակային պլանների փոխհարաբերության դիտարկումը բերում է այն եզրահանգման, որ տարժամանակության իմաստային հարաբերություն դրսևորող բարդ նախադասությունների թե ստորակցական, և թե հոմանիշական դաշտերը ավելի լայն ընդգրկում ունեն, քան լիակատար և մասնակի համաժամանակություն արտահայտող կառույցներինը։ Ժամանակային այս հարաբերությունն արտահայտող հոմանիշ նախադասությունների միջև առկա նրբիմաստային տարբերությունները ևս ավելի հստակորեն են սահմանագծվում։ Սա բացատրվում է ժամանակային հաջորդման տրամաբանական հարաբերության առանձնահատկությամբ. այստեղ հնարավոր է ըստ լեզվական դրսևորման առանձնացնել չեզոք կամ անորոշ հաջորդումը գործողությունների վայրկենական, կտրուկ հաջորդումից։

Երբ-ով կապակցված տարժամանակային կառույցները, կոնկրետ բարդ նախադասությունների մեջ խոսքային իրացում ստանալով, թույլատրում են մասերի եղանակաժամանակային պլանների զանազան զուգորդումներ։ Ամենից հաճախական տարբերակները գլխավոր և երկրորդական մասերում միևնույն քերականական ձևով կիրառված ստորոգյալներ ունեցող նախադասություններն են, իսկ սրանցից էլ առավել տարածված են անցյալ կատարյալի ձևերի զուգորդումով կազմավորված բարդ նախադասությունները։ Բերենք միևնույն ժամանակներով ստորոգյալներ ունեցող նախադասությունների օրինակներ.

Ներկա—ներկա	*Ու հիմա. երբ սրենքը լավ եմ հասկանում, գոնում եմ, որ ինձ հետ չափազանց անարդար վարվեցին (Դ, 4, 1979)։*
	Մարդիկ մեռնում են միայն այն ժամանակ, երբ հոգնում են (20, 7)։
անց. անկ. — անց. անկ.	*Երբ ուրիշ երկրներից զբոսաշրջիկ էին գալիս, գիդերը նրանց անպայման ցույց էին տալիս այդ տունը (7, 32)։*
վազ. — վազ.	*Երբ համապատասխան գրասենյակից հարց ու փորձի են եկել, տիկին Արաքսին վախեցել է ու հրավերով գալուց հրաժարվել (12, 54)։*
անց. կատ. — անց. կատ.	*Գևան ավելի կատաղեց, երբ հիշեց, թե նա ինչպես էր վեր կենում և մի հիմար պատճառ փնտրում, որ գնա (7, 14)։*
	Երբ Պավլիկը փոխադրվեց մեր դասարանը, կրկին օտարի վիճակի մեջ ընկավ (Դ, 5, 1980)։

Ապառնիի ժամանակային պլանում գործողությունների կամ իրողությունների հաջորդում արտահայտելու համար գլխավոր և երկրորդական մասերում բնական է համապատասխանաբար ըղձական և սլայմանական հղանակի ձևերի կիրառությունը, օր.՝ երբ գաք, կտեսնեք և այլն։

Տարժամանակություն արտահայտելու համար գերիշխող կառույցի երկու մասերում կարող են կիրառված լինել տարբեր եղանակների ու ժամանակների ստորոգյալներ. օրինակ՝

անց. վազ. — անց. կատ.	*Նոր էինք դուրս եկել, երբ տեսանք նրան։*
	Երբ հայրը եկավ, տղան արդեն գնացել էր։
ըղձ. ապ. — սահմ. ապ.	*Սվ դա, իհարկե, մի գլուխգործոց է, որ երբ մի օր գրվի գրքազարդումների պատմություն, գրավելու է իր արժանի տեղը (6, 13)։*
հրամ. ապ. — սահմ. ներկա	*Վեր կաց, երբ հետդ խոսում են (7, 21) և այլն։*

Բայի քերականական տարբեր ձևերի մեջ առկա ժամանակային տարբեր իմաստները, միմյանց հետ զուգորդվելով, որոշակի երանգ են հաղորդում նաև ամբողջ բարդ նախադասության մեջ արտահայտված

իմաստային հարաբերությանը։ Վերոբերյալ կառույցները մասն են կազմում ստորժամանակային հարաբերություն դրսևորող բարդ նախադասությունների ստորակցական դասի, և, իրոք, այդպիսիք, համանիշ չեն միմյանց։ Սակայն դրանցից յուրաքանչյուրը թելադրում է համանիշ այլ նախադասությունների փոխակերպվելու որոշակի պայմաններ։ Մինչև՝ նրբ շաղկապով ձևավորված կառույցի մեջ, օրինակ, անցյալ կատարյալ–անցյալ կատարյալ դուգորդումը կարող է արտահայտել գլխավոր նախադասության գործողության հաջորդում երկրորդական նախադասության գործողությանը (երբ տեսանք, փախավ), իսկ անցյալ կատարյալ–անցյալի վաղակատար դուգորդությունն ընդհակառակը՝ երկրորդական նախադասության գործողության հաջորդում գլխավորի գործողությանը (Պատերազմը նոր էր վերջացել, երբ եկավ տուն)։ Հենց (հենց որ) շաղկապով համանիշ կառույցին փոխակերպվելու դեպքում այս կառույցներից առաջինում փոխվում է միայն շաղկապը (Հենց (հենց որ) տեսանք, փախավ), իսկ երկրորդում շաղկապի փոփոխությունն ուղեկցվում է դուգորդվող ժամանակաձևերի փոփոխմամբ (անցյալի վաղակատարը փոխարինվում է անցյալ կատարյալով, և կամ էլ երկու մասերում կիրառվում են վաղակատարի ձևեր) և, միաժամանակ, մասերի ստորադասական կապի շրջմամբ (հենց որ պատերազմը վերջացել է, եկել է տուն)։

Պետք է նկատի առնել նաև, որ իրականության մեջ ժամանակային առումով իրար հաջորդող գործողությունները շատ հաճախ կապված են լինում նաև պայմանահետևանքային կամ պատճառահետևանքային հարաբերություններով, և այդ գործողությունների հաջորդումն արտացոլող նախադասությունը ժամանակային է դիտվում ամենից առաջ նրանում կիրառված ժամանակի շաղկապների շնորհիվ։ Այս հանգամանքը հաճախ խոչընդոտում է ժամանակային հաջորդում արտահայտող ստորադասական շաղկապավոր կառույցների հոմանիշական փոխակերպմանը համապատասխան անշաղկապ կամ համադասական կառույցների, որովհետև ժամանակի իմաստ արտահայտող շաղկապի բացակայությունը առաջին պլան է մղում տվյալ նախադասության բովանդակության մեջ առկա պատճառային կամ պայմանի նշանակությունը[15]։ Այսպես, երբ ես Արմենին իսկապես ճանաչեցի, որոշեցի անպայման ընկերություն անել նրա հետ նախադասության մեջ գերիշխող է ժամանակային իմաստը, և սա՝ հիմնականում երբ–ի գործածության շնորհիվ։ «Ես ճանաչեցի Արմենին (և) որոշեցի ընկերություն անել նրա հետ» նախադասության մեջ արդեն ժամանակային իմաստը զիջում է պատճառահետևանքայինին, և այս նախադասությունը իրավամբ կարող է հոմանիշ դիտվել «Ես որոշեցի ընկերություն անել Արմենի հետ, որովհետև իսկապես ճանաչեցի նրան» նախադասությանը։ Նույն կերպ ըղձական և պայմանական եղանակի

ձևերի զուգորդումով կառուցված բարդ նախադասությունների մեջ նշված կարգի փոխակերպմամբ ժամանակային իմաստը հաճախ լուծվում է պայմանի գերիշխող նշանակության մեջ։ Համմտ՝ Երբ գաս, կտեսնես նրան (եթե գաս, կտեսնես նրան)։ Նման դեպքերում ստորադասական շաղկապավոր և անշաղկապ ու համադասական կառույցները հոմանիշ կարելի է համարել վերապահությամբ՝ կառույցների իրացման կոնկրետ խոսքային պայմանների ու համատեքստի հաշվառումով։

Տարժամանակություն արտահայտող բարդ նախադասությունների հոմանիշության, դրանց կառուցվածքաիմաստային տարբերակների քննության ժամանակ կարևոր է նաև ժամանակային ձևերի երկրորդական կիրառությունների (օրինակ՝ անցյալ կատարյալը ապառնու իմաստով, ներկան անցյալի իմաստով և այլն) հաշվառումը։ Այս ընդհանուր դիտողություններից հետո փորձենք նկարագրել ժամանակային հաջորդման իմաստային հարաբերությամբ միավորված կառույցները և ներկայացնել դրանց հոմանշային շարքը։

ա) Ստորադասական կառույցներ

Ինչպես նախորդ՝ լրիվ և մասնակի համաժամանակություն արտահայտող կառույցների դեպքում, այստեղ էլ երբ-ը հանդես է գալիս ոճական իր նրկու տարբերակների (երբ որ և որ) ուղեկցությամբ։ Երբ որ-ը տարժամանակային կառույցներին նույնպես հաղորդում է կենդանի-խոսակցական որոշ երանգ և իբրև այդպիսին խորթ է գիտական ու հրապարակախոսական ոճերին, իսկ որ-ով կապակցված նախադասություններն արդեն հատուկ են միայն խոսակցական լեզվին և գեղարվեստական երկերում գործածվում են ոճավորման նպատակներով։

Շարքի գերիշխող կառույցի մեջ երկրորդական նախադասությունը ունի շարադասության ազատություն։ Սակայն պետք է նշել, որ նախադաս կիրառված երկրորդական նախադասությամբ մեծ մասամբ հաղորդվում է գլխավորի մեջ դրսևորված գործողության նախորդած գործողություն, իսկ ետադաս երկրորդական նախադասությամբ՝ ընդհակառակը։ Այս վերջին դեպքում, ինչպես նշել ենք, մասերի մեջ կիրառվում են սովորաբար անցյալի վաղակատար և անցյալ կատարյալ ժամանակները։ Երկու մասերում էլ անցյալ կատարյալի ձևերի կիրառության դեպքում շարադասության փոփոխությունը չի անդրադառնում գործողությունների հաջորդման ուղղության վրա։

Այսպես՝

Երբ Բ ← Բ — Երբ հանկարծ պարզվեց, որ հայր և որդի չափազանց

Նման են իրար, նոր թագավորի վիրավորանքը շատ մեծ եղավ։

Р→*Երբ* Р *Նոր թագավորի վիրավորանքը շատ մեծ եղավ, երբ հանկարծ պարզվեց, որ հայր և որդի չափազանց նման են իրար (7, 53—54)։*

Ինչպես նշել ենք արդեն, անցյալ կատարյալ ժամանակաձևերի զուգորդումով կառուցված այս կարգի նախադասություններում ավելի բնական է երկրորդական նախադասության առաջադաս դիրքը։ Այսպես է նաև ներկա–ներկա *կամ անց. անկատար — անց. անկատար ժամանակների զուգորդումով կառուցված նախադասությունների դեպքում։ Ծառադաս երկրորդական ունենալիս այս կարգի նախադասությունները սովորաբար դնվավորի մեջ պահանջում են շաղկապին զուգադրվող որևէ հարաբերյալ (այն ժամանակ, այն բանից հետո և այլն)։ Օր.՝*

Արդիկ մեռնում են միայն այն ժամանակ, երբ հոգնում են (20,7)։
Պավլիկը կրկին օտարի վիճակի մեջ ընկավ այն բանից հետո, երբ փոխադրվեց մեր դասարան։

Գնրիշխող կառույցի՝ միջադաս երկրորդական նախադասությամբ տարբերակը ևս հնարավոր է, թեև սակավ է հանդիպում։ Իբրև ակնհայտ միտում պետք է նշել, որ երբ Р ← Р *շարադասական տարբերակի դեպքում արտահայտվում է գլխավոր նախադասության հաջորդումը երկրորդականի գործողությանը, իսկ* Р→ *երբ* Р *դեպքում՝ գլխավորի գործողությունը նախորդում է երկրորդականի գործողությանը։*

Համմտ՝

Երբ Р← Р — *Երբ ձեռս ընկավ «Գիրք ճանապարհին», ես այլևս չպոկվեցի գրքից (6, 8)։*

Р⟶*Երբ* Р — *Գերեզմանաթփից մի փոքր էր հեռացել, երբ հանկարծ շուռ եկավ դեպի Սդամյանը (11, 20)։*

Վերջին կարգի նախադասություններում, ավելի վաղ կատարված գործողություն նշող գլխավոր նախասության մեջ սովորաբար հանդես են գալիս հաջորդման հարաբերությունն ավելի որոշակիացնող մակբայներ՝ հագիվ, նոր և այլն (վերևի օրինակում՝ մի փոfr)։ Այս նախադասություններն ունեն նաև մի այլ առանձնահատկություն. սրանց մեջ ժամանակային նույն հարաբերությունը կարող է արտահայտվել մասերի միջև հակառակ քերականական կապի դեպքում. օրինակ՝ Բարեբախտաբար բուքը վրա հասավ, երբ արդեն մտել էին գյուղ (11, 22) Համմտ՝ Նոր էին մտել գյուղ, երբ բուքը վրա հասավ։

Առաջին դեպքում ավելի վաղ կատարված գործողությունն արտահայտվել է երկրորդական նախադասության, իսկ երկրորդում՝ գլխավորի միջոցով։

Դերհիշող կառույցի նկարագրված երկու տարբերակներն էլ ունեն երբ որ-ով և որ-ով հոմանիշներ։

Այսպես 1)

Երբ Р ← Р	Երբ Միտյային պատին սեղմեցի, խոստովանեց, որ ինքն է լուր տվել։ Երբ Վրեժի գուլպան ավարտեմ, անմիջապես նորն եմ սկսելու Մաքսիմի համար։
Երբ որ Р ← Р	Երբ որ Միտյային պատին սեղմեցի... Երբ որ Վրեժի գուլպան ավարտեմ...
Որ Р ← Р	Միտյային որ պատին սեղմեցի, խոստովանեց, որ ինքն է լուր տվել (Գ, 5, 1980)։ Վրեժի գուլպան որ ավարտեմ, անմիջապես նորն եմ սկսելու Մաքսիմի համար (Գ, 4, 1979)։

2)

Р ⟶ երբ Р	Պատերազմը նոր էր վերջացել, երբ նրան ձերբակալեցին (11, 24)։
Р ⟶ երբ որ Р	Պատերազմը նոր էր վերջացել, երբ որ նրան ձերբակալեցին։
Р ⟶ որ Р	Պատերազմը նոր էր վերջացել, որ նրան ձերբակալեցին։

Երբ-ով և սրա ոճական տարբերակներով հիմնականում արտահայտվում է գործողությունների հաջորդում ժամանակի մեջ՝ առանց հատկապես նշելու այդ հաջորդման կտրուկ, վայրկենական կամ էլ դանդաղ, տևական լինելը։ Դերհիշող կառույցի մեջ արտահայտվող տարժամանակությունը այս տեսակետից ևս չեզոք է ու ընդհանրական։ Այս դատողությունն, իհարկե, վերաբերում է ընդհանրապես այդ կառույցի լեզվական կաղապարին և բացառում է կառույցի այն բոլոր խոսքային իրադրումները, որոնցում բառային կոնկրետ միջոցներով գործողությունների հաջորդումը ներկայացվում է իբրև անմիջական ու կտրուկ կամ էլ դանդաղ ու տևական։ Մասնավորապես վերը նկարագրված երկրորդ տիպի նախադասություններում կիրառվող նոր, հազիվ և այս կարգի այլ բառերի շնորհիվ երբ (երբ որ, որ) շաղկապի արտահայտած չեզոք հաջորդումը ստանում է անմիջական հաջորդման իմաստային երանգ. այս նախադասության մասերի մեջ դրսևորված գործողությունների միջև շատ

թե քիչ տևական դադար չի ենթադրվում։ Համեմատենք նաև հետևյալ նախադասությունները։

Երբ մի անախորժ լուր էր առնում..., վրձինը վայր էր դնում, չէր կարողանում գործը շարունակել (6, 41)։

Երբ մի անախորժ լուր էր առնում, իսկույն (նույն վայրկյանին, անմիջապես...) վրձինը վայր էր դնում...

կամ՝

Երբ Արամն ստացել է հեռագիրը, իսկույն գնացել է լուրը հայտնելու ընկերներին և այլն։

Սակայն բառային նշված միջոցներից բացի լեզվի մեջ կան հատուկ շաղկապներով ձևավորվող տարժամանակային կառույցներ, որոնք գերիշխող անդամին հակադրվում են գործողությունների կտրուկ հաջորդում արտահայտելու իմաստային յուրահատկությամբ և այս հիմունքով էլ մտնում են նյութ հոմանշային դաշտը։ Իմաստային այս նրբերանգը ամենից հստակ դրսևորվում է ենց որ շաղկապի ձևավորած կառուցվածքի մեջ, որն իր այս նշանակությամբ շատ հաճախական է։ Նույն իմաստով կիրառվում է նաև սրա ենց տարբերակը, որը, սակայն, անհամեմատ ավելի սակավ է հանդիպում։

Ենց որ (ենց) շաղկապով կառուցված բարդ նախադասությունները երբ-ով գերիշխող անդամին հակադրվում են հիմնականում իմաստային հիշյալ նրբերանգով, իսկ կառուցվածքային տեսակետից, մասնավորապես մասերի ժամանակային պլանների փոխհարաբերության առումով, ունեն նույն հնարավորությունները, ինչ գերիշխող անդամը։ Սրանք կարող են գործողությունների անմիջական հաջորդում արտահայտել ներկայի, անցյալի և ապառնիի պլաններում և յուրաքանչյուր դեպքում հոմանշային ղույգ կազմել այդ նույն գործողությունների չեզոք և անորոշ հաջորդումն արտահայտող գերիշխող կառույցի հետ։ Մի դեպքում միայն այդ հոմանիշ նախադասությունների կառուցվածքային զուգահեռությունը կարող է խախտվել։ Խոսքը վերաբերում է «Պատերազմը նոր էր վերջացել, երբ նրան ձերբակալեցին» տիպի կառույցին, որի ենց որ (ենց)-ով ձևավորվող հոմանիշ տարբերակի համար պարտադիր է մասերի մեջ կիրառվող բայաձևերի ժամանակային համաձայնությունը։ Համե՛մատ՝ Պատերազմը նոր (հաղիվ) էր վերջացել, երբ նրան ձերբակալեցին։

Հենց (որ) պատերազմը վերջացել է, նրան ձերբակալել են։

Հենց (որ) պատերազմը վերջացավ, նրան ձերբակալեցին։

Հենց (որ) պատերազմը վերջանում է, նրան ձերբակալում են (այս դեպքում ներկայի ձևերը կիրառված են անցյալ կատարյալի իմաստով)։

Ընդհանրապես ենց (որ) շաղկապով ժամանակային կառույցին

բնորոշ է մասերի մեջ բայական միևնույն ժամանակների կիրառությունը (եղանակները կարող են տարբեր լինել)։ Անցյալի տարբեր ձևերի գործածությունը այս կառուցվածքի նախադասություններում սովորաբար բնութագրվում է ստորոգյալի բառային իմաստով։ Օրինակ, ցանկություն, կամք արտահայտող ստորոգյալի դեպքում կարող են զուգորդվել անցյալ կատարյալ և անցյալի անկատար ժամանակները։

Համմ.՝ Հենց որ տեսավ, իսկույն ուզում էր վազել ինձ մոտ... (25, 3, 63)։

Տարբեր ժամանակներ կարող են կիրառվել նաև այն նախադասություններում, որոնց մեջ հանդես է գալիս հենց այն է կապակցությունը՝ իբրև համարժեք հենց (որ) շաղկապի։ Սրանց երկրորդական մասում սովորաբար լինում է անցյալի ապառնի ժամանակի որևէ ձև, (հազվադեպ նաև անցյալի անկատար), որը նշում է սպասվող, բայց չիատարված գործողություն, իսկ գլխավոր մասում արտահայտվում է դրան հաջորդած մեկ այլ գործողություն՝ հիմնականում անցյալ կատարյալով արտահայտված։ Օրինակ՝

Հենց այն է՝ սլիտի կրակեր, նապաստակը թաքնվեց թփերում։
Հենց այն է՝ գնալու էի, ընկերս եկավ և այլն։

Այս նախադասությունների մեջ հենց այն է կապակցության փոխարեն հենց (հենց որ) գործածելիս անհրաժեշտաբար կատարվում են բառային որոշ փոփոխություններ։ Համմ՝

Հենց այն է պիտի գնար, ներս մտավ ընկերը։
Հենց (որ) ուզում էր գնալ, ներս մտավ ընկերը և այլն։
Համմ. նաև՝ Հենց այն է՝ կամենում էր ետ փախչել՝ Շուշանիկ տիկինն անմիջապես որսաց (5, 79)։

Այս հանգամանքը, սակայն չի խանգարում վերը բերված կառույցները միևնույն հոմանիշական շարքին հատկացնելուն։ Սրանց միջև պետք է նշել ոճական բնույթի տարբերություն. հենց այն է կապակցությամբ նախադասությունները հատուկ են առավելապես խոսակցական լեզվին (հաճախ հանդիպում է հենց էն է ձևը)։

Հենց, հենց որ շաղկապներով կազմված կառույցների և երբ-ով գերիշխող կառույցի հոմանիշական զույգերը ներկայացնենք օրինակներով։

ա) ևերկա–ևերկա

Հենց (որ) P ← P	*Հենց (որ) մի տեղ հրդեհ է հայտնվում, քաղաքի ամեն ծայրից թուղուղիները թափվում են իսկույն (25, 9, 47)։*
Երբ P ← P	*Երբ մի տեղ հրդեհ է հայտնվում...*

բ) Անցյալի ժամանակային պլանում

անց. անկ.— —անց. անկ. — *Հենց որ գնացքը մոտենում էր, նայում էին անշարժ, ձեռքերը ճակատին դնում, մինչև վերջին վագոնն անցնեը (2, 429)։*
Երբ գնացքը մոտենում էր...

վաղ. — վաղ. — *Հենց որ կորցրել են քաղաքական անկախությունը, հետզհետե հալվել են ժողովուրդների մեջ ու կորել։ (8, 4, 132)։*
(Երբ կորցրել են քաղաքական անկախությունը...)

անց. վաղ. — անց. վաղ. — *Հենց որ գյուղ էր հասել՝ ձյուն էր եկել, փակել ձորից բերող միակ արահետը (11, 46)։*
(Երբ աղեն գյուղ էր հասել...)

անց. կատ. — անց. կատ. — *Հենց որ ներկայացավ անհնազանդ ուսուցչուհուն պատժելու առիթը, դիրեկտորը հաճույքով օգտվեց դրանից (Ա. 5. 04. 81)։*
(Երբ ներկայացավ...)

անց. ապ. — անց. ապ — *Հենց որ սիրելի պատկերը հեռանար, նա դարձյալ պիտի խորասուզվեր յուր գիտության մեջ (17. 5. 217)։*
Երբ սիրելի պատկերը հեռանար...

ըղձ . ապ. — սահմ. անց. ապ. — *Եվ այս վերջինը հենց որ գար երևան, անպայման ու առաջին հերթին այցելելու էր Մահարուն (6, 237)։*
Եվ այս վերջինը երբ դար...

գ) Ապառնի ժամանակային պլանում.

ըղձ. ապառնի— — *Հենց որ տնտեսական դրությունը բարելավվի, Հիտլերը մոռացության կտրվի (Գ, 4, 1979)։*

պայմ. ապառնի — *(Երբ տնտեսական դրությունը բարելավվի...)*

ըղձ. ապ. — սահմ. ապ. — *Հենց որ գնամ, այցելելու եմ ընկերներիս (Երբ գնամ...) և այլն։*

Բերված օրինակներից էլ երևում է, որ ևնեց (որ) շաղկապով կապվող երկրորդական նախադասությունների համար ավելի բնական է նա-

խաղաս դիրքը, թեև երբեմն հանդիպում են նաև եսադաս (հաղվադեպ՝ միջադաս) կիրառություններ։ Օրինակ՝ Նա վեր կացավ տեղից, հենց որ դու ասացիր թե՝ «սիրում եմ քեզ» (17, 4, 196) և այլն։ Գլխավոր նախադասությունների մեջ երբեմն, հաջորդման անմիջապես լինելը շեշտելու համար, գործածվում են իսկույն, նույն պահին, անմիջապես և այլ մակբայներ ու բառակապակցություններ։

Իմաստային նշված նրբերանգն արտահայտելուց բացի հենց (որ)-ով կապակցված կառույցներն ունեն նաև ոճական կիրառության որոշակի շրջանակներ և դրանով ևս հակադրվում են հոմանիշական շարքի մյուս անդամներին։ Սրանք գործածվում են հիմնականում գեղարվեստական տեքստերում, տարածված են նաև խոսակցական լեզվի մեջ, սակավ են հանդիպում գիտական աշխատություններում։

Ոճական ավելի ընդգծված գունավորում ունի իմաստային նույն նկարագրով օժտված մի այլ կառույց՝ թե չէ շաղկապով կապակցվածը։ Սա հատուկ է գերազանցապես խոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում է գեղարվեստական գրականություն։ Սրա կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ երկրորդական նախադասությունը միշտ առաջադաս է, իսկ թե չէ շաղկապն էլ կայուն կերպով շարադասվում է երկրորդական նախադասության վերջում։ Ժամանակային պլանների փոխհարաբերության և արտահայտած իմաստային նրբերանգի (ժամանակային կարուկ հաջորդում) տեսակետից գերիշխող անդամի հետ կազմում է նույնպիսի հակադրություն, ինչ հենց(որ)-ով կապակցված կառույցը։

Այսպես՝

Р թե չէ← Р — *Գյուղ իջան թե չէ, նրանց դպրոցական երեխաների պայուսակներում տաք, յուղալի գաթաներ բուրեցին (Ա, 9. 11. 80)։*

Հենց (որ) Р←Р — *Հենց որ գյուղ իջան, նրանց դպրոցական երեխաների պայուսակներում տաք, յուղալի գաթաներ բուրեցին։*

որ Р ←ց Р — *Երբ գյուղ իջան...*
Բերանս բաց արի թե չէ, մի անգամ խփեց (2, 140)։
Երբ բերանս բաց արի...

Երբեմն թե չէ շաղկապին զուգադրվում է երկրորդական նախադասության սկզբում կիրառված հենց-ը և ստացվում է հենց... թե չէ զուգադիր շաղկապով կապակցված ևս մեկ հոմանիշ տարբերակ.
Համմտ.՝ Հենց հյուրը գնար թե չէ, Խոջա Հիբանն սկսում էր զայրանալ որդու վրա (2, 404)։

Գործողությունների վայրկենական հաջորդման իմաստային երանգ արտահայտող հոմանիշ կառույցների շարքում պետք է նշել որ շաղկապով կապակցվող և մասերի ստորոգյալների ուրույն փոխհարաբերությամբ կազմավորված մի կառույց ևս։ Սրա յուրահատկությունն այն է, որ երկրորդական նախադասության ստորոգյալը միշտ ժխտական խոնարհման բայ է, որը, սակայն, արտահայտում է դրական իմաստ, այսինքն՝ ստուգապես կատարված գործողություն։ Երկու մասերում ամենից հաճախ հանդիպող ժամանակը անցյալ կատարյալն է, իսկ երկրորդական նախադասությունը մշտապես առաջադաս դիրքում է։ Կառույցի կիրառության բնական ոլորտը ժողովրդախոսակցական ոճն է։ Օրինակ՝

Որ Р ← Р *Որ չիմացավ՝ գալիս է, ուրախությունից իրեն կորցրեց։ (Հենց որ իմացավ՝ գալիս է...)*

Երկրորդական նախադասությունը հաճախ իր հերթին անշաղկապ բարդ նախադասություն է, սակայն սովորական է նաև երկրորդականի պարզ կառուցվածքը՝ Որ էդ բանը լսեց՝ խիստ զայրացավ։

Հոմանիշ այլ կառույցների, մասնավորապես զերիշխող կառույցին փոխակերպվելիս ժխտական ստորոգյալը բնականաբար փոխարինվում է դրական խոնարհման բայով. համմտ՝ Երբ այդ բանը լսեց, խիստ զայրացավ և այլն։

Այս կառուցվածքն ունեցող նախադասությունների մի առանձնահատկությունն էլ այն է, որ երկու մասերը հաճախ ունենում են միևնույն ենթական։

Գործողությունների անմիջական հաջորդում արտահայտող կառույցների հոմանիշական շարքում տեղ ունի նաև բավական է, բավական է որ բառակապակցություններով ձևավորվող կառույցը։ Իմաստային նույն այդ նրբերանգով միավորված հոմանիշ կառույցներին սա հակադրվում է կիրառության ոլորտի և կառուցվածքային առանձնահատկությունների տեսակետից։ Բնորոշ լինելով հիմնականում գրքային-լրագրային ոճին, այս կառուցվածքի նախադասությունները կենդանի խոսակցական լեզվում գրեթե չեն հանդիպում։ Սրանց համար կայուն հատկանիշ է երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակով ստորոգյալը (դխավորի մեջ կարող են կիրառված լինել սահմանականի ներկայով, անցյալի անկատարով, ապառնիով, երբեմն նաև պայմանականի ձևերով դրված ստորոգյալներ)։ Երկրորդական նախադասությունը միշտ առաջադաս է[16]։ Այս կառուցվածքի նախադասությունների իմաստային մի յուրահատկությունն էլ այն է, որ սրանք արտահայտում են սովորաբար իրար հաջորդող, հաճախ նաև միմյանց հետ պատճառահետևանքային կամ պայմանի հարաբերությամբ կապված գործողություններ։ Հոմանիշ այլ նախադա-

սությունների փոխակերպվելիս բավական է, (բավական է որ) բառերի փոխարեն մասերի կապակցությունը կարող է կատարվել անմիջական հաջորդում արտահայտող՝ վերը նշված շաղկապներով և ժամանակների համապատասխան զուգորդմամբ։ Ընդ որում, եթե գլխավոր նախադասության մեջ կիրառված են սահմանականի ներկայով կամ անց. անկատարով ստորոգյալներ, երկրորդականում էլ ըղձական ապառնին կամ անցյալը փոխարինվում են սահմանականի նշված ձևերով, իսկ գլխավորում սահմ. ապառնի կամ պայմանական եղանակի ձևերի կիրառության դեպքում ըղձական եղանակի բայը երկրորդական նախադասության մեջ պահպանվում է։

Համեմատենք՝

Բավական է մայրը խոսի՝ Արամը լռում է։

(Երբ հենց որ, և այլն) մայրը խոսում է, Արամը լռում է)։

Բավական է երևար նրա խիստ կերպարանքը՝ բոլորն իրար էին խառնվում։

(Երբ (հենց որ) երևում էր նրա խիստ կերպարանքը, բոլորն իրար էին խառնվում)։

...Բավական է գլխով անեմ, և նա կգա (20, 9)։

(Երբ (հենց որ) գլխով անեմ, նա կգա)։

Բավական է... —ով կառույցների մեջ ստորադասական կախումը բավական թույլ է դրսևորված, այնպես որ մասերի միջև իբրև կապակցող միջոց կարող է մտնել նաև և (ու) շաղկապը, որով դրանց քերականական կապը կարող է դիտվել իբրև համադասական (տե՛ս վերջին օրինակը)։

Տարժամանակություն արտահայտող շաղկապավոր կառույցների շարքում տեղ ունեն նաև մինչև, մինչև որ շաղկապներով կապակցվող ստորադասական նախադասությունները։ Սակայն վերը քննարկված կառույցների համեմատությամբ սրանք ունեն իմաստային ինքնատիպ նկարագիր, որով և առանձնահատուկ դիրք են գրավում քննարկվող հոմանիշական շարքում։ Մինչև, մինչև որ շաղկապներով միացող երկրորդական նախադասությունը այս կառույցի մեջ արտահայտում է ոչ թե գլխավորի մեջ նկարագրված գործողությանը ուղղակի իմաստով հաջորդող գործողություն, այլ ծառայում է փաստորեն գլխավորի գործողության տևականության սահմանը նշելուն։ Պրոֆ. Վ. Առաքելյանի բնութագրմամբ այս կարգի բարդ նախադասությունների «... երկրորդական նախադասությունը արտահայտում է ոչ թե գլխավոր նախադասության ժամանակի պարագան, այսինքն՝ թե երբ է կատարվում գործողությունը, այլ նրա տևականության վերջնապահը, որով և որոշվում է գլխավոր նախադասության ժամանակի տևականության չափը՝ առանց սկզբնապահի։ Այս առումով մինչև, մինչև որ շաղկապներով կապակցվող նախադասու-

թյունները, իսկապես, ժամանակի տևականության չափի պարագա նախադասություններ են և ոչ թե ժամանակի պարագա նախադասություններ»[17]: *Ինչպես տեսնում ենք, իրենց իմաստային նկարագրով այս կառուցվածքի նախադասությունները բավական տարբերվում են ժամանակային հաջորդում արտահայտող մյուս հոմանիշ կառույցներից, մասնավորապես հոմանիշական շարքի հիմնական՝ երբ-ով կապակցվող անդամից: Սրանք ժամանակային հաջորդում արտահայտող կառույցների շարքն են դասվում այն նկատառումով, որ գլխավորի գործողությունը նախորդում է երկրորդականի գործողությանը, թեև վերջինս ոչ թե հաջորդում է արտահայտում, այլ ունի սահմանափակող նշանակություն՝ նշում է գլխավորի գործողության վերջին սահմանը, նրա տևողության չափը:*

Օրինակներ՝

Երկար նրանք մնացին այդ անբարբառ հոգեզմայլության մեջ, մինչև երիտասարդը, ազատվելով նրա գրկից, վառեց ճրագը (25, 1, 479):

Նստում ենք աստանդակի աթոռներին, մինչև իրերը կգան (12, 53):

... Միասին մեծացել էին, միասին ապրել Բելգրադում, մինչև որ Սողոմոնը մեկնել էր Ամերիկա (12, 17):

Մասերի ստորոգյալներն այս կարգի նախադասություններում կարող են ժամանակով համաձայնել, կարող են կիրառված լինել նաև տարբեր ժամանակաձևեր (անցյալ անկատար-ապառնի, պայմ. ապառնի-ըղձ. ապառնի և այլն)[18]:

Իմաստային հիշյալ յուրահատկությունը որոշակիորեն սահմանափակում է սրա՝ տարաժամանակություն դրսևորող այլ կառույցների փոխակերպվելու հնարավորությունը: Ժամանակի տևողության չափի իմաստը կարող է նպաստել մինչև(որ)-ով կառույցի և ևանի շաղկապով կապակցվող համաժամանակություն արտահայտող կառույցի միջև հոմանիշական կապի դրսևորմանը: Այս կառույցների իմաստային առնչության մասին պրոֆ. Վ. Առաքելյանը գրում է. «Մինչև շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները, ինչպես տեսանք, արտահայտում են ժամանակի տևողության չափը, ճիշտ այդպես ժամանակի տևողության չափը ցույց են տալիս ևանի շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները: Դրանց տարբերությունն այն է, որ ևանի-ն բացի ժամանակից դրսևորում է նաև այլ երևույթների չափի պարագան, իսկ մինչև միայն ժամանակն է արտահայտում: Քանի ցույց է տալիս ստորոգյալների զուգահեռ գործողություն և ըստ այդմ էլ ժամանակի լրիվ համապատասխանություն:

Թեև մինչև և ևանի նշանակությամբ համանիշ են, այնուամենայնիվ ձևով տարբերվում են: Մինչև շաղկապով կապակցվող երկրորդական նախա-

դասուվ՛յունների դրական ստորոգյալների նշանակությունը՝ ըստ գլխավոր նախադասության ստորոգյալի հետ ունեցած հարաբերության, պահպանվում է, երբ կապակցվում են բանի շաղկապով, միայն այն պայմանով, որ դրական ստորոգյալը փոխարինվում է ժխտականով, իսկ քերականական ժամանակը արտահայտվում է անցյալի վաղակատարով. օրինակ՝ ...Ձով էր սփռում ճրա երեսին, մինչև որ նա կխներ: Ձով էր սփռում ճրա երեսին, բանի նա չէր խել»[19]: Մինչև (որ)-ով կառույցի համար իմաստային առումով կարևոր է մասերի ստորոգյալների դրական կամ ժխտական խոնարհմամբ կիրառվելու հանգամանքը: Մասերի մեջ ժխտական ստորոգյալներ ունեցող նախադասություններում գլխավոր նախադասության ստորոգյալի բովանդակությունը կազմող գործողությունը իրականում պետք է հաջորդի երկրորդ մասի արտահայտած գործողությանը, թեև երկու դեպքում էլ ժխտական ստորոգյալները արտահայտում են չկատարված գործողություններ: Այսպիսի նախադասություններում ժամանակի իմաստը սովորաբար ուղեկցվում է պայմանի նրբերանգով[20]:

Մեր ընդունած սկզբունքի համաձայն հիշյալ կառույցը տարժամանակություն դրսևորող մյուս կառույցների հետ հոմանիշ պետք է համարվի այն կոնկրետ իրացումների դեպքում, որոնք թույլատրում են շարքի գերիշխող (հիմնական) անդամի կառուցվածքին փոխակերպվելու հնարավորություն: Մասերի մեջ ժխտական ստորոգյալ ունեցող նախադասություններն այդպիսի փոխակերպության ենթարկվում են բավական հաճախ. ժխտական ստորոգյալները փոխարինվում են դրականով, իսկ նախադասության իմաստային կողմը վերարտադրվում՝ պահպանելով պայմանի իմաստային նրբերանգը:

Համմտ.՝ Ես ձեզ թույլ չեմ տալիս պարապմունքները վարել, մինչև դրավոր թույլատվություն չբերեք շրջժողկրթբաժնի վարիչ Ավետիսյանից (Ա. 5. 04. 81): Ես ձեզ թույլ կտամ պարապմունքները վարել, երբ դրավոր թույլատվություն բերեք...: Մինչև նրան չտեսավ, չհավատաց: Երբ նրան տեսավ, հավատաց և այլն:

Կառույցի՝ դրական ստորոգյալներով իրացումները երբ-ով փոխակերպման տրվում են ոչ բոլոր դեպքերում: Սրանց յուրահատուկ իմաստային նկարագիրը, ինչպես տեսանք, հնարավոր է դարձնում սրանց հոմանիշական փոխակերպումը նաև համաժամանակություն արտահայտող կառույցների: Իմաստային այդ նույն առանձնահատկությունը, այսինքն՝ երկրորդական նախադասության մեջ դրսևորվող ժամանակի տևողության չափի իմաստը խոչընդոտում է այս կառուցվածքի նախադասությունները գործողությունների իրական հաջորդում արտահայտող այլ կառույցների փոխակերպելուն: Մինչև(որ)-ով կապակցվող նա-

խոսքում արտահայտվող իրական բովանդակությունը երբ շաղկապով ձևավորված կառույցի միջոցով կարելի է վերարտադրել սահմանափակ դեպքերում։ Այսպիսի փոխակերպման ժամանակ գլխավոր նախադասության ստորոգյալը փոխարինվում է ժխտական խոնարհման բայով և արտահայտում է այնպիսի գործողություն, որը չի կարող կատարվել երկրորդականի մեջ արտահայտված գործողությունից հետո։

Օր.՝ Նրանք միասին ապրել էին Բելգրադում, մինչև որ Սողոմոնը մեկնել էր Ամերիկա։ Երբ Սողոմոնը մեկնել էր Ամերիկա, նրանք այլևս Բելգրադում միասին չէին ապրել։

Իհարկե, նման կարգի փոխակերպումները հաճախ արհեստական են, վերարտադրում են ոչ թե նախադասության մեջ արտահայտված լեզվական-քերականական իմաստը, այլ արտահայտում են տվյալ նախադասության մեջ դրսևորված բովանդակությանը համարժեք մեկ այլ գաղափարություն, որը որոշակի կոնտեքսի շրջանակներում չի հակասում էլակետային կառույցի արտահայտած իմաստին։ Այսպիսի փոխակերպության հնարավորությունն է, որ որոշ իմաստով հիմք է տալիս մինչև(որ) շաղկապով ձևավորված կառույցը դնել տարժամանակություն արտահայտող հոմանիշ կառույցների շարքում.

P ⟶ Մինչև (որ) P — *Ես դեռ երկու տարի, եթե ոչ ավելի, մասնակցում էի այս անվայել կատակերգությանը, մինչև որ հասկացա, թե իսկական բարեկամությունը բոլորովին ուրիշ տեղ է (Գ, 5, 1980)։*

Երբ P ← P — *Երբ ես հասկացա, թե իսկական բարեկամությունը բոլորովին ուրիշ տեղ է, այլևս չմասնակցեցի այդ անվայել կատակերգությանը։*

...Նա չխոսեց, մինչև չշրջվեց, չկանգնեց Վեդլերի հետ դեմ առ դեմ (Գ, 4, 1979)։

Նա խոսեց միայն (այն ժամանակ), երբ շրջվեց, կանգնեց Վեդլերի հետ դեմ առ դեմ։

Իբրև կառուցվածքային առանձնահատկություն պետք է նշել, որ այս նախադասությունների գլխավոր մասում հաճախ կիրառված են լինում այնքան, այնքան ժամանակ հարաբերյալները, որոնք ակնարկում են երկրորդական նախադասության՝ գլխավորի գործողության ժամանակը սահմանափակելու նշանակությունը։ Օրինակ՝ Զրուցեցին այնքան, մինչև լամպի բոցն սկսեց մարմրել (11, 25), (Երբ լամպի բոցն սկսեց

մարմրել, նրանք դադարեցին զրուցել)։ Սրանցում ավելի է ընդգծված ժամանակային չափի իմաստը, որով այս կարգի նախադասությունները մոտենում են չափի պարագա երկրորդական նախադասությամբ կառուցներին։

Ձևական կիրառության տեսակետից (մինչև/որ)-ով նախադասությունները բավական աղատ են, գործածվում են հայերենի տարբեր ոճերում։

Տարժամանակություն արտահայտելու իմաստային նույնպիսի առանձնահատկություն դրսևորում են նաև ինչ շաղկապով ձևավորված նախադասությունները։ Ի տարբերություն մինչև(որ)-ով կառուցքի, որի երկրորդական նախադասությունը նշում է գլխավորի գործողության վերջնապահը, սրանց երկրորդական նախադասությամբ, ընդհակառակն, նշվում է գլխավորի գործողության սկզբնական պահը, մի գործողություն, որի կատարվելուց հետո և դրա հետևանքով տեղի է ունենում գլխավոր նախադասության մեջ նկարագրվող գործողությունը կամ իրողությունը։ Այս կառուցքի խոսքային իրացումների գերակշիռ մասը գլխավոր նախադասության մեջ ունենում է ժխտական ստորոգյալ, որն արտահայտում է երկրորդականի գործողությունից հետո չկատարված որևէ իրողություն, գործողություն։ Երկրորդական նախադասության ստորոգյալի արտահայտած գործողությունը որոշ դեպքերում խոչընդոտում, խանգարում է իրեն հաջորդելիք (հաճախ նաև իրեն նախորդած) գործողության կատարմանը։ Օրինակ՝ Ինչ դու գնացել ես, մեր տանը կրակ չի վառվել (Ծ, 3, 212)։

Քանի որ երկրորդական նախադասությամբ նշվում է գլխավորի գործողությանը նախորդած, ավելի ճիշտ՝ նրա սկզբնապահն ազդարարող գործողություն, ուստի նրա ստորոգյալը սովորաբար արտահայտված է լինում անցյալում կատարված-ավարտված գործողություններ ցույց տվող քերականական ժամանակներով (վաղակատար, անցյալի վաղակատար, անցյալ կատարյալ)։ Գլխավորի մեջ կարող է կիրառվել սրանց համապատասխան ժխտականը, ինչպես նաև ներկայի ու անցյալի անկատարի ժխտական ձևերը։ Ինչ-ով կառուցքը քննվող հոմանիշական շարքի անդամ կարելի է համարել նույն վերապահությամբ, ինչ արվեց մինչև (որ)-ով նախադասությունների համար։ Այս դեպքում էլ երբ-ով փոխակերպումը հստակորեն չի վերարտադրում ելակետային կառուցքի իմաստը, փոխակերպման արդյունքը լինում է այնպիսի նախադասություն, որի արտահայտած ժամանակային իմաստը տրամաբանորեն ենթաղրվում, բխում է ինչ-ով կառուցքի բովանդակությունից և կարող է համարժեք դիտվել դրան որոշակի համատեքստի ու բառային իրացումների դեպքում։

Ինչ Р ← Р	*Ինչ վերացավ շախմատի ակումբը, ոչ մի լենինականցի շախմատիստ հանրապետության առաջնությանը չի մասնակցել (ՀՖ. 16, 4, 81)։*
Երբ Р ← Р	*Երբ լենինականցի շախմատիստները մասնակցում էին հանրապետության առաջնությանը, շախմատի ակումբը դեռ չէր վերացել։*

Մասերում անցյալ կատարյալի ձևերի գուգորդմամբ հնարավոր է երբ-ով համանիշական փոխակերպում՝ որոշ բառային հավելումներով (այլևս, դրանից հետո և այլն)։ Համմտ.՝ Ինչ նա եկավ, մենք հանգիստ չունեինք։ Երբ նա եկավ, մենք այլևս (դրանից հետո) հանգիստ չունեինք և այլն։

Պետք է ասել, որ այս կառուցվածքի բարդ նախադասությունները այնքան էլ գործածական չեն լեզվի մեջ։ Նույն իմաստն արտահայտելու տեսակետից նախապատվությունը հաճախ տրվում է սրանց համանիշ պարզ նախադասություններին (Համմտ.՝ Նրա գալուց հետո մենք հանգիստ չունենք, մինչև նրա գալը մենք հանգիստ էինք և այլն)։ Ոճական առումով ինչ շաղկապով կապակցված կառույցը ավելի հատուկ է խոսակցական լեզվին։

Ժամանակակից հայերենում գործածության հաճախականությամբ աչքի չեն ընկնում նաև նախան շաղկապով կապակցվող տարժամանակային բարդ նախադասությունները։ Ավելի տարածված է նախան-ի կապական կիրառությունը. այս դեպքում այն հանդես է գալիս պարզ նախադասության կազմում և անորոշ դերբայի հետ զուգադրվելով՝ ցույց է տալիս ժամանակային նույնպիսի հարաբերություն, ինչ նախան-ով կապվող երկրորդական նախադասությունը բարդ նախադասության կազմում։ Համմտ.՝ Նախան նա կգար, ես գնացի և ես գնացի նախան նրա գալը։ Երկրորդական նախադասության մեջ այս կարգի նախադասություններում սովորաբար կիրառվում է պայմանական (ենթադրական) եղանակի անցյալի ձևը, որը ցույց է տալիս գլխավոր գործողությանը հաջորդող մի այլ գործողություն։ Գլխավոր նախադասության մեջ սովորական են սահմանականի անցյալի ժամանակաձևերը։ Երբ-ով փոխակերպվելիս երկրորդական նախադասության ստորոգյալը փոխարինվում է ժխտականով, սովորաբար հանդես են գալիս բառային օժանդակ միջոցներ։ Այսպես՝

Р⟶ նախան Р	*Այդ հոգեկան վիշտն է տեսել նկարիչը իր խորաթափանց հայացքով, նախքան վրձինը*

P⟶ երբ P — կմոտեցներ երանգապնակին (6, 47)։

Նկարիչն իր խորթափանց հայացքով տեսել է այդ վիշտը (այն ժամանակ), երբ դեռևս վրձինը չէր մոտեցրել երանգապնակին։

P⟶ նախքան P — Եվ նախքան նա ուշքի կգար ազատություն տալու համար իր բողոքի դգացմանը, ուրիշ, առաջվանից ավելի անակնկալ ու սոսկալի մի հարված կարկամեցրեց նրան միանգամայն (18, 3, 110)։

P⟶ երբ P — Ուրիշ, առաջվանից ավելի անակնկալ ու սոսկալի մի հարված միանգամից կարկամեցրեց նրան (այն ժամանակ), երբ նա դեռևս ուշքի չէր եկել ազատություն տալու համար իր բողոքի դգացմանը։

Ժամանակային հաջորդում արտահայտելու գործառությունը հատուկ է նաև ստորադասական անջաղկապ բարդ նախադասություններին։ Նույն հարաբերությունն արտահայտող շաղկապավոր նախադասություններից սրանք տարբերվում են մի կարևոր առանձնահատկությամբ. անշաղկապ կապակցության դեպքում գլխավոր նախադասության գործողությունը միշտ հաջորդում է երկրորդական նախադասության մեջ արտահայտված գործողությանը[21]։ Սա նշանակում է, որ գլխավորի գործողությանը հաջորդող գործողություն ցույց տվող երկրորդական նախադասությամբ շաղկապավոր կառույցները (նախքան, մինչև, մինչև որ շաղկապներով կապակցվածները) անշաղկապ տարբերակներ չունեն։ Շաղկապի բացակայության պայմաններում բարդ նախադասության մասերի ստորոգյալների հաղորդակցամանակային առնչությունը ժամանակային հարաբերություն արտահայտելու և մասերի միջև քերականական կախումը նշելու տեսակետից ավելի մեծ ծանրաբեռնվածություն է ստանձնում։ Անշաղկապ կապակցության դեպքում ևս ժամանակային հաջորդումն ամենից հաճախ արտահայտվում է անցյալ կատարյալի ձևերի զուգորդումով։ Համմտ՝ Տեսան տանը չի կարողանում ծառայի, խանութ տարան Գիքորին (8, 3, 42) (Երբ տեսան ...)։ Անցյալ կատարյալի ձևը երկրորդական նախադասության մեջ հաճախ կիրառված է լինում ոչ իր հիմնական իմաստով և ցույց է տալիս ապագայում կատարվելիք՝ գլխավոր նախադասության գործողությանը նախորդող մի գործողություն[22]։ Համանիշ շաղկապավոր տարբերակում սա փոխարինվում է սովորաբար ըղձական ապառնիի ձևով։

Համմտ.՝ P← P — Դասերդ սովորեցիր՝ կգնաս խաղալու։

երբ P← P — Երբ դասերդ սովորես, կգնաս խաղալու։

Այս կարգի նախադասությունները հոմանիշ մյուս նախադասություններից տարբերվում են պայմանի իմաստային երանգով, իսկ ոճական տեսակետից՝ խոսակցական լեզվում կիրառվելու հատկանիշով։ Որոշակի համատեքստում ժամանակների այսպիսի հարաբերությամբ բնութագրվող նախադասությունները կարող են ցույց տալ գործողությունների կտրուկ, անմիջապես հաջորդում ապառնի ժամանակի մեջ, ախինքն՝ համարժեք լինել հետց(ոr), բե չէ շաղկապներով կապակցված կառույցներին։

Գերազանցապես ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ անցյալ կատարյալի ձևերը անշաղկապ նախադասության կազմում ունենում են ընդհանուր նշանակություն՝ ցույց են տալիս որպես կանոն իրար հաջորդող գործողություններ[23]։ Սրանց շաղկապավոր հոմանիշ տարբերակների մեջ նշված իմաստը դրսևորվում է ներկայի ձևերի կիրառությամբ. Համմո՝

Р← Р *Ոջին տեսան՝ աղքատ մոռացան (14, 7)։*

Երբ Р ← Р *Երբ խոջին տեսնում են, աղքատին մոռանում են։*

Այս դեպքում, ինչպես երևում է փոխակերպումից, շաղկապավոր տարբերակը բնորոշ չէ ժողովրդական առածների լեզվին, զիջում է հյուքեղ ու պատկերավոր լինելու տեսակետից։

Ներկայի ձևերի զուգորդմամբ կառուցված տարժամանակային անշաղկապ կառույցներում դրսևորվում է կամ անցյալում միմյանց հաջորդած (պատմական նեղկա) կամ էլ սովորաբար իրար հաջորդող գործողություններ[24]։ Առաջին դեպքում հոմանիշ շաղկապավոր կառույցի մեջ կարելի է գործածել անցյալ կատարյալի ձևեր, երկրորդ դեպքում ներկայի ձևերը պահպանվում են։

Համմո.՝ *Կռանում, բարձրացնում են քարը— բացվում է նրանց առաջ մի մութ ներքնահարկ (9, 304)։ Երբ կռացան, բարձրացրին քարը, նրանց առջև բացվեց մի մութ ներքնահարկ։*

Կանչում ես՝ չեն գալիս, գրում ես՝ չեն պատասխանում։

Երբ կանչում ես, չեն գալիս, երբ գրում ես, չեն պատասխանում։

Ապառնիի ժամանակային պլանում գործողությունների հաջորդում արտահայտելու համար ստորադասական անշաղկապ նախադասություններում սովորական է պայմանականի ապառնի ձևերի զուգորդումը։ Երբեմն երկրորդականի մեջ կիրառված է լինում ըղձական ապառնի, ավելի հազվադեպ ըղձականի ձևերը կիրառվում են անշաղկապ կապակցության երկու մասերում[25]։ Այս բոլոր դեպքերի համար շաղկապավոր հոմանիշ նախադասության երկրորդական մասում գործածվում է ըղձական, իսկ գլխավորում՝ պայմանական ապառնի ժամանակաձևը, երբեմն նաև սահմանականի ապառնին։

P ← P Հրաշալի երեխաներ ունեմ, կգաք՝ կտեսնեք։
Երբ P ← P ... Երբ գաք, կտեսնեք (12, 22)։
P ← P Գործս վերջացնեմ՝ կգամ։ Գործս վերջացնեմ՝ գամ։
Երբ P ← P Երբ գործս վերջացնեմ, կգամ։ Երբ գործս վերջացնեմ, կգամ։

Ինչպես համադասական անշաղկապ նախադասություններում, այստեղ էլ գործողությունների անմիջական, կարուկ հաջորդման իմաստային երբեմն հաճախ արտահայտվում է բառային միջոցներով. Համմտ՝ Նա հազիվ երևաց՝ երեխաները խուճապահար փախան— Հենց (որ) նա երևաց, երեխաները..., Նա երևաց թե չէ, երեխաները...։

Սակայն ստորադասական կառուցվածքի անշաղկապ նախադասությունները հանդես են բերում իմաստային հիշյալ նրբերանգը դրսևորելու բավական ինքնատիպ եղանակներ ևս։ Հետաքրքրական է, օրինակ, ժամանակների անմիջապես հաջորդման արտահայտությունը երկրորդական նախադասության ստորոգյալի կրկնությամբ՝ ժխտական ձևով[28]։ Ար. Եկավ-չեկավ, օրներս սևացավ — Հենց որ եկավ (թե չէ), օրներս սևացավ։ Նման կառույցը գործածական է բացառապես խոսակցական ոճում։ Նույն իմաստային նրբերանգն արտահայտվում է նաև երկրորդական նախադասության հարցական հնչերանգի միջոցով։ Համմտ՝ Տունը հյո՞ւր էր գալիս՝ իսկույն ցույց էր տալիս իր գրադարանը (Հենց որ տունը հյուր էր գալիս, իսկույն ցույց էր տալիս իր գրադարանը)։

Համանիշ կառույցների շարքում սրանք իրենց արտահայտած իմաստային նրբերանգով հակադրվում են գործողությունների չեղոք հաջորդում դրսևորող կառույցներին, իսկ խոսակցական ակնհայտ հրանգով՝ նույն իմաստային երանգն արտահայտող շաղկապավոր կառույցներին։ Ընդհանրապես տարժամանակություն նշող բարդ նախադասությունների (ինչպես նաև այլ հարաբերություններ արտահայտող նախադասությունների) համանիշական շարքի շաղկապավոր անդամները իրենց անշաղկապ տարբերակներին հակադրվում են հիմնականում ոճական առումով. առաջիններն առավել հատուկ են գիտական հրապարակախոսական, ինչպես նաև գեղարվեստական բնույթի տեքստերին, մինչդեռ երկրորդների կիրառության բնական ոլորտը կենդանի ժողովրդախոսակցական լեզուն է։

բ) Համադասական կառույցներ

Բարդ համադասական նախադասությունների իմաստային նկարագրի մեջ ևս շատ հաճախ գերակշռում է գործողությունների ժամանակային հաջորդման իմաստը։ Շաղկապավոր համադասական կառույցներից տարժամանակություն արտահայտող նախադասությունների համանիշական շարքը կարող են մտնել միավորական և, ու շաղկապներով ձևա-

վորված կառույցների որոշ խոսքային իրացումներ։ Իմաստային այլ հարաբերությունների (ներհակական, տրոհական, հավելական) դրսևորմանը ծառայող համադասական կառույցների մեջ երկրորդաբար արտահայտված ժամանակային իմաստը, ինչպես նշել ենք, բավարար հիմք չէ դրանց և ժամանակային կառույցների միջև հոմանիշական հարաբերություններ նշելու համար։

Եվ, ու շաղկապներով կապակցվող համադասական կառույցի և ստորադասական կառույցների միջև տարժամանակություն դրսևորելու տեսակետից բացարձակ (կառույցների բոլոր կոնկրետ իրացումներն ընդգրկող) հոմանիշություն հնարավոր չէ մի քանի պատճառներով։ Դրանցից առաջինը, ինչպես համաժամանակության կառույցների առիթով էլ նշեցինք, համադասական և ստորադասական քերականական հարաբերությունների արմատական տարբերությունն է։ Եթե տարժամանակային ստորադասական նախադասությունների մասերից մեկը քերականորեն կախյալ է մյուսից, լրացնում է նրան, ապա համադասությամբ արտահայտված հաջորդումը դրսևորվում է իբրև քերականական տեսակետից հարաբերականորեն անկախ և ինքնուրույն նախադասությունների մեջ արտահայտված գործողությունների հաջորդում ժամանակի մեջ։ Հաղորդողն այդ երկու գործողությունները ներկայացնում է շեշտելու համար դրանց ժամանակային հաջորդման փաստը, մինչդեռ ստորադասական կառուցվածքի ընտրության դեպքում ընդգծվում է գործողություններից մեկի կատարման ժամանակը մի այլ գործողությամբ պարզաբանելու, կոնկրետացնելու հանգամանքը, որ հաղորդման նպատակն է։ Այս ընդհանուր տարբերությունից բացի համադասական և ստորադասական կառուցվածք ունեցող կոնկրետ նախադասությունները հաճախ հանդես են բերում իմաստային ու կառուցվածքային յուրահատկություններ, որոնք խոչընդոտում են դրանց հոմանիշական փոխակերպմանը։

Համադասական կառուցվածքի միջոցով գործողությունների հաջորդում կարող է արտահայտվել բայական ժամանակների այնպիսի զուգորդումով, որը հնարավոր կամ բնական չէ ստորադասական կառուցվածքի նախադասություններում։ Համադասական նախադասություններում բայական տարբեր ժամանակների կիրառությունն այս տեսակետից բավական ազատ է[27], մինչդեռ ստորադասական կառույցը ժամանակային յուրաքանչյուր հարաբերություն արտահայտելու համար պահանջում է քերականական ժամանակների որոշակի, օրինաչափ համապատասխանություն։ Այսպես, համադասական նախադասություններում բնական է տարժամանակության դրսևորումը վաղակատար և ապառնի, անցյալ կատարյալ և ներկա, և նման կարգի զուգորդություններով, որոնք անհնար են դարձնում դրանց փոխակերպումը ստորադասական կառուց-

վածքի, մասնավորապես երբ շաղկապով ձևավորված նախադասության։ Օրինակներ՝ Նա վաղուց էր (է) սկսել այդ աշխատանքը և ուր որ է ավարտելու էր (է)։ (Գ, 4, 1979)։ Հետո ես գնացի գյուղից ու ահա վերադառնում եմ քսանհինգ տարի անց (11, 9)։ Ես հանդիպել եմ Օնիկ Ալեքսյանին, ճանաչում էի անձամբ հայ արվեստի անխոնջ մշակին, աղնվագույն այդ մտավորականին և սիրով եմ հիշատակում նրա անունը իբրև տաղանդների հայտնաբերողի և հովանավորողի (6, 45) և այլն։

Հիմնականում համադասական կառույցներին է հատուկ նաև հրամայականի ձևերով ժամանակային հաջորդում արտահայտելը, ընդ որում սրանց երկու մասերն էլ ունեն միևնույն ենթակաները. օրինակ՝ Ծնկի եկ և ներողություն խնդրիր (7, 41)։

Դու նվիրական ինձ քո գիրկը բաց, Ով գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել (9, 203) և այլն։

Նշված կարգի հոմանիշական փոխակերպումներն անհնար են կամ արհեստական են նաև այն դեպքերում, երբ կառույցներից մեկում բայական ժամանակները կիրառված են իրենց ոչ հիմնական իմաստներով։ Այսպես, հայտնի է, որ երբ-ով կապակցված ժամանակային կառույցը ներկայի ձևերի զուգորդմամբ հիմնականում արտահայտում է սովորաբար (իբրև սովորույթ, պարբերաբար) իրար հաջորդող գործողություններ։ Եթե համադասական կառույցի մեջ միմյանց զուգորդվող ներկա ժամանակի ձևերը ցույց են տալիս անցյալում մեկ անգամ իրար հաջորդած գործողություններ (այսինքն՝ կիրառված են իբրև պատմական ներկա), ապա ստորադասական փոխակերպման ժամանակ իմաստային այս առանձնահատկությունը կարող է չպահպանվել.՝ օրինակ՝ Մայրս ըմբռնում է իրադրությունը և այնպես, որ քույրը չնկատի, անցնում է հարձակման (12, 54) (Համմտ.՝ Երբ մայրս ըմբռնում է իրադրությունը,... անցնում է հարձակման)։ Այսպիսի նախադասությունների հոմանիշական փոխակերպում ստորադասական կառույցի հնարավոր է այն դեպքում, երբ վերջինիս մեջ կիրառվում են ելակետային կառույցի մեջ գործածված ժամանակաձևերի (տվյալ դեպքում՝ ներկայի) երկրորդական իմաստներին համապատասխանող բայաձևեր (տվյալ դեպքում՝ անցյալ կատարյալի ձևերը)։ Այսպես՝

P— և —P Կատարում ենք անհրաժեշտ ձևակերպությունները և «պայուսակը» առած՝ շարժվում ենք մեր տուն (12, 53)։

Երբ P ← P Երբ կատարեցինք անհրաժեշտ ձևափոխությունները, «պայուսակը» առած՝ շարժվեցինք մեր տուն։

Համադասական կառուցվածքի նախադասություններում, ինչպես նշել ենք, ժամանակային հաջորդման իմաստը շատ հաճախ ուղեկցվում է պատճառի, պայմանի և այլ իմաստներով։ Այսպիսի նախադասու-

բյուններն իրենց հոմանիշական հնարավորություններ տեսակետից միարժեք չեն, այսինքն՝ հոմանիշական տարբեր փոխակերպություններ ենթարկվելով՝ կարող են մտնել իմաստային տարբեր հարաբերություններ դրսևորող ստորադասական կառույցների հոմանիշական շարքերը։ Օրինակներ՝

Նա փակեց աչքերը, և շրջանակը վերացավ (7, 22)։
Երբ նա փակեց աչքերը, շրջանակը վերացավ։
Շրջանակը վերացավ, որովհետև նա փակեց աչքերը։

Համեմատենք նաև՝ Ստրաուդն զգաց նրա ճիգը և չարախնդաց մտքում (7, 11)։
Ստրաուդը մտքում չարախնդաց, երբ (որովհետև) զգաց նրա ճիգը։
Բռունցքդ մտցրու խորխորի կապի անցքը, որի միջով մի կերպ դուրս է սլրծնում գետը, և մի աչք ճակատում ձորը կլցվի գետի կապույտ, սառցահամ ջրով (11, 30)։
Երբ (նթե) բռունցքդ մտցնես խորխորի կապի կիրճը..., ձորը կլցվի գետի կապույտ, սառցահամ ջրով։

Դիտարկումները ցույց են տալիս, որ նրա հաջորդող երկու գործողություններ ունեն միևնույն ենթականները, դրանք լեզվական արտահայտություն են ստանում հիմականում բարդ համադասական նախադասությունների միջոցով։ Սրանք հաճախ ունենում են թվարկման իմաստային երանգ, և այս հանգամանքը որոշ առումով արհեստական է դարձնում համադասական նման կառույցների փոխակերպումը ստորադասական հոմանիշ կառույցների։ Հմմտ՝ նա որոշեց վերջ տալ այդ ավելորդ և չպարտադրված տանջանքներին ու գտավ ելքը (7, 8) և՝ երբ նա որոշեց վերջ տալ այդ ավելորդ և չպարտադրված տանջանքներին՝ գտավ ելքը։ Նա կոնյակը ծծեց դանդաղ ու կում արեց սուրճը (15, 82) և՝ երբ նա կոնյակը ծծեց դանդաղ, կում արեց սուրճը և այլն։

Վերջապես, տարժամանակություն դրսևորող համադասական և ստորադասական կառուցվածքի բարդ նախադասությունների հոմանիշական փոխակերպմանը կարող են խանգարել նաև դրանց բառակազմերի միջոցով արտահայտված կոնկրետ բովանդակությունները, համատեքստը։

Այսպիսով կարելի է հաստատել, որ տարժամանակային հարաբերություններ արտահայտելու տեսակետից համադասական և ստորադասական բարդ նախադասությունները հոմանիշ կարող են դիտվել դրանց փոխադարձ փոխակերպմանը նպաստող լեզվական և արտալեզվական որոշ գործոնների առկայության պայմաններում։ Դրանցից առա-

ջին հերթին պետք է նշվի երկու կառույցների մասերի մեջ համապատասխանաբար միևնույն բայական ժամանակների կիրառությունը։ Այս տեսակետից հետաքրքրական է նշել, որ ավելի հաճախ հոմանշային փոխակերպության տրվում են անցյալ կատարյալի ձևերի ղուգորդմամբ կառուցված համադասական և ստորադասական նախադասությունները։

Օրինակներ՝

P— և —P — Ես գրածս հրեցի Վաքսբերգի առջևը, և նա մոայլվեց ու թուղթը բռան մեջ ճմրթեց (15, 44)։

Երբ P←P — Երբ ես գրածս հրեցի Վաքսբերգի առջևը, նա մոայլվեց ու թուղթը բռան մեջ ճմրթեց։

P— և —P — Անցավ մի որոշ ժամանակ, և Ռուբեն Գրիգորևիչը արեց այդ նկարի հետ կապված մի պատմություն (6, 31)։

Երբ P←P — Երբ անցավ մի որոշ ժամանակ, Ռուբեն Գրիգորևիչն արեց այդ նկարի հետ կապված մի պատմություն և այլն։

Նշված կարգի կառույցները հոմանիշ կարող են լինել նաև ժամանակների այլ (ստորադասական կառույցի համար թույլատրելի) հարաբերությունների դեպքում։

Օրինակներ՝

P— և —P — Կինոնկարներում վայրկենական այդպիսի կեցվածքից հետո կուրծքները բռնում ու ընկնում են, և ռազմի որոտը հեռանում, տեղ է բացում ջութակի համար (15, 45)։

Երբ P←P — Կինոնկարներում, երբ վայրկենական այդպիսի կեցվածքից հետո կուրծքները բռնում ու ընկնում են, ռազմի որոտը հեռանում, տեղ է բացում ջութակի համար։

P— և —P — Մի որոշ ժամանակ էր անցել, և Դրամբյանը բացեց «գաղտնիքը» (6, 33)։

Երբ P←P — Երբ մի որոշ ժամանակ էր անցել, Դրամբյանը բացեց «գաղտնիքը»։

Ստորադասական շաղկապավոր կառույցները դիտարկելիս տեսանք, որ սրանց հոմանշային տարբերությունը հաճախ հիմնված է գործողությունների չեզոք, անորոշ կամ կոչուն, վայրկենական հաջորդման իմաստային նրբերանգի վրա։ Մենք, հոմանիշության չափանիշ համարելով երբ-ով կապակցված գերիշխող կառույցին փոխակերպվելու հանգամանքը, համադասական կառույցները քննեցինք հենց այդ հայեցակե-

տով, մինչդեռ վերջիններիս մեջ ևս կարող են տարբերակվել նշված իմաստային նրբերանգով հակադրվող նախադասություններ։ Բնական է, որ այս դեպքում գործողությունների կտրուկ, անմիջապես հաջորդումը նշվում է ոչ թե կառուցվածքի փոփոխությամբ, այլ մասերի մեջ կիրառված բառային միջոցներով. Համմտ՝

Հազիվ երեցը յուր խոսքը ավարտեց, և ահա եկեղեցու պարսպի դուռը բախեցին։ (17, 5, 230) Հենց(որ) երեցը յուր խոսքը ավարտեց, եկեղեցու պարսպի դուռը բախեցին։

Համադասական նախադասության բառակազմը կարող է արտահայտել նաև մինչև (որ) շաղկապով ձևավորվող կառույցին բնորոշ սահմանափակման իմաստ։ Համմտ՝ (Տունը) դատարկ մնաց, մնաց ու փլվեց (11, 27), Դատարկ այնքան մնաց, մինչև փլվեց և այլն։

Վերը, համադասական և ստորադասական կառույցների հոմանիշական առնչությունները քննելիս, մենք նկատի ունեցանք համադասական շաղկապավոր կառույցը։ Պետք է ասել, որ ստորադասական նախադասությունների հետ հոմանիշական կապերի մեջ մտնելու տեսակետից համադասական անշաղկապ նախադասությունները ևս հանդես են բերում հիմնականում նույն կարգի առանձնահատկություններ։ Ինչ վերաբերում է վերջիններիս և դրանց շաղկապավոր տարբերակների հոմանիշությանը, ապա պետք է ասել, որ «ամաքուր» տարժամանակային հարաբերություններ արտահայտելիս P — P և P — և (ու) —P կառույցները գրեթե միշտ հոմանիշ են իրար։

Բերենք մի քանի օրինակներ.

P — P — Բաբկենը դուրս է գալիս տնակից, սուզվում երեկոյի մեջ (Ա, 19, 11, 80)։

P— և —P — Երբ Բաբկենը դուրս եկավ տնակից, սուզվեց երեկոյի մեջ։

P — P — Ես հոգնում էի այդ ձայներից կամ լռությունից, ուզում էի խնդրել, որ խոսեն կամ լռեն... (20, 7)։

P— և —P — Ես հոգնում էի այդ ձայներից կամ լռությունից և ուզում էի խնդրել, որ խոսեն կամ լռեն.

Երբ P←P — Երբ ես հոգնում՝ էի այդ ձայներից կամ լռությունից, ուզում էի խնդրել, որ խոսեն կամ լռեն։

P — P — Կգար Անտոնիոն, ժպտուն կբարևեր մեզ... (6. 233)։

P— և —P	*Կգար Անտոնիոն և ժպտուն կբարևեր մեզ։*
երբ P←P	*Երբ Անտոնիոն գալիս էր, ժպտուն բարևում էր մեզ...*

Հատկանշական է, որ անշուշտակ համադասական նախադասությունները հաճախ թվարկում են արտահայտում և ունեն բաց կառուցվածք։ Այս առանձնահատկությունները դժվարություն են հարուցում ոչ միայն ստորադասական տիպին, այլև համապատասխան շաղկապավոր նախադասությանը փոխակերպվելիս։ Վերը մեր արած դիտողությունները, բնականաբար, վերաբերում են բարդ նախադասությունների երկբաղադրիչ կառուցվածքներին։

Այսպիսով, կարելի է ներկայացնել նաև ժամանակային հաջորդման իմաստով միավորված կառույցների հոմանիշական շարքը.

Կառույցներ	Նմուշներ
Երբ P←P	*Երբ պատերազմն ավարտվեց, նա եկավ գյուղ։*
Երբ որ P←P	*Երբ որ պատերազմն ավարտվեց, նա եկավ գյուղ։*
որ P←P	*Պատերազմը որ ավարտվեց, նա եկավ գյուղ։*
	(Պատերազմը որ չավարտվեց, նա եկավ գյուղ)։
Հենց P←P	*Հենց պատերազմն ավարտվեց, նա եկավ գյուղ։*
Հենց որ P←P	*Հենց որ պատերազմն ավարտվեց, նա եկավ գյուղ։*
P *թե չէ*←P	*Պատերազմն ավարտվեց թե չէ, նա եկավ գյուղ։*
Բավական է P←P	*Բավական է աշխատանքն ավարտի, նա գալիս է գյուղ։*
Մինչև P←P	*Գյուղ չեկավ, մինչև պատերազմը չավարտվեց։*
Մինչև որ P←P	*Գյուղ չեկավ, մինչև որ պատերազմը չավարտվեց։*
Ինչ P←P	*Ինչ պատերազմը ավարտվել է, գյուղ չի եկել։*
Նախքան P←P	*Նախքան նա գյուղ կգար, պատերազմն ավարտվեց։*
P←P	*Պատերազմն ավարտվեց՝ նա գյուղ եկավ։*
P— *և (ու)*— P	*Պատերազմն ավարտվեց և նա գյուղ եկավ։*
P — P	*Պատերազմն ավարտվեց, նա գյուղ եկավ։*

ՊԱՏՃԱՌԱԽՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՌԵՐ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆԸ

Պատճառահետևանքային հարաբերությունները, իրենց լեզվական արտահայտությունից անկախ, ընդգրկում են իրական երևույթների, գործողությունների միջև առկա տրամաբանական հարաբերությունների մի քանի տիպեր, որոնք իրենց ընդհանուր նշանակությամբ կարող են բնութագրվել իբրև պատճառահետևանքային կապի դրսևորումներ։ Լայն իմաստով պատճառահետևանքային հարաբերության տեսակներ են, օրինակ, պայման-հետևանք կապը, գործողությունների՝ նպատակ արտահայտող հաջորդումը և այլն։ Լեզվական տեսակետից նշված տրամաբանական հարաբերություններից յուրաքանչյուրը իր դրսևորումն է գտնում բերականական տարբեր նշանակություններով օժտված բառ նախադասությունների միջոցով։ Նշված հարաբերություններն արտահայտող կառույցները հոմանիշության տեսանկյունից դիտարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ դրանք իրենց արտահայտած իրական հարաբերությունների առումով շատ սերտ են և հաճախ կարող են առանց դժվարության փոխակերպվել միմյանց՝ պահպանելով կառույցների իմաստային հիմքը կազմող իրական-տրամաբանական հարաբերությունները։ Համմ.՝ եթե ունենայի՝ կտայի (պայման) և Ջուվեցի, որովհետև չունեի (պատճառ)։ Սակայն բուն պատճառահետևանքային, պայմանի, նպատակի նշանակություններով բնութագրվող կառույցների միջև հոմանշային կապ արձանագրելու դեպքում մենք ակնհայտորեն կշեղվենք բարդ նախադասությունների հոմանիշության սահմանման խիստ քերականական չափանիշներից, որոնք, ինչպես տեսանք, ամենից հուսալի միջոցն են հոմանիշ կառույցները լեզվականորեն տարբերակելու, ինչպես նաև նրանց հոմանիշության հիմքը կազմող իմաստային ընդհանրությունները նշելու տեսակետից։ Ուստի, մի կողմ թողնելով միմյանց հետ իմաստային այլ երանգներով կապված գործողությունների ու երևույթների դրսևորման դիտարկումը, փորձենք քննել այսպես կոչված բուն պատճառահետևանքային հարաբերությունների լեզվական արտացոլմանը ծառայող բարդ նախադասությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները՝ դրանք հոմանիշական միևնույն շարքում միավորող իմաստային ընդհանրության և, միաժամանակ, իբրև հոմանիշներ միմյանց հակադրող իմաստային նրբերանգների վերհանման, և, ի վերջո, պատճառահետևանքային իմաստով բնութագրվող

բարդ նախադասությունների հոմանիշական շարքը ներկայացնելու նպատակով։

Բուն պատճառահետևանքային հարաբերություններ ասելով նկատի ունենք պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ անշաղկապ և շաղկապավոր կառույցների, դրանց հետ հոմանիշական փոխադարձ փոխակերպելիությամբ կապված համադասական կառույցների, ինչպես նաև հետևանքի երկրորդական նախադասությամբ ստորադասական և սրանց հոմանիշ համադասական կառույցների իմաստային կողմը կազմող տրամաբանական հարաբերությունները։

Մեր ընդունած ընդհանուր սկզբունքի համաձայն, իմաստային ընդհանրությամբ բնութագրվող նշված կարգի կառույցների միջև հոմանիշական կապերը բացահայտելու համար պետք է առանձնացնենք այդ բոլոր կառույցների համար իմաստային անփոփոխակի արժեքով հանդես եկող գերիշխող կամ հիմնական անդամ։ Ստորադասական շաղկապավոր կառույցներից պատճառահետևանքային կապն ակներևաբար ամենից ավելի անխառն ու համարժեք դրսևորվում է որովհետև շաղկապով ձևավորվող կառույցի մեջ, որը ոճական առումով ևս չեզոք է ու խոսքի մեջ ավելի հաճախադեպ է, քան իմաստային նույն հարաբերությունն արտահայտող մյուս կառույցները։

Հոմանիշների՝ քննության առնվող շարքի գերիշխող անդամ համարելով որովհետև-ով կառույցը, այստեղ էլ մեր սկզբունքը մնում է անփոփոխ. շարքի յուրաքանչյուր անդամ պետք է տրվի որովհետև-ով փոխակերպման, որը նշանակում է, թե շարքի անդամներից յուրաքանչյուրը հոմանիշ է գերիշխող անդամին, իսկ այս հանգամանքն էլ, իր հերթին ենթադրում է շարքի բոլոր անդամների միջև հոմանիշական կապի առկայություն։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԱՎՈՐ ՀՈՄԱՆԻՇ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Պատճառի պարագա երկրորդական նախադասությամբ կառույցներ

Որոշակի պատկերացում կազմելու համար պատճառահետևանքային կապեր դրսևորող բարդ նախադասությունների մասերի եղանակաժամանակային պլանների փոխհարաբերության մասին, կարելի է այդ հայեցակետով դիտարկել հոմանիշների շարքի գերիշխող անդամը՝ որովհետև-ով կառույցը։

Իմաստային նշված հարաբերության տրամաբանական բնույթը թելադրում է ժամանակային ձևերի որոշակի օրինաչափ հերթականություն. բնական է, որ պատճառ նշանակող գործողությունը կամ իրողությունը

ավելի վաղ պետք է կատարված լինի, քան նրանից բխող հետևանքը։ Այսպիսի իրական հաջորդումը լեզվական արտահայտության կարող է ստանալ ինչպես միևնույն ժամանակին վերաբերող ձևերի (ներկա-ներկա. անց. անկ.— անց. անկ. և այլն), այլև տարբեր եղանակների ու ժամանակների բայաձևերի զուգորդություններով։ Սա նշանակում է, որ պատճառահետևանքային իմաստով բնութագրվող բարդ կառույցների ստորակցական իմաստային դաշտը ևս, ժամանակային կառույցների նման, հարուստ է մասերի ստորոգյալների քերականական նկարագրերով տարբերվող կառուցվածքային տարբերակներով։ Այստեղ, իհարկե, իմաստային հարաբերությունը ուղղակիորեն պայմանավորված չէ ժամանակների զուգորդման առանձնահատկություններով, ինչպես որ ժամանակային հարաբերության տարբեր տեսակների դեպքում էր։ Պետք է նշել նաև, որ տարբեր շաղկապներով կապակցված ստորադասական կառույցների մեջ կարող են օրինաչափ լինել ժամանակների տարբեր զուգորդումներ։ Դրանցից յուրաքանչյուրի մասին խոսք կլինի կոնկրետ կառույցների նկարագրության ընթացքում։ Բերենք ժամանակաձևերի տարբեր զուգորդումներով կառուցված՝ որովհետև շաղկապով կապակցված նախադասությունների օրինակներ.

Ներկա–ներկա	*Նկարում է, որովհետև չի կարող չնկարել (6, 28)։*
	Հավատում եմ, որովհետև անհեթեթ է (Գ, 4, 1979)։
անց. անկ. — անց. անկ.	*Նրա դռները պինդ-պինդ կողպվում էին, որովհետև օրվան այդ ժամանակը այդտեղ դադարում էին աշխատանքները (17, 1, 95)։*
անց. կատ. — անց. կատ.	*...Բայց բան դուրս չեկավ, որովհետև այս անգամ էլ թագավորը դադարեց նախ ինքը իրեն նամանվելուց (7, 54)։*
վաղակատար–վաղակատար	*Ջեմ արել, որովհետև մտքովս չի անցել, թե մի օր նա կարող է չլինել (6, 231)։*
անց. վաղ. — անց. կատ.	*Եվ Մարշելոն թանձր վարագույրներով զովացրած մեծ սենյակում թափթփեց բաճկոնը, փողկապը, շապիկը, տաբատը՝ որովհետև բազկաթոռի մեջ տրտմելով նիրհել էր՝ շորերը հագին (15, 18)։*
անց. կատ. — ներկա	*Բացի այդ, ես բողոքում եմ դատավճռի դեմ, որովհետև պրոցեսուալ սխալներ թույլ տրվեցին (7, 31)։*
ներկա–ապառնի (պայմ.)	*Նրա մասին ես կգրեմ մի ուրիշ անգամ,*

որովհետև նա բացառիկ հետաքրքրիր անձնավորություն է (16, 20)։

աճց. ապառնի–աճց. կատ. Այստեղ նա մի պահ լռեց, որովհետև հայտնադործություն էր անելու (7, 59) և այլն։

Վերոբերյալ նախադասությունները, բացի ժամանակաձևերի դուրդման բազմազանությունից, ցուցադրում են նաև պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող ամենատարածված կառուցին բնորոշ շարադասությունը։ Ինչպես երևում է, որովհետև–ով միացող երկրորդական նախադասության համար ավելի բնական և կանոնական է նատադաս դիրքը։ Սակայն պետք է նշել նաև, որ որովհետև շաղկապի ձևավորած նախադասությունները օժտված են շարադասական ճկունությամբ, այսինքն՝ հնարավոր են երկրորդական մասի առաջադաս կամ միջադաս շարադասությամբ կառուցվածքային տարբերակներ, որոնք որովհետև–ով կառույցի շրջանակներում հանդես են գալիս իբրև հոմանիշներ։ Առաջադաս երկրորդական նախադասությամբ տարբերակը հաղորդման նպատակի տեսակետից զգալիորեն տարբերվում է ետադաս երկրորդականով նախադասությունից. նրանում ընդգծված է գլխավոր նախադասությամբ արտահայտված հետևանքի, արդյունքի կարևորությունը հաղորդման տեսակետից։ Բացի նրբիմաստային այս տարբերությունից, որ սրանց հոմանիշական տարբերության իմաստային հիմքն է, նշված շարադասական տարբերակները ունեն նաև ձևավորման որոշ յուրահատկություններ։ Ետադաս գլխավոր նախադասության մեջ հաճախ հանդես են գալիս հարաբերյալներ, իբրև հարաբերյալ կիրառված շաղկապներ, որոնցով հաղորդողն ավելի ընդգծում է երկրորդական նախադասությամբ արտահայտված պատճառից բխող, նրանով պայմանավորված և նրա հետևանքը հանդիսացող գործողությունը կամ երևույթը։ Որովհետև–ին այս կարգի նախադասություններում դուգադրվում են հիմնականում ուստի, դրա համար (էլ), այդ պատճառով (էլ), ասյա, ապա ուրեմն շաղկապներն ու հարաբերյալի դերով հանդես եկող շաղկապային կապակցությունները[1]։ Սրանցից ուստի շաղկապը, ինչպես հայտնի է, հետևանքի երկրորդական նախադասություններով բարդ կառույցներ ձևավորող ամենատարածված միջոցներից է. տվյալ դեպքում որովհետև... ուստի զուգադրությունը ավելի շոշափելի է արտահայտում պատճառ-հետևանք հաջորդումը, մյուս կողմից էլ, ավելի է ընդգծում պատճառի պարագա և հետևանքի երկրորդական նախադասություններով կառույցների իմաստային մերձավորությունը։ Այսպիսով, գերիշխող անդամի համար կարելի է նշել շարադասական 3 հոմանիշ տարբերակներ, որոնցից առաջադաս երկրորդական մասով նախադասություններում, իբրև սրանց

բնորոշ առանձնահատկություն, կարող են հանդես գալ վերը նշված հարաբերյալները.

P⟶ որովհետև P — Պարոն Ռուստամը յուր հյուրերը ճանապարհ դնելուց հետո շուտով քնեցավ, որովհետև շատ հոգնած էր։

P⟶ |որովհետև P| — Պարոն Ռուստամը յուր հյուրերը ճանապարհ դնելուց հետո, որովհետև շատ հոգնած էր, շուտով քնեցավ (25, 1. 370)։

Որովհետև P←P — Որովհետև պարոն Ռուստամը շատ հոգնած էր, (ուստի, դրա համար...) յուր հյուրերը ճանապարհ դնելուց հետո շուտով քնեցավ։

Ամենից սակավադեպը նշված տարբերակներից միջադաս երկրորդական մասով կառույցն է, որի իմաստային առանձնահատկությունը պատճառ հանդիսացող գործողության կամ իրողության նշումն է հաղորդման հիմնական նպատակը պարունակող գլխավոր մասի ընդմիջումով. հաղորդման տեսակետից պատճառ արտահայտող իրողությունը այնքան էլ կարևոր չի դիտվում։

Իմաստային և ոճական-կիրառական տեսակետներից, ինչպես նաև գործածության հաճախականության առումով գերիշխող կառույցին ամենից ավելի սերտ է թանի որ շաղկապով ձևավորվող կառույցը։ Կառուցվածքային առանձնահատկությունների, և մասնավորապես երկրորդական նախադասության շարադասական հնարավորությունների հարցում թանի որ-ով կառույցը նման է գերիշխող անդամին։ Պատմականորեն թանի որ շաղկապն առնչվում է ժամանակի իմաստ արտահայտող թանի (թանի որ) շաղկապին, և թեև ժամանակակից դրական հայերենում գործածվում է զուտ պատճառային նշանակությամբ, այնուամենայնիվ սրանով արտահայտված պատճառահետևանքային կապը այնքան հստակ չի ու անխառն, որքան որովհետև-ով կապվող նախադասությունների դեպքում։ Մեր դասականների լեզվում հանդիպում են թանի որ շաղկապի այնպիսի գործածություններ, երբ երկրորդական նախադասության մեջ դրսևորված պատճառի իմաստը դիջում է ժամանակի և պայմանի իմաստներին։ Օրինակներ. Բայց ի՞նչ հարկ էր ստեղծելու յուր առաջ մի այդպիսի մթին, մռայլ կյանք, քանի որ տակավին բախտը ժպտում էր նրան (18, 1, 356)։ Ես տեսնում էի, քանի որ դուխս ծռում եմ, ավելի շատ են ծեծում, քանի որ լեզուս մունջ եմ պահում, ավելի շատ են հայհոյում (25, 3, 26)։ Քանի որ շաղկապի այս կիրառություններն, իհարկե, խորթ են ժամանակակից հայերենին, և բերված նախադասություններն էլ չեն կարող մտնել այստեղ քննվող հոմանիշների շարքը։

Որովհետև և թանի որ շաղկապներով ձևավորվող կառույցների իմաս-

տային տարբերակման հիմքը հոմանիշական տվյալ շարքի մեջ այն է, որ առաջին դեպքում երկրորդական նախադասության մեջ առավելապես շեշտվում է գլխավորի մեջ դրսևորված գործողության կամ իրողության բուն, առարկայական պատճառը, իսկ երկրորդ դեպքում (բանի որ-ով կապակցվող նախադասություններում) երկրորդական նախադասությունը ստանում է գլխավորի արտահայտած գործողության պատճառային հիմնավորման նշանակություն՝ իբրև պատճառի ընդհանուր նշանակության իմաստային նրբերանգ։ Հենց այս նկատառումով է, որ բանի որ շաղկապով կապվող երկրորդական նախադասությունները հաճախ կոչվում են հիմունքի և դիտվում են իբրև պատճառի պարագա երկրորդական նախադասությունների հատուկ ենթատեսակ[2]։ Հիմունքի իմաստային երանգը ազատ կարող է դրսևորվել նաև որովհետև շաղկապի ձևավորված կառույցի մեջ, իսկ սա նշանակում է, որ հիմունքի և պատճառի երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունները կառուցվածքային տեսակետից չեն տարբերակվում։ Իմաստային այդ նրբերանգն ստացվում է բարդ նախադասության մասերի բառային կոնկրետ բովանդակությունների շնորհիվ[3]։ Եթե հաշվի առնենք նաև, որ հիմունք-հետևություն (հզոահանգում) և պատճառ-հետևանք հարաբերությունները տրամաբանական առումով խստորեն անջրպետված չեն միմյանցից, ապա կարելի է ենթանագրել, որ բանի որ-ով ձևավորված դրեթե բոլոր նախադասությունները կարող են հոմանիշական զույգ կազմել որովհետև-ով կապակցված գերիշխող անդամի հետ.

$$\frac{P \rightarrow \text{որովհետև } P}{P \rightarrow \text{քանի որ } P}$$

օրինակներ. Եվ թող հօդս ցնդի այդ մեքենան, քանի որ կյանքն ընթանում է իր տրամաբանությամբ... (15, 71), ||Եվ թող հօդս ցնդի այդ մեքենան, որովհետև...։ Այն ժամանակ երևի ես էլ չէի հավատում, քանի որ ամեն րոպե հիշում էի. ես իրավունք չունեմ նրան սիրելու (20, 6), (Այն ժամանակ երևի ես էլ չէի հավատում, որովհետև...)։ ...Այդ բացը գնալով լրացվում է, քանի որ կապված է ոչ միայն քննադատության, այլև, առաջին հերթին, երիտասարդ արձակագիրների ստեղծագործական ակտիվացման հետ (ԳԹ, 3. 04. 81), (Այդ բացը գնալով լրացվում է, որովհետև...)։

Իրրև այս հոմանիշ կառույցների կիրառական-ոճական տարբերություն կարելի է նշել, որ բանի որ-ով կապակցված բարդ նախադասությունն ավելի հաճախական են գիտական և հրապարակախոսական ոճում[4]։

Պատճառահետևանքային հարաբերություններ դրսևորող բարդ նա-

խոսքային իրացման որոշ պահանջների։ Ամենից առաջ բարդ նախադասության ամբողջ բառային նյութը պետք է արտահայտի պատճառի և հետևանքի հաջորդման տրամաբանական բովանդակությունը։ Որ-ով կառույցի արտահայտած պատճառային կապը սովորաբար դուգակցված է լինում պայմանի երանգով. սա հոմանիշական շարքում տվյալ կառույցի դրսևորված իմաստային յուրահատկություն է։ Կառուցվածքային տեսակետից ևս այս կարգի նախադասությունները ունեն մի առանձնահատկություն՝ որ-ով միացող երկրորդական մասը հիմնականում առաջադաս է։ Գլխավոր մասի մեջ կարող են կիրառված լինել հարաբերյալներ (ամենից հաճախ՝ ուրեմն, որով պայմանի իմաստային երանգն ընդգծվում է)։ Ստացվում է հոմանիշների այսպիսի զույգ՝

$$\frac{\text{P} \rightarrow \textit{որովհետև P}}{\textit{որ P} \rightarrow /\textit{ուրեմն}/\ \text{P}}$$

Օրինակներ՝ Որ ինձ հետդ չես տանում, ես էլ չեմ ասի (15, 337), (Չեմ ասի, որովհետև ինձ հետդ չես տանում)։ Որ ինձ հետդ չես տանում, ես էլ ձվերը կջարդեմ (15, 338), ||Ձվերը կջարդեմ, որովհետև ինձ հետդ չես տանում։ Խոր չէր կտրել, բայց որ քննության էր գնալու՝ լաց եղավ. «ցավում է, ցավում է, ցավում է» (15, 337), ||...որովհետև քննության էր գնալու, լաց եղավ... և այլն։ Ուրեմն հարաբերյալի առկայությունը հնարավոր է դարձնում նաև մասերի հակառակ շարադասություն (ուրեմն P⟶ որ P) օրինակ՝ Ուրեմն փորձանքն անցել է, որ լազարեթում պառկած է (2, 315)։ ||Փորձանքն անցել է, որովհետև (քանի որ) լազարեթում պառկած է։ Նշված կառուցվածքն ունեցող նախադասություններում, ինչպես նշեցինք, բավական զգալի է պայմանի իմաստային նրբերանգը, որը, բառային նպաստավոր իրացման դեպքում, կարող է դառնալ գերիշխող և նախադասությունը դուրս մղել պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող կառույցների հոմանիշական շարքից։ Պայմանի իմաստը տիրապետող է դառնում մասնավորապես երկրորդական նախադասության՝ ըղձական եղանակով արտահայտված ստորոգյալ ունենալու դեպքում։ Համմտ՝ Որ ինձ հետդ չտանես, ես էլ չեմ ասի ||Եթե ինձ հետդ չտանես...։ Նկատելի է նաև, որ որ շաղկապի նշված կիրառությամբ դրսևորված պատճառի հարաբերությունը իմաստային առումով ավելի

մոտ է բանի որ-ով արտահայտվող պատճառային հիմնավորման, հիմունքի նշանակությանը։

Որ շաղկապով ձևավորված կառույցի կոնկրետ խոսքային տարբերակներից պատճառահետևանքային հարաբերություն դրսևորելու առումով հետաքրքրական է հարցական գլխավոր նախադասությամբ կառույցը։ Սրա իմաստային առանձնահատկությունը հոմանիշների տվյալ շարքում այն է, որ գլխավորի մասի մեջ արտահայտվում են դժգոհություն, անբավականություն, զարմանք՝ երկրորդականի արտահայտած իրողության կամ երևույթի նկատմամբ[5]։ Այսպիսի նախադասությունները իմաստային առումով տարբերվում են պատճառահետևանքային մյուս կառույցներից. պատճառը այս դեպքում դրսևորվում է հռետորական հարցում արտահայտող գլխավոր նախադասության միջոցով, իսկ որ-ով միացող երկրորդական նախադասությունը տվյալ դեպքում արտահայտում է գլխավորի մեջ դրսևորված իրական պատճառից տրամաբանորեն չբխող մի անցանկալի հետևություն։ Որովհետև-ով փոխակերպվելիս գլխավոր և երկրորդական նախադասությունների քերականական հարաբերությունը շրջվում է, ըստ որում փոխվում է նաև գլխավոր ու երկրորդական մասերի ստորոգյալների խոնարհման բնույթը (դրական ստորոգյալը փոխարինվում է ժխտականով և ընդհակառակը)։

... Իվան Իլյիչը սիրված չոբա՞ն էր, սիրված ամուսի՞ն էր, շռայլ սիրեկա՞ն էր, որ սիրուհիները մազները շաղ տալով գային ծվատեին ու սպաններին իրենց (15, 78) (Սիրուհիները... չէին գա..., որովհետև Իվան Իլյիչը սիրված չոբան չէր...)։

Որ շաղկապով կապակցվող բարդ նախադասությունների մի որոշակի խումբ էլ մտնում է պատճառահետևանքային կառույցների համանշային շարքը գլխավոր մասի ստորոգյալի բառային իրացման խիստ որոշակի պայմաններում. P⟶ որովհետև P‖ P⟶ որ P կառույցների միջև համանշային կապն իրականանում է այն դեպքում, երբ որ-ով կապակցված բարդ նախադասության գլխավոր մասի ստորոգյալը ներքին ապրում, հույզ, հոգեվիճակ կամ հուզական վերաբերմունք արտահայտող բառերի իմաստային դաշտին է պատկանում (զարմանալ, ուրախանալ, վախենալ, դժգոհել, ներել, բարկանալ, շնորհակալ լինել և այլն), ընդ որում ստորոգյալը կարող է լինել և՛ պարզ, և՛ բաղադրյալ[6]։ Պատճառահետևանքային նշանակությամբ օժտված այսպիսի կառույցի գոյությունը լավագույն հաստատումն է այն ընդհանուր դրույթի, որ բարդ նախադասության կառուցվածքաիմաստային տիպի որոշման հարցում կապակցության միջոցներից բացի մեծ դեր ունեն կառույցն իրացնող բառերի կոնկրետ իմաստները, բարդ նախադասության բառակազմը։

Բերենք նշված կարգի հոմանիշության օրինակներ.

Ներողություն խնդրեցի Կոջոյանից, որ զբաղնցրի նրան, ախորժակի բերի ու հիմա սիտիպված հետ եմ կանգնելու առաջարկիցս (6, 11)։	Ներողություն խնդրեցի Կոջոյանից, որովհետև...
Նրանք հաճախ են դժգոհում, որ իմ լիրիկական հերոսուհուն ժամանակից շուտ եմ «ուղարկել թոշակի» (Գ, 4, 1979)։	Նրանք հաճախ են դժգոհում, որովհետև...
Հրճվում եմ, որ մեր ժողովուրդը ունի այդպիսի երիտասարդություն (Գ, 4, 1979)։	Հրճվում եմ, որովհետև...
Ափսոսում էի, որ տանտիրոջը չկարողացա նամակ թողնել (Գ. 4, 1979)։	Ափսոսում էի, որովհետև...
Ստրաուդը ուրախացավ, որ նրա ձայնի մեջ վերջապես վերաբերմունք մտավ (7. 9.), և այլն։	Ստրաուդը ուրախացավ, որովհետև...

Ունենալով բառային իրացման սահմանափակ հնարավորություններ, վերը նկարագրված կառույցը պատճառահետևանքային նշանակությամբ առատ գործածում է ժամանակակից հայերենի տարբեր ոճերում (գիտահրապարակախոսական, գեղարվեստական, ժողովրդախոսակցական, պաշտոնական և այլն), ի տարբերություն որ-ով ձևավորված պատճառային մյուս կառույցների, որոնք ակնհայտորեն հատուկ են խոսակցական լեզվին։

Մի այլ ժողովրդախոսակցական լեզվին հատուկ որոշ նախադասությունների էլ կան, որոնք վերաբերում են վերը նկարագրված կառուցվածքին (P⟶ որ P) և արտահայտում են հիմունքի կամ պատճառի բավական աղոտ իմաստ. Համմո՝ Տունդ քանդվի, որ իմ տունը քանդեցիր (նույնիսկ հանդիպում է ինչ-ով ձևը՝ Կգնար, կմեռներ և որ ծնկները կծալվեին, հերը կասեր. «վայ քու տունը քանդվի, գավակ, ինչ իմ տունը քանդեցիր») (15, 76)։

Որ շաղկապի՝ պատճառային իմաստով կիրառվելու օրինակներ են նաև այն բարդ նախադասությունները, որոնցում որ շաղկապը հարադրված է գլխավոր մասում կիրառված որևէ հարաբերյալի։ Օրինակ՝ Բագրատն ինչ-որ չափով իրեն մեղավոր զգաց այն բանից, որ ինքը ողջ է մնացել, եկել է տուն, որ այս խանձված կանանցից շատերի ամուսիններն ու զավակները չկան (11, 48) ‖ Բագրատն ինչ-որ չափով իրեն մեղավոր զգաց, որովհետև (քանի որ) ինքը ողջ է մնացել... և այլն։ Այս բնույթն ունեցող կառույցների մեջ պետք է առանձնացնել այն բարդ նախադասությունները, որոնցում իրար հարաբերյալներ հանդես են գալիս

այն պատճառով, նրա համար կապակցություններ։ Անմիջապես հարելով որ շաղկապին, նշված հարաբերյալները որ-ի հետ միասին ձեռք են բերել կապակցական ինքնուրույն միավորի (բաղադրյալ շաղկապի) արժեք (այն պատճառով, որ, նրա համար, որ)[7]։ Սրանցով ձևավորվող կառույցները ըստ հարկի կարող են հանդես գալ գերիշխող անդամի փոխարեն, ընդ որում առաջինը կիրառվում է գերազանցապես հրապարակախոսական ու պաշտոնական ոճերում, իսկ երկրորդը առավել հատուկ է խոսակցական լեզվին։ Այսպիսով, հոմանիշական շարքը ունենում է ևս երկու անդամներ՝

$$\frac{P \rightarrow \text{որովհետև } P}{\begin{array}{l} P \rightarrow \text{այն պատճառով, որ } P \\ P \rightarrow \text{նրա համար, որ } P \end{array}}$$

Օրինակ՝ Դա տեղի կունենա այն պատճառով, որ տարբեր արագությամբ շարժվող համակարգերում ժամանակի հոսքը տարբեր է (Գ, 4, 1979)։ Իրև նշված երկու հոմանիշ կառույցների իմաստային տարբերություն, պետք է նշել, որ այն պատճառով, որ կապակցությամբ միացած երկրորդական նախադասությամբ դրսևորված պատճառի նյութականի լինելը շեշտված է այնքան, որ այսպիսի կառույցը հիմունքի նշանակությամբ բարդ նախադասություններում գրեթե չի հանդիպում։ Նրա համար, որ-ով կապակցվող նախադասությունները խոսակցական շեշտված երանգի հետ միասին պարունակում են նպատակի քերականական իմաստի նրբերանգ[8]։ Վերջինս տվյալ կառույցի մեջ գերիշխող է դառնում երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի ձևերով արտահայտված ստորոգյալի առկայության դեպքում։ Այն պատճառով որ, նրա համար, որ ձևերով կապակցված նախադասությունների հաճախականությունը խոսքի մեջ պայմանավորված է նաև կառուցվածքային մի առանձնահատկությամբ. սրանց գլխավոր մասերում ղանաղան կարգի վերաբերմունքային բառերի ու կապակցությունների ներմուծմամբ հնարավորություն է ստեղծվում երկրորդական նախադասության մեջ դրսևորված պատճառի նշանակությանը իմաստային տարբեր երանգներ հաղորդել (ժխտված պատճառ, եզակի կամ հոգնակի պատճառ, զիջական երանգով պատճառ և այլն)[9] մի բան, որ այլ շաղկապներով կապակցվող նախադասություններում հաճախ անհնար է կամ բնական չէ։ Համմատ՝ Բայց չեմ փոխում այն պատճառով միայն, որ դատելով նկարչի կտավներից, նրա անդադար գործող ձգտումը միշտ ավելի է եղել, քան կյանքը կարող էր տալ (6, 28) (Բնական չէր լինի՝ բայց չեմ փոխում, որովհետև միայն...)։ Իսկ մյուս օրինակին չէր գնում ոչ թե այն պատճառով, որ դրաղված էր, այլ պարզապես վախենում էր, որ ձանձրալի կդառնա (7, 7).

(Բնական չէր լինի՝ իսկ մյուս օրերին չէր գնում ոչ թե որովհետև...): Նա կրակեց ոչ միայն ապրելու բնազդից, այլև նրա համար, որ իրեն ստիպել էին նվաստանալ (7, 22) Համմա՝ այլև որովհետև, որ բնական չէ)։ Որ-ին հարադրվող հարաբերյալներից համեմատաբար քիչ են հանդիպում այն բաների համար (պատճառով, հետևանքով), շնորհիվ այն բաների և նման կապակցություններ, որոնք գործածական են հիմնականում լրագրային և պաշտոնական տեքստերում։ Խոսակցական լեզվում երբեմն նշված հարաբերյալներին կարող է զուգադրվել որովհետև շաղկապը, որը գրական լեզվի համար խորթ և անհանձնարարելի է. Համմա՝ իսկ չի ուզում էն պատճառով, որովհետև քաղաքում պատվեր են տալիս սենյակով մեկ (15, 370)։

Պատճառահետևանքային հարաբերություն դրսևորող բարդ ստորադասական կառույցը հաճախ կապակցված է լինում չէ՞ շաղկապով։ Համանիշների մեջ հետաքրքրող շարքում այս կարգի նախադասությունները առանձնանում են ոճական տեսակետից՝ առավելապես հուզական-արտահայտչական որոշակի նրբերանգներով։ Իբրև այդպիսին այս կառույցը գործածական է և՛ գեղարվեստական գրականության մեջ, և՛ բանավոր խոսակցական լեզվում, և՛ սակավադեպ է չեզոք պատմողական ոճի տիրապետում։ Չէ՞ որ-ով կապակցվող բարդ նախադասությունները հուզաարտահայտչական ուրույն գունավորում են ստանում ամենից առաջ շաղկապի բառային իմաստի շնորհիվ, սակայն հաճախ դրան նպաստում է նաև մասերի ձևավորման յուրահատկությունը։ Քննվող կառույցի մեջ օրինակ, շատ բնական է գլխավոր նախադասության հարցական բնույթը։ Փոխակերպման ժամանակ վերջինս պետք է փոխարինվի իր պատմողական համարժեքով։ Այսպիսով՝

$$\frac{\text{P}\rightarrow \text{որովհետև P}}{\text{P}\rightarrow \text{չէ՞ որ P}}$$

Օրինակներ

Աղճմտանքի ընդդեմ է բամբասել նրանց այդպիսի հանցանքների համար. չէ՞ որ մենք ամենքս էլ ունենք այդպիսի թուլություններ (25, 2, 53)։	Աղճմտանքի ընդդեմ է բամբասել նրանց այդպիսի հանցանքների համար, որովհետև...
Ինչու՞ է զբոսաշրջիկների հետ գալիս մայրս, չէ՞ որ մենք նրան երեք ամսով հրավեր էինք ուղարկել (12, 52)։	Մայրս զբոսաշրջիկների հետ չպետք է գար, որովհետև...

Եվ ի՞նչ, մի՞թե ես իրավունք ունեի սպասել այդ երիտասարդից, որ նա սիրեր ինձ, չէ՞ որ նա գիտեր, որ ես հարուստ չեմ, որ ես օժիտ չունեմ (17, 2, 170)։

Ես իրավունք չունեի սպասել այդ երիտասարդից, որ նա սիրեր ինձ, որովհետև...

Հնացած պետք է համարվի անցյալ դարի գրականության մեջ հանդիպող՝ չէ՞ բառի՝ չէ որ-իմաստով կիրառությունը. օր՝ Լսիր իմ լուսին, չէ՞ խելոք ես դուն (8, 1, 273)։

Պատճառահետևանքային կառույցների համանիշական շարքում իրենց դրսևորած իմաստային յուրահատուկ նրբերանգով առանձնանում են մանավանդ, մանավանդ որ (հաղվադեպ՝ նամանավանդ, նամանավանդ որ) շաղկապներով ձևավորված կառույցները։ Եթե պատճառական այլ շաղկապներով կապակցված բարդ նախադասություններում երկրորդական նախադասությամբ արտահայտվում է գլխավորի գործողության միակ կամ հիմնական պատճառը՝ առանց մյուս հնարավոր պատճառներին կարևորություն տալու, ապա քննվող կառույցում, արդեն իսկ շաղկապի բառային իմաստի մեջ, ակնարկվում են նույն այդ գործողության կամ իրողության այլ պատճառներ ևս, որոնք (կամ թերևս դրանցից մեկը) սովորաբար հայտնի են համատեքստից։

$$\frac{P \rightarrow \text{որովհետև } P}{P \rightarrow \text{մանավանդ } /\text{որ}/\ P}$$

Ես սկսեցի շփոթվել, մանավանդ գիտեցածս էլ հատնում էր (8, 3, 122)

Ես սկսեցի շփոթվել, որովհետև գիտեցածս հատնում էր։

Ես շատ կուզենայի պատմել նրանցից ամենաուրախի մասին, մանավանդ որ բոլորս էլ, ինչքան նկատել եմ, նախընտրում ենք ուրախ պատմություններ (7, 5)։

Ես շատ կուզենայի պատմել նրանցից ամենաուրախի մասին, որովհետև...

Կալենցն ինձ համար թանկ էր և որպես արվեստագետ, և որպես մարդ, մանավանդ որ նրա խառնվածքին հատուկ էր արտիստայնությունը (6, 39)։

Կալենցն ինձ համար թանկ էր և որպես արվեստագետ, և որպես մարդ, որովհետև...

Այնհան, այնհան որ բառերը ևս ժամանակակից հայերենում կարող են կիրառվել պատճառահետևանքային կառույցներ ձևավորելու դերով։ Այս կառուցվածքի նախադասությունները իմաստային առնչակցություն ունեն շատ ու քանակի պարագա երկրորդական մասով բարդ նախադա-

սությունների հետ, սակայն սրանցից էլ տարբերվում են պատճառային նշանակության գերակշիռ լինելու, իսկ կառուցվածքային տեսակետից՝ գլխավոր նախադասության առաջադաս կիրառվելու հանգամանքներով։ Պետք է նշել, որ այնքան (որ)-ով պատճառահետևանքային կառույցը խոսքի մեջ այնքան էլ հաճախական չէ։

Այսպես՝

P→որովհետև P

P→այնքան P

P→այնքան որ P

Օրինակներ.

Պարզապես չպետք է համադրել անցյալի պատկերացումները ներկայի հետ, ժամանակների տարբերությունն այնքան մեծ է (10, 13)։

Պարզապես չպետք է համադրել անցյալի պատկերացումները ներկայի հետ, որովհետև ժամանակների տարբերությունը մեծ է։

Ամբոխը երկար ժամանակ ուշքի չէր գալիս, այնքան(որ) ցնցող էր տեսարանը։

Ամբոխը երկար ժամանակ ուշքի չէր գալիս, որովհետև տեսարանը ցնցող էր։

Առավել ևս սակավադեպ է պատճառային երկրորդական նախադասության միացման համար այնպես բառի կիրառությունը[10]։ Օր. Կարծես քարի տակից էին բուսել, այնպես անակնկալ էր նրանց երևալը (2, 555)։ Այնքան(որ)-ի ձևավորած կառույցի հոմանիշական տարբերությունը շարքի մյուս անդամներից այն է, որ սրա մեջ արտահայտված հետևանքային գործողությունը կամ իրողությունը պայմանավորված է երկրորդական նախադասությամբ արտահայտված գործողության կամ իրողության չափով։ Նույն կերպ ձևային հատկանշի նրբիմաստը հատուկ է այնպես-ով կառույցին։ Նախորդ՝ այնքան(որ)-ով կառույցի իմաստային նշված առանձնահատկությամբ բնութագրվող պատճառահետևանքային բարդ նախադասություններ երբեմն կազմվում են այնքան որքան, այնքանով որքանով (որ), որքանով որ, որչափով որ շաղկապներով[11]։ Այս կարգի նախադասությունները ոճական կիրառությունների տեսակետից բավական սահմանափակ հնարավորություններ ունեն, գործածվում են հիմնականում պաշտոնական, գրասենյակային ոճերում, ունեն գերքային-լրագրային ընդգծված երանգ։

Կիրառության հաճախականությամբ աչքի չեն ընկնում նաև պատճառային ինչ է թե (հաղվադեպ՝ ինչ է) շաղկապով ձևավորված նախադասությունները։ Սրանց գործածության ոլորտը ժողովրդախոսակցական ոճն էւ Իմաստային առումով էլ ինչ է թե-ով կառույցը տարբերվում է

Համանիշական շարքի մյուս անդամներից. սրա բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երկրորդական մասում արտահայտված պատճառը հաղորդողի կողմից բավարար չի դիտվում գլխավոր նախադասության մեջ արվող հետևության համար։ Համմմ.՝

Նրան նախատեցին, որովհետև դասից ուշացել էր։ Նրան նախատեցին, *[ինչ է թե]* դասից ուշացել էր։

$$\frac{\text{P} \rightarrow \textit{որովհետև P}}{\text{P} \rightarrow \textit{ինչ է թե P}}$$

Շաքարի տեղ շիր են ծախում [Ինչ է՝ շիրն էլ սպիտակ է (23, 26)։

Շաքարի տեղ շիր են ծախում, որովհետև շիրն էլ սպիտակ է։

Պարզ է, որ այս կառույցը հոմանիշների նկարագրվող շարքում տեղ կգրավի մասերի բառակազմերի՝ նշված իմաստային երանգը դրսևորելու դեպքում։ Երկրորդական նախադասության մեջ ըղձական եղանակի կիրառությամբ այս շաղկապով կապակցված նախադասությունները արտահայտում են նպատակի հարաբերություն։

Համապատասխան խոսքային իրացման դեպքում պատճառահետևանքային հարաբերություն կարող է դրսևորել նաև երբ շաղկապով ձևավորված կառույցը։ Իմաստային տեսակետից այս կարգի նախադասություններն ունեն այսպիսի յուրահատկություն. երկրորդական նախադասությամբ արտահայտված պատճառը խոչընդոտում է գլխավորի մեջ նկարագրվող գործողության կատարմանը։ Այս հանգամանքը սովորաբար թելադրում է նաև յուրատեսակ կառուցվածք՝ հետևանք հանդիսացող գործողությունը կամ իրողությունը արտահայտվում է հռետորական հարցում պարունակող գլխավոր նախադասության միջոցով, որը հոմանիշական փոխակերպումների ենթարկվելիս փոխարինվում է իր պատմողական տարբերակով։

$$\frac{\text{P} \rightarrow \textit{որովհետև P}}{\text{P} \rightarrow \textit{երբ P}}$$

Ինչպե՞ս կարող էր սիրողը թափանցել կնոջ սրտի և հոգու մեջ, երբ նրա հետ հարաբերություն չէր ունեցել, նրա բերնից մի բառ անգամ չէր լսել (25, 9, 406)։ Սիրողը չէր կարող թափանցել կնոջ սրտի և հոգու մեջ, որովհետև նրա հետ հարաբերություն չէր ունեցել։ Ինչպե՞ս կարելի է առողջ լինել, երբ բարոյապես տանջվում ես (24, 11)։ Անհնար է առողջ լինել, որովհետև բարոյապես տանջվում ես։ Ինչո՞ւ հարցնել, երբ ամեն ինչ պարզ է (4, 76)։ Պետք չէ հարցնել, որովհետև ամեն ինչ պարզ է։

Երբ-ով կազմավորված այսպիսի նախադասությունները չպետք է շփոթել այն նախադասությունների հետ, որոնք վերը նշված կառուցվածքային հատկանիշներից զուրկ են, սակայն նրանց մեջ արտահայտվում է դարձյալ պատճառահետևանքային կապ։ Օր. Ես լքեցի բակի ֆուտբոլային թիմը, երբ չուզեցին դոնե պահեստի դարպասապահ ընդունել Պավլիկին (Գ, 5, 1980)։ Սրանց մեջ առկա պատճառային իմաստը զուգակցվում է կառույցի հիմնական՝ ժամանակային իմաստին, և, ինչպես այլ առիթով էլ նշել ենք, բավարար հիմունք չէ կառույցը պատճառահետևանքային նախադասությունների շարքը դասելու համար։

Իբրև բարդ նախադասության մասերը կապակցող միջոցներ կարելի է ըմբռնել մեկ է(որ), միևնույն է (որ) կապակցությունները, որոնք կառույցը լրացնող որոշակի բառակազմի առկայության դեպքում նպաստում են մասերի միջև պատճառահետևանքային հարաբերության դրսևորմանը։ Այդպիսի նախադասությունները հատուկ են դերազանցապես խոսակցական ոճին։

P→որովհետև P
P→մեկ է /որ/ P
P→միևնույն է /որ/ P

Սրինակ՝ Գնանք կինո, մեկ է (որ) ժամանակ ունենք։
Գնանք կինո, որովհետև (քանի որ) ժամանակ ունենք։

Գեղարվեստական տեքստերում, առավել հաճախ բանաստեղծական խոսքում հանդիպում են ֆանզի, զի գրաբարյան շաղկապներով կառուցված բարդ նախադասություններ, որոնք պատճառահետևանքային հարաբերություն արտահայտելու իմաստային հատկանիշով միավորվող հոմանիշ կառույցների շարքում առանձնանում են միայն ոճական ցայտուն գունավորմամբ.

P→որովհետև P
P→քանզի P
P→զի P

Ես ներում եմ քեզ, ներում էլի
Քանզի խեղճ ես դու, և ոչ թե չար
(19, 231)։

...որովհետև խեղճ ես դու, և ոչ թե չար։

Ես վախենում եմ սեր բառը ասել
Զի նախազգում եմ, որ սիրուց
անդին ամայություն է (13, 105)։

Ես վախենում եմ սեր բառը ասել,
որովհետև նախազգում եմ, որ...

Ինքը նրանից սովորեց համայնական բառը և օգտագործեց Սիմո-

Ինքը նրանից սովորեց համայնական բառը և օգտագործեց Սիմո-

նի վրա, բանզի Սիմոնը աշխատում, աշխատում է սրա-նրա համար, իսկ վարձը՝ էգուց, եկող տարի, երբեք (15, 34)։

նի վրա, ոռովնետև...

բ) Հետևանքի երկրորդական նախադասություններով կառույցներ

Ինչպես հայտնի է, հետևանքի և պատճառի պարագա երկրորդական նախադասություններով բարդ նախադասությունների տարբերությունը առաջին հերթին կառուցվածքային-քերականական է։ Միևնույն դործողությունների կամ երևույթների միջև առկա պատճառ-հետևանք տրամաբանական հարաբերությունը առաջին դեպքում համապատասխանում է գլխավոր նախադասություն–երկրորդական նախադասություն, իսկ երկրորդ դեպքում՝ երկրորդական նախադասություն–գլխավոր նախադասություն քերականական հարաբերություններին։ Իմաստային տեսակետից սրանց միջև սովորաբար նշում են հաղորդման նպատակի հետ կապվող տարբերություններ «Եթե առաջին դեպքում (պատճառի պարագա երկրորդականով բարդ նախադասություններում— Լ. Թ.) հաղորդման հիմնական նպատակը հետևանք հանդիսացող գործողությունը կամ երևույթն է, իսկ դրա առաջացման պատճառը հաղորդվում է միայն այդ երևույթի, գործողության մասին պատկերացումը ավելի լրիվ դարձնելու համար, ապա երկրորդ դեպքում տեսնում ենք բոլորովին հակառակ հարաբերություն։ Այստեղ հաղորդման հիմնական նպատակը պատճառ հանդիսացող երևույթը, գործողությունն է, իսկ նրանից առաջացած հետևանքը բերվում է որպես հիմնական մտքի լրացում, ստորադասվում է առաջինին»[12]։ Թերևս հենց այս նրբերանգային տարբերությունն էլ պետք է համարվի այն իմաստային հիմունքը, որով նշված երկու տարբեր քերականական կառույցները միավորվում են հոմանիշների միևնույն խմբի մեջ։ Հետևանքի երկրորդական նախադասություն պարունակող բարդ նախադասությունների իմաստային այդ առանձնահատկությամբ են պայմանավորված նաև նրանց կառուցվածքային ուրույն հատկանիշները։ Երկրորդական մասի ետադաս դիրքը, գլխավորի մեջ հարաբերյալների բացակայությունը և այլն։ Սակայն պետք է նշել նաև, որ քննվող կառույցների միջև նշված իմաստային նրբերանգը երբեմն այնքան աղոտ է դրսևորվում, որ «...թվում է, թե լոկ ձևական նշանակություն է ստանում այստեղ գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերության հարցը...»[13]։ Սա նկատելի է հատկապես այն դեպքերում, երբ պատճառի երկրորդականով բարդ նախադասությունը կապակցված է

լինում զուգադիր շաղկապներով (որովհետև–ուստի, քանի որ–ուստի, որովհետև–հետևաբար և այլն), և նախադասության մասերի քերականական հարաբերության բնույթը փոխվում է բաղադրյալ շաղկապների առաջին (պատճառական) եզրի բացակայությամբ միայն։ Համեմատենք, օրինակ, հետևյալ բարդ նախադասությունները.

Որովհետև պակաս է ասելիքը, ուստի և առավել է պղտորությունը (ԳԹ, 5, 70)։

Պակաս է ասելիքը, ուստի և առավել է պղտորությունը։

Որովհետև շոգ էր, ուստի բազմաթիվ ճանճեր թափվել էին նրա վրա և ծծում էին մածունը և լոռի ջուրը (2, 605)։

Շոգ էր, ուստի բազմաթիվ ճանճեր թափվել էին նրա վրա և ծծում էին մածունը և լոռի ջուրը։

Բերված զույգերը, ինչպես երևում է, իմաստային տարբերություններ չունեն, թեև տարբեր են դրանց քերականական նշանակությունները. առաջիններում **որովհետև**-ի առկայությունը ցույց է տալիս, որ երկրորդական, ստորադաս դիրքում են առաջին բաղադրիչները, որոնք կատարում են պատճառի պարագայի քերականական պաշտոն։ Մինչդեռ երկրորդ դեպքում **որովհետև**-ի բացակայության պատճառով երկրորդական նախադասությունը քերականորեն դառնում է գլխավոր, իսկ հետևանք արտահայտող մասը (ուստի-ով կապվողը) ներկայանում է արդեն իբրև հետևանքի երկրորդական նախադասություն։ Նման դեպքերում պատճառի պարագա և հետևանքի երկրորդական նախադասություններով կառույցների միջև իմաստային տարբերություն նշելը նույնքան դժվար է, ինչքան, ասենք, միևնույն իմաստային հարաբերությունն արտահայտող բարդ և պարզ կառուցվածքի նախադասությունների միջև (հմմտ՝ Նա դասի չեկավ, որովհետև հիվանդ էր— Նա դասի չեկավ հիվանդության պատճառով)։ Իմաստային կողմի գրեթե բացարձակ նույնությամբ բնութագրվող շարահյուսական այսպիսի տարբեր կառույցների գոյությունը հայոց լեզվով հաղորդակցվողներին հնարավորություն է տալիս ընտրություն կատարել դրանց միջև՝ հաղորդման կոնկրետ իրադրությունից և նպատակներից, ինչպես նաև տվյալ հաղորդողի նախասիրություններից ելնելով։ Հետևանքի երկրորդական մասով կառույցները, իբրև բարդ նախադասության առանձին քերականական տիպ, ունեն կապակցության ինքնուրույն միջոցներ, և դրանցից յուրաքանչյուրը ձևավորում է իմաստային կամ ոճական որևէ նրբերանգով առանձնացող բարդ նախադասություն։ Պատճառահետևանքային հոմանիշական շարքի հիմնական՝ **որովհետև**-ով կառույցին փոխակերպվելիս բնականաբար փոխվում է նաև այդ նախադասությունների մասերի միջև առկա քերականական

հարաբերության ուղղվածությունը։ Հետևանքի երկրորդական նախադասությամբ կառույցը իր մի շարք առանձնահատկություններով տարբերվում է պատճառի պարագա երկրորդականով բարդ նախադասություններից։ Նախ, հետևանքի երկրորդական նախադասությունները շարադասության առումով բավականաչափ կայուն են. նրանց համար բնական է Ստադաս դիրքը, միջադաս դիրքում հանդես են գալիս շատ հազվադեպ, նախադաս կիրառությամբ սովորաբար չեն հանդիպում։ Այնուհետև, հետևանքի նշանակությամբ բարդ նախադասությունները պարզ նախադասությունների համակարգում չունեն դերբայական դարձվածով հոմանիշ տարբերակներ, քանի որ հետևանքի երկրորդական նախադասությունը ոչ թե գլխավոր նախադասության մեկ անդամին է փոխարինում (պարզ նախադասության կազմում հետևանք արտահայտող անդամ չկա), այլ ցույց է տալիս ամբողջ նախադասության բովանդակությունից բխող հետևանքը։ Այս հանգամանքը պայմանավորում է նշված կառուցվածքի նախադասությունների մի այլ առանձնահատկություն՝ գլխավոր նախադասության մեջ հարաբերյալ բառերի բացակայությունը։ Նշված հատկանիշները հետևանքի նշանակությամբ կառույցները որոշ իմաստով հակադրում են ստորադասական կառույցներին և հիմք են դառնում դրանք համադասական համարելու տեսակետի համար[14]։ Հաճախ էլ հետևանքի են համարվում չափի ու ձևի պարագա երկրորդական նախադասությունները, որոնց մեջ դրսևորվում է հետևանքի իմաստային երանգ[15]։

Պատճառահետևանքային դաշտի գերիշխող անդամին փոխակերպվելու ավելի մեծ հնարավորության և նրա հետ ունեցած իմաստային մերձավորության տեսակետից քննվող հոմանիշական շարքում առաջին հերթին պետք է նշվի ուստի (և) շաղկապով ձևավորվող կառույցը։ Սրանց իմաստային և կառուցվածքային սերտության ապացույց են նաև որովհետև... ուստի բաղադրյալ շաղկապով կապակցված նախադասությունները։ Իհարկե, լեզվի մեջ տարածված լինելու, բազմազան ոճերի մեջ հաճախակի կիրառվելու տեսակետից ուստի(և) շաղկապի ձևավորած կառույցը ակնհայտորեն զիջում է որովհետև-ով կառույցին։ Հետևանքի երկրորդականով նշված կարդի նախադասությունները հաճախական են հրապարակախոսական տեքստերում, հաճախ խոսքին հաղորդում են գրքային երանգ։ Սրանց իմաստային առանձնահատկությունը գլխավոր նախադասության մեջ դրսևորված հիմունքի նրբերանգն է, որը հաճախ երկրորդական նախադասության արտահայտած հետևանքի նշանակությանը տալիս է տրամաբանական հետևության, եղրակացության արժեք։ Այսպիսով՝

P → որովհետև P

P → ուստի /և/ P

Օրինակներ՝

Թե մեկ, և թե մյուս աշխարհները մերը չեն, ուստի և հարազատ չեն մեզ (Գ, 4, 1979)։

... Առանց այդ էլ իր հայրենիքում նրան արդեն համարում են հերետիկոս, ուստի ինքը պետք է անաղարտ պահի իրեն... (2, 611), և այլն։

Թե մեկ, և թե մյուս աշխարհները հարազատ չեն մեզ, որովհետև մերը չեն։

Ինքը պետք է անաղարտ պահի իրեն, որովհետև (քանի որ) առանց այդ էլ հայրենիքում նրան համարում են հերետիկոս...

Այնպես որ շաղկապով ձևավորված պատճառահետևանքային բարդ նախադասությունների երկրորդական մասում դրսևորված հետևանքի նշանակության մեջ, իբրև հոմանշային նրբիմաստ, արտահայտվում է նաև բավական աղոտ ձևային նշանակություն, որը բացատրվում է շաղկապի այնպես որ կազմությամբ։ Թեև այնպես բաղադրիչի ձևի պարագայական իմաստը այստեղ գրեթե լիովին մթագնված է, սակայն կառույցի խոսքային կոնկրետ իրացումների մեջ հաճախ երկրորդական նախադասությունը արտահայտում է գլխավորի մեջ դրսևորված որևէ ձևային հատկանիշից բխող հետևանք։ Ինչպես իրավացիորեն նշում են ուսումնասիրողները[16], նման դեպքերում պետք է տարբերակել որ շաղկապով կապվող ձևի պարագա երկրորդական նախադասությունները այնպես որ-ով կապվող հետևանքի երկրորդական նախադասություններից. Համմ՝

Ձևի պարագա երկր. նախ.	Հետևանքի երկր. նախ.
Նա երգում է այնպես, որ բոլորը հիանում են:	Նա լավ է երգում, այնպես որ բոլորը հիանում են:

Իմաստային նշված երանգի հետ միասին այս շաղկապով կապակցված բարդ նախադասությունները հոմանիշների նկարագրվող շարքում ունեն ոճական առանձնահատկություն. սրանք ևս առավել հատուկ են գրքային-գրավոր տեքստերին, սակավադեպ են բանավոր խոսակցական լեզվում, (այստեղ շաղկապը հանդիպում է էնպես որ տարբերակով) ինչպես նաև գեղարվեստական, հատկապես բանաստեղծական ոճերում։

P → որովհետև P

P → այնպես որ P

Օր.

Մենակ էի, եկել էի անսպասելի, այնպես որ Գրողների Միության

Գրողների Միության նովոսիբիրսկի բաժանմունքը հնարավորու-

Նովոսիբիրսկի մասնաճյուղը հրնարավորություն չէր ունեցել ապահովելու պատշաճ ընդունելություն (12, 69)։

թյուն չէր ունեցել ապահովելու պատշաճ ընդունելություն, որովհետև մենակ էի, եկել էի անսպասելի։

Որևէ հիմունքից բխած մտային հետևության, եզրահանգման իմաստային երանգով են բնութագրվում հետևանքի նշանակություն արտահայտող ստորադասական այն կառույցները, որոնք կապակցված են ուրեմն, հետևաբար, հետևապես շաղկապներով։ Ուրեմն-ը, արտահայտելով իրական կամ ենթադրական հիմունքից բխող հետևություն, բնականաբար միշտ չէ, որ կարող է փոխարինվել իրական պատճառի ու նրա նյութական հետևանքի հարաբերություն արտահայտող կառույցներում կիրառվող շաղկապներով (ուստի, որովհետև և այլն)[17]։ Իրրև ուրեմն-ով կապվող կառույցի հոմանիշական առանձնահատկություն պետք է նշել նաև պայմանի որոշակի երանգը, որ գերիշխող է դառնում եթե... ուրեմն զուգադրության դեպքում։ Հետևաբար, հետևապես շաղկապներն իրենց իմաստի մեջ իսկ հետևության երանգ են պարունակում և ըստ այդմ էլ կապակցում են համապատասխան բառակազմով բնութագրվող մասեր։ Նշված երեք կառույցներն էլ, և հատկապես վերջին երկուսը, իրենց այդ նշանակություններով ավելի շատ են գործածվում գրավոր խոսքում, գիտահրապարակախոսական գրականության մեջ։ Այսպիսով՝

$$\frac{\text{P} \rightarrow \textit{որովհետև}\ \text{P}}{\text{P} \rightarrow \textit{ուրեմն}\ \text{P}}$$

Նա նկարել էր Սասունցի Դավիթ, ուրեմն նոր չէր մտնելու մեր ժողովրդական վեպի աշխարհը (6, 10)։

Նա նոր չէր մտնելու մեր ժողովրդական վեպի աշխարհը, որովհետև նկարել էր Սասունցի Դավիթ։

Դու ինձանից երիտասարդ ես, ուրեմն ինձանից երկար կապրես...

Դու ինձանից երկար կապրես, որովհետև ինձանից երիտասարդ ես։

Մերթ ընդ մերթ խոսքի մեջ հընչում է Ստամբուլ անունը, ուրեմն Ստամբուլից է... (12, 3)։

Ստամբուլից է, որովհետև (քանի որ) մերթ ընդ մերթ խոսքի մեջ հնչում է Ստամբուլ անունը։

$$\frac{\text{P} \rightarrow \textit{որովհետև}\ \text{P}}{\begin{array}{l}\text{P} \leftarrow \textit{հետևաբար}\ \text{P} \\ \text{P} \rightarrow \textit{հետևապես}\ \text{P}\end{array}}$$

Երկրագործությունը խիստ պինդ կերպով կապել էր բնակիչնե-

Երկրագործությունը շատ նեղ կերպով սեղմել էր բնակիչներին

рին հողի հետ, հետևաբար շատ նեղ կերպով սեղմել էր նրանց հողատիրոջ-աղաների ճանկերի մեջ (25, 4, 399)։

Ամեն բան աշխարհիս մեջ փոփոխության անխուսափելի օրենքին է մատնված, հետևապես ապագան կարող է ավելի մեծ ուժեր ծնել (18, 2, 86)։

հողատիրոջ-աղաների ճանկերի մեջ, որովհետև խիստ պինդ կերպով կապել էր նրանց հողի հետ։

Ապագան կարող է ավելի մեծ ուժեր ծնել, որովհետև ամեն բան աշխարհիս մեջ փոփոխության անխուսափելի օրենքին է մատնված։

Հետևանքի երկրորդական նախադասությունները գլխավորին կապվում են նաև որ դերանվան բացառականի ձևով կամ էլ որի պատճառով, որի շնորհիվ, որի համար կապակցություններով։ Այս կերպ ձևավորված բարդ նախադասությունները ևս հատուկ են գրավոր խոսքին և ունեն որոշ դրքային երանգ։ Որ-ի սեռականի հետ գործածված կապերը կարող են այս կառուցվածքի նախադասություններում որոշակի իմաստային կամ ոճական նրբերանգ հաղորդել երկրորդական նախադասությամբ արտահայտված հետևանքին։ Այսպես, եթե որի պատճառով կապակցությամբ միացող հետևանքի նախադասությունները հաղորդողի վերաբերմունքի տեսակետից չեզոք են, ապա որի շնորհիվ կապակցությունը ենթադրում է խոսողի կողմից տվյալ բարդ նախադասության մեջ դրսևորված պատճառահետևանքային բովանդակության դրական արժեքավորում։ Համար կապի գործածությամբ որի համար կապակցությունը, ինչպես նաև ամբողջ բարդ նախադասությունը ստանում են խոսակցական գունավորում։ Իմաստային և ոճական նշված նրբերանգների արտացոլման հնարավորությունը պետք է դիտվի իբրև կապակցության այս միջոցների ձևավորած կառույցների հոմանշային առանձնահատկություն։

P → որովհետև P

P → որի պատճառով P
P → որի համար P
P → որի շնորհիվ P

Նա հիվանդ էր, որի պատճառով (որ համար) դասի չէր գնում։ (Նա դասի չէր գնում, որովհետև հիվանդ էր)

Նա շատ աշխատասեր էր, որի շնորհիվ հասնում էր լավ արդյունքների։

Հետևանքի նշանակություն արտահայտող շաղկապավոր կառույցների շարքում նշվում է նաև ռուսերենի ազդեցությամբ հայոց լեզվի մեջ կիրառվող մի կառույց, որը ձևավորված է որպեսզի շաղկապով[18], լինելով օտար շարահյուսական կաղապարի պատճենում, այս կառույցը գոր-

ածական է հիմնականում թարգմանական երկերի մեջ և բոլորովին խորթ է կենդանի խոսակցական հայերենին։ Ժամանակակից հայերենում այսպիսի նախադասությունների լայն տարածմանը դիմադրում է, ըստ երևույթին, որպեսզի-ի նպատակային նշանակությունը, թեև պետք է ասել, որ նույնպիսի պատճենման արդյունք հանդիսացող պարզ կառույցը (համար կապով) համեմատաբար ավելի հաճախական է հայերեն խոսքում։ Համմատ՝ Դու շատ փոքր ես, որպեսզի քննադատես նրան և՝ Նրան քննադատելու համար դու շատ փոքր ես։ Բարդ նախադասության նշված կառույցի իմաստային յուրահատկությունն այն է, որ հաճախ նրանում դրսևորված պատճառը բավարար չի դիտվում նրանցից բխած հետևանքի համար։ Հոմանիշական փոխակերպումների ժամանակ այս կարգի նախադասությունների երկրորդական մասի դրական խոնարհման ստորոգյալը սովորաբար փոխվում է ժխտականի և ընդհակառակը։ Համմատ՝ Դու շատ փոքր ես, ուստի (այնպես որ ևն) չես կարող քննադատել նրան։ Դու չես կարող նրան քննադատել, որովհետև շատ փոքր ես։

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԱՎՈՐ ԿԱՌՈՒՑՆԵՐ

Պատճառահետևանքային հարաբերություն դրսևորելու իմաստային հատկանիշը հատուկ է նաև համադասական կառուցվածքի նախադասություններին։ Շաղկապավոր համադասական նախադասություններից քննվող հոմանիշական շարքի անդամ կարող է լինել դարձյալ և, (ու) շաղկապով կազմավորված միավորարական կառույցը։ Սրա միջոցով դրսևորվող տարժամանակության կամ համաժամանակության հարաբերությունը այս դեպքում կառույցի հիմնական բովանդակությունը չէ, այլ հանդես է գալիս իբրև նախադասության մասերի միջև առկա պատճառահետևանքային հարաբերության ժամանակային հենք։ Մասերի մեջ դործածված քերականական ժամանակները կարող են համընկնել կամ տարբեր լինել. բոլոր դեպքերում համադասության առաջին բաղադրիչը արտահայտում է պատճառը, իսկ երկրորդը՝ դրանից բխող իրական հետևանք կամ դրանով պայմանավորված մտային հետևություն։ Համադասական տվյալ նախադասության մեջ ժամանակի կամ պատճառահետևանքային իմաստի գերակշիռ լինելը պայմանավորված է մասերի կոնկրետ բովանդակություններով։ Պրոֆ. Վ. Առաքելյանի հիշյալ աշխատության մեջ նշված են միավորական կառույցի բառային իրացման մի շարք կոնկրետ դրսևորումներ, որոնք նպաստում են դրա միջոցով պատճառահետևանքային իմաստի արտահայտմանը, և, մեր կարծիքով, հիմք են դառնում միավորական կապակցության փոխակերպելիությանը պատճառահետևանքային նշանակությամբ ստորադասական կառույցներիւ

Այսպես, համադասական կապակցությամբ նշված իմաստային հարաբերությունը արտահայտվում է այն դեպքերում, երբ ա) «... առաջին մասի ստորոգյալները արտահայտված են գործողություն ցույց տվող բայով, իսկ երկրորդ նախադասության մեջ հաղորդվում է այնպիսի մի երևույթ, որ հետևանք, արդյունք է նախորդ նախադասության կամ նախորդ մասի ստորոգյալի գործողության» (Որ. Գալեց ինձ սիրով մի ձեռը հայրենի և ես մի գիշեր իմաստուն դարձա), բ) «...երբ համադասության առաջին մասի ստորոգյալները արտահայտված են տեսողական, լսողական և հոգեկան ներքին կարողություններ, զգացումներ, իմացություններ արտահայտող բայերով, իսկ համադասության երկրորդ մասում հաղորդվում են այնպիսի երևույթներ, որոնք արդյունք են հոգեկան, ներքին զգացումների՝ տեսողական, լսողական և այլ տպավորությունների» (օր.՝ Ոչ ոք չի հասկանում սրա գաղտնիքը և անունը դնում են «խորհրդավոր վարպետ», Ահա ձեզ տեսա ու միտս ընկան և այլն), դ) «երբ համադասության առաջին մասի ստորոգյալը արտահայտում է պատվեր, հրաման, պահանջ, ցուցմունք, խնդրանք և այլն, իսկ երկրորդ մասի մեջ արտահայտվում է այն գործողությունը, երևույթը, որ կատարվում է իբրև հետևանք պահանջի, հրամանի և այլն» (օր՝ Մեկը աղջիկներին պատվիրում է տուն գնալ և նրանք փայտե սանդուղքներով իջնում են ցած) դ) «... երբ համադասության առաջին մասում ստորոգյալը արտահայտում է բնական որևէ երևույթի փոփոխություն, իսկ երկրորդ մասում հաղորդվում է այնպիսի գործողություն, դրություն, վիճակ, որոնք պայմանավորվում են վերոհիշյալ փոփոխությամբ կամ հետևանք են դրա» (օր՝ Լույսը բացվում էր հետզհետե և ապշությամբ տեսնում էի ծփումները), ե) «...երբ համադասության առաջին մասում հաղորդվում են իրավական դրություն, սոցիալական վիճակ, բարոյական, իմացական հատկանիշ, իսկ երկրորդում՝ դրանցից բխող որևէ գործողություն... (օր՝ Դու իմ ազգականն ես, և ես չեմ կամենում առաջին սխալմունքիդ համար պատժել քեզ)[19] և այլն։

Ինչպես նշեցինք, համադասական նախադասության մասերի շարադասական դիրքը միշտ համապատասխանում է պատճառի և հետևանքի իրական հաջորդմանը, այսինքն՝ համադասության առաջին մասը միշտ պատճառն է արտահայտում, իսկ երկրորդը՝ հետևանքը։ Այս առումով հետաքրքրական է դիտել, որ հիշյալ իմաստով բնութագրվող համադասական կառույցը կարող է փոխակերպվել և՛ պատճառի պարագա, և՛ հետևանքի երկրորդական նախադասություններ ունեցող ստորադասական կառույցների, այսինքն՝ միաժամանակ հոմանիշական զույգ կազմել այդ երկուսի հետ։ Համեմատենք, օրինակ, հետևյալ նախադասությունները.

P — և — P	P ⟶ որովհետև P	P ⟶ ուստի (այնպես որ) P
Նկարիչը շտապում էր, և Դրամբյանը ստիպված էր ինքը գնել նկարը (6, 31)։	*Դրամբյանը ստիպված էր ինքը գնել նկարը, որովհետև նկարիչը շտապում էր։*	*Նկարիչը շտապում էր, ուստի (այնպես որ) Դրամբյանը ստիպված էր ինքը գնել նկարը։*
...Նա միանգամայն առողջ էր ու երբեք բաց չէր թողնում դասը (Գ, 5, 1980)։	*Նա երբեք բաց չէր թողնում դասը, որովհետև միանգամայն առողջ էր։*	*Նա միանգամայն առողջ էր, ուստի երբեք բաց չէր թողնում դասը։*
Մենք կոմունիզմ ենք կառուցում, ու ես անձամբ կողմնակից եմ ոգեշնչող արվեստի (15, 28)։	*Ես անձամբ կողմնակից եմ ոգեշնչող արվեստի, որովհետև մենք կոմունիզմ ենք կառուցում։*	*Մենք կոմունիզմ ենք կառուցում, ուստի ես կողմնակից եմ ոգեշնչող արվեստի։*
Ի դեպ, այն ժամանակ հրատարակչությունը ձևավորման հատուկ բաժին չուներ և այդ գործերը տնօրինում էին բաժնի վարիչները (6, 9)։	*Այդ գործերը տնօրինում էին բաժնի վարիչները, որովհետև այն ժամանակ հրատարակչությունը ձևավորման հատուկ բաժին չուներ։*	*Այն ժամանակ հրատարակչությունը ձևավորման հատուկ բաժին չուներ, ուստի այդ գործերը տնօրինում էին բաժնի վարիչները։*

Համադասական կառույցի մեջ պատճառահետևանքային իմաստի դրսևորմանն օժանդակում են նաև բառային միջոցներ, հատկապես այդ պատճառով (էլ), դրա համար (էլ), դրանից (էլ) և նման կարգի բառեր ու կապակցություններ, որոնք իրենց զուգահեռներն ունեն ստորադասական կառույցների մեջ (համմտ՝ որի պատճառով, որի համար, որից և այլն)։ Բառային այս միջոցները նշված իմաստը դրսևորելուն նպաստում են նաև համապատասխան անշաղկապ կառույցների կազմում։ Փոխակերպումների ժամանակ, բնականաբար, բառային նշված միջոցների դերը ստանձնում են շաղկապները։ Բերենք օրինակներ.

P — և (ու) — P	P ⟶ որովհետև P
Իմ հեր Իշխանը գողանում էր— իմ հորեղբայր Վաղարշակը ան-	*... Իմ հորեղբայր Վաղարշակը ասում էր «ամոթ է, Իշխան...*

կարող էր և այդ պատճառով էլ ասում էր՝ «ամոթ է, Իշխան» (15, 377)։	*որովհետև անկարող էր։*
Նրանք չգիտեին, որ ես նայում եմ ու դրա համար չէին ձևանում (20, 8)։	*Նրանք չէին ձևանում, որովհետև չգիտեին, որ ես նայում եմ։*
Հաճախ քննադատում էր երկրի կարգերը և դրանով ավելի ամրապնդում իր դիրքերը (7, 54)։	*Ավելի ամրապնդում էր դիրքերը, որովհետև հաճախ քննադատում էր երկրի կարգերը։*
Ստրաուդը պտտվում էր նրա ետևից և դրանից էլ ավելի էր շփոթվում (7, 9)։	*Ստրաուդը էլ ավելի էր շփոթվում, որովհետև պտտվում էր նրա ետևից։*

Սրանք էլ, վերը նկարագրված համադասական մյուս նախադասությունների նման, հաջողությամբ կարող են փոխակերպվել նաև հետևանքի երկրորդականով ստորադասական նախադասությունների։

ԱՆՇԱՂԿԱՊ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Պատճառահետևանքային հարաբերություն դրսևորող անշաղկապ նախադասություններն այդ կառուցվածքն ունեցող այլ նախադասությունների շարքում բավական նշանակալից տեղ ունեն։ Պետք է նշել, որ հատկապես իմաստային այս հարաբերությունն արտահայտող անշաղկապ նախադասությունների մեջ դժվար է հստակորեն տարբերակել համադասական և ստորադասական տիպերը, մանավանդ որ շաղկապավոր ստորադասական կառուցի փոխակերպվելու տեսակետից սրանք ընդգծված առանձնահատկություններ հանդես չեն բերում։ Համադասական կառուցվածքի նախադասություններում պատճառահետևանքային իմաստը սովորաբար դիտվում է իբրև ժամանակային հաջորդման հարաբերության իմաստային նրբերանգ, ընդ որում պատճառ արտահայտող մասը միշտ նախադաս է կիրառվում[20]։ Ստորադասական կառուցների մեջ տարբերակվում են պատճառի և հետևանքի երկրորդականներով նախադասություններ՝ ըստ պատճառ և հետևանք արտահայտող մասերի շարադասության[21]։ Ընդհանրապես անշաղկապ կապակցության և մասնավորապես պատճառահետևանքային իմաստով բնութագրվող անշաղկապ կառուցների դեպ-

քում մասերի միջև քերականական . կախվածությունը դժվար է ստույգ սահմանել՝ հենվելով բարդ նախադասությամբ դրսևորված քերականական իմաստի կամ էլ նրա հնչերանգային առանձնահատկությունների վրա։ Այսպես, պատճառահետևանքային իմաստ արտահայտող համադասական և հետևանքի երկրորդական նախադասությամբ ստորադասական անշաղկապ կառուցները հաճախ չեն սահմանազատվում իրարից, քանի որ երկուսն էլ միևնույն իմաստային հարաբերությունն արտահայտում են մասերի միևնույն շարադասությամբ (առաջին մասում դրսևորված է լինում պատճառը, երկրորդում՝ հետևանքը)։ Մյուս կողմից էլ ստորադասական համարվող անշաղկապ կառուցվածքը կարող է փոխակերպվել և՛ պատճառի, և՛ հետևանքի շաղկապներով ու մի դեպքում դիտվել իբրև պատճառի պարագա երկրորդականով, մյուս դեպքում՝ հետևանքի երկրորդականով բարդ նախադասություն։ Վերը՝ շաղկապավոր կառուցները նկարագրելիս տեսանք, որ բարդ նախադասության կազմում հետևանք և պատճառ արտահայտող մասերը երկրորդական են դիտվում համապատասխանաբար հետևանքի և պատճառի շաղկապներով գլխավոր մասին միացած լինելու չափանիշով։

Շաղկապի բացակայությունը քննվող կառույցի մեջ գլխավոր և երկրորդական մասերի քերականական տարբերակումը դարձնում է խիստ պայմանական։ Այսպես օրինակ, Ապակիները մաճուր էին, աննոր չէր եկել *(1, 18)* նախադասության մեջ քերականական կախվածության առումով դժվար է տարբերակել գլխավոր և երկրորդական մասերը. այն կարող է ըմբռնվել և՛ իբրև պատճառի պարագա երկրորդականով, և՛ իբրև հետևանքի երկրորդականով բարդ նախադասություն։ Համմտ.՝ Ապակիները մաճուր էին, որովհետև աննոր չէր եկել և Աննոր չէր եկել, այնպես որ *(ուստի, հետևաբար...)* ապակիները մաճուր էին։

Ստորադասական շաղկապավոր կառույցների հետ հոմանիշական զույգեր կազմող անշաղկապ նախադասությունները համադասական կամ ստորադասական տիպին հատկացնելիս ավելի հարմար է առաջնորդվել կառուցվածքային չափանիշներով։ Առանց մասերի շարադասության փոփոխության համադասական և (ու) շաղկապով փոխակերպվող կառույցները, մեր կարծիքով, կարող են դիտվել իբրև անշաղկապ համադասական։ Օրինակներ՝ Նեղ վիճակումն էի, չգիտեի, թե ինչ ելք կարելի էր գտնել *(6, 12)*, Պառավել եմ, լեզվիս կապը կորցրել *(21, 10)*, Սպանվեց օձը, դժբախտությունները սկսվեցին մեկը մյուսի հետևից *(16, 4)* և այլն։ Այսպիսի փոխակերպման չենթարկվող անշաղկապ նախադասությունները պետք է համարվեն ստորադասական։ Սրանք, ինչպես նշեցինք, կարող են փոխակերպվել պատճառի կամ հետևանքի շաղկապներով։ Օրինակներ. Ես ներքին դժկամությամբ մոտեցա նրան. դեռ ծեծվող

գյուղացու մղկտոցն ականջիցս դուրս չէր եկել (16, 20), Վերքերը վիրակապում էին պարաշյուտի աստառներից քաշած թելերով, յոդ չկար (10, 10), Ինձ Դավիթ ասա, ուզում եմ լինել քո հասակակիցը (1, 14) և այլն։

Վերը արված դիտողությունները բերում են այն եզրահանգման, որ սինշաղկապ պատճառահետևանքային կառույցի կոնկրետ իրացումները կարող են վերաբերել թե համադասական (Р — Р) և թե ստորադասական (Р ⟶ Р) տիպերին։ Համադասական տիպին վերաբերելու դեպքում նշված կառույցի և գերիշխող Р ⟶ որովհետև Р կառույցի միջև, իբրև միջակա օղակ, ենթադրվում է Р — և — Р տարբերակը ևս, որը ստորադասական տիպի դեպքում բացակայում է։ Բերենք համադասական անշաղկապ և ստորադասական հոմանիշ զույգերի օրինակներ.

Р — Р	Արև էր, կայարանի աղյուսե շենքը ռուսական փեչի պես տաքացել էր (10, 3)։
Р ⟶ որովհետև Р	Կայարանի աղյուսե շենքը ռուսական փեչի պես տաքացել էր, որովհետև արև էր։
Р — Р	Արևն անմիջապես գտավ գրաֆինի ոսկեգույն պարունակությունը. գինին ավելի զվարթացավ (1, 18)։
Р ⟶ որովհետև Р	Գինին ավելի զվարթացավ, որովհետև (քանի որ) արևն անմիջապես գտավ գրաֆինի ոսկեգույն պարունակությունը։

Այս կարգի համադասական նախադասությունների կառուցվածքային առանձնահատկությունը, որով սրանք տարբերվում են մաքուր ժամանակային հաջորդում արտահայտող նախադասություններից, կառուցվածքի փակ (երկանդամ) լինելն է[22]։ Ինչպես վերևում քննված համադասական շաղկապավոր նախադասություններում, այս դեպքում էլ պատճառահետևանքային իմաստի դրսևորմանը կարող են օժանդակել որոշակի բառային միջոցներ։ Օրինակներ՝ Նա սկսեց կրծել բութ մատի եղունգը, մի ժեստ, որ ինչքան թագավորական չէր, նույնքան մարդկային էր, դրա ճամար էլ մեծ համակրանքի էր արժանացել երկրում (7, 58), Կնիքը, ինքն Անդրկովկասից է եկել, այդ պատճառով էլ ոչխարի մասին շատ գիտի (15, 33), Ես մասնագետ չեմ, բնական է, հանձն չեմ առնում մասնագիտական դիտողություններ անել (6, 47)։ Բայց ես էլ իմ արժանապատվությունն ունեմ. ճո բոլորին իսկույն չեմ մոռանում (ԳԲ, 3, 04. 81) և այլն։ Վերջին կարգի նախադասությունները ժողովրդախոսակցական ակնհայտ երանգ են պարունակում։

Պատճառահետևանքային անշաղկապ ստորադասական նախադասությունները ևս երկանդամ կառուցվածքի են։ Բերենք սրանց և համապատասխան շաղկապավոր տիպերի հոմանիշության օրինակներ.

Р ⟶ Р — Հայկը չկարողացավ նայել նրա աչքերին. նրանք և բարի էին, և դաժան (1, 12)։

Р ⟶ որովհետև Р — Հայկը չկարողացավ նայել նրա աչքերին, որովհետև նրանք և բարի էին, և դաժան։

Р ⟶ Р — Մորաքույր, գնանք աղգականների մոտ, քեզ համար են եկել (12, 53)։

Р ⟶ որովհետև Р — Մորաքույր, գնանք աղգականների մոտ, որովհետև քեզ համար են եկել։

Պետք է ասել, որ անշաղկապ կառույցի դեպքում ավելի բնական են մասերի մեջ կիրառվող զանազան եղանակավորող բառեր։ Օրինակ՝ Գուցե դիտմամբ էին բաց թողել. երևի վատահ էին, որ կգա (7, 18) և այլն։

Անշաղկապ կառուցվածք ունեցող նախադասությունների մի առանձնահատկությունն էլ այն է, որ սրանց կազմում հաճախ կարող են գործածվել հաղորդակցային տարբեր բնույթի բաղադրիչներ։ Բնական են հատկապես հարցական բաղադրիչներով պատճառահետևանքային անշաղկապ նախադասությունները։ Սրանց հոմանիշ շաղկապավոր տարբերակներում հարցական պարզ նախադասությունները որպես կանոն փոխարինվում են իրենց պատմողական հոմանիշներով։ Համմա՝

Р ⟶ Р — Ինչ ասեի, դու այդքան բան չէ՞իր կարող հասկանալ (7, 10)։

Р ⟶ որովհետև Р — Ոչինչ չէի կարող ասել (չասացի), որովհետև դու այդքան բան կարող էիր հասկանալ։

Р ⟶ Р — Ինչու՞ փախչենք, մենք դեռ գործ ունենք այստեղ (7, 15)։

Р ⟶ որովհետև Р — Չենք փախչի (չփախչենք), որովհետև մենք դեռ գործ ունենք այստեղ։

Р ⟶ Р — Օրը քանի մարդ է գալիս, որտեղի՞ց հիշես (7, 19)։

Р ⟶ որովհետև Р — Չէի կարող հիշել, որովհետև ամեն օր շատ մարդիկ են գալիս։

Այս կարգի անշաղկապ նախադասությունները վերաբերում են խոսակցական կենդանի ոճին։ Ընդհանրապես պետք է նշել, որ ստորադասական շաղկապավոր կառույցներից անշաղկապ նախադասությունները առանձնանում են հիմնականում գեղարվեստական և բանավոր-խոսակցական ոճերում գործածելու ընդգծված առանձնահատկությամբ։

Պատճառահետևանքային անշաղկապ նախադասությունների շարքում կան նաև այնպիսիները, որոնք անմիջաբար շաղկապավոր կառույցի փոխակերպվել չեն կարող։ Այս կարգի նախադասությունների մեջ մասերի պատճառահետևանքային կախումը միշնորդավորվում է մի լրացու-

ցիչ դատողությամբ, որը, սակայն, լեզվական արտահայտություն չի ստանում։ Հոմանիշ պատճառահետևանքային կառույցի փոխակերպվելիս նշված նախադասություններում պետք է վերականգնվի մտքերի տրամաբանական անցման բացակա օղակը։ Համմտ՝

Ու մի վախ մտավ մեջս. կդիմանա՞ (6, 24)։
Ու մի վախ մտավ մեջս, որովհետև մտածեցի (թե) կդիմանա՞։
Ժպտացի. մերոնցից են... (12, 10)։
Ժպտացի, որովհետև տեսա, որ մերոնցից են և այլն։

Անշաղկապ պատճառահետևանքային կառույցի խոսքային իրացումների մեջ ևս հանդիպում են այնպիսի նախադասություններ, որոնց գլխավոր մասի ստորոգյալը հոգեկան ներքին զգացում, հույզ, ապրում, որշակի գնահատողական վերաբերմունք է արտահայտում։ Այսպիսի նախադասությունները հոմանիշության տեսակետից անմիջապես առնչվում են որ շաղկապով կապակցված համապատասխան ստորադասական կառույցին և սրա միջոցով էլ՝ շարքի գերիշխող անդամին։ Համմտ.՝

P ⟶ P — Լավ է, արոտը ձյան տակ չմնաց (Ա, 19. 11. 80)

P ⟶ որ P — Լավ է, որ արոտը ձյան տակ չմնաց։

Ըստ երևույթին անշաղկապ տիպին պետք է հատկացվեն նաև պատճառահետևանքային իմաստ դրսևորող այն նախադասությունները, որոնց մեջ հանդես են գալիս բառային յուրահատուկ միջոցներ՝ իրենց իմաստով նպաստելով ամբողջ բարդ նախադասության իմաստային նկարագրի ձևավորմանը։ Այս կարգի բառերն ու բառակապակցությունները իրենց կիրառության մեջ բավական կայունացած են և կարծես թե ստանձնել են բարդ նախադասության մասերը կապակցելու գործառույթ։ Պարզ է, որ նման դեպքերում ամբողջ նախադասության իմաստային և ոճական երանգավորումը պայմանավորված է հենց այդ բառային միջոցների իմաստային-կիրառական առանձնահատկություններով։

Թվարկենք մի քանի բնորոշ դեպքեր՝

P — տեսնում ես (չե՞ս տեսնում) — P — Մի աղմկիր, տեսնում ես (չե՞ս տեսնում) երեխան քնած է։

P ⟶ որովհետև P — Մի աղմկիր, որովհետև երեխան քնած է։

P — ինչ էլ լինի (ինչ ուզում է լինի) — P — Դու ուժեղ ես, ինչ էլ լինի (ինչ ուզում է լինի,) նրան կհաղթես։

P ⟶ որովհետև P	*Դու նրան կհաղթես, որովհետև ուժեղ ես։*

Ինչպես ցույց են տալիս նաև վերը բերված բազմաթիվ օրինակները, անշաղկապ պատճառահետևանքային կառույցների իմաստային նկարագրի մեջ հաճախ առկա է իմաստային այլ նրբերանգ, ամենից հաճախ՝ պայմանի և մեկնական։ Նման դեպքերում կառույցը պատճառահետևանքային համարելուն պետք է նպաստի նրա կիրառության խոսքային միջավայրը։ Համատեքստում պատճառային բովանդակություն կարող են արտահայտել, օրինակ, հիմնականում պայմանի ու մեկնական նշանակություններ դրսևորող հետևյալ կարգի նախադասությունները.

P — նշանակում է — P	*Քո նյութը ներթափանցել է մի ուրիշի նյութի մեջ, որը պիտի ապրի քեզանից հետո, նշանակում է դու ամբողջովին չէիր մեռնելու (Գ, 5, 1980)։*
P — ասել է թե — P	*Նրա համար աստված մաթեմատիկոս է, ասել է թե աշխարհի օրենքները պետք է արտահայտվեն մաթեմատիկական ավարտուն ձևերի միջոցով (Գ, 4, 19 79) և այլն։*

Պատճառահետևանքային հարաբերություններ արտահայտելու բազմաթիվ միջոցներից մեկն էլ կարող է լինել պատճառ դրսևորող մասի կիրառությունն իբրև միջանկյալ նախադասություն։ Օրինակ «Ինչ լինելու է, թող լինի» նշանաբանով (փող էր պետք) մտա մի բնակելի շենք (Գ, 4, 1979)։ «Ինչ լինելու է, թող լինի» նշանաբանով մտա մի բնակելի շենք, որովհետև փող էր պետք։

Ընդհանրացնելով կառույցների նախընթաց նկարագրությունը, ներկայացնենք պատճառահետևանքային հարաբերություն արտահայտելու իմաստային հատկանիշով միավորված հոմանիշ կառույցների շարքը.

Կառույցներ	Նմուշներ
P ⟶ որովհետև P	*Նա պարգևատրվեց, որովհետև լավ էր աշխատել։*
P ⟶ քանի որ P	*Նա պարգևատրվեց, քանի որ լավ էր աշխատել։*
P ⟶ որ P	*Որ լավ էր աշխատել, պարգևատրվեց։* *Նա վա՞տ էր աշխատել, որ չպարգևատրվեր։* *Նա ուրախ էր, որ պարգևատրվել էր։*
P ⟶ այն պատճառով որ P	*Նա պարգևատրվեց այն պատճառով, որ լավ էր աշխատել։*

Կառույցներ	Նմուշներ
P ⟶ նրա համար, որ P	Նա պարգևատրվեց նրա համար, որ լավ էր աշխատել։
P ⟶ չէ որ P	Նա պարգևատրվեց, չէ՞ որ լավ էր աշխատել։
P⟶(նա)մանավանդ (որ) P	Նա պարգևատրվեց, մանավանդ (որ) լավ էր աշխատել։
P ⟶ այնքան (որ) P	Նա պարգևատրվեց, այնքան (որ) լավ էր աշխատել։
P ⟶ ինչ է թե P	Նա չպարգևատրվեց, ինչ է թե լավ չէր աշխատել։
P ⟶ երբ P	Ինչու չպարգևատրվեր, երբ լավ էր աշխատել։
P ⟶ քանզի P	Նա պարգևատրվեց, քանզի լավ էր աշխատել։
P ⟶ զի P	Նա պարգևատրվեց, զի լավ էր աշխատել։
P ⟶ այնպես որ P	Նա լավ էր աշխատել, այնպես որ պարգևատրվեց։
P ⟶ ուստի P	Նա լավ էր աշխատել, ուստի պարգևատրվեց։
P ⟶ ուրեմն (և) P	Նա լավ էր աշխատել, ուրեմն (և) պարգևատրվեց։
P ⟶ հետևաբար P	Նա լավ էր աշխատել, հետևաբար պարգևատրվեց։
P ⟶ հետևապես P	Նա լավ էր աշխատել, հետևապես պարգևատրվեց։
P ⟶ որից P	Նա լավ էր աշխատել, որից հոգնել էր։
P ⟶ որի պատճառով (էլ) P	Նա լավ էր աշխատել, որի պատճառով (էլ) պարգևատրվեց։
P ⟶ որի համար (էլ) P	Նա լավ էր աշխատել, որի համար էլ պարգևատրվեց։
P ⟶ որի շնորհիվ (էլ) P	Նա լավ էր աշխատել, որի շնորհիվ (էլ) պարգևատրվեց։
P ⟶ մեկ է (որ) P	Աշխատենք, մեկ է (որ) ժամանակ ունենք։
P ⟶ միևնույն է (որ) P	Աշխատենք, միևնույն է (որ) ժամանակ ունենք։

Կառույցներ	Նմուշներ
P — և —P	Նա լավ էր աշխատել և պարգևատրվեց:
P — P	Նա լավ էր աշխատել, պարգևատրվեց:
P — (և) այդ պատճառով (էլ) P	Նա լավ էր աշխատել (և) այդ պատճառով (էլ) պարգևատրվեց:
P — (և) դրա համար (էլ) P	Նա լավ էր աշխատել (և) դրա համար (էլ) պարգևատրվեց:
P — (և) դրա շնորհիվ (էլ) —P	Նա լավ էր աշխատել (և) դրա շնորհիվ (էլ) պարգևատրվեց:
P ⟶ P	Նա պարգևատրվեց, լավ էր աշխատել:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներածություն

1 *А. М. Пешковский*, Принципы и приемы стилистического анализа и оценки художественной прозы.—В кн.: Ars poetica, М., 1927.

2 *Համաձիշ տերմինը հեղինակը գործածում է միմյանց նրբիմաստային և ոճական տարբերակություններով հակադրվող շարահյուսական կառույցների համար՝ այդպիսի տարբերություններ չդրսևորող հոմանիշ կառույցների համար պահպանելով նույնաձիշ տերմինը: Հայերենագիտական հետագա աշխատանքներում գործածում է համաձիշ տերմինը՝ իբրև համաձիշ և նույնաձիշ լեզվական միավորների համար ընդհանուր անվանում: Սույն աշխատության մեջ էլ հոմանիշ, հոմանիշություն տերմինները կիրառվում են հենց այդ նշանակությամբ:*

3 *Ն. Ա. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970, էջ 26:*

4 *Նույն տեղում, էջ 24:*

5 *Նույն տեղում, էջ 35:*

6 *Նույն տեղում, էջ 37:*

7 *Նույն տեղում:*

8 *Նույն տեղում, էջ 38:*

9 *Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 567:*

10 *Նույն տեղում:*

11 *Ռ. Գ. Ավետիսյան, Քերականական համանիշությունը Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում, Բնիննածուական դիսերտացիա, Երևան 1980 (անտիպ), էջ 97—118:*

12 *И. И. Ковтунова*, О синтаксической синонимике.— В кн.: Вопросы культуры речи, вып. I, М., 1955, с. 141:

13 *Նույն տեղում, էջ 124:*

14 *Նույն տեղում, էջ 126:*

15 Նույն տեղում, էջ 127։
16 Նույն տեղում, էջ 133։
17 Նույն տեղում, էջ 126։
18 Տե՛ս Л. Ю. Максимов, О грамматической синонимии в русском языке.—Русский язык в национальной школе, 1966, № 2:
19 И. И. Ковтунова, Նշվ. աշխ., էջ 140։
20 Նույն տեղում, էջ 128։
21 Նույն տեղում, էջ 129։
22 А. Ф. Михеев, Синтаксическая синонимика в системе сложных предложений, выражающих причинно-следственные отношения в современном русском литературном языке.—В кн.: Грамматический строй современного русского языка, Куйбышев, 1964.
23 Նույն տեղում, էջ 159։
24 Նույն տեղում։
25 Н. И. Формановская, Стилистика сложного предложения, М., 1978:
26 Նույն տեղում, էջ 7։
27 Նույն տեղում, էջ 9։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում, էջ 10։
30 Տե՛ս, օրինակ, բառային համանիշների սահմանումը Ա. Մ. Սուքիասյանի «Համանիշները ժամանակակից հայերենում» (Երևան, 1971) գրքում, էջ 111—112։
31 Իմաստ, եզրաբանություն տերմինները նախադասության համար գործածվելիս հաճախ չեն տարբերակվում և լեզվաբանական գրականության մեջ շատ դեպքերում փոխադրվում են միմյանց։
32 И. П. Сусов, Семантическая структура предложения, Тула, 1973, с. 4.
33 Նույն տեղում։
34 Նույն տեղում, էջ 7—8։
35 Նույն տեղում, էջ 10։
36 Նույն տեղում, էջ 9—10։
37 Նույն տեղում, էջ 12։
38 В. А. Белошапкова, Сложное предложение в современном русском языке, М., 1967, с. 46.
39 Նույն տեղում, էջ 45—46։
40 В. А. Белошапкова, О понятии «формула предложения» на уровне синтаксиса сложного предложения.—В кн.: Единицы разных уровней грамматического строя языка и их взаимодействие, М., 1969, с. 216.
41 Н. Ю. Шведова, О структурной схеме сложного предложения.—там же, с. 320.
42 Համմ.՝ Ն. Յ. Մարռանովսկայայի նշված աշխատության մեջ կիրառվող բանաձևերը՝ առաջինի բարդ նախադասության համանիշական շարքերը բնութագրելիս։
43 Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 450։
44 Ստորադասական շաղկապների՝ եղանակային ձևերի հետ զուգորդելիության աղյուսակից մասնավորապես պարզ է դառնում, որ երբ, երբ որ, մինչև որ, ինչ որ ժամանակի շաղկապները զուգորդվում են եղանակային բոլոր ձևերի հետ, բացի ժխտական և հրամայական ձևերից, · որովհետև, ինչի որ, մանավանդ որ, նամանավանդ որ պատճառի շաղկապները չեն զուգորդվում միայն ըղձականի և հրամայականի ձևերի հետ, ետևաբար, ետևապես, ուստի, ուրեմն, այնպես որ հետևանքի

շաղկապները կարող են զուգորդվել եղանակային բոլոր ձևերի հետ (Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Նշվ. աշխ., էջ 454)։

45 Համմտ. *А. З. Скрипниченко,* Координация частей сложноподчиненного предложения и синтаксическая функция морфологических форм времени глагола, АКД, М., 1971:

46 Համմտ. նույն տեղում, էջ 4։

47 *Г. А. Золотова,* Очерк функционального синтаксиса русского языка, М., 1973, с. 200.

48 Տե՛ս, օրինակ, *В. В. Богданов,* Семантико-синтаксическая структура предложения, Л., 1977 էջ 15; *Дж. Лайонз,* Введение в теоретическую лингвистику, էջ 467—478։

49 *Т. М. Николаева,* О понятии «формула предложения».—В кн.: Единицы разных уровней грамматического строя языка и их взаимодействие, с. 316—317:

50 Օրինակ՝ Պատերազմ կսկսվի /Թագավորը կկորցնի բաջությունը մասերի միջև հնարավոր են և, որովհետև, երբ, բեև, բանի որ, երե, այնպես որ և այլն, մինչդեռ Բավական է ենթադրել, որ բոլորը լռեցին դեպքում մասերի միջև հնարավոր է միայն և շաղկապ (Տե՛ս Т. М. Николаева, Նշվ. հոդվ.)։

51 *Л. С. Бархударов,* К вопросу о поверхностной и глубинной структуре предложения, ВЯ, 1973, № 3:

52 *В. Г. Гак,* К проблеме синтаксической семантики.—В кн.: Инвариантные синтаксические значения и структура предложения, М., 1969:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Քանի որ երբ հարաբերական դերանունը բարդ նախադասություններ ձևավորելիս հանդես է գալիս գլխավորապես իր շաղկապական կիրառությամբ, ուստի նպատակահարմար ենք համարում երբ-ի համար գործածել շաղկապ անվանումը։

2 Համմտ. Ն. Ա. Պառնասյան, Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, 1964, էջ 104։

3 Համմտ. Գր. Գաբեգիևյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 294։

4 Քանի որ այստեղ պարզ և բաղադրյալ ստորոգյալների տարբերակում չենք կատարում, ուստի անցյալի անկատար ասելով պետք է հասկանալ նաև օժանդակ բայի անցյալի ձևերը բաղադրյալ ստորոգյալի կազմում։

5 Համմտ. Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օճանյան, Ա. Գ. Բադիկյան, Նշվ. աշխ., էջ 681։

6 Բ. Հ. Վիրդյանի հաշվումներով նախադաս երկրորդական նախադասությամբ բարդ նախադասությունների հաճախականությունը տեքստի մեջ կազմում է 51%։ Տե՛ս Բ. Հ. Վիրդյան, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970, էջ 254։

7 /Բ/ նշանը պայմանականորեն գործածվում է միջադաս երկրորդական նախադասությունները նշանակելու համար։

8 Սա, մեր կարծիքով, իր շաղկապական կիրառությամբ բավական հեռացած է բանի հարաբերական դերանվան իմաստից, և, բուն էության, վերջինիս համանուն մի ստորադասական շաղկապ է։

9 *Համմտ. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 636։*

10 *Տե՛ս, օրինակ, Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օնանյան, Խ. Գ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 569։*

11 *Համմտ. Ն. Ա. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան 1961, էջ 106։*

12 *Ռուսագիտության մեջ այսպիսի հարաբերությունն անվանվում է «հակադարձ ստորադասություն» կամ «փոխստորադասություն» (Տե՛ս, օրինակ, А. К. Федоров,* Обратное подчинение в современном русском языке.—В кн.: Проблемы синтаксиса русского языка, Орел, 1974).

13 *Թեև ընդունված է, որ այս երկու դեպքերում գործ ունենք համանուն շաղկապների հետ, սակայն դրանց իմաստային առնչակցությունը երևում է երկու կառույցների նշանակությունների համեմատությունից։*

14 Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, էջ 110—111։*

15 *Տե՛ս նաև Վ. Դ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964, էջ 308—310։*

16 *Համմտ. Ն. Ա. Պառնասյան, Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, էջ 119։*

17 Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 190—191։*

18 *Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 193—194,* Ն. Ա. Պառնասյան, *Ստորադասական կապակցությունը... էջ 124—126։*

19 Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 195։*

20 *Համմտ.՝* Ն. Ա. Պառնասյան, *Ստորադասական կապակցությունը... էջ 125։*

21 Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում, էջ 104։*

22 *Համմտ.* Ա. Հ. Պապոյան, *Կախյալ շարահարությամբ բարդ նախադասությունները արդի հայերենում, Երևան, 1968, էջ 198—199։*

23 *Համմտ.* Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները... էջ 105։*

24 *Նույն տեղում, էջ 107։*

25 *Նույն տեղում, էջ 105—106։*

26 *Նույն տեղում, էջ 108։*

27 *Համմտ.* Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օնանյան, Խ. Գ. Բադիկյան, *նշվ. աշխ., էջ 578։*

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

1 Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 209։*

2 *Տե՛ս, օրինակ,* Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օնանյան, Խ. Գ. Բադիկյան, *նշվ. աշխ., էջ 724—725։*

3 *Որոշ ուսումնասիրություններում հիմունքի նախադասություններն առանձնացվում են պատճառի երկրորդական նախադասություններից և առանում են որպես մեկնաբանություն։ Տե՛ս* Բ. Վերդյան, *նշվ. աշխ., էջ 214—216։*

4 *Համմտ.* Գր. Գաբեզիձյան, *նշվ. աշխ., էջ 245։*

5 *Նույն տեղում, էջ 248։*

6 *Համմ.* Ս. Դ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադիկյան, *նշվ. աշխ., էջ 725։*

7 *Համմ.* Գր. Գարեգինյան, *նշվ. աշխ., էջ 246—247։*

8 Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 211։*

9 *Համմ.* Ն. Ա. Պառնասյան, *Մորթադասական կապակցությունը..., էջ 148—149։*

10 Այնեղեն, այնպես *բառերի օգնությամբ պատճառի իմաստ արտահայտող բարդ նախադասությունները* Բերթա կարելի է դիտել իրրև անշաղկապ բարդ նախադասություններ։ *Համմ.՝* Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները..., էջ 120։*

11 *Համմ.* Գր. Գարեգինյան, *նշվ. աշխ., էջ 250։*

12 Ս. Դ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բադիկյան, *նշվ. աշխ. էջ 761—762։*

13 Գր. Գարեգինյան, *նշվ. աշխ., էջ 259։*

14 Ուստի, *ուստի Ե, ու-եմնե և այլ հետևանքի շաղկապներով կապակցվող նախադասությունները Մ. Աբեղյանի կողմից դիտվում են իրրև համադասական։ Տե՛ս* Մ. Աբեղյան, *նշվ. աշխ., էջ 664—665։*

15 *Տե՛ս, օրինակ,* Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 250—252։*

16 *Համմ. օրինակ,* Բ. Հ. Վիրգյան, *նշվ. աշխ., էջ 228—230;* Ն. Ա. Պառնասյան, *Մորթադասական կապակցությունը..., էջ 128—129, 185։*

17 *Համմ.* Գր. Գարեգինյան, *նշվ. աշխ., էջ 265։*

18 *Տե՛ս* Ն. Ա. Պառնասյան, *Մորթադասական կապակցությունը..., էջ 187։*

19 Վ. Դ. Առաքելյան, *նշվ. աշխ., էջ 308—310 (օրինակները բնագրում են)*

20 *Տե՛ս* Ն. Ա. Պառնասյան, *Անշաղկապ բարդ նախադասությունները..., էջ 33։*

21 *Նույն տեղում, էջ 112—122։*

22 *Նույն տեղում, էջ 33։*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) գրքեր

1 *Աբեղյան Գ. Թրաքուշաններ, Երևան, Հայպետհրատ, 1963*

2 *Բակունց Ա. Երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955*

3 *Գալշոյան Մ. Կռունկ, Երևան, Հայաստան, 1969*

4 *Դավթյան Վ. Բարի հսկան, Երևան, Սովետական գրող, 1979*

5 *Դևմիրճյան Դ. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1956*

6 *Ջաբյան Ռ. Հուշապատում, գիրք 2, Երևան, Հայաստան, 1977*

7 *Զեյթունցյան Պ. Կատակերգություն առանց մասնակիցների, Երևան, Հայաստան, 1975*

8 *Թումանյան Հ. Երկերի ժողովածու, Հ. 1—6, Երևան, Հայպետհրատ, 1940—1959*

9 *Խաչակյան Ա. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, Հայաստան, 1973*

10 *Խալափյան Զ. Ջերմանց մխիթարություն, Երևան, Սովետական գրող, 1979*

11 *Խանդադյան Ս. Երկեր, հ. 5, Երևան, Հայաստան, 1970*

12 *Կապուտիկյան Ս. Եճանկար հոգու և քարտեզի գույներից, Երևան, Սովետական գրող, 1976*

13 *Կիրակոսյան Ա. Նամակ առ Հայաստան, Երևան, Սովետական գրող, 1979*

14 *Հայկական առածանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1951*

15 *Մաթևոսյան Հ. Ծառերը, Երևան, Սովետական գրող, 1978*

16 *Մահարի Գ. Երկեր, հ. 2, Երևան, Հայաստան, 1967*

17 Մուրացան Երկեր, հ. 1—5, Երևան, Հայպետհրատ, 1951—1954
18 Նար-Դոս Երկերի ժողովածու հ. 1—3, Երևան, Հայպետհրատ, 1955
19 Զարենց Ե. Ընտիր երկեր, Երևան, Հայպետհրատ, 1955
20 Պետրոսյան Վ. Ապրած և չապրած տարիներ, Երևան, Հայաստան, 1979
21 Սարգսյան Մ. Բարև, բարի արև, Երևան, Հայաստան, 1973
22 Սարյան Գ. Ընտիր երկեր, Երևան, Հայաստան, 1974
23 Սևակ Պ. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, Հայաստան, 1976
24 Տոլստոյ Լ. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, Հայպետհրատ, 1949
25 Բաֆֆի Երկերի ժողովածու հ. 1—10, Երևան, Հայպետհրատ, 1955—1959

բ) բերբեր և ամսագրեր

Ա— Ավանգարդ
Գ— Գարուն
ԳՔ— Գրական քերթ
ՀՅ— Հայաստանի ֆիզկուլտուրնիկ

Բ. Կ. ՂԱԶԱՐՑԱՆ

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՆԱԽԱՄԱՍՆԻԿԱՎՈՐՄԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Քննության ենթակա բնագավառը հայ լեզվաբանության ուշադրության ոլորտից դուրս չի մնացել։ Արդի հայերենի ածանցման և ածանցների հարցն իր վրա է սևեռել շատ հետազոտողների ուշադրությունը, որոնք իրենց ուսումնասիրություններով բազմակողմանի վերլուծության են ենթարկել այն [1, 3, 4, 5]*։

Տվյալ խնդրին մենք անդրադարձել ենք քանակական ենթամեթոդի օգնությամբ և փորձել ենք պարզաբանել ժամանակակից հայերենի ածանցման (նախածանցման) բառակազմական ու գործառական (ֆունկցիոնալ) փոհարաբերությունները, նրանց վիճակագրական վերլուծության պատկերը**։

Այստեղ տեղ չի գտել ընտրանքային հայեցակետը, քանի որ ածանցման (նախածանցման) վիճակագրական հիմնավոր բնութագրման համար անհրաժեշտ է դիտել յուրաքանչյուր նախածանցի բոլոր կապակցություններն[2] ամենատարբեր արմատների ու հիմքերի հետ, որոնցից յուրաքանչյուրն իմաստային տեսակետից կարող է ունենալ յուրահատուկ դրսևորում՝ իմաստային նոր երանգ։

Հայերենի նախածանցման հարցում դեռևս չունենք միասնական մոտեցում։ Խոսքը վերաբերում է ինչպես տերմինի, այնպես էլ բուն պրոցեսի պարզորոշ նկարագրմանը։ Մ. Աբեղյանն այդ կարգի բաղադրությունները տարբերում է որպես առանձին խումբ և կոչում է առաջադիրներով բաղադրություններ։ Այնուհետև արմատավորվում են «նախածանց» և «նախածանցում, տերմինները։ Գ. Բ. Ջահուկյանը[6] նախածանցներին հատկացնում է ենթք կարգի իմաստային գործառական ար-

*) Ածանցներին անդրադարձել են նաև բոլոր այն հեղինակները, որոնք ուսումնասիրության առարկա են դարձրել հայերենի բառակազմության բաժինը։

**) Հայերենի ածանցման (նախածանցման) վիճակագրական վերլուծության համար որպես աղբյուր օգտագործել ենք Հ. Ս. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանը»։ Լրացումներ ենք կատարել Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից»։

Ժեքներ. առաջին կարգի նախածանցներն ունեն ժխտողական, բացառողական աղժեք (ան-, դժ-, չ-, տ- և այլն) երկրորդ կարգի նախածանցներն արտահայտում են «ժամանակային» իմաստ [կրկնության՝ վեր(ա)], երրորդ կարգի նախածանցները՝ արտ(ա), ենթ(ա), միջ(ա), և այլն՝ «տարածական» իմաստներ։ Հեղինակն իրավացիորեն դրանք բուն իմաստով ածանցներ (նախածանցներ) չի համարում, քանի որ վերջիններս իմաստային առումով հարաբերակից են ժամանակի ու տեղի մակբայներին (առաջ, դուրս, ետ, ներս և այլ բաղադրիչներով հարաբերական կազմություններին)։

Նշված ածանցները, այնուամենայնիվ, հետևողականորեն մեկ ընդհանուր տերմինով չեն կոչվում։ Սրանք մերթ անվանվում են ածանցներ, *մերթ՝* ածանցական մասնիկներ, *իսկ ժխտականները՝ երբեմն* ժխտական նախամասնիկներ:

Կարծում ենք ժամանակակից հայերենի նախածանցներն իմաստային առումով իրոք լիարժեք ածանցներ չեն։ Հետևապես, բուն նշանակությունից ելնելով՝ ավելի ճիշտ կլիներ նրանց անվանել նախամասնիկներ: *Ըստ այդմ կարելի է տալ նախամասնիկի ընդհանրական սահմանումը հետևյալ ձևակերպմամբ.* այն ձևույթը, որը դրվելով բառի սկզբում՝ նրան տալիս է հիմնականում տարածական, բացասման, ինչպես նաև վիրսային կատարվելու իմաստ, կոչվում է նախամասնիկ:

Լեզվական միավորի, այլ կերպ ասած՝ բառի կազմում սովորաբար առանձնանում են արմատական ու ածանցական ձևույթներ՝ իմաստի տեսակետից անտարալուծելի միավորներ, որոնք էապես տարբերվում են միմյանցից։ Եթե ածանցական ձևույթն օժտված է ձևական, կառուցվածքային նշանակությամբ, ապա արմատական ձևույթին հատուկ է որոշակի, երբեմն նաև՝ ամենաընդհանուր նշանակություն։ Հենց դրանից էլ կախված է արմատական ու ածանցական ձևույթների կապակցելիության աստիճանը։ Արմատական ձևույթները կարող են միանալ միայն սահմանափակ թվով ածանցական ձևույթների հետ, մինչդեռ ածանցական ձևույթները զուգորդվում են մեծ թվով ամենատարբեր արմատական ձևույթների հետ (12, 14), փոխելով վերջիններիս կոնկրետ նշանակությունը. ասենք՝ տուն–տնվոր: *Այստեղ-վոր ածանցական ձևույթը փոխում է տուն ձևույթի կոնկրետ նշանակությունը։ Հայերենի նախածանցական ձևույթներին այդպիսի յուրահատկություն վերագրել չենք կարող։ Նրանք կատարում են միայն մասնիկի դեր։ Եթե ասում ենք* անտուն, *ապա տուն բառի կոնկրետ իմաստը չենք փոխում, այլ ժխտում կամ բացառում ենք այն։ Վերակառուցել բառի մեջ կառուցել նախատիպ հիմքը նոր կոնկրետ իմաստ չի ստացել, այլ ձեռք է բերել ժամանակային կամ կրկնության իմաստ (6) և այլն։*

Ինչևիցե, նախամասնիկները ժամանակակից հայերենի բառակազմության կարևոր միավորներից են և վիճակագրական հետազոտության համար լուրջ հետաքրքրություն են ներկայացնում։

Մենք հիմնականում կանգ կառնենք արդի հայերենի ածանցական (նախամասնիկների) ու արմատական ձևույթների զուգորդման վրա։ Քանակական վերլուծության մեթոդի օգնությամբ կփորձենք ցույց տալ նախամասնիկների բառակազմական-կառուցվածքային ունակությունները։

Այդ տեսանկյունով քննության առնենք ան— նախամասնիկը։ Վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ ան— մասնիկը, ըստ վերոհիշյալ բառարանների տվյալների, հանդես է եկել 6000 տարբեր արմատների ու հիմքերի հետ՝ արտահայտելով ժխտման, բացասման իմաստ։

Հետաքրքիր պատկեր են ներկայացնում ան-ի բոլոր բաղադրությունները։ Սրանք, ըստ կառուցվածքային-բառակազմական հատկությունների, բաժանել ենք հինգ առանձին խմբերի։ Առաջին խումբը բնորոշվում է նրանով, որ ան— ժխտական նախամասնիկը միանում է մեկ արմատի հետ, որն ունի ինքնուրույն գործածություն (ան-ից անկախ)։ Օրինակ. անագան, անագի, անազատ, անազդ, անազնիվ, անաղոտ, անաթոռ և այլն* (ընդամենը 1046 բառ)։

Երկրորդի խմբում նույնպես ան-ը միանում է մեկ արմատի հետ, սակայն վերջինս, ի հակադրություն առաջին խմբի բառերի, չունի ինքնուրույն գործածություն. անաղարտ, անամաչ, անաշխատ, անապակ, անաւդյուն, անբախ, անբաղդատ, անբարո և այլն (ընդամենը՝ 46)։

Երրորդ խմբում հանդես է եկել 2642 բառ։ Այստեղ ան-ը հանդես է գալիս նախատիպ հիմքի հետ, որն ունի մեկից ավելի բաղադրիչներ. ըստ որում նախատիպի բաղադրիչները կարող են նաև ինքնուրույն օգտագործվել։ Ասենք՝ անազատական-ի նախատիպը՝ ազատական-ը, կարող է ինքնուրույնաբար օգտագործվել և՛ ազատ և՛ ազատական ձևերով, նույնը՝ անազգական, անազգային, անազդական և այլն։ Մինչդեռ անազնվաբար, անամուսնություն, անամուսնական և այլ բառերում նախատիպերի բաղադրիչներն առանց ձևափոխության ինքնուրույն օգտագործվել չեն կարող։ Օրինակ՝ ազնիվ, ամուսին բառամասերն ինքնուրույն գործածություն չունեն։

Երրորդ խմբի բառերի յուրահատկությունն է նաև այն, որ սրանց նախատիպ հիմքերն ունեն ան-ից անկախ՝ ինքնուրույն գործածություն.

---

*) Այս և հաջորդ բոլոր խմբերի ամբողջական ցանկը տեղի սղության պատճառով չենք բերում։

աե–ազատություն, աե–ազգակից, աե–ազգակցություն, աե–ազգակ, աե–ազնվաբարո, աե–աղուհաց, աե–ամոռձիf, աե–այցելություն, աե–աշխատասեր, աե–աշխարհիկ, աե–աստվածագետ և այլն։

Չորրորդ խմբի (174 բառ) յուրաքանչյուր միավոր, ան-ից բացի, իր մեջ պարունակում է երեք և ավելի բաղադրիչներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է հանդես գալ որպես առանձին բառ։ Այստեղ ան-ին հաջորդող բառամասի բաղադրիչները շղթայաձև կապված են միմյանց հետ՝ առանց ձևափոխության ենթարկվելու։ Հատկանշական է, որ այդ բաղադրիչներից ամեն մեկի հետ առանձին ան— ժխտականը կարող է գործածվել (խոսքն այստեղ արմատական բաղադրիչների մասին է)։ Վերցնենք անգործունակություն բառը։ Այստեղ գործունակություն նախատիպը բաղկացած է գործ, ունակ, այդ երկուսի միացումով՝ նաև գործունակ և ություն բաղադրիչներից։ Ան-ը սրանցից յուրաքանչյուրի հետ կարող է միանալ և ինքնուրույն բառ կազմել (իհարկե, նկատի չունենք —ություն ածանցական ձևույթը)։ Այսպես՝ գործ–անգործ, ունակ–անունակ, գործունակ–անգործունակ և վերջապես՝ գործունակություն–անգործունակություն։

Չորրորդ խմբում ան— նախամասնիկին հաջորդող ամբողջ բառամասը նույնպես ունի ինքնուրույն ու անկախ կիրառություն. անազատականություն, անախտավորություն, անանունակություն, անբառոյականացնել, անբերունակություն, անգազանցիկություն, անիշխանականություն, անիրավացիություն, աննպատակահարմարություն, անօրինականություն և այլն։

Հինգերորդ խմբի (2092 բառ) բառերը կազմված են մեկից ավելի բաղադրիչներ ունեցող նախատիպ հիմքերից, որոնք առանց ան-ի ինքնուրույն գործածություն չունեն. աե–ախորժանալ, աե–ախտաբար, աե–ախտականություն, աե–ականածապես, աե–ականկալաբար, աե–անություն, աե–աղաթվություն, աե–աղարտ, աե–աղարտորեն, աե–անություն, աե–ամոքանալ, աե–ամոթորեն, աե–ամոռություն, աե–աննկականանալ, աե–անցական, աե–ազատաբար, աե–ասնաբույժ, աե–ասնազուրկ, աե–ասնակերպ և այլն։

Եթե ամփոփենք նշված բոլոր խմբերի արդյունքների քանակական պատկերը, ապա ակնառու կդառնա ժամանակակից հայերենում ան–ժխտական նախամասնիկի կառուցվածքային-բառակազմական արժեքը։ Առանձնացված բոլոր խմբերն իրենց մեջ ընդգրկում են միայն լեզվական ածանցված միավորներ։ Սրանք, ինչպես ածանցման ենթարկված ամեն մի բառ, ունեն երկու բառակազմական տարր. այն է՝ նախատիպ հիմք և ածանցական մաս։ Առաջին և երկրորդ խմբերում ունենք պարզ նախատիպ հիմք և մեկ բառակազմական երկրորդական ձևույթ,

որոնց ընդհանուր թիվն է՝ 1092։ Օրինակ. ան–ագահ, ան–ագի, ան–ազատ, ան–ազդ, ան–լույս, ան–խամր, ան–մեղ, ան–մուտ, ան–նկատ, ան–օգ և այլն։ Երրորդ, չորրորդ և հինգերորդ խմբերում նախատիպ հիմքերը բազմաբաղադրիչ են։ Սրանք անհամեմատ ավելի մեծ թիվ են կազմում (4871 բառ). ան–ախորժական, ան–աղաթթվային, ան–գաղափարականություն, ան–երեսպաշտություն, ան–իրավացիություն, ան–նպատակահարմարություն, ան–ակնկալելիություն և այլն։

Ժխտական ան— նախամասնիկի բառակազմական-կառուցվածքային հարաբերության վիճակագրական պատկերը կարող ենք արտահայտել հետևյալ աղյուսակով (№ 1)։

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ան-ի բառակազմական ընդունակություններն անհամեմատ ավելի համեստ են առանձնապես երկրորդ խմբում, ուր նախատիպ պարզ հիմքն ինքնուրույն գործածություն չունի։ Ան-ի այդ նույն հատկությունը ցածր է նաև չորրորդ խմբում, որտեղ նախատիպ հիմքի բաղադրիչների թիվը համեմատաբար ավելի մեծ է։

Այժմ տեսնենք, թե ան— նախամասնիկին հաջորդող բառամասը (նախատիպ հիմքը) ինչպիսի խոսքի մասային պատկանելություն կարող է ունենալ։ Այդ տեսակետից առանձնապես աչքի է ընկնում գոյականը։ Դա պատահական չէ, քանի որ հայերենում բոլոր գոյականները տեսականորեն կարող են ստանալ ան-ժխտական նախամասնիկը։ Վիճակագրական ոչ ընտրովի վերլուծությունն արդարացնում է այդ միտքը։ Առանձնացված ավելի քան վեց հազար տարբեր բառերից ան-ով բաղադրվել են 2823 բառ, որոնք միայն գոյական նախատիպով հիմքեր են։ Դրանցից են. ան–ագի, ան–ազդ, ան–ախտ, ան–ածանց, ան–ակռա, ան–ասղիճ, ան–կարգ, ան–համաչափություն, ան–շահ, ան–վնաս, ան–վտանգ, ան–փոփոխում, ան–fար, ան–fառոզ և այլն։ Ածական նախատիպ հիմքը ժխտվել է 1976 անգամ։ Ան–ագահ, ան–ազդեցիկ, ան–ամփոփ, ան–արտահայտիչ, ան–երջանիկ, ան–խզելի, ան–կշռային, ան–մահաբեր, ան–շարժունակ, ան–սեռունակ, ան–օգտակար, ան–օրինակելի և այլն։

Եթե առաջին դեպքում ան— նախամասնիկը բացառում կամ ժխտում էր իրեն հաջորդող բառամասի գոյականական իմաստը, ապա այստեղ ժխտում է հաջորդող բառամասի (նախատիպի) արտահայտած հատկանիշը։

Ան-մասնիկը ակտիվություն է ցուցաբերում նաև մակբայների հետ հարաբերության ստեղծելիս։ Այդ դեպքում ան-ը ժխտում է իրեն հաջորդող բառամասի արտահայտած հատկանշի հատկանիշը։ Օրինակ. ան–ազնվաբեն, ան–ակնածաբար, ան–ամոթխածորեն, ան–աստվածորեն, ան–արժանաբար, ան–արժանապես, ան–բաղդատապես, ան–բարեխղճաբար,

ան–զարդաբար, ան–կախաբար, ան–համամասնորեն, ան–հեղապես և այլն, որոնց ընդհանուր թիվը կազմում է 809 բառ:

Աղյուսակ 1

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	1046/6000	17,43
II	46/6000	0,74
III	2642/6000	44,03
IV	174/6000	2,9
V	2092/6000	34,90

Աղյուսակ 2

Խոսքի մաս	Բառերի քանակը	Տոկոսներով
գոյական նախատիպ	2823/6000	47,05
ածական նախատիպ	1976/6000	32,93
մակբայ նախատիպ	809/6000	13,48
բայ նախատիպ	335/6000	5,58

Բայի հետ միանալիս ան–ը ժխտում է նրա արտահայտած գործողությունը: Օրինակ. ան–ալիանալ, ան–ախորժանալ, ան–բարոյականացնել, ան–հզրացնել, ան–զգամել, ան–զգայանալ, ան–զգուշացնել, ան–մեղացնել և այլն: Սրանց թիվը կազմում է 205 բառ: Իսկ եթե դրանց ավելացնենք 84 բայարմատ՝ ան–աշխատ, ան–բախ, ան–բավ, ան–բեկ, ան–բուժ և այլն, ինչպես նաև 16 բայահիմք՝ ան–լվաց, ան–խոստովան, ան–մեծար և այլն, ապա ընդհանուր թիվը կկազմի 335 բառ: Այդ թիվը, ցուցե, որոշ չափով տարօրինակ թվա, որովհետև հայտնի է (6), որ բայարմատները հայերենում ունեն բառակազմական ամենալայն հնարավորություններ: Դա իրոք այդպես է: Սակայն մեր ցույց տված թիվը դրան չի հակասում, քանի որ բազմաթիվ բայարմատներով բաղադրված նախատիպ հիմքեր, որոնք հաջորդել են ան–ժխտական նախամասնիկին, չենք դիտել որպես բայարմատով բաղադրված նախատիպ հիմք, այլ վերագրել ենք այն խոսքի մասերին, որոնցով նրանք հիրավի հանդես են եկել: Ասենք՝ ան–բերելի, ան–բերք, ան–բախելի, ան–ներելի, ան–ներելիորեն, և այլ բառերում ժխտական նախամասնիկին հաջորդող բառամասերը բաղադրված են բայարմատներով, մինչդեռ դրանք համապատասխանաբար դիտել ենք որպես ածական (—բերելի, բախելի, —ներելի), բայ (—ներել), մակբայ (—ներելիորեն) և գոյական (—բերք, —ներելիություն):

Քննության ենթակա բառացանկում հանդիպել են նաև այնպիսի բառեր, որոնց մեջ ան–ին հաջորդող նախատիպը հավասարապես կարող է պատկանել տարբեր խոսքի մասերի: Օրինակ. գոյական–ածական՝ ան–

աճջատիչ, աճ–լեղի, աճ–կենդանի, աճ–միջնորդ և այլն կամ՝ կարող է հանդես գալ որպես ածական-գոյական՝ աճ–անդորր, աճ–բնիկ, աճ–իմաստասեր, աճ–կուսակցական, աճ–ճեղափոխական, աճ–մարտակից, աճ–նյութեղեն, աճ–շեն, աճ–պատիվական և այլն, որոնց ընդհանուր թիվը հասնում է քառասունի։ Ցուցակում տեղ են գտել նաև՝ գոյական արմատով նախատիպեր, որոնք առանց ան–ի չունեն ինքնուրույն կիրառություն (աճ–հաճց, աճ–մեղ, աճ–օրեճ և աճ–է) գոյական-մակբայ (ան–երեկ), գոյական —կապ (աճ–աճց, աճ–տակ), գոյական-ձայնարկություն (աճ–օրոր), բայ-գոյական (աճ–տալ), ածական-մակբայ (աճ–խոտորնակի, աճ–հավասարաթիվ, աճ–նիշտ, աճ–մարդավարի, աճ–մեկին, աճ–պակաս), ածական-գոյական-մակբայ (աճ–հոգնակի), թվական (աճ–երկրորդ), եղանակավորող բառ (աճ–շնորհավոր), եղանակիչ (աճ–պիտո), ածական-կապ (աճ–համեմատ, աճ–նման), մակբայ-կապ (աճ–հանդիման), կապ (աճ–հանդեպ)։

Հայերենի ան— ժխտական նախամասնիկի՝ տարբեր խոսքի մասերի հետ ունեցած հարաբերության, աղյուսակային տեսքը հետևյալն է (№ 2)*

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե ան–նախամասնիկը ինչպիսի վիճրջածանցներ ունեցող հիմքերի հետ կարող է զուգորդվել (անկախ խոսքի մասային պատկանելությունից և իր մեջ պարունակած բաղադրիչների թվից)։ Ան–...–աբար զուգորդությունն ուսումնասիրության ենթարկված բառացանկում հանդիպել է 154 անգամ. աճ–ազնիվ–աբար, աճ–ախորժ–ւբար, աճ–ակնած–աբար, աճ–ամոթխած–աբար, աճ–այլափոխաբար *և այլն*։*

Ան–...–ալ(անալ)-ի հետ զուգորդվել է 41 անգամ՝ աճ–բան–ալ, աճ–բավական–աճալ, աճ–բարոյ–աճալ, աճ–չար–աճալ *և այլն։*

Ան–...–ել՝ 94. աճ–գր–ել, աճ–լար–ել, աճ–խախտ–ել, աճ–խոտորել, աճ–ծածկ–ել, աճ–պայթ–ել, աճ–սաստ–ել, աճ–վար–ել, աճ–ուտ–ել, աճ–փչ–ել *և այլն։*

Ան–...–ալի՝ 29. աճ–աղերս–ալի, աճ–արդարաճ–ալի, աճ–բաղձ–ալի, աճ–գթ–ալի, աճ–դառն–ալի, աճ–հուս–ալի, աճ–ծանձր–ալի, աճ–շնորհ–ալի, աճ–իմաճ–ալի, աճ–փութ–ալի *և այլն։*

Ան–...–ելի՝ 85. աճ–աճրձակ–ելի, աճ–բաժան–ելի, աճ–բախ–ելի, աճ–բաղադր–ելի, աճ–բաղդատ–ելի, աճ–բեկ–ելի, աճ–բեկան–ելի, աճ–բերելի, աճ–ժխտ–ելի *և այլն։*

---

*) Ջույգ խոսքի մասերով արտահայտված, ինչպես նաև այլ խոսքի մասերով հատու կենտ հանդես եկած բառերն ընդգրկված չեն աղյուսակում։

*) Այս և հաջորդ զուգորդությունների լրիվ պատկերը տեղի սղության պատճառով նույնպես չենք տալիս։

Ան-...-ագին՝ 2. ան-խնդ-ագին, ան-հիվանդ-ագին:

Ան-...-ած՝ 4 բառ. ան-երկյուղ-ած, ան-զարգաց-ած, ան-ողորմ-ած, ան-ատ-ած:

Ան-...-ածու՝ 1. ան-ծաղր-ածու:

Ան-...-ակ՝ 46՝ ան-արեգ-ակ, ան-գիտ-ակ, ան-գոհունե-ակ, ան-հաջող-ակ, ան-եշան-ակ, ան-շարժուն-ակ, ան-պարուն-ակ, ան-փառուն-ակ, *և այլն:*

Ան-...-ակա՝ 1. ան-մեռ-ակա:

Ան-...-ակի՝ 3. ան-հոգն-ակի, անորոշ-ակի, անուղղ-ակի:

Ան-...-(ա)կան՝ 226. ան-ազատ-ական, ան-ազդ-ական, ան-ազդող-ական, ան-ազնվ-ական, ան-ախորժ-ական, ան-ախտ-ական, ան-աղերս-ական, ան-անչափ-ական, ան-բուժ-ական, ան-երաժշտ-ական, ան-զգուշ-ական *և այլն:*

Ան-...-ային՝ 32. ան-ազգ-ային, ան-ալկոհոլ-ային, ան-աստղ-ային, ան-բարբոս-ային, ան-երկր-ային, ան-էլեկտրոն-այինև *այլն:*

Ան-...-ան՝ 10. ան-ապակ-ան, ան-իշխ-ան, ան-կայ-ան, ան-կարկատ-ան, ան-կերպար-ան, ան-կով-ան, ան-հեծ-ան, ան-պատ-ան, ան-տապ-ան, ան-փոխ-ան:

Ան-...-անակ՝ 2. ան-ժամ-անակ, ան-հանգ-անակ:

Ան-...-անի՝ 2. ան-ակ-անի, ան-պիտ-անի:

Ան-...-անք՝ 18. ան-դրվատ-անք, ան-զրոս-անք, ան-բշնամ-անք, ան-խղճմտ-անք, ան-կապ-անք, ան-կերպար-անք, ան-հարգ-անք, ան-ճեռև-անք, ան-հոս-անք, ան-հրապուր-անք, ան-մեծար-անք, ան-մխիթար-անք, ան-շարշար-անք, ան-պատ-անք, ան-պարծ-անք, ան-սեթևեթ-անք, ան-տանջ-անք, ան-տենչ-անք:

Ան-...-(ա)պես՝ 38. ան-այլայլ-ապես, ան-անչափ-ապես, ան-արդար-ապես, ան-արժան-ապես *և այլն:*

Ան-...-աստ՝ 2. ան-երկիմ-աստ, ան-իմ-աստ:

Ան-...-աստի՝ 2. ան-հավ-աստի, ան-նավ-աստի:

Ան-...(ա)վետ՝ 6. ան-արդյուն-ավետ, ան-հարմար-ավետ, ան-հոտ-ավետ, ան-շահ-ավետ, ան-ուրախ-ավետ, ան-օգտ-ավետ:

Ան-...-ավոր՝ 54. ան-պատշաճ-ավոր, ան-պարտ-ավոր, ան-սահման-ավոր, ան-սերմն-ավոր, ան-սպաս-ավոր, ան-վիր-ավոր, ան-վտանգ-ավոր, ան-փառ-ավոր *և այլն:*

Ան-...-ատակ՝ 1. ան-հիշ-ատակ:

Ան-...-արան՝ 8. ան-ապատ-արան, ան-գործ-արան, ան-դաս-արան, ան-լս-արան, ան-կայ-արան, ան-կաց-արան, ան-հեն-արան, ան-նվագ-արան, ան-պատսպ-արան:

Ան-...-արիմ՝ 1. աճ-հավատ-արիմ:

Ան-...-արկ՝ 1. աճ-սալ-արկ:

Ան-...-ացի(եցի)ցի՝ 4. աճ-արդար-ացի, աճ-իրավ-ացի, աճ-ճշմարտ-ացի, աճ-մա-ացի:

Ան-...-ացու՝ 4. աճ-մաճ-ացու, աճ-մաճկաճ-ացու, աճ-պիտաճ-ացու աճ-սերմ-ացու:

Ան-...-բան՝ 1. աճ-տրամա-բան:

Ան-...-գետ՝ 3. աճ-դիվաճա-գետ, աճ-իճճա-գետ, աճ-ֆաղաֆա-գետ:

Ան-...-գործ՝ 4. աճ-արժաճա-գործ, աճ-բարե-գործ, աճ-կատարելա-գործ, աճ-ձեռա-գործ:

Ան-...-եղ՝ 1. աճ-հաճճար-եղ:

Ան-...-եղեն՝ 3. աճ-իր-եղեն, աճ-մարմն-եղեն, աճ-ճյութ-եղեն:

Ան-...-եստ՝ 1. աճ-պահ-եստ:

Ան-...-ի՝ 15. աճ-ազգ-ի, աճ-աղ-ի, աճ-աճդր-ի, աճ-առաֆին-ի, աճ-արժաճի, աճ-ընտաճ-ի, աճ-բեր-ի, աճ-խոտորնակ-ի, աճ-ճայտն-ի, աճ-ճոռն-ի, աճ-մարդավար-ի, աճ-մեծարգ-ի, աճ-մեկուս-ի, աճ-տեղ-ի, աճ-ֆաղաֆավար-ի:

Ան-...-իկ՝ 26. աճ-աշխարհ-իկ, աճ-առ-իկ, աճ-առողջապահ-իկ, աճ-բարեկեցիկ, աճ-բն-իկ, աճ-բախտաճց-իկ, աճ-տոհմ-իկ *և այլն:*

Ան-...-իմ՝ 1. աճ-ուշ-իմ:

Ան-...-ին՝ 2. աճ-դժվար-ին, աճ-սարճ-ին:

Ան-...-իչ՝ 25. աճ-անչատ-իչ, աճ-բավականացուց-իչ, աճ-բառոյականացուց-իչ, աճ-մեկուս-իչ, աճ-համոզեցուց-իչ, աճ-յուղաճց-իչ *և այլն:*

Ան-...-իք՝ 8. աճ-ամուռ-իճ, աճ-գործ-իճ, աճ-եռախտ-իճ, աճ-կարծ-իճ, աճ-կեղծ-իճ, աճ-հայրենիճ, աճ-ճաշակել-իճ, աճ-սպասել-իճ:

Ան-...-կոտ՝ 2. աճ-դիմաց-կոտ, աճ-պահանչ-կոտ:

Ան-...-մունք՝ 3. աճ-զգաց-մունճ, աճ-մտած-մունճ, աճ-պաշտամունճ:

Ան-...-յա՝ 5. աճ-գործուճ-յա, աճ-երկր-յա, աճ-ժամանակ-յա, աճ-ոսկր-յա, աճ-ֆրխտոճ-յա:

Ան-...-յալ՝ 4. աճ-բաղադր-յալ, աճ-կատար-յալ, աճ-ոռակ-յալ, աճ-սառոռգ-յալ:

Ան-...-յակ՝ 2. աճ-լուսճ-յակ, աճ-ոսպճ-յակ:

Ան-...-յան՝ 1. աճ-ժամանակ-յան:

Ան-...-յուն՝ 7. աճ-բարեճճչ-յուճ, աճ-գնա-յուճ, աճ-զգա-յուճ, աճ-ճճչ-յուճ, աճ-մագնիսազգա-յուճ, աճ-մճա-յուճ, աճ-պայթ-յուճ:

Ան-...-ո՝ 7. աճ-ազնվաբար-ո, աճ-բարեբար-ո, աճ-բար-ո, աճ-խարդախաբար-ո, աճ-խոռաբար-ո, աճ-հաճ-ո, աճ-պիտ-ո:

Ան-...-ող՝ 6. ան-աջ-ող, ան-գիջ-ող, ան-հանդուրժ-ող, ան-հաջ-ող, ան-հասկաց-ող, ան-վարվեց-ող,:

Ան-...-ոն՝ 3. ան-գործ-ոն, ան-զգ-ոն, ան-մեռ-ոն:

Ան-...-ովի՝ 1. ան-խանդ-ովի:

Ան-...-ոտ՝ 5. ան-երկչ-ոտ, ան-հավակն-ոտ, ան-մր-ոտ, ան-նավանց-ոտ, ան-վեհեր-ոտ:

Ան-...-որդ՝ 13. ան-լծ-որդ, ան-կց-որդ, ան-հաջ-որդ, ան-հավակն-որդ, ան-ծայն-որդ, ան-միջն-որդ, ան-մնաց-որդ, ան-նախ-որդ *և այլն:*

Ան-...-որեն՝ 98 անգամ. ան-ազնվ-որեն, ան-ամոթխած-որեն, ան-անջատ-որեն, ան-առարկելի-որեն, ան-աստված-որեն, ան-մարդկայն-որեն, ան-միջական-որեն *և այլն:*

Ան-...-ոց՝ 5. ան-ամր-ոց, ան-բազմ-ոց, ան-խոր-ոց, ան-ծածկ-ոց, ան-մխ-ոց:

Ան-...-ապան՝ 3. ան-պահ-ապան, ան-պահ-պան, ան-պաշտ-պան:

Ան-...-ված՝ 4. ան-հավել-ված, ան-հատ-ված, ան-հար-ված, ան-հերձ-ված:

Ան-...-տու՝ 1. ան-հաշվե-տու:

Ան-...-րորդ՝ 1 ան-երկ-րորդ:

Ան-...-ու՝ 10. ան-ակնատ-ու, ան-այցել-ու, ան-աչառ-ու, ան-երկրպագ-ու, ան-իրավառ-ու, ան-կաշառառ-ու, ան-հոտառ-ու, ան-մտառ-ու, ան-վերահաս-ու, ան-փորձառ-ու:

Ան-...-ություն՝ 868. ան-ազատական-ություն, ան-ազատ-ություն, ան-ազգական-ություն, ան-ազգակց-ություն, ան-ազդեցիկ-ություն, ան-ազնվ-ություն, ան-ազատամիզ-ություն, ան-կողմնասիր-ություն, ան-նամակարգ-ություն, ան-նամանձայն-ություն *և այլն:*

Ան-...-ուկ՝ 11. ան-բան-ուկ, ան-բողբոջ-ուկ, ան-ծած-ուկ, ան-կնդր-ուկ, ան-հեղեղ-ուկ, ան-մազմզ-ուկ, ան-մեռ-ուկ, ան-միջ-ուկ, ան-տաղտ-ուկ, ան-տամ-ուկ, ան-փափ-ուկ:

Ան-...-ուհի՝ 1. ան-ծանոթ-ուհի:

Ան-...-ում՝ 50. ան-արտազատ-ում, ան-գոյաց-ում, ան-զղջ-ում, ան-էակ-ում, ան-խոտոր-ում, ան-հատուց-ում, ան-հերք-ում, ան-մանաց-ում, ան-ներ-ում *և այլն:*

Ան-...-ույթ՝ 6. ան-զայր-ույթ, ան-ծածկ-ույթ, ան-հաս-ույթ, ան-ձանձր-ույթ, ան-շահ-ույթ, ան-վերջ-ույթ:

Ան-...-ույր՝ 2. ան-կափ-ույր, ան-պար-ույր:

Ան-...-ուն՝ 26. ան-արբ-ուն, ան-երեր-ուն, ան-իմաստ-ուն, ան-կանգ-ուն, ան-հաս-ուն, ան-ձեղ-ուն, ան-ճկ-ուն, ան-շարժ-ուն, ան-ճնշ-ուն *և այլն:*

Ան-...-ունի՝ 1. ան-ծեր-ունի:

Ան-....-ունչ՝ 2. աճ–մո–ունչ, աճ–տեր–ունչ:
Ան-....-ունք՝ 2. աճ–թերթեր–ունք, աճ–իրավ–ունք:
Ան-....-ուչ՝ 3. աճ–ճար–ուչ, աճ–վայել–ուչ, աճ–տես–ուչ:
Ան-....-ուստ՝ 2. աճ–կոր–ուստ, աճ–փախ–ուստ:
Ան-....-ուտ՝ 3. աճ–աղ–ուտ, աճ–խախ–ուտ, աճ–հոսան–ուտ:
Ան-....-ուրդ՝ 2. աճ–ճաղ–ուրդ, աճ–խառն–ուրդ:
Ան-....-ք՝ 37. աճ–աղոթ–ք, աճ–բաժին–ք, աճ–խոս–ք, աճ–ծալ–ք, աճ–մուտ–ք, աճ–ջան–ք, աճ–սրուն–ք, աճ–վայրէջ–ք, աճ–վեր–ք, աճ–տես–ք, աճ–օրեն–ք և այլն:

Ան— նախամասնիկի ու վերջածանցավոր հիմքերի զուգորդման պատկերն ավելի պարզ կարող է արտահայտվել հետևյալ աղյուսակով (№ 3):

Երեք աղյուսակների ամփոփիչ տվյալներից կարելի է եզրակացնել, որ ան— ժխտական նախամասնիկի բառակազմական հնարավորություններն առանձնապես լայն ծավալում են գտել երրորդ խմբում $\frac{2642}{6000}$ աղյուսակ 1), որտեղ, ինչպես նշված է, նախատիպ հիմքն ունի մեկից ավելի բաղադրիչներ և ան-ից անկախ՝ ինքնուրույն գործածություն: Բառակազմական տեսակետից երկրորդ արդյունքը նկատվում է հինգերորդ խմբում $\frac{2092}{6000}$, որտեղ ան-ին հաջորդող բառահատվածը նույնպես ունի մեկից ավելի բաղադրիչներ, սակայն այն տարբերությամբ, որ այս նախատիպ հիմքը զրկված է ինքնուրույն գործածությունից (սրանց հետ ան-ը, ինչպես կտեսնենք ստորև, բառակազմական կապերի մեջ է մտել ոչ թե անմիջապես, այլ նախորդ փուլերում). ավելին՝ որոշ կազմություններում նախատիպ հիմքերի իմաստներն արդեն աղոտացել են և առանց ան-ի չեն պահպանվում. անասնական, անասնակեր, անասնամոլ, անասնապես, անասնաուռ, անդուլ, անհողդողդ, անողոք, անաչառ և այլն:

Բառակազմական հետաքրքիր տեսք ունի առաջին խումբը:

Այստեղ նախամասնիկը 6000 բառից 1046-ում ազատորեն միանում է իրեն հաջորդող արմատին, որը, ան-ից անկախ՝ ունի ինքնուրույն կիրառություն:

Ան-ի բառակազմական չորրորդ արդյունքը նկատելի է IV խմբում $\frac{174}{6000}$, որտեղ նախամասնիկին հաջորդած բառամասերը համեմատաբար ավելի բաղմաբաղադրիչ են և, որ կարևոր է, սրանցում հանդես եկող լիիմաստ բառակազմական ձևույթներն առանձին-առանձին կարող են ինքնուրույն գործածություն ունենալ: Այս խմբում ինքնուրույն գործածություն ունի նաև նախատիպ հիմքն ամբողջությամբ:

№	ան-ի դուգորդումը վեր-ջածանցավոր հիմքերի հետ	Հաճախականությունը	Տոկոսներով
1	2	3	4
1	ան—...—արար	154/6000	2,56
2	ան—..—ալ	41/6000	0,68
3	ան—.—ել	96/6000	1,6
4	ան—.—ալի	29/6000	0,48
5	ան—.—ելի	85/6000	1,42
6	ան—.—ապին	2/6000	0,03
7	ան—.—ած	4/6000	0,06
8	ան—.—ածու	1/6000	0,016
9	ան—.—ակ	46/6000	0,77
10	ան—.—ակա	1/6000	0,016
11	ան—.—ակի	3/6000	0,05
12	ան—.—ական	226/6000	3,77
13	ան—.—ային	32/6000	0,53
14	ան—.—ան	10/6000	0,16
15	ան—.—անակ	2/6000	0,03
16	ան—.—անի	2/6000	0,03
17	ան—.—անք	18/6000	0,3
18	ան—.—ապես	38/6000	0,63

1	2	3	4
19	ա՛ն—.—աաա	$\frac{2}{6000}$	0,03
20	ա՛ն—.—աաաի	$\frac{2}{6000}$	0,03
21	ա՛ն—.—ավկա	$\frac{6}{6000}$	0,1
22	ա՛ն—.—ավոբ	$\frac{54}{6000}$	0,9
23	ա՛ն—.—աատավկ	$\frac{1}{6000}$	0,016
24	ա՛ն—.—ապա՛ն	$\frac{8}{6000}$	0,13
25	ա՛ն—.—ապիմ	$\frac{1}{6000}$	0,016
26	ա՛ի—.—ապկ	$\frac{1}{6000}$	0,016
27	ա՛ն—..—ացի	$\frac{4}{6000}$	0,06
28	ա՛ն—.—ացոս	$\frac{5}{6000}$	0,08
29	ա՛ն—.—բա՛ն	$\frac{1}{6000}$	0,016
30	ա՛ն—.—գկա	$\frac{3}{6000}$	0,05
31	ա՛ն—.—գոբծ	$\frac{4}{6000}$	0,06
32	ա՛ն—.—կղ	$\frac{1}{6000}$	0,016
33	ա՛ն—.—կղեն	$\frac{3}{6000}$	0,05
34	ա՛ն—..—կաա	$\frac{1}{6000}$	0,016
35	ա՛ն—..—լ	$\frac{15}{6000}$	0,25
36	ա՛ն—..—լկ	$\frac{26}{6000}$	0,43
37	ա՛ն—...—լիմ	$\frac{1}{6000}$	0,016

1	2	3	4
38	ան—..—ին	$\frac{2}{6000}$	0,03
39	ան—..—իշ	$\frac{25}{6000}$	0,42
40	ան—.·.—իք	$\frac{8}{6000}$	0,13
41	ան—.·.—կոտ	$\frac{2}{6000}$	0,03
42	ան—.. - մուշք	$\frac{3}{6000}$	0,05
43	ան—.—յա	$\frac{5}{6000}$	0,08
44	ան—..—յալ	$\frac{4}{6000}$	0,06
45	ան—..—յակ	$\frac{2}{6000}$	0,03
46	ան—..—յան	$\frac{1}{6000}$	0,016
47	ան—..—յուն	$\frac{7}{6000}$	0,12
48	ան—..—ո	$\frac{7}{6000}$	0,12
49	ան—.—ոգ	$\frac{6}{6000}$	0,1
50	ան—.—ոն	$\frac{3}{6000}$	0,05
51	ան—..ովի	$\frac{1}{6000}$	0,016
52	ան—..—ոտ	$\frac{5}{6000}$	0,08
53	ան—..ոքը	$\frac{13}{6000}$	0,22
54	ան—..—ոքին	$\frac{98}{6000}$	1,63
55	ան—..ոց	$\frac{5}{6000}$	0,08
56	ան—..—ապան	$\frac{3}{6000}$	0,05

1	2	3	4
57	ան—..—վաճ	$\frac{4}{6000}$	0,06
58	ան—..—առու	$\frac{1}{6000}$	0,016
59	ան—..—բորդ	$\frac{1}{6000}$	0,016
60	ան—..—ու	$\frac{10}{6000}$	0,17
61	ան—..—ուքյուն	$\frac{868}{6000}$	14,47
62	ան—..—ուկ	$\frac{11}{6000}$	0,18
63	ան—..—ուհի	$\frac{1}{6000}$	0,016
64	ան—..ում	$\frac{50}{6000}$	0,83
65	ան—..—ույք	$\frac{6}{6000}$	0,1
66	ան—..—ուլր	$\frac{2}{6000}$	0,03
67	ան—..—ուն	$\frac{26}{6000}$	0,43
68	ան—..—ունի	$\frac{1}{6000}$	0,016
69	ան—..—ունչ	$\frac{2}{6000}$	0,03
70	ան—..ունք	$\frac{2}{6000}$	0,03
71	ան—..—ուչ	$\frac{3}{6000}$	0,05
72	ան—..—ուսաս	$\frac{2}{6000}$	0,03
73	ան—..—ուս	$\frac{3}{6000}$	0,05
74	ան—..—ուրդ	$\frac{2}{6000}$	0,03
75	ան—...—ք	$\frac{37}{6000}$	0,62

Ան-ի բառակազմական ամենացածր ընդունակությունը դրսևորվել է երկրորդ խմբում, ուր 6000 նախամասնիկավոր բառերից միայն քառասունվեցում է ան-ին հաջորդել արմատական նախատիպ, որը, սակայն, չունի ինքնուրույն գործածություն։

Գործառական տեսակետից ուշադրության արժանի կապեր է ստեղծվում, երբ ան-ը հարաբերության մեջ է մտնում այնպիսի նախատիպ հիմքերի հետ, որոնք պատկանում են տարբեր խոսքի մասերի (տե՛ս աղյուսակ 2)։ Ան-ը ամենից շատ միացել է գոյական նախատիպի հետ (2823 անգամ), որոնց մի մասի խոսքի մասային պատկանելությունը չի փոխել (հատկապես-ություն վերջածանց ունեցողներին), իսկ մյուս մասին փոխել է՝ դարձնելով նրանց ածական։ 1976 անգամ շփման մեջ է մտել ածական նախատիպերի հետ՝ չփոխելով վերջիններիս խոսքի մասային կարգը։ Մակբայական նախատիպերի հետ հարաբերության մեջ մտնելիս (809 անգամ) միայն բացառում է նախատիպի արտահայտած իմաստը՝ չփոխելով խոսքի մասային պատկանելությունը, քանի որ սրանցում մակբայակերտ ածանցների ընդգծված շեշտն ակնհայտ է։ Համեմատաբար ավելի պակաս է հանդես եկել բայ ու բայարմատ նախատիպերի հետ (335 անգամ)՝ դարձնելով նրանց (նախատիպ բայերին) ածականներ կամ մակբայներ՝ ան-խոսել, ան-խոստովանել (սրանք, իհարկե, մեծ մասամբ ժողովրդական, բարբառային կիրառություններ են)։ Պատկերն ավելի բազմազան է 3-րդ աղյուսակում, որտեղ ան-նախամասնիկը զուգորդության մեջ է մտել 75 տարբեր վերջածանցներ ունեցող նախատիպ հիմքերի հետ։ Այդ հարցը սերտորեն առնչվում է քիչ առաջ նշված ան-ի և նախատիպերի խոսքի մասերի հարաբերությանը, քանի որ մեծ մասամբ վերջածանցներն են պայմանավորում այս կամ այն բառի կամ՝ տվյալ դեպքում՝ նախատիպի որևէ խոսքի մասի պատկանելը։ Այժմ ընդհանրացնենք առավել հաճախ հանդես եկած այն վերջածանցները, որոնք ան— նախամասնիկի հետ շփման կետեր են գտել (այստեղ նկատի չի առնվում նախամասնիկի ու վերջածանցի միջև ընկած բառամասի բաղադրիչների քանակը)։ Վերլուծության ենթակա ցանկում ամենից շատ հանդես են եկել ան-...ություն կազմությամբ բաղադրությունները (868 բառ)։ Այնուհետև գալիս են. ան-...ական (226), ան-աբար (154), ան-...-որեն (98), ան-...-ել (96), ան-...-ելի (85), ան-...-ավոր (54), ան-...-ում (50) ան-...ակ (46), ան-...-ալ (41), ան-...-ապես (38), ան-...-ք (37), ան-...-ալի (29), ան-...-իկ (26), ան-...-իչ (25), ան-...ային (32) և այլն։

Վիճակագրական վերոհիշյալ տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ արդի գրական հայերենում ան— նախամասնիկի տարածման շրջանակները համեմատաբար շատ լայն են։ Դա նշանակում է, որ այդ

մասնիկը կենսունակ է, կանոնավոր ու հաճախ գործածական։ Այդ հասկացությունները չի կարելի նույնացնել։ Սրանցից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ կողմերը։ Ան-ը կենսունակ է, որովհետև, ինչպես տեսանք վերևի օրինակներում, նրանով ածանցվում են բաղմաթիվ նորանոր կազմություններ։ Դա այնպիսի հատկություն է, որով բնորոշվում է նաև մասնիկի անառարկելի ակտիվությունը։ Այս հատկությունը կապված է կանոնավորության հետ։ Ան-մասնիկը կանոնավոր կերպով բաղադրվում է ամենատարբեր հիմքերի ու արմատների հետ՝ բացասելով նրանց արտահայտած իմաստները։ Հարկ է նշել, որ կենսունակությունն ու կանոնավորությունը փոխադարձ պայմանավորվածություն չունեն, քանի որ կանոնավոր երկրորդական ձևույթը կարող է ո՛չ արդյունավետ լինել, ո՛չ էլ՝ շատ գործածական։ Գործածականությունը կապված է այն բանի հետ, թե բառակազմական տարրն ինչպիսի իրացում է գտնում մեր ցանկում։ Այլ կերպ ասած բառակազմական տարրի գործածականությունը կապված է այդ նույն միավորի (տարրի) կիրառման վիճակագրական օրինաչափությունների հետ։ Ան-ով բաղադրված 6000 կազմությունների վիճակագրական հանգամանալի վերլուծությունը գործնականում բացահայտում է անժխտական նախամասնիկի ոչ միայն կենսունակությունն ու արդյունավետությունը, այլև բարձր գործածականությունը։

Անդր(ա)—

Ըստ նշված բառարանների տվյալների անդր(ա)— նախամասնիկով արդի հայերենում հանդես են եկել ընդամենը 79 տարբեր բառեր (արտահայտելով մի բանի վրայից այն կողմ, դեպի այն կողմ իմաստը) որոնցից 65 ունեն մասնիկից անկախ՝ ինքնուրույն գործածություն։

Հաշվի առնելով անդր(ա)— նախամասնիկով կազմված բոլոր բաղադրությունների բառակազմական-կառուցվածքային ընդունակությունները, այդ բառերը նույնպես, դասակարգել ենք հինգ առանձին խմբերի։

Առաջին խմբում անդր(ա)— մասնիկը միանում է մեկ արմատի հետ, որն անկախ նախամասնիկից՝ ունի առանձին կիրառություն. անդրաբեմ, անդրադարձ, անդրա-ծին, անդրա-կարմիր, անդրա-կարոտ, անդրաշխարհ, անդր-լեզու, անդր-շիրիմ և այլն (սրանց թիվը հասնում է տասներեքի)։

Երկրորդ խումբը զուրկ է օրինակներից, քանի որ այս մասնիկը բաղադրություն չի կազմում այնպիսի նախատիպ արմատի հետ, որը չունի ինքնուրույն գործածություն։

Երրորդ խմբում կա 50 բառ։ Սրանց նախատիպերը կազմված են մեկից ավելի բաղադրիչներից։ Նախատիպն ամբողջությամբ առանց անդրա-ի կարող է ունենալ ինքնուրույն կիրառություն. անդրա-դառնալ, անդրա-ճաղարդում, անդր-աշխարհիկ, անդր-լեռնային, անդր-ծովյան,

անդր–կասպյան, անդր–կոկոռդային, անդր–կովկասյան, անդր–կոլիսա–յին, անդր–հեղեղյան, անդր–օվկիանոսյան և այլն։

Չորրորդ խումբը նույնպես զուրկ է օրինակներից։ Հայերենում ան-դրամասնիկը չի միացել երեք և ավելի բաղադրիչներ ունեցող նախատիպ հիմքերի հետ, որոնք ունեննան ինքնուրույն գոյություն։

Հինգերորդ խումբը կազմված է 16 բառից։ Այստեղ մասնիկը միա-ցել է մեկից ավելի լիիմաստ ու երկրորդական բառակազմական ձևույթ-ներից բաղադրված նախատիպ հիմքի հետ, որը չունի ինքնուրույն գոր-ծածություն. անդրա–բերաբար, անդրա–դարձական, անդրա–ձգություն, անդր–աշխարհայնություն, անդր–գերեզմանյան, անդր–երկրյան, անդր–կոլիսյան, անդր–շիրիմյան *և այլն։*

Դասակարգված խմբերի արդյունքներն արտահայտենք աղյուսա-կով (№ 4)։

Աղյուսակի ամփոփիչ տվյալները ցույց են տալիս, որ արդի հայե-րենում անդր(ա)— երկրորդական բառակազմական ձևույթի բառակազ-մական-կառուցվածքային հնարավորությունները շատ համեստ են։ Դրանք, ինչպես տեսնում ենք, հասել են զրոյի հատկապես երկրորդ և չորրորդ խմբերում։ Քանակական այդ նույն տվյալների հիման վրա կարող ենք ընդգծել նաև, որ այս նախամասնիկը հայոց լեզվի ներկա կտրվածքում լինելով կանոնավոր ու գործածական, միաժամանակ, զուրկ է կենսունակությունից ու ակտիվությունից։

Ապ(ա)—

Ապ(ա)— նախամասնիկով (որն արտահայտում է բացասական իմաստ) կազմություններն արդի հայերենում 315 են, որոնցից 179, առանց այդ մասնիկի էլ կարող է ինքնուրույն կիրառվել։ Այժմ քանա-կական տվյալների միջոցով պարզենք ապ(ա)-ի բառակազմական հնա-րավորությունները՝ հետևելով վերոհիշյալ խմբերի բաժանման կարգին։

Առաջին խումբում [ապ(ա)+արմատ, վերջինս ունի առանձին կիրա-ռություն] հանդես են գալիս 41 տարբեր բառեր. ապա–բախտ, ապա–բան, ապա–զոր, ապա–թույն, ապա–ժամ, ապ–ախտ, ապա–կարգ, ապա–դաս, ապա–շնորհ, ապա–տես, ապ–երջանիկ, ապ–ուռոշ *և այլն։*

Երկրորդ խմբում (ապա+արմատ. վերջինս չունի անկախ կիրառու-թյուն) կա 7 բառ. ապա–գով, ապա–շավ, ապա–վարտակ ապ–իկար, ապ–իրատ, ապ–ուղ, ապ–օրեն։

Երրորդ խմբում (ապա+մեկից ավելի բաղադրիչներից կազմված նախատիպ, որն ունի ինքնուրույն գործածություն) հանդես են եկել 138 տարբեր բառեր. ապա–բանել, ապա–բեռոայնություն, ապա–բնակություն, ապա–գազացում, ապա–գաղթեցում, ապա–գաղտնագրել, ապա–դասա–

կարգ, ապա-ազգայնացնել, ապա-շարային, ապա-վիժել, ապա-սեռում, ապա-բողարկում, ապա-օրինական և այլն։

Չորրորդ խմբում (ապա+երեք և ավելի բաղադրիչներից կազմված նախատիպ, որը, ինչպես և վերջինիս լիիմաստ բաղադրիչներն առանձին-առանձին, ունեն անկախ կիրառություններ) հանդես է եկել ընդամենը 4 բառ. ապա-դասակարգային, ապա-դասակարգայնություն, ապ-ազգայնականություն, ապ-ախտավորություն։

Հինգերորդ խմբում (ապա+մեկից ավելի բաղադրիչներից կազմված նախատիպ, որը չունի ինքնուրույն գործածություն) հանդես են եկել 125 առանձին բառեր. ապա-բախտոռեն, ապա-գովություն, ապա-դասակարգայնանալ, ապ-ազգայնացում, ապա-կենտրոնաբիվ, ապա-ճարզանել, ապա-ճորտացում, ապ-իկարություն, ապ-շորեն, ապ-օրինածին, ապ-օրինի և այլն։

Վիճակագրական տվյալները պատկերենք աղյուսակով (№ 5)։

Դատելով աղյուսակի տվյալներից, կարելի է ասել, որ ներկա շրջանում ապ—/ապա— նախամասնիկն ունի միջին կենսունակություն։ Հին կազմություններից (ապա-բախտ, ապա-ժաման, ապա-ժույժ, ապա-ձեռն, ապա-ձայն, ապա-դաս, ապա-շավություն, ապ-աշխատողական, ապա-տես և այլն) *կանոնավոր ու ակտիվ կերպով կազմվում են նաև շատ նոր բաղադրություններ, ինչպես օրինակ.* ապա-գազացնել, ապա-գազացում, ապա-խոշորացնել, ապա-կազմավորում, ապա-դասակարգային, ապ-ազգայնացում, ապա-մագնիսացնել, ապա-մոնատժել և այլն։ *Սա, ինչպես տեսնում ենք, արգասավոր ու արդյունավետ է առանձնապես տերմինների ստեղծման գործում։*

Առ—

Վիճակագրության տվյալների համաձայն առ— նախամասնիկով կազմությունները 863 են, որոնց նախատիպերից միայն 165 ունեն առ-ից անկախ՝ ինքնուրույն գործածություն։

Այս մասնիկը հիմնականում, ինչպես հայտնի է, արտահայտում է տարածության իմաստ։

Այժմ դիտարկենք, թե ինչպես են դրսևորվում վերլուծման ենթակա բաղադրությունների բառակազմական կարողությունները առանձին խմբերում։

Առաջին խմբի բառերի կառուցվածքում առանձնանում է երկու բաղադրիչ՝ մասնիկ և արմատ, ըստ որում նախատիպ արմատն ունի առանձին ու ինքնուրույն գործածություն։ Այդպիսի կազմությունների թիվն այս խմբում հասնում է 35-ի. առ-այժմ, առ-ացք, առ-ավել, առ-երես, առ-էջ, առ-ժամ, առ-կայծ առ-կող, առ-ձեռն, առ-ձույլ, առ-միշտ, առ- շեղ և այլն։

Երկրորդ խմբի բառերի կազմում առանձնանում է նույնպես երկու բաղադրիչ՝ մասնիկ և արմատ։ Սակայն այստեղ լիիմաստ բաղադրիչը՝ նախատիպը, չունի ինքնուրույն կիրառություն։ Դրանք տասնմեկն են. առ–աթուր (ոտնակոխ), առ–աչք, առ–դիր, առ–ընթեր, առ–ժամս, առ–լեփ և այլն։

Աղյուսակ 4

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	13/79	16,46
II	0/79	0
III	50/79	63,29
IV	0/79	0
V	16/79	2 ,25

Աղյուսակ 5

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	41/315	13,02
II	7/315	2,22
III	138/315	43,81
IV	4/315	1,27
V	132/315	41,9

Երրորդ խմբում առանձնացել է 130 բառ։ Սրանց ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպը կազմված է մեկից ավելի բաղադրիչներից. առ–գրություն, առ–աճել, առ–աճեցական, առ–աչակողմ, առ–ասել, առ–արկել, առ–երեսել, առ–երևույթ, առ–ընթերական, առ–լեցուն, առ–կայանալ, առ–նմանում և այլն։

Ինքնուրույն գործածություն ունեցող բազմաբաղադրիչ նախատիպերի հետ առ–ը կառուցվածքային հարաբերությունների մեջ չի մտել։ Այդ իսկ պատճառով չորրորդ խմբում բացակայում են համապատասխան կազմություններ։

Հինգերորդ խմբում առ–ին հաջորդող բառամասը կազմված է մեկից ավելի բաղադրիչներից և չունի ինքնուրույնություն։ Այս խմբում հանդես են եկել մեծ թվով բառեր. այն է՝ 687։

Դրանցից են. առ–աձնական, առ–աճեցականական, առ–աչաբնակ, առ–աչադիմական, առ–ավելել, առ–աֆելուհի, առ–դրել, առ–եղծված, առ–լցել, առ–ձեռնել և այլն։

Խմբերի տվյալներն արտացոլենք աղյուսակով (№ 6)։

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ առ–ն ունի միջինից բարձր արդյունավետություն։ Համեմատաբար նվազ են այն կազմությունները, որոնցում նախատիպերն արտահայտված են միայն արմատով (I

և II խմբեր)։ Իսկ բազմաբաղադրիչ և ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպերով կազմությունները լրիվ բացակայում են (IV խումբ)։ Առ-մասնիկով բառերն առանձնապես շատ են V խմբում, ուր մասնիկին հաջորդող բառամասը չունի անկախ գործածություն։ Ավելին, մի

Աղյուսակ 6

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	35/863	4,06
II	11/863	1,27
III	130/863	15,06
IV	0/863	0
V	687/863	79,61

Աղյուսակ 7

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	47/354	13,28
II	6/354	1,69
III	203/354	57,34
IV	1/354	0,28
V	97/354	27,4

շարք կազմություններում այդ նախատիպերի բառային իմաստները որոշ չափով մթագնվել են և առ— մասնիկը տվյալ իմաստի պահպանման գործում վճռական դեր է կատարում։ Այդպիսի կազմություններից են. առ-ասպել, առ-ասպելական, առ-աստաղ, առ-ավոտ, առ-ավոտել, առ-արկել, առ-արկում, առ-աբել, առ-աբյալ, առ-եղծված և այլն։

Արտ(ա)—

Արտ(ա)— տարածական իմաստ արտահայտող նախամասնիկով ունենք 354 բառ, որոնցից 251 արտ(ա)-ից անկախ՝ ունի ինքնուրույն կիրառություն (30 բառ գործածվել է արտ— տարբերակով)։

Առաջին խմբում ունենք 47 բառ։ Այստեղ արտ(ա)-ին հաջորդող նախատիպ արմատն ունի ինքնուրույն գործածություն. արտա-բնակ, արտա-ժամ, արտա-կենտրոն, արտ-աշխարհ, արտա-տիպ, արտ-ացք և այլն։

Երկրորդ խմբում նախատիպ արմատը չունի ինքնուրույն գործածություն։ Դրանք վեցն են. արտա-գնա, արտա-լա, արտա-լած, արտա-մնա, արտա-մուղ, արտ-ար(մաթ.)։

Երրորդ խմբում ունենք 203 բառ։ Սրանցում նախատիպը բաղկացած է մեկից ավելի բաղադրիչներից։ Նախատիպն ունի ինքնուրույն գործածություն. արտ-ամուսնական, արտա-բերել, արտա-գաղթել, արտա-գծել, արտա-գրոհել, արտա-գեղում, արտա-խուժել, արտա-ծորան, արտա-հաս-

տիֆային, արտա–շնչել, արտ–արգանդային, արտա–տեֆտային, արտա–տպում և այլն։

Չորրորդ խմբում ունենք միայն մեկ բառ (արտա–ժամանակային)։ *Այստեղ դրսևորվել է մասնիկի ոչ ակտիվությունը բաղմաբաղադրիչ այն նախատիպերի նկատմամբ, որոնք ունեն ինքնուրույն գործածություն։*

Հինգերորդ խմբում առանձնացել է 97 բառ։ Սրանց նախատիպերը կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և չունեն ինքնուրույն գործածություն. արտա–բերական, արտա–դրանյուղ, արտա–զատուկ, արտա–ծորական, արտա–հայտչականություն, արտա–հոսություն, արտա–ցոլություն, արտ–երկրել և այլն։

Հարկ ենք համարում բերել նաև արտ–տարբերակով բոլոր բառերը. արտածական, արտածանք, արտածել, արտածելի, արտածելիություն, արտածիչ, արտածում, արտաղիֆային, արտամուսնական, արտամուսնություն, արտանդաստան, արտանց արտաշխարհ, արտառել, արտառոց, արտառոցություն, արտասանել, արտասանելի, արտասանողական, արտասանվածք, արտասանություն, արտասանում, արտասել, արտարգանդային, արտելք, արտերևույթ, արտերկրային, արտերկրայնություն, արտերկրել, արտերկրյա։

Արտ(ա)— մասնիկով բոլոր բառերի քանակական պատկերը ցույց տանք աղյուսակով (№ 7)։

*Ի մի բերելով աղյուսակի տվյալները, կարող ենք ասել, որ արտ(ա)— նախամասնիկն արդի հայերենում ունի կանոնավոր ու արդյունավետ գործածություն։ Այդ տեսակետից նրա կենսունակությունը համեմատաբար միջին դիրք է գրավում։ Արտ(ա)-ի բառակազմական հակումներն առանձնապես ի հայտ են եկել երրորդ խմբում, ուր մասնիկին հաջորդող հատվածն ինքնուրույն է ու միայն նյութական ձևույթից չի կազմված (*արտագաղութային, արտա–գրություն և այլն)։ *Այդ հակումները չեն դրսևորվում երկրորդ և հատկապես չորրորդ խմբերում, ուր՝ առաջինի դեպքում, նախատիպ արմատն ինքնուրույն չէ, իսկ երկրորդի դեպքում նախատիպ հիմքը բաղմաբաղադրիչ է ու ինքնուրույն* (արտալած և արտածամանակային)։

Բաղ(ա)—

Այս նախամասնիկով (միացնել, կցել նշանակությամբ) արդի հայերենում գործածվել է ընդամենը 55 բառ, որի նախատիպ հիմքերից միայն 17-ն ունեն ինքնուրույն գործածություն։ Առաջին խմբում օգտագործվել են միայն երկու բառ(բաղա–ձայն և բաղ–հոդ), *երկրորդում՝* երկու[բաղադիր և բաղ–ազն–համազգի), *երրորդում՝ 14 բառ* (բաղա–դրական, բաղակցել, բաղա–ձայնական, բաղ–կապել, բաղ–ձյուսել և այլն), *չորրորդում չի գործածվել, հինգերորդում՝ 36 բառ* (բաղադրամաս, բաղակցություն, բա–

դածայնություն, բաղբաղել, բաղդատական, բաղկացական, բաղկացում, բաղձյուսական և այլն)։

Թվական տվյալները ցույց են տալիս, որ բաղ(ա)— մասնիկը ժամանակակից հայերենում արդյունավետ ու գործուն չէ և չի մասնակցում նորակազմություններին։

Բերված տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 8)։

Բաց(ա)-մասնիկը (ներառ, մի կողմ իմաստով) արդի հայերենում բաղադրվել է 90 կազմություններում, որոնց նախատիպերից միայն 31 ունի ինքնուրույն գործածություն։

Առաջին խմբում ունենք ութ կազմություն (բացակա, բացականչ, բացահայտ, բացահատ, բացածիգ, բացառ, բացառնակ և բացոռոշ), *երկրորդում՝ երկու* (բացարկ, բացերև), *երրորդում՝ 22* (բացականչել, բացահայտել, բացածայնել, բացամերժել, բացանավել, բացատոռոնել, բացոռոշել և այլն), *չորրորդում՝ միայն 1* (բացառնակապաշտություն), *հինգերորդում՝ 57* բացակայել, բացակաճչություն, բացահայտել, բացառական, բացասացություն, բացառնակոռեն, բացոռոշություն և այլն)։

Վիճակագրական թվերը ցույց են տալիս, որ տվյալ մասնիկը մեր լեզվի համաժամանակյա վիճակում բառակազմական գործուն դեր չի խաղում, հետևապես՝ զուրկ է կենսունակությունից ու ակտիվությունից։ Բառակազմական ամենացածր հնարավորությունն արտացոլվել է երկրորդ ու չորրորդ խմբերում, ուր, ինչպես գիտենք, առաջինի նախատիպ արմատը չունի ինքնուրույն գործածություն, իսկ մյուսում նախատիպն ունի և՛ ինքնուրույն գործածություն, և՛ երեքից ավելի բաղադրիչներ։

Վիճակագրական տվյալներն արտահայտենք հետևյալ աղյուսակով (№ 9)։

Գեր(ա)—

Գեր(ա)— մասնիկը, ինչպես հայտնի է, արտահայտում է իրեն հաջորդող բառամասի նշանակությունից ավելի ու բարձր բառակազմական իմաստ։ Քանակական տվյալները ցույց են տալիս, որ նման կազմությունները մեր լեզվում 376 են, որոնցից 320 ունեն գեր(ա)-ից անկախ՝ ինքնուրույն գործածություն։ Քննենք ըստ առանձին խմբերի։ Առաջին խմբում մասնիկին հաջորդում է մեկ արմատ, որն ունի ինքնուրույն կիրառություն։ Ահա այդ կարգի 82 բաղադրություն. գերագահ, գերագույն, գերածպիտ, գերածավալ, գերակառուց, գերաճզոր, գերաշնորհ, գերավաճառք, գերատեսակ, գերափայլ, գերբնտիր, գերմարդ, գերոլորտ *և այլն։*

Երկրորդ խմբում դարձյալ ունենք նույն կազմությունը, միայն այստեղ մասնիկին հաջորդող արմատը չունի ինքնուրույն կիրառություն։ Այդպիսի կազմությունները 12-ն են. գերագո, գերաճուշ, գերապանծ, գերա-

պարծ, գերատրոհ, գերարժան, գերարփ, գերերուկ, գերփառ, գերզգա, գերիմաց, գերհրաշ:

Երրորդ խմբում մասնիկին հաջորդող հատվածն ունի մեկից ավելի բաղադրիչներ և ինքնուրույն գործածություն: Այդ խմբում հանդես են եկել

Աղյուսակ 8

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{2}{55}$	3,64
II	$\frac{2}{55}$	3,64
III	$\frac{14}{55}$	25,45
IV	$\frac{0}{55}$	0
V	$\frac{36}{55}$	65,45

Աղյուսակ 9

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{8}{90}$	8,89
II	$\frac{2}{90}$	2,22
III	$\frac{22}{90}$	24,44
IV	$\frac{1}{90}$	1,11
V	$\frac{57}{90}$	63,33

Համեմատաբար մեծ թվով բառեր (234). գերագանձել, գերադասել, գերադրվատել, գերազնվություն, գերածախսել, գերակատարում, գերակշռում, գերացրել, գերառատություն, գերարբում, գերդիմացկուն, գերզգայուն, գերիշխան, գերլարվածություն, գերկարճալիք *և այլն:*

Չորրորդ խմբում նախամասնիկին հաջորդում է երեք և ավելի բաղադրիչներից կազմված բառահատված, որն օժտված է ինքնուրույն կիրառմամբ: Այդպիսիները չորսն են. գերամեծարել, գերամեծարություն, գերամեծարում, գերամաերադիտակային: *Այստեղ հիմնականում ճյուղավորման է ենթարկվել մեծ արմատը:*

Հինգերորդ խմբում գեր(ա)-ով կազմությունները 44-ն են: Սրանցում մասնիկին հաջորդող բառամասը զուրկ է ինքնուրույն գործածությունից. գերբեռնություն, գերադասելի, գերազարդություն, գերապատվություն, գերափայլություն, գերսնություն *և այլն:*

Արդյունքներն ամփոփենք աղյուսակով (№ 10):

Աղյուսակի քանակական տվյալների վրա հենվելով, կարող ենք ասել, որ գեր(ա)— նախամասնիկն արդի հայերենում ունի համեմատաբար միջին կենսունակություն: Նրա բառակազմական ակտիվությունը, ինչպես տեսնում ենք, առավելապես դրսևորվել է ինչպես մեկ, այնպես էլ մեկից ավելի բաղադրիչներ ունեցող նախատիպ հիմքերի հետ միանալիս, որտեղ վերջիններս կարողանում են հանդես գալ նաև իբրև ինքնուրույն բառեր: Այս մասնիկով հին կազմությունների (գերերեակ, գերաշնորհ, գերապա-

տիվ և այլն) կողքին վերջին ժամանակներս աղատորեն հանդես են գալիս մի շարք նորերը. գերիզոր, գերձայնային, գերկարճալիք, գերհաղորդականություն, գերակետիկ, գերմանրադիտակ, գերտաֆացուցիչ, գերֆունկցիա, գերպլանային, գերլաստիկ և այլն։

Դեր—

Աղյուսակ 10

Թուիմբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	82/376	21,81
II	12/376	3,19
III	234/376	62,23
IV	4/376	1,06
V	44/376	11,7

Աղյուսակ 11

Թուիմբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	6/21	28,57
II	0/21	0
III	'10/21	47,62
IV	'1/21	4,76
V	4/21	19,05

Դեր— նախամասնիկն արտահայտում է իրեն հաջորդող բառահատվածի ցույց տված իմաստին փոխարինող նշանակություն։ Արդի հայերենում այն կենսունակ ու ակտիվ չէ, նրանով կազմվել է միայն 21 բառ, որոնցից առաջին խմբում՝ 6. դերկոմս, դերանյութ, դերաճուն, դերբայ, դերնիշ, դերշաֆար, երկրորդում չի գործածվել, երրորդում՝ 10. դերանվանական, դերանվանել, դերբայական, դերգավառապետ, դերծովակալ, դերհյուպատոս, դերհյուպատոսություն, դերհյուսիսական, դերնախագահ, դերնախագահություն. չորրորդ խմբում՝ մեկ բառ. դերծովակալություն. հինգերորդ խմբում՝ չորս բառ. դերանվանաբար, դերանունաբար, դերանունական և դերանունություն։

Դեր-ին հաջորդող 21 բառամասերից 17-ն ունեն ինքնուրույն գործածություն։ Դեր-ով արտահայտված կազմությունների քանակական տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 11)։

Դժ—

Դժ— նախամասնիկն արտահայտում է իրեն հաջորդող բառահատվածի նշանակությանը բացասող իմաստ։ Այդ մասնիկի միջոցով բաղադրված կազմություններն այժմ մեր լեզվում ընդամենը 27-ն են, որոնցից միայն յոթի նախատիպերն ունեն ինքնուրույն գործածություն։

Դժ—ն արդի հայերենում կենսունակ նախամասնիկ չէ, նրանով նորակազմություններ հանդես չեն գալիս։ Այդ մասին են վկայում բերված քա-

Նակական տվյալները՝ ցույց տանք ըստ առանձին խմբերի՝ Առաջին խումբը պարունակում է վեց բառ. դժբախտ, դժգոհ, դժգույն, դժկամ, դժկիեցի և դժպատեհ: Երկրորդ խմբում համապատասխան կազմություն հանդես չի եկել, իսկ երրորդում՝ միայն մեկ բառ՝ դժգոհություն: Չորրորդ խմբում դարձյալ հանդես չի եկել, հինգերորդն ունի 20 բառ. դժբախտաբար,

Աղյուսակ 12

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{6}{27}$	22,22
II	$\frac{0}{27}$	0
III	$\frac{1}{27}$	3,7
IV	$\frac{0}{27}$	0
V	$\frac{20}{27}$	74,07

Աղյուսակ 13

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{49}{177}$	27,68
II	$\frac{1}{177}$	0,56
III	$\frac{99}{177}$	55,93
IV	$\frac{5}{177}$	2,82
V	$\frac{23}{177}$	12,99

դժգոհել, դժգունաճալ, դժգունել, դժգունություն, դժկամաբար, դժկեցություն և այլն, որոնց նախատիպերը կազմված են մեկից ավելի բաղադրիչներից և չունեն ինքնուրույն գործածություն:

Այս մասնիկի քանակական տվյալները նույնպես ամփոփենք աղյուսակով (№ 12):

ենթ(ա)—

Նախամասնիկն արդի հայերենում գործածվել է 177 կազմություններում, որոնցից 153 առանց ենթ(ա)-ի կարող է ինքնուրույն կիրառվել: Ենթ(ա)— մասնիկը միանալով այս կամ այն բառին, նրան հիմնականում հաղորդում է տարածական իմաստ:

Քանակական տվյալները ցույց են տալիս, որ այս մասնիկն ունի միջինից ցածր կենսունակություն: Դիտենք ըստ առանձին խմբերի: Առաջին խմբում ենթ(ա)-ն մասնակցել է 49 կազմության, որոնց լիիմաստ ձևույթներն ունեն ինքնուրույն կիրառություն: Օրինակ. ենթաբաժին, ենթագլուխ, ենթալեզու, ենթակետ, ենթաձայն, ենթաշերտ, ենթավարպետ, ենթատեքստ, ենթաօձիք և այլն:

Երկրորդ խմբում կա միայն մեկ բառ (ենթամենա), որի նախատիպը չունի ինքնուրույն գործածություն: Երրորդում հանդես է եկել 99 բառ: Սրանց նախատիպերը բաղկացած են մեկից ավելի բաղադրիչներից և ունեն մասնիկից անկախ՝ ինքնուրույն գործածություն. ենթաբազմություն,

ենթաբաժանում, ենթագրություն, ենթախմբավորում, ենթահնչույթ, ենթաոճական, ենթաշրջանային, ենթավերնագիր, ենթատեսուչ և այլն։

Չորրորդ խմբում նախատիպն ունի երեք և ավելի բաղադրիչներ ու ինքնուրույն կիրառություն։ Դրանք հինգն են. ենթահաջորդականություն, ենթամանրադիտակային, ենթավարձակալական, ենթալվարձակալություն և ենթավարձակալում։

Հինգերորդ խմբում նախատիպը նույնպես բաղմաբաղադրիչ է, սակայն՝ զուրկ ինքնուրույն գործածությունից։ Դրանք 23-ն են. ենթադասություն, ենթածովյա, ենթակայականություն, ենթածգություն, ենթավարձություն և այլն։

Ինչպես տեսնում ենք այս մասնիկի բառակազմական հնարավորությունները հիմնականում արտահայտվում են երրորդ խմբի կազմություններում, ինչպես նաև՝ առաջին ու հինգերորդ խմբերում։

Նշված քանակական ցուցանիշներն արտահայտենք աղյուսակային տեսքով (№ 13)։

Ընդ—

Ժամանակակից հայերենում ընդ— նախամասնիկն ունի միջին կենսունակություն։ Այն կիրառվել է 390 կազմություններում, որոնց նախատիպերից 175 ունեն անկախ մասնիկից՝ ինքնուրույն կիրառություն։ Այս մասնիկը նույնպես իր նախատիպին տալիս է տարածական նշանակություն։ Սրա բառակազմական-կառուցվածքային կարողությունները ցույց տանք ըստ առանձին խմբերի։

Առաջին խմբում ընդ-ը միացել է միարմատ նախատիպի հետ, որն ունի ինքնուրույն գործածություն։ Այդպիսիները 16-ն են. ընդամեջ, ընդառաջ, ընդդեմ, ընդհակառակ, ընդհանուր, ընդհատակ, ընդմեջ, ընդմիշտ, ընդունայն և այլն։

Երկրորդ խմբում ոչ ինքնուրույն կիրառություն ունեցող միարմատ նախատիպերն օգտագործվել են յոթ անգամ. ընդերք, ընդկալ, ընդհանուր, ընդնմին, ընդոծին, ընդոստ, ընդսմին։

Ընդ-ի բառակազմական-կառուցվածքային հակումներն առանձնապես զգացվում են երրորդ խմբում։ Այստեղ մեկից ավելի բաղադրիչ ունեցող և ինքնուրույն գործածվող նախատիպերն օգտագործվել են 159 անգամ. Դրանցից են. ընդաղոտաճալ, ընդգրկել, ընդդիմադրել, ընդդիմախոսություն, ընդերկարում, ընդլեզվական, ընդհանրացնել, ընդվայրաբանել, ընդվայրախոսություն, ընդօրինակություն և այլն։

Չորրորդում մասնիկն ունի բառակազմական ըստ կարողություն։

Հինգերորդ խմբում ընդ-ի բառակազմական ընդունակությունները հասնում են բարձրակետին։ Մեկից ավելի բաղադրիչներ ունեցող նախատիպերը, որոնք չունեն ինքնուրույն գործածություն, այստեղ հանդես են

եկել 208 անգամ. ընդառաջության, ընդարձակասեր, ընդգծելի, ընդգրկվածություն, ընդդիմաբերություն, ընդդիմադարձում, ընդդիմադրելիություն, ընդդիմակարող, ընդդիմաճեճություն, ընդմիջոցեն, ընդվայրաբույս, ընդվզականություն և *այլն:*

Ընդ-ով հանդես եկող մի շարք կազմություններում նախատիպի իմաստն աղոտացել է և առանց մասնիկի այն ընդհանրապես չի գիտակցվում: Այդպիսի կազմություններից են. ընդամին, ընդարմանալ, ընդարմացում, ընդերմին, ընդարմիկ, ընդարմություն, ընդոստախոս, ընդոսացուցիչ և *այլն:*

Մասնիկի քանակական տվյալներն արտացոլենք աղյուսակով (№ 14):

Ըստ—

Մասնիկն արդի հայերենում գործուն ու կենսունակ չէ: Նրանով ունենք ընդամենը 13 կազմություն. ըստամյա, ըստամսյա, ըստարտաղել *(հնց.)* ըստգործյա, ըստգտանիք, ըստգտելի, ըստերդյա, ըստերևույթին, ըստիճյան, ըստմասնյա, ըստորում, ըստորյա:

Հակ(ա)—

Այս նախամասնիկով արդի հայերենում ունենք 342 կազմություն, որոնց նախատիպերից 293 ունեն ինքնուրույն կիրառություն: Սա դրվելով բառասկզբին, հակադրվում է իրեն հաջորդող բառահատվածի արտահայտած իմաստին:

Ըստ առանձին խմբերի ցույց տանք հակ(ա)— մասնիկի բառակազմական հնարավորությունները:

Մասնիկի միացումը մեկ ինքնուրույն գործածություն ունեցող արմատի հետ (առաջին խումբ) տեղի է ունեցել 64 անգամ. հակաական, հակաատում, հակաբեռ, հակագազ, հակադաս, հակակեներոն, հակահարված, հակամարտ, հակիմաստ և *այլն:*

Ինքնուրույն, անկախ գործածություն չունեցող (երկրորդ խումբ) արմատի հետ բաղադրություն է կազմել ընդամենը վեց անգամ. հակադիր, հակակ *(հակակշռող)* հակակիր, հակահար, հակահարձակ, հակամիտ:

Մեկից ավելի բաղադրիչներ ունեցող, ինքնուրույն գործածվող բառամասի հետ կառուցվածքային կապերի մեջ է մտել (երրորդ խումբ) 221 անգամ. հակաազգային, հակաատոմային, հակաբուրժուական, հակաթուրքական, հակակառավարական, հակակուսակցական, հակահիտլերյան, հակահրեղեային, հակամեղադրական, հակասիճուկ, հակասնկային, հակատարամաբանական, հակաօդային և *այլն:*

Բազմաբաղադրիչ (երեք և ավելի) ու ինքնուրույն գործածություն ունեցող կազմությունների (չորրորդ խումբ) հետ հակ(ա)— մասնիկը միացել է ութ անգամ. հակաատոմաջրաբանական, հակաատոմջրապահական,

հակաբարոյականություն, հակազաղութակալական, հակազաղութակալություն, հակաազգայնականություն, հակասահմանադրականություն:

Մեկից ավելի լիմասա ու երկրորդական ձևույթներ ունեցող, սակայն ինքնուրույն չկիրառվող (հինգերորդ խումբ) բաղադրությունների հետ

Աղյուսակ 14

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	16/390	4,1
II	7/390	1,79
III	159/390	40,77
IV	0/390	0
V	208/390	53,33

Աղյուսակ 15

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	64/342	18,71
II	6/342	1,75
III	221/342	64,62
IV	8/342	2,34
V	43/342	12,57

միացել է 43 անգամ. հակաբանություն, հակաբուժություն, հակադարձելիություն, հակակրանք, հակաճառություն, հակառազմայնություն, հակասաբան, հակասականություն, հակասություն, հակաճառել, հակացավային, հակացուցել և այլն:

Բերված քանակական տվյալների վրա հենվելով, կարող ենք ընդհանրացնել, որ հակ(ա)— նախամասնիկն արդի հայերենի կենսունակ, գործուն ու ակտիվ միավորներից է: Եթե համեմատության մեջ դնենք մյուս նախամասնիկների հետ, ապա նշված հատկություններ ունակից այն միջին դիրք է գրավում: Նա ակտիվորեն մասնակցում է նաև նորակազմություններին՝ առանձնապես բայակազմությանը: Բառակազմական հիմնական կարողությունները դրսևորված են երրորդ խմբում:

Նշված թվերն արտացոլենք աղյուսակով (№ 15):

Համ(ա)—

Այս մասնիկն իրեն հաջորդող բառամասին հաղորդելով «ամեն», «միասին», «նույն» բառակազմական նշանակություններ, արդի հայերենում հանդես է եկել 740 բաղադրություններում, որոնց նախատիպ հիմքերից 560-ը ունեն ինքնուրույն գործածություն:

Ցույց տանք ըստ առանձին խմբերի:

Ինքնուրույն գործածություն ունեցող մեկ արմատի հետ բառակազմական հարաբերության (առաջին խումբ) մեջ է մտել 186 անգամ. համաբողբոջ, համագիծ, համադաս, համազույգ, համակազմ, համակարգ, հա-

մամիտ, համացույց, համատեղ, համատոհմ, համընկեր, համակից, համիմաստ և այլն։

Երկրորդ խմբում դարձյալ միանում է մեկ արմատի հետ, սակայն արմատն այստեղ մասնիկից անկախ կիրառություն չունի։ Դրանք 23-ն են համաբար, համադիր, համակիր, համաձուն, համատարած, համընթաց, համկալ, համույթ և այլն։ *Այստեղ ուշագրավ է նաև այն, որ երկու ածանց միանալով իրար (համաբար, համույթ) առանձին բառ են կազմել (սրանցից մեկն, իհարկե, դիտվում է որպես արմատ)։*

Մեկից ավելի բաղադրիչներից կազմված նախատիպերը, որոնք ինքնուրույն կիրառություն ունեն, այս մասնիկի համար ստեղծում են (երրորդ խումբ) բառակազմական-կառուցվածքային ամենալայն պայմաններ։ Համ(ա)-ն այստեղ ակտիվորեն մասնակցում է 368 բաղադրությունների. համաբազմապատկիչ, համագործակից, համագումարային, համադասել, համաժամանակյա, համաժառանգում, համալսարանական, համակաղապարիչ, համահասակակից, համածուվածք, համահամբարային, համամարդկային, համապետական և այլն։

Բառակազմական համեմատաբար ավելի նվազ հարաբերություններ մեջ է մտել բազմաբաղադրիչ (երեք և ավելի) նախատիպերի հետ (չորրորդ խումբ), որոնք ունեն ինքնուրույն գործածություն։ Դրանք ընդամենը վեցն են. համաքագավորություն, համանշանակություն, համաշխարհաքաղաքացիություն, համաչափականություն, համաչափելիություն, համախոսլամականություն։

Մասնիկն ակտիվություն է ցուցաբերում նաև մեկից ավելի բաղադրիչ ունեցող նախատիպերի նկատմամբ, որոնք, սակայն, չունեն ինքնուրույն կիրառություն (հինգերորդ խումբ)։ Սրանց թիվը հասնում է 157-ի. համաբանելի, համագնդեցի, համագործություն, համալեզվություն, համակարծիքություն, համակողմանիորեն, համակցություն, համահնչյունություն, համաձայնագրային, համաշխարհայնություն, համերգահրապարակ, համընթացորեն և այլն։

Ի մի բերելով նշված քանակական տվյալները, կարող ենք ասել, որ արդի հայերենում համ(ա)— նախամասնիկն ունի միջինից բարձր կենսունակություն։ Այն կանոնավոր կերպով բառակազմական-կառուցվածքային հարաբերությունների մեջ է մտնում թե՛ միաբաղադրիչ և թե՛ բազմաբաղադրիչ նախատիպերի հետ, չխորշելով նույնիսկ առանձին ածանցից, որի հետ ինքնուրույն բառ է կազմում (համաբար, համույթ) վերջիններիս մեջ, կարծում ենք, պիտի միայն երկրորդ բաղադրիչն ածանց համարել։ Նկատելի է նաև, որ այս մասնիկի ակտիվ ու արդյունավետ գործունեության համար պարարտ հող է ստեղծվել առաջին, երրորդ ու հինգերորդ խմբերում, ուր հանդես են եկել թե՛ միարմատ և թե՛ բազմաբաղա-

դրիչ նախածիպեր, որոնք առաջինում ու երրորդում ունեն ինքնուրույն գործածություն, իսկ հինգերորդում՝ ոչ։

Տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 16)։

Հարա—

Հար(ա)— նախամասնիկը ժամանակակից հայերենում գործածվել է 196 կազմություններում։ Սրանց նախածիպերից 133-ն ունեն ինքնուրույն գործածություն։ Այս նախամասնիկը միանալով նախածիպ հիմքերին, նրանց տալիս է ճարել կամ միշտ իմաստները։ Հարկ է նշել, որ վերջին (միշտ) իմաստով հանդես եկող բառերում հար(ա)- մասնիկը Մ. Աբեղյանը իր վերոհիշյալ գրքում դիտում է որպես ինքնուրույն արմատ (հարատեվել, հարաճուն և այլն)։ Կարծում ենք, որ հար (միշտ) արմատն այժմ իմաստի աղոտացման հետևանքով մասնիկի վերածվելու ուղի է բռնել։

Բառակազմական իրողությունները դիտենք ըստ առանձին խմբերի։

Ինքնուրույն գործածություն ունեցող մեկ արմատի հետ (առաջին խումբ) հար(ա)— մասնիկը բառակազմական հարաբերության մեջ է մտել 60 բաղադրություններում. հարաբարդ, հարածուխ, հարակից, հարաճուն, հարաձայն, հարաճոճ, հարաճման, հարատիպ, հարափայլ, հարափոխ և այլն։

Ինքնուրույն գործածություն չունեցող արմատի հետ (երկրորդ խումբ միանում է 10 բաղադրություններում, հարագա, հարագնաց, հարադիր, հարալեզ, հարախոս, հարածածան, հարակառ, հարատև և հարափիփիք։

Ինքնուրույն գործածվող, մեկից ավելի բաղադրիչներից կազմված նախածիպ հիմքերին միացել է 73 անգամ (երրորդ խումբ). հարաբարվել, հարազեկույց, հարախառնել, հարակացություն, հարաճյուսել, հարաձևություն, հարամճայուն, հարատևել, հարացուցիչ, հարափոխել, հարաբարշել, հարբնթացություն և այլն։

Ինքնուրույն գործածվող, երեք և ավելի բաղադրիչ ունեցող նախածիպերի (չորրորդ խումբ) հետ չի գործածվել։

Ինքնուրույն չգործածվող, մեկից ավելի բաղադրիչներով նախածիպերի (հինգերորդ խումբ) հետ հանդես է եկել 53 անգամ. հարաբերական, հարագնաց, հարադրել, հարախաղաց, հարակապել, հարակցաբար, հարամճաց, հարաշարժային, հարերգություն և այլն։

Կարող ենք եզրակացնել, որ Հար(ա) —նախամասնիկը ժամանակակից հայերենում ունի միջինից ցածր կենսունակություն ու ակտիվություն։ Կարելի է ընդգծել նաև, որ տվյալ մասնիկի ժամանակային իմաստով կազմված բաղադրություններն ավելի մեծ տեղ են գրավում (տե՛ս ցանկը)։ Այս հանգամանքը, սակայն, չի խոսում այն մասին, որ վերջին նշանակությամբ հանդես եկող հար-ը արմատ է։ Հար-ը երկու իմաստներով

էլ հավասարապես դիտում ենք նախամասնիկ այն պատճառով, որ, նախ ինքնուրույն չի գործածվում արդի լեզվում և երկրորդ՝ իմաստային ինֆորմացիայի տեսակետից ոչ մի առավելություն չունի՝ ինչպես մյուս նախամասնիկների, այնպես էլ այս մասնիկի ճառել, կից իմաստի նկատմամբ։ Ընդհակառակը, այդ առավելությունը է. Բ. Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանում պատկանում է ճար-ի կից իմաստին (առաջին նշանակություն), իսկ ժամանակային իմաստն արտահայտվում

Աղյուսակ 16

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	186/740	25,14
II	23/740	3,11
III	368/740	49,73
IV	6/740	0,81
V	157/740	21,22

Աղյուսակ 17

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	60/196	30,61
II	10/196	5,1
III	73/196	37,24
IV	0/196	0
V	53/196	27,04

է երրորդ նշանակությամբ։ Հետևապես՝ ճառել, կցել նշանակությամբ ճար-ը դիտել ածանց, իսկ ժամանակային նշանակությամբ՝ արմատ, ճիշտ չէր լինի։ Ճար-ը երկու իմաստներով էլ մասնիկի է վերածվել։

Քանակական տվյալներն արտացոլենք հետևյալ աղյուսակում (№ 17)։

Մակ(ա)—

Օգտագործվել է 146 կազմություններում, որոնց նախատիպերից 111 ունեն ինքնուրույն գործածություն։ Դա նշանակում է, որ այն ժամանակակից հայերենում ունի միջինից բավականին ցածր կենսունակություն։ *Մակ(ա)*— մասնիկը նախատիպին հաղորդում է տարածական իմաստ, ավելի կոնկրետ՝ վրա նշանակությունը։

Նկարագրենք ըստ առանձին խմբերի։

Որպես նախատիպ հանդես եկող մեկ արմատի հետ (առաջին խումբ), որն ունի ինքնուրույն կիրառություն, բաղադրություն է կազմել 28 անգամ. մակբույս, մակագիծ, մակազարդ, մակալեզու, մակակետ, մակաձայն, մակատառ, մակուղեղ և այլն։

Ինքնուրույն գործածություն չունեցող արմատի հետ (երկրորդ խումբ) միացել է ընդամենը հինգ անգամ. մակաբույծ, մակադիր, մակդիր, մակընթաց, մակոսկր։

Ինքնուրույն գործածվող, մեկից ավելի բաղադրիչներով (երրորդ խումբ) նախատիպերի հետ բաղադրվել է 83 անգամ. մակաբաժանում, մակագամվածք, մակագոդվածք, մակածական, մակակտրվածք, մակատեսք, մակերևույթ, մակընձյուղել և այլն։

Բաղմաբաղադրիչ և ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպերի հետ (չորրորդ խումբ) հանդես չի եկել։

Ինքնուրույն չգործածվող, մեկից ավելի բաղադրիչներով նախատիպերի հետ (հինգերորդ խումբ) բառակազմական հարաբերությունների մեջ է մտել 30 անգամ. մակաբերական, մականվանություն, մակբայաբար, մակերեսաբար, մակերեսային, մակերեսորեն, մակոսկրոտույց, մակտառություն, մակօղակ և այլն։

Ստորև բերված աղյուսակում արտացոլենք թվական տվյալները (№ 18)։

Ներ(ա)—

Ներ(ա)-ով բաղադրված կազմությունները հանդես են եկել 375 անգամ, որոնցից 291-ը կարող է անկախ մասնիկից՝ ինքնուրույն կիրառվել։ Այս մասնիկն իրեն հաջորդող բառահատվածին հաղորդում է տեղային, տարածական իմաստ։

Սրա բառակազմական յուրահատկություններն արտահայտենք ըստ տարբեր խմբերի։

Անկախ կիրառություն ունեցող պարզ բառերի հետ բառակազմական միասնություն է ստեղծել 29 կազմություններում (առաջին խումբ). ներագույց, ներածանց, ներաշխարհ, ներգաղթ, ներուժ և այլն։

***Անկախ կիրառություն** չունեցող արմատների հետ միացել է (երկրորդ խումբ) ընդամենը չորս անգամ.* ներահայաց, ներամիտ, ներդիր և ներմուտ։ *Մեկից ավելի բաղադրիչներ ունեցող և ինքնուրույն գործածվող բառահատվածի հետ ներ(ա)-ն հանդես է եկել 26 անգամ.* ներադիտակ, ներզրենություն, ներածել, ներակրթել, ներաճել, ներակցում, ներբջջային, ներգրավել, ներգործել, ներկուսակցական, ներմղում, ներցայտում, ներփորում և այլն։

Բաղմաբաղադրիչ բառահատվածների հետ, որոնք ինքնուրույն կիրառություն ունեն (չորրորդ խումբ), չի բաղադրվել։

Անկախ գործածություն չունեցող մեկից ավելի բաղադրիչներով կազմված բառահատվածների հետ միացել է 80 անգամ (հինգերորդ խումբ) ներադրել, ներառյալ, ներհայում, ներփորություն և այլն։

Դիտարկելով թվական տվյալները, կարող ենք ասել, որ ներ(ա)— մասնիկը ժամանակակից հայերենում հանդես է գալիս միջինից ցածր կենսունակությամբ։ Նրա ակտիվությունն առանձնապես աչքի է ընկնում երրորդ խմբի բառերում, ուր ավելի հաճախ է գուգորդվում —ում ածան-

ցով վերջացող բառահատվածների հետ. ներարկում, ներգծում, ներգործում, ներգրավում, ներզատում և այլն։

Մասնիկի բառակազմական պատկերը ցույց տանք աղյուսակով (№ 19)։

Աղյուսակ 18

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	28/146	19,18
II	5/146	3,42
III	83/146	56,85
IV	0/146	0
V	30/146	20,55

Աղյուսակ 19

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	29/375	7,73
II	4/375	1,07
III	262/375	69,87
IV	0/375	0
V	80/375	21,33

Շաղ—

Մասնիկն արտահայտում է միացնելու, կապելու իմաստ: Արդի հայերենում չունի կենսունակություն ու տարածում։ Նրա գործածությունը սահմանափակվում է միայն շաղկապ բառով ու նրա մի քանի ճյուղավորումներով (ընդամենը 11 բառ). շաղկապ *(առաջին խումբ),* շաղկապական, շաղկապային, շաղկապավոր, շաղկապել, շաղկապիչ, շաղկապվել, շաղկապություն, շաղկապում *(երրորդ խումբ),* շաղկապականություն *(չորրորդ խումբ),* շաղկապեկի *(հինգերորդ խումբ)։*

Ջ—

Արտահայտում է ժխտման, բացասման իմաստ։ Արդի հայերենում կենսունակ ու գործուն չէ։ Ունենք 36 բաղադրություն, որից 31-ն ունի չ-ից անկախ՝ ինքնուրույն գործածություն։ Այն գերազանցապես ժխտում է բայական իմաստները։ Օրինակ. չբեր, չբերվ, չգետ, չգոյ, չճաս և այլն *(առաջին խումբ, 9 բառ). երկրորդ խումբ՝ մեկ բառ* (չիվ), *երրորդ խմբում՝ 22 բառ.* չգոյանալ, չէանալ, չճանդուրժել, չունևոր և այլն, *չորրորդում չի գործածվել, հինգերորդում՝ 4 բառ.* չբերություն, չբերվություն, չտեսիկ, չտեսնված։

Արտահայտենք աղյուսակով (№ 20)։

Պար(ա)—

Մասնիկն արտահայտում է շուրջը իմաստը։ Արդի հայերենում այն գործուն ու կենսունակ չէ։ Գործածվել է 57 բաղադրություններում, որոն-

ցից միայն 23-ը ունեն առանց պար(ա)-ի՝ ինքնուրույն գործածություն։ Այս մասնիկով կազմություններն ըստ խմբերի բաշխվել են հետևյալ կերպ. Առաջին խմբում հանդես է եկել [պար(ա)+ինքնուրույն գործածություն ունեցող արմատ] 5 բառ. պարաբնակ, պարագիծ, պարագլուխ, պարակառոճ, պարփակ, երկրորդում [պար(ա)+ինքնուրույն գործածություն չունեցող արմատ]՝ 3 բառ. պարագա, պարագայծ (հնց.), պարեգոտ, երրորդում [պար(ա)+մեկից ավելի բաղադրիչներով բառահատված, որն ունի ինքնուրույն գործածություն]՝ 18 բառ. պարաբերել, պարագծել, պարահայել, պարունակություն, պարփակել և այլն, չորրորդում [մասնիկ+երեք և ավելի բաղադրիչներից կազմված բառահատված, որն ունի ինքնուրույն գործածություն] չի գործածվել, հինգերորդ խմբում (մասնիկ+մեկից ավելի բաղադրիչներով բառահատված, որը չունի ինքնուրույն գործածություն)՝ 31 բառ. պարագայել, պարբերություն, պարփակվածություն և այլն։

Թվական արդյունքներն ամփոփենք աղյուսակով (№ 21)։

Ստոր(ա)—

Մասնիկն արտահայտում է ներքև նշանակությունը։ Այն ունի ցածր արդյունավետություն։ Նրա ոչ ակնառու կարողությունները դրսևորվում են միայն որոշ կարգի բաղադրություններում, որոնց թիվն արդի հայերենում հասնում է 109-ի։ Այս կազմություններից 80-ն ունի անկախ մասնիկից՝ ինքնուրույն կիրառություն (ստորագիր, ստորուղի և այլն)։ Ինքնուրույն կիրառություն ունեցող արմատի հետ ստոր(ա)-ն բաղադրվել է 22 անգամ. (առաջին խումբ). ստորաբաժան, ստորագաս, ստորադաս, ստորակարգ, ստորաճակ, ստորաճարշ, ստորուղի և այլն։ Ինքնուրույն գործածություն չունեցող արմատի հետ (երկրորդ խումբ) միացել է 4 անգամ. ստորադիր, ստորամույծ, ստորանկ, ստորասույզ։ Մեկից ավելի բաղադրիչներ ունեցող և ինքնուրույն գործածվող բառահատվածների հետ բաղադրվել է (երրորդ խումբ) 58 անգամ. ստորաբաժանել, ստորախմբել, ստորածածկել, ստորահարել, ստորաջնջել, ստորաստեղծական, ստորաճարշել և այլն. բազմաբաղադրիչ նախատիպերի հետ (չորրորդ խումբ) բաղադրություն չի կազմել, մեկից ավելի բաղադրիչներից կազմված նախատիպերի հետ (հինգերորդ խումբ), որոնք չունեն ինքնուրույն կիրառություն, բաղադրվել է 25 անգամ. ստորագրում, ստորադրյալ, ստորախմբում, ստորանկել, ստորաճարշանալ, ստորգետնյա, ստորերկրյա, ստործովյա, ստորջրյա և այլն։

Վերլուծական տվյալները ցույց են տալիս նախամասնիկի բառակազմական ցածր հնարավորությունները, նորակազմությունների ոլորտում նրա պասիվ ու ոչ գործուն դերը։

Վերլուծության արդյունքներն արտահայտենք աղյուսակով (№ 22)։

Վեր(ա)—

Նախամասնիկն արդի հայերենում ունի միջինից բարձր կենսունակություն։ Նա իր վերստին ու վրա իմաստներով մասնակցել է 723 կազմությունների, որոնց նախատիպերից 651 ունեն ինքնուրույն կիրառություն։

Ինքնուրույն գործածություն ունեցող միարմատ նախատիպերի հետ

Աղյուսակ 20

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	9/36	25,0
II	1/36	2,78
III	22/36	61,11
IV	0/36	0
V	4/36	11,11

Աղյուսակ 21

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	5/57	8,77
II	3/57	5,26
III	18/57	31,58
IV	0/57	0
V	31/57	54,39

(առաջին խումբ) բաղադրվել է 32 անգամ. վերագրավ, վերադաս, վերադարձ, վերակազմ, վերաճ, վերաճկար, վերապահ, վերերգ, վերհուշ *և այլն։ Միարմատ, սակայն ինքնուրույն կիրառություն չունեցող, նախատիպի հետ բաղադրվել է (երկրորդ խումբ) միայն մեկ անգամ* (վերադիր)։ *Մեկից ավելի բաղադրիչներ ունեցող, ինքնուրույն գործածվող նախատիպերի հետ միացել է (երրորդ խումբ) 611 անգամ.* վերաապահովագրել, վերաատեսավորել, վերաարտահանել, վերաբազավորում, վերաբաշխել, վերաբեմադրել, վերաբյուջեազնել, վերաբուսնել, վերազարթնել, վերաթարմանալ, վերաժամանում, վերախաղարկել, վերածնվել, վերակշռում, վերահայտնել *և այլն։*

Երեք և ավելի բաղադրիչներից կազմված և ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպերի հետ (չորրորդ խումբ) միացել է 9 անգամ. վերաընդօրինակել, վերաժամկետել, վերաժամկետում, վերահիմաստավորել, վերահիմաստավորում, վերահամաբակալել, վերահամաբակալում, վերաորակավորել, վերաորակավորում։

Մեկից ավելի բաղադրիչներից կազմված, ինքնուրույն ու անկախ գործածություն չունեցող նախատիպերի հետ (հինգերրորդ խումբ) բաղադրվել է 71 անգամ. վերաբերական, վերահիշատում, վերապատվություն,

վերաուռադրանկար, վերաուսուցել, վերլուծորեն, վերասաստություն և այլն:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բոլոր երկրորդ և հինգերորդ խմբերում հանդես եկած նախամասնիկավոր բառերի նախատիպերի հետ (որոնք մասնիկից անկախ՝ ինքնուրույն գործածություն չունեն) մասնիկները անմիջականորեն չեն միացել։ Նրանք այդպիսիների հետ միացել են նրանց նախորդ փուլերում, քանի որ նախատիպ հիմքերն այդպիսի վիճա-

Աղյուսակ 22

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	22/109	20,18
II	4/109	3,67
III	58/109	53,21
IV	0/109	0
V	25/109	22,94

Աղյուսակ 23

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	32/724	4,42
II	1/724	0,14
III	611/724	84,35
IV	9/724	1,24
V	71/724	9,81

կով որպես ինքնուրույն միավոր գոյություն չունեն։ Որպես օրինակ վերցնենք վերախմբում բառը։ Վեր— մասնիկն անմիջականորեն չի միացել խմբում նախատիպի հետ, որովհետև վերջինս այս ձևով որպես ինքնուրույն միավոր գոյություն չունի։ Նախամասնիկը միացել է խմբում-ի նախորդ փուլում՝ խմբել բառի հետ և դարձել է վերախմբել, այնուհետև՝ վերախմբում:

Քննության առնելով վիճակագրական տվյալները, կարող ենք համոզվել, որ վեր(ա)— մասնիկն ազատորեն բառակազմական հարաբերությունների մեջ է մտնում գոյականների ու, հատկապես, բայերի հետ, մասնակցում նորակազմություններին, ստեղծում մասնագիտական տերմիններ. վերաբաժանել, վերաբաշխել, վերագնել, վերակենդանանալ, վերաչափել, վերաօժտել, վերակարգ, վերավաճառք, վերադիր, վերաֆվեարկություն, վերաստպագրություն, վերադասիարակություն, վերաշինություն, վերամրցավազք *և այլն։*

Թվային տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 23)։

Տ—

Արդի հայերենում ա— *նախամասնիկը գործուն ու կենսունակ չէ։ Այն գործածվել է ընդամենը 64 կազմություններում՝ հաղորդելով նրանց*

ժխտման, բացասման իմաստ։ Սրանց նախատիպերից 26-ն ունեն ինքնուրույն գործածություն։

Անկախ կիրառություն ունեցող միարմատ նախատիպերի հետ (առաջին խումբ) բաղադրվել է[11] անգամ. ագեղ, ագետ, ագույն, տկար, տկեր, տեաս, տեաճ, տձև, տմարդ, տոհմ։

Անկախ կիրառություն չունեցող միարմատ (երկրորդ խումբ) բաղադրությունների հետ գործածվել է մեկ անգամ՝ տհաս։

Մեկից ավելի ձևույթներից կազմված, ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպերի հետ (երրորդ խումբ) բաղադրվել է 15 անգամ. ագեղադեմ, ագիտական, ագիտություն, տձևանալ, տձևացնել, տձևություն, տմարդաբար, տմարդանալ և այլն։

Ինքնուրույն գործածություն ունեցող բազմաբաղադրիչ նախատիպերի հետ (չորրորդ խումբ) բաղադրություններ չի ստեղծել։

Հինգերորդ խմբում հանդես են եկել այն բառերը, որոնց նախատիպերն առանց ա— ժխտական մասնիկի չեն կիրառվում (ինչպես վերևում նշել ենք՝ մասնիկը նախորդ փուլերում է միացել նախատիպերի հետ)։ Դրանք 38-ն են. ագեղանալ, ագիտաբար, ագիտահալած, ագուներություն, տկարաթև, տկարակամ, տեաճորեն, տմարդի, տկարամտություն, տկարատեսություն, տեալություն և այլն։

Քանակական արդյունքներն արտահայտենք աղյուսակով (№ 24)։

Տար(ա)—

Արդի հայերենում օգտագործվել է 326 բաղադրություններում, որոնց նախատիպերից 196-ն ունեն ինքնուրույն գործածություն։ Մասնիկն ունի օտար, ճեռու, տարբեր, ինչպես նաև բացասման նշանակություններ։

Ժամանակակից լեզվում հանդես է գալիս, համեմատաբար, միջինից ցածր արդյունավետությամբ։ Սրա կենսունակությունն ու բառակազմական հնարավորությունները հիմնականում դրսևորվել են երրորդ ու առաջին խմբերում, որոնցում նախամասնիկն ակտիվորեն բառակազմական հարաբերությունների մեջ է մտել տարբեր արմատների ու հիմքերի հետ։

Միարմատ ու ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպերի հետ բաղադրվել է 63 անգամ. տարաբախտ, տարաբուն, տարագաղթ, տարագիծ, տարադաս, տարաժամ, տարալեզու, տարածոց, տարականոն, տարակարգ, տարաչափ և այլն (առաջին խումբ)։

Միարմատ, սակայն ինքնուրույն գործածություն չունեցող նախատիպերի հետ հանդես է եկել (երկրորդ խումբ) 10 անգամ. տարաբարձ (հնց), տարաբեկ, տարադեպ, տարախոս, տարածք, տարակարծ, տարակույս, տարամերժ, տարամիտ, տարապարտ։

Մեկից ավելի բաղադրիչներից կազմված, ինքնուրույն գործածություն ունեցող հիմքերի (նախատիպերի) հետ (երրորդ խումբ) բաղադրր-

վել է առավել ակտիվությամբ՝ 132 անգամ. տարաբաժանել, տարաբաշխում, տարաբնություն, տարադիտում, տարազգայություն, տարակացություն, տարաշխարհական, տարատոնմիկ, տարաբեղուն, տարեմաճություն, տարորոշել, տարորոշում, տարօրինակ, տարօրինապես և այլն։ Ինքնուրույն գործածություն ունեցող, բազմաբաղադրիչ (երեք և ավելի) հիմքի հետ (չորրորդ խումբ) բաղադրվել է միայն մեկ անգամ. տարաշխարհիկություն։

Մեկից ավելի ձևույթներից կազմված, առանց մասնիկի ինքնուրույն չգործածվող նախատիպ հիմքերի հետ (հինգերորդ խումբ) հանդես է եկել 120 անգամ (այս բառերի հետ տար(ա)— մասնիկը բառակազմական-կառուցվածքային կապերի մեջ է մտել, ինչպես վերը նշել ենք, նույնպես նախորդ փուլերում). տարաբախտիկ, տարադիտություն, տարազարդություն, տարաժամանակություն, տարալեզվություն, տարախոհություն, տարակարծություն, տարակենտրոնություն, տարաձայնություն, տարափոխիկություն, տարերկրյա և այլն։

Քանակական վերլուծությամբ ստացված արդյունքներն արտահայտենք աղյուսակով (№ 25)։

Տժ—

Սա ունի ժխտական, բացասական իմաստ։ Արդի հայերենի արևելահայ գրական տարբերակի համար յուրահատուկ չէ։ Դրանով նոր բառեր չեն կազմվում։ Այն գործուն ու կենսունակ չէ. մասնակցել է միայն հինգ կազմություններին. տժգին (անարգ), տժգնել, տժգույն, տժգունաճաել, տժգունացնել։

Սա ավելի յուրահատուկ է արևմտահայ գրական տարբերակին, չնայած այնտեղ էլ նորակազմություններին չի մասնակցում և գործուն չէ։ Արևելահայ գրական տարբերակում համեմատաբար ավելի գործածական է սրա ձայնեղացված տարբերակը (դժ—), որի մասին խոսվել է վերևում։

Տրամ(ա)—

Մասնիկն արդի հայերենում ունի ցածր կենսունակություն։ Այն գործածվել է 72 կազմություններում, որոնց նախատիպ հիմքերից 39-ը ինքնուրույն միավորներ են։ Վերջիններիս հետ միանալով՝ հաղորդում է նրանց մի ծայրից մինչև մյուսը նշանակությունը։

Միարմատ նախատիպ հիմքերի (ինքնուրույն միավորների) հետ նոր բառ է կազմել (առաջին խումբ) 9 անգամ. տրամաբան, տրամագիծ, տրամազույգ, տրամախոհ, տրամակաց, տրամանկյուն, տրամանց, տրամաչափ։

Ոչ ինքնուրույն միարմատ նախատիպ հիմքերի հետ հանդես է եկել ընդամենը (երկրորդ խումբ) երեք անգամ. տրամադիր, տրամախոս և տրամատ։

Մեկից ավելի ձևույթներից բաղադրված, ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպ հիմքերի հետ (երրորդ խումբ) կազմություններ է ստեղծել 29 անգամ. տրամաբանական, տրամաբաշխական, տրամադատական, տրամադրություն, տրամախոսել, տրամախորհել, տրամաչափել, տրամասրշել և այլն:

Բազմաբաղադրիչ (երեք և ավելի), ինքնուրույն գործածություն ունե-

Աղյուսակ 24

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	11/64	17,19
II	1/64	0,
III	15/64	23,44
IV	0/64	0
V	38/64	59,38

Աղյուսակ 25

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	63/326	19,33
II	10/326	3,07
III	132/326	40,49
IV	1/326	0,31
V	120/326	36,91

ցող նախատիպ հիմքերի հետ շղթայական կազմություն է ստեղծել միայն մեկ անգամ. տրամաբանականություն:

Ոչ ինքնուրույն գործածություն ունեցող (առանց մասնիկի ինքնուրույն միավորներ չեն), մեկից ավելի ձևույթներից բաղկացած նախատիպ հիմքերի հետ կիրառվել է (հինգերորդ խումբ) 30 անգամ. տրամաբանաբար, տրամագծական տրամախոսություն, տրամաչափարկում, տրամատել, տրամատություն և այլն:

Առանձին խմբերով արտահայտված տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 26):

Փոխ(ա)—

Արդի հայերենում ունի միջինից ցածր կենսունակություն: Այն հիմնականում արտահայտում է փոխաբեն և փոխադարձ նշանակություններ, որոնցով հանդես է եկել 180 բաղադրություններում: Սրանց նախատիպ հիմքերից 109 ինքնուրույն միավորներ են:

Մասնիկը որոշ ակտիվություն է ցուցաբերում մի շարք բայերի, գոյականների, ինչպես նաև սրանց ճյուղավորումների հետ կազմություններ ստեղծելիս: Ծույլ տանք ըստ առանձին խմբերի:

Անկախ գործածություն ունեցող միարմատ նախատիպերի հետ կառուցվածքային կապերի մեջ է մտել (առաջին խումբ) 18 անգամ (բոլորն

մասնիկ, խումբ	ան-	անդր/ա/	ապ/ա/	առ-	արտ/ա/-	բազ/ա/-	բաց/ա/-	գեր/ա/-	դեր-	դժ-	հնէ/ա/	ընդ-	ըստ-	հակ/ա/
№	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
I	1046	13	41	35	47	3	8	82	6	6	49	16	0	64
II	46	0	7	11	6	2	2	12	0	0	1	7	0	6
III	2642	50	138	130	203	14	22	234	10	1	99	159	3	221
IV	174	0	4	0	1	0	1	4	1	0	5	0	0	8
V	2092	16	132	687	97	36	57	44	4	20	23	208	10	43
ընդամենը	6000	79	315	863	354	55	90	376	21	27	177	390	13	342
բառա-պաշար	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000
%	3,95	0,05	0,21	0,57	0,23	0,04	0,06	0,25	0,01	0,02	0,12	0,26	0,01	0,23

մասնիկ, խումբ	համ/ա/-	հար, ա/	մակ/ա/	նախ/ա/	չար-	չ-	պար/ա/	տոր/ա/	վեր/ա/	տ-	տար-	տժ-	տրամ/ա/	փոխ/ա/
№	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28
I	186	60	28	29	1	6	5	22	32	11	63	2	9	18
II	23	10	5	4	0	1	3	4	1	0	10	0	3	2
III	368	73	83	262	8	22	18	58	611	15	132	1	29	88
IV	6	0	0	0	1	0	0	0	9	0	1	0	1	3
V	157	53	30	80	1	4	31	25	71	38	120	2	30	69
ընդամենը	740	196	146	375	11	36	57	112	724	64	426	5	72	180
բառա-պաշար	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000	152000
%	0,49	0,13	0,1	0,25	0,01	0,02	0,04	0,07	0,48	0,04	0,21	0,003	0,05	0,12

էլ գոյական անուն). փոխաբեակ, փոխազգեստ, փոխահերթ, փոխանդամ, փոխանուն, փոխապար, փոխատուն, փոխարժեք, փոխարեն, փոխերես, փոխհաց, փոխնիշ և այլն։ Անկախ գործածություն չունեցող միավանկ նախատիպերի հետ հանդես է եկել ընդամենը երկու անգամ (երկրորդ խումբ)· փոխատու, փոխնակ։

Մեկից ավելի ձևույթներից բաղադրված, ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպ հիմքերի հետ կառուցվածքային հարաբերություններ

Աղյուսակ 26

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{9}{72}$	12,5
II	$\frac{3}{72}$	4,17
III	$\frac{29}{72}$	40,28
IV	$\frac{1}{72}$	1,39
V	$\frac{30}{72}$	41,67

Աղյուսակ 27

Խումբ	Բառերի քանակը	Տոկոսներով
I	$\frac{18}{180}$	10,00
II	$\frac{2}{180}$	1,11
III	$\frac{88}{180}$	48,89
IV	$\frac{3}{180}$	1,67
V	$\frac{69}{180}$	38,33

է ստեղծել (մեծ մասամբ բայերի, բայարմատների ու գոյականների հետ) 88 անգամ (երրորդ խումբ). փոխաբեռնել, փոխաբեռնում, փոխաբերել, փոխաբերում, փոխաբնակել, փոխագնացություն, փոխազդել, փոխազդեցություն, փոխանջատել, փոխանցիկ, փոխարժայական, փոխգնդապետ, փոխնիրանգություն, փոխօգնել, փոխօգնություն և այլն։

Բազմաբաղադրիչ (երեք և ավելի), ինքնուրույն գործածություն ունեցող նախատիպ հիմքերի (չորրորդ խումբ) հետ կառուցվածքային շղթա է ստեղծել 3 բառերում. փոխնահանգապետական, փոխնահանգապետություն, փոխառեղակալություն։

Մեկից ավելի ձևույթներից կազմված, մասնիկից անկախ՝ ինքնուրույն կիրառություն չունեցող նախատիպերի հետ գործածվել է 69 անգամ (հինգերորդ խումբ). փոխաբերական, փոխակերպում, փոխանցիչ, փոխզիջություն և այլն։

Քանակական տվյալներն արտահայտենք աղյուսակով (№ 27)։

Այժմ արդեն կարող ենք տալ բոլոր նախամասնիկների վերաբերյալ վիճակագրական վերլուծության ամփոփիչ տվյալները (աղյուսակ № 28)։ Ըստ որում յուրաքանչյուր մասնիկի ընդհանրական տվյալը դիտում ենք նաև ամբողջ բառապաշարի հետ (նկատի ունենք Հ. Խ. Բարսեղյանի վե-

րոհիշյալ բառարանի լրիվ ծավալը՝ 152000 բառ)՝ տոկոսային հարաբերության մեջ, այսինքն պարզում ենք, թե տվյալ մասնիկով կազմություններն ինչ կշիռ ունեն արդի հայերենում։

Ներկայացնում ենք նաև մասնիկների ու նախատիպ հիմքերի փոխհարաբերության քանակական տվյալները, նշելով, թե մասնիկին հաջորդող բառահատվածը (նախատիպը) առանձին գործածություն ունի՞, թե՝ ոչ (աղյուսակ № 29), ինչպես նաև դրանց տոկոսային հարաբերությունը՝ բառապաշարի ծավալի հետ (աղյուսակ № 30)։

Աղյուսակ 29

№	Մասնիկ	Քանակը	Ինքնուրույն նախատիպ հիմքեր	Ոչ ինքնուրույն նախատիպ հիմքեր
1	ան-	6000	3862	2138
2	անդր (ա)-	79	63	16
3	ապ (ա)-	315	183	132
4	առ-	863	165	698
5	արտ (ա)-	354	251	103
6	բաղ (ա)-	55	17	38
7	բաց (ա)-	90	31	59
8	գեր (ա)-	376	320	56
9	դեր-	21	17	4
10	դժ-	27	7	20
11	ենթ (ա)-	177	153	24
12	ընդ-	390	175	215
13	ըստ-	13	3	10
14	հակ (ա)-	342	293	49
15	համ (ա)-	740	560	180
16	հար (ա)-	196	133	63
17	մակ (ա)-	146	111	135
18	ներ (ա)-	375	291	84
19	շաղ-	11	10	1
20	չ-	36	31	5
21	պար (ա)-	57	23	34
22	ստոր (ա)-	112	80	32
23	վեր (ա)-	724	652	72
24	տ-	64	26	38
25	տար-	326	196	130
26	տժ-	5	3	2
27	տրամ (ա)	72	39	33
28	փոխ (ա)	180	109	71

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ վիճակագրական ուսումնասիրության միջոցով հնարավորություն ընձեռվեց պատկերելու արդի հայերենի նախամասնիկների բառակազմական օրինաչափություններն ու յուրահատկությունները։

Քանակական ամբողջական արդյունքները հավաստի ճշգրտությամբ ընդգծում են բառակազմական միավորների (նախամասնիկների) կեն-

տունակությունն ու արդյունավետությունը, բնութագրում նաև այդ նույն միավորների ակտիվությունն ու պասիվությունը։

Իհարկե, քանակական այդ չափանիշները բնորոշում են բառակազմական նշված միավորների տարբեր կողմերը։ Արդյունավետությունը ցույց է տալիս, թե տվյալ միավորն ինչ ծավալի բառակազմական բաղադրություններ է ստեղծում։ Կոնկրետ ուսումնասիրությունները, ինչպես տեսնում ենք, հնարավորություն են տալիս նշելու քանակական այն սահմանը, որը դառնում է բառակազմական այս կամ այն միավորի արդյունավետության, կենսունակության չափանիշը։

Բառակազմական միավորի ակտիվությունը կապված է այն բանի հետ, թե նա ինչպե՞ս է հարստացնում նորակազմությունների ցանկը։

Նշված հասկացությամբ արդյունավետությունը տվյալ միավորի բառակազմական ընդունակությունների ու հնարավորությունների կոնկրետ դրսևորման ծավալային արժեքն է, իսկ ակտիվությունն արտացոլում է բառակազմական ցանկի բաց կամ փակ լինելը։

Այդ տեսակետից էլ կարելի է ընդգծել, որ ժամանակակից հայերենի նախամասնիկների շարքում ամենաբարձր արդյունավետությունն ունի ան-մասնիկը, որը մեծ կենսունակությամբ մասնակցում է հազարավոր կազմությունների ու նորակազմություններին։

Միջինից բարձր արդյունավետություն ունեն առ—, համ(ա)—, վեր(ա)—, նախամասնիկները։ Սրանցով բաղադրվում են բառակազմական ծավալուն շարքեր։ Համեմատական կարգով՝ սրանք ունեն նաև միջինից բարձր ակտիվություն՝ նորակազմությունների շարքում։

Միջին արդյունավետությամբ առանձնանում են ապ(ա)—, արտ(ա), գեր(ա)—, ընդ—, հակ(ա)—, ներ(ա)— և տար— նախամասնիկները։

Միջինից ցածր արդյունավետություն ունեն ենթ(ա)— հար(ա)—, մակ(ա)—, ստոր(ա)— և փոխ(ա)— նախամասնիկները։

Ընդհանրապես գործուն ու արդյունավետ չեն հետևյալները՝ անդր(ա)—, բաղ(ա)—, բաց(ա)—, դեր—, դժ—, ըստ—, շաղ—, չ—, պար(ա)—, տ—, տժ—, տրամ(ա)—։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն*, Երևան 1965։
2 Աբրահամյան Ս. Գ., Պառնասյան Ն. Ա., Օճանյան Հ. Ա., *Ժամանակակից հայոց լեզու, հ. 2*, Երևան 1974։
3 Գալստյան Ս. Ս., *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1978։
4 Էդոյան Ս., *Ածանցները ժամանակակից հայերենում*, Երևան, 1963։
5 Մուրվալյան Ա. Ա., *Հայոց լեզվի բառային կազմը*, Երևան, 1955։
6 Ջահուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Երևան, 1974։

7 Ջահուկյան Գ. Բ., Ազայան Է. Բ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ս., *Հայոց լեզու, Երևան, 1980։*
8 Вопросы анализа текста, Ереван, 1975.
9 *Засорина Л. Н.*, Автоматизация и статистика в лексикографии, Л., 1966.
10 *Карашук П. М.*, Словообразование английского языка, М., 1977.
11 *Кодухов В. И.*, Введение в языкознание, М., 1979.
12 *Кубрякова Е. С.*, Что такое словообразование? М., 1965.
13 *Левковская К. А.*, Лексикология немецкого языка, М., 1956.
14 *Смирницкий А. И.*, Лексикология английского языка, М., 1956.
15 Статистика речи, Л., 1968.

Ա. Մ. ԱՐԱՄՅԱՆ

ՀՆՉԵՐԱՆԳԸ ՈՐՊԵՍ ՇԱՐԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

Վերջին ժամանակներս հայ լեզվաբանության մեջ ավելի հաճախ են անդրադառնում հնչերանգի ուսումնասիրությանը։ Կան մի շարք աշխատություններ (4), որոնցում հնչերանգը ուսումնասիրված է փորձառական և ոչ փորձառական եղանակներով, հետազոտված են նրա էական շատ կողմեր։

Մեր ուսումնասիրության առարկան հնչերանգի՝ որպես շարակարգային կապակցության միջոցի, գործառության բնութագրումը և բացահայտումն է։

ՀՆՉԵՐԱՆԳԻ ՏԵՂԸ ԵՎ ԴԵՐԸ ԼԵԶՎԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿՈՂՔԻՆ ՇԱՐԱԿԱՐԴ, ԱԿՏՈՒԱԼ ՀԱՏՈՒՅԹԱՎՈՐՈՒՄ, ՀՆՉԵՐԱՆԳ

Հնչերանգի գոյությունը ոչ մի հեղինակ չի ժխտում, սակայն վերջինիս ինքնուրույն, լեզվական այլ երևույթներից (բառաքերականական կազմություններից և այլն) անկախ գոյությունը վիճարկելի է մնում։

Քանի որ մենք ակնկալություն չունենք քննարկելու հնչերանգի տեսությունն ընդհանրապես, ապա բավարարվում ենք հնչերանգի լեզվաբանական մի քանի հայեցակետերի բացահայտմամբ և մեզ համար՝ հարցի պարզաբանմամբ։

Ժամանակակից լեզվաբանական գրականության մեջ հնչերանգի գնահատման հարցում կան մի շարք մոտեցումներ (11, 14, 18)։ Այսպես՝ մի դեպքում ընդունվում է, որ հնչերանգը վերլեզվային իրողություն է և բուն լեզվաբանության մեջ մտնել չի կարող։ Մյուս դեպքում հնչերանգը դիտվում է որպես լեզվաբանական երևույթ, որը սակայն համակարգ չի կազմում։ Երրորդ դեպքում հնչերանգը դիտվում է որպես լեզվաբանական համակարգ ներկայացնող իրողություն, որը սակայն ինքնուրույն մակարդակ չի կազմում։

Չորրորդ մոտեցմամբ հնչերանգը ինքնուրույն կարգավորված լեզվաբանական իրողություն է։ Սակայն այն նշանային այնպիսի մակարդակ չէ, ինչպիսիք են ձևական և դրա հետ համակցվող իմաստային միավորները։

Հաջորդ մոտեցմամբ հնչերանգը մի մակարդակ է, որն ունի իր կարգավորված ձևական և իմաստային միավորները։ Լեզվաբանության խնդիրն է մատնանշել նրա տեղը լեզվական մյուս երևույթների շարքում։

Վեցերորդ խմբի ներկայացուցիչները գտնում են, որ հնչերանգը կարգավորված մի մակարդակ է, որն ունի ձևական և իմաստային իր հատկանիշները։ Սակայն լեզվական մնացած երևույթների շարքում այն չունի իր ինքնուրույն տեղը։ Հատկապես այս վերջին մոտեցումն է պաշտպանում և զարգացնում ժամանակակից սովետական հնչյունաբանության ներկայացուցիչներից մեկը՝ Տ. Մ. Նիկոլաևան, որի հնչերանգի տեսության մի քանի հիմնական դրույթները մենք պաշտպանում ենք։

Այսպես, ուրեմն, հնչերանգը ձևական և իմաստային ինքնուրույն հատկանիշներ ունեցող մի կարգավորված մակարդակ է։ Սա նշանակում է, որ որպես կարգավորված երևույթ այն վերլուծելի է, որի ընթացքում կարելի է բացահայտել ու դասդասել ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային, իմաստային հատկանիշները։

Համառոտակի հիշենք հնչերանգի մասին ներկայումս գոյություն ունեցող մի քանի տեսություններ։

Ամենատարածվածներից է հնչերանգի հաղորդակցային գործառության տեսությունը, որը պաշտպանում են բավական թվով հեղինակներ՝ տարբեր վերապահումներով։

Այն, որ հնչերանգը կապված լինելով խոսքի հետ դառնում է հաղորդակցման օղակներից մեկը և հետևաբար, իր վրա է կրում հաղորդման զգալի մասը, հասկանալի է և անվիճելի։ Սակայն այս ընդհանուր դրույթի ընդունման հետ միաժամանակ միշտ չէ, որ պարզաբանվում է հնչերանգի լեզվական մյուս երևույթների հետ ունեցած կապի, փոխազդեցության և սահմանների հարցերը։

Հնչերանգի հաղորդակցային տեսության ներկայացուցիչներն են Վ. Ա. Արտյոմովը, Ե. Ա. Բրիզգունովան, Կ. Բարիշնիկովան, Ա. Կանիշևան և ուրիշներ։ Առաջ քաշելով նպատակաուղղված հաղորդակցման պայմանը, նրանք հաճախ հնչերանգի ողջ էությունը տեսնում են սոսկ դրա մեջ։ Այսպես, Վ. Ա. Արտյոմովը ընդունում է հնչերանգի չորս գործառույթներ՝ հաղորդակցային, լեզվական, իմաստային, եղանակային (11)։ Մանրամասն շարադրելով դրանցից յուրաքանչյուրի դերը հնչերանգի կազմավորման գործում, հեղինակը առաջ է քաշում հնչերանգ, հնչերանգային տարբերակ, ինտոնեմա հասկացությունները, որոնց սահմանումն ու սահմանազատումը թվում է վիճարկելի (11, 58)։ Ա. Մարտինեն հնչերանգի հիմնական գործառույթը տեսնում է սոսկ հաղորդում կրելու մեջ (17, 39—397)։ Գ. Ֆորը հնչերանգի հիմնական էությունը տեսնում էր նախ և առաջ նրա գործառական բնույթի՝ այսինքն հնչերանգի

միջոցով խոսքային իրադրության հոգեբանական բովանդակության դրսևորման մեջ (27)։

Շ. Բալիի կողմից (27) հնչերանգին տրված բնութագրումը կարծես ավելի է բացահայտում վերջինիս բովանդակությունը։ Նա գտնում է, որ «Հնչերանգը մի ակտուալիզատոր է, որը պոտենցիալ ասույթները վերածում է ակտուալի» (13, 50—51)։

Ա. Մ. Պեշկովսկու հայտնաբերած փոխհատուցման օրենքը, (10), որը առավել շատ է բացահայտում հնչերանգի բնույթը, հետագայում մի շարք հնչյունաբանների կողմից ընդունվեց որպես միակը և արդյունքը ստացվեց այն, որ հնչերանգը որպես լեզվաբանական երևույթ փաստորեն նույնացվեց շարահյուսության հետ։

Հնչաշղթայի ակտուալիզացիայի գաղափարի հետ, որը իրականում հնչերանգի կատարած դերի մեջ կարևոր մաս ունի, միաժամանակ անհրաժեշտ է մատնանշել հնչերանգի մեկ այլ կողմը, որը բխում է վերը նշվածից և լրացնում է այն։ Դա հնչերանգի՝ խոսքը հատույթավորելու հատկությունն է, որի նախնական գաղափարը մենք գտնում ենք դեռևս Լ. Վ. Շչերբայի մոտ (25, 85)։

Շչերբայի տեսության համաձայն շարույթը անմիջականորեն կապվում է հնչերանգի կողմից խոսքը հատույթավորելու գործառության հետ։ Նա շարույթ ասելով հասկանում էր խոսքային շղթայի արտասանական-ռիթմական միավորները, որոնք կարող են դրսևորվել ինչպես բառակապակցություններով, այնպես էլ առանձին բառերով։

Լ. Վ. Շչերբան և նրա ամբողջ դպրոցը գտնում է, որ շարույթը ենթադրում է քերականորեն կապակցված ստորադասություն, որը և հիմք է տալիս հնչերանգը կապելու շարահյուսության հետ։

Հնչերանգի մասին խոսելիս չպետք է անտեսել այն դերը, որ այն ունի խոսքի ակտուալ հատույթավորման գործում։ Մենք կարծում ենք, որ հնչերանգը հենց այն միջոցն է, որով արդեն հայտնի հաղորդումը առանձնացվում է նոր տրվողից, այսինքն՝ կատարում է թեմայի և ռեմայի տարբերակում։

Այս մասին իր ժամանակին նշել է նաև Փ. Դանեշը, գտնելով, որ հնչերանգի հիմնական գործառույթումը փոխակերպական պոտենցիալ միավորները իրական հաղորդակցող միավորների վերածելն է։ Հեղինակը նշում է, որ դրանով իրականանում է ակտուալ հատույթավորումը, խոսքը՝ արտասանվածքի կամ նախադասության վերածելու փաստը և ինքնըստինքյան մատնանշվում մի կողմից՝ արդեն հայտնին, և մյուս կողմից՝ նորը (26)։

Հնչերանգի կողմից այս նորի ընգծումը, որը կատարվում է զանազան միջոցներով (ինչպես բառային, բառակապակցական, այնպես էլ

շարահյուսական կամ էլ զուտ հնչերանգային, օրինակ դադարների միջոցով) մենք դիտում ենք իբրև հնչերանգի մի գործառույթ, որը կապվում է վերջինիս իմաստային հարաբերություններ արտահայտելու գործառույթյան հետ։ Ի միջիայլոց դադարների միջոցով կատարվող խոսքի հատվածավորումը կարող է և չհամընկնել նրա շարահյուսական հատվածավորմանը։

Այսպիսով հնչերանգը բնութագրվում է երեք հիմնական հատկանիշ-գործառույթյուններով՝ 1. ակտուալիզացնող, որն իրականացնում է հատվածավորումը (տեքստ-հնչաշղթա, նախադասություն-հնչադասություն, շարույթ-հնչատակտ, բառ-հնչաբառ)։ 2. Կապակցություններ արտահայտող կամ իրականացնող, որն արտահայտվում է լեզվական միավորների աստիճանականությամբ (համադասություն, ստորադասություն, միջանկյալ խոսք և այլն)։ 3. Իմաստային հարաբերություններ արտահայտող՝ գլխավոր և երկրորդական, արդեն հայտնին և նորը։

Այս բոլորն իրականանում է հաղորդակցման շղթայում*։

Այստեղ նպատակահարմար է ավելի մանրամասն խոսել շարակարգ, ակտուալ հատվածավորում և հնչերանգ հասկացությունների փոխհարաբերության մասին։

Շարադրանքի սկզբում նշեցինք, որ հնչերանգի որպես շարակարգային կատեգորյան միջոցի հարցը քննելիս առնչվում ենք ակտուալ հատվածավորման հետ, քանի որ վերջինս անմիջականորեն կապվում է հնչերանգի՝ հատվածավորող գործառույթյան հետ։

Ակտուալ հատվածավորման մասին խոսելիս մենք անմիջականորեն բախվում ենք թեմա-ռեմա (հնի կամ հաղորդվածի և նորի կամ հաղորդվելիքի) հասկացությունների հետ**։

Նախ, ի՞նչ բան է ակտուալ հատվածավորումը։ Բանն այն է, որ հաղորդողի համար, կոնկրետ կոնտեքստում տվյալ հատվածավորումը ամե-

---

*) Հաղորդակցման գործառույթյունը, որպես հնչերանգը բնութագրող, մենք չենք առանձնացնում որպես ինքնըստինքյան հասկանալի երևույթ։ Հաղորդակցումը լեզվի դոյն է և բոլոր այն երևույթները, որոնք ինչ-որ չափով առնչվում են լեզվի հետ, ծառայում են հաղորդակցմանը։ Հաղորդակցումը, որպես ընդհանուր գործառույթյուն, բնորոշ է լեզվական բոլոր երևույթներին՝ առանց բացառության։ Հնչերանգը իրականացնում է խոսքի բաղկացուցիչների միջև եղած կապը և հնչաշղթաների հոսքը, այսինքն՝ հաղորդակցումը դարձնում է կապակցված ամբողջություն։ Այդ պատճառով մենք հնչերանգը, որպես լեզվական երևույթ ուսումնասիրելիս, հաղորդակցումը հնչերանգը բնորոշող գործոնների մեջ չենք մտցնում, այլ փնտրում ենք այն յուրահատուկը, որը միայն հնչերանգին է հատուկ։

** Թեման հաղորդվող առարկան է, ռեման՝ այն, ինչ հաղորդվում է այդ առարկայի մասին։

նից հարմարն է և կարևորը՝ խոսողը կամ հաղորդողը կցանկանար իր ասելիքը տեղ հասցնել հատկապես տվյալ հատվածների առանձնացմամբ կամ ընդգծմամբ։

Ակտուալ հատուկցությունների միջոցներից հայոց լեզվում առավել գործուն են երկուսը՝ ա) բառերի գրված դիրքը նախադասության մեջ և բ) հնչերանգը։

Ինչպես տեսնում ենք, երկու միջոցներն էլ ուղղակիորեն առնչվում են շարակարգի հետ, եթե չասենք, որ դառնում են վերջինիս համար կապակցող և ամբողջացնող գործոններ։

Ակտուալ հատուկցությունների գաղափարը վերջերս է մուտք գործել լեզվաբանության մեջ։ Սկզբնապես այն դիտվում է որպես խոսողի տրամաբանության կամ հոգեբանության հետ կապվող երևույթ։ Սրանով են բացատրվում այն անվանումները, որ տրվել են ակտուալ հատուկցությունների բաղադրիչներին. «հոգեբանական ենթակա» և հոգեբանական ստորոգյալ» Г. Пауль, Принципы истории языка, М. 1960, էջ 339. «Հոգեբանական ստորոգյալը» հեղինակը դիտում է որպես խոսքի ամենաուժեղ շեշտակիր հատվածը)։ Ռուս լեզվաբանության մեջ այս հարցերը շոշափվել են Ֆ. Ֆ. Ֆորտունատովի, Ա. Մ. Պեշկովսկու, Լ. Վ. Շչերբայի, Վ. Վ. Վինոգրադովի կողմից։

Ֆ. Ֆ. Ֆորտունատովը տարբերակում էր մտցնում «հոգեբանական դատողության» կամ «մտքի նախադասության» և «քերականական նախադասության» կամ «խոսքի նախադասության» միջև։ Նա գտնում էր, որ քերականական նախադասությունների քերականական վերլուծությունը պետք է հստակորեն տարբերել այն դատողությունների կամ մտքային նախադասությունների հոգեբանական վերլուծությունից, որոնք արտահայտվում են խոսքում՝ քերականական նախադասությունների մեջ» (24, 458)։ Օրինակ «Թռչունը թռչում է» նախադասությունը կարող է ունենալ որպես հոգեբանական ենթակա «թռչում է» քերականական ստորոգյալը, իսկ քերականական ենթակա «թռչունը» կարող է դառնալ հոգեբանական ստորոգյալ։

Ա. Մ. Պեշկովսկին մի քիչ ավելի լայնացրեց այս հարցադրումը։ Նա գտնում էր, որ «հոգեբանական դատողությունը» գործում է ոչ միայն մտքում, այլև խոսքում, քանի որ հոգեբանական ստորոգյալը խոսքում առանձնանում է տրամաբանական կամ «հոգեբանական» շեշտով։

Ինչպես հայտնի է Ա. Մ. Պեշկովսկին փաստորեն առաջինն էր, որ նշանակություն տվեց հնչերանգին և բառերի դասավորությանը՝ քերականական իմաստներ արտահայտելու գործում, և դրանք դիտեց որպես քերականական միջոցներ. ընդ որում՝ հնչերանգին ավելի մեծ դեր էր հատկացնում քան բառերի դասավորությանը (19, 52)։

Այսպիսով՝ հատուկ ուշադրություն նվիրելով խոսքի հնչերանգային կողմին, Ա. Մ. Պեշկովսկին փաստորեն ընդհուպ մոտենում է ակտուալ հատույթավորման պրոբլեմին, սակայն շրջանցում է այն, քանի որ գըտնում է, որ հնչերանգը արտալեզվական երևույթ է։

Ընդգծելով հնչերանգի դերը՝ Պեշկովսկին առանձնացնում է «հընչերանգային ստորոգյալը»՝ հակադրելով այն «քերականական ստորոգյալին» (19, 52)։ Նրանք համընկնում են, երբ ֆրազային շեշտը գտնվում է կամ բայի կամ բայի հետ առնչվող բառերի վրա։ Մնացած դեպքերում, երբ, օրինակ, շեշտակիրը ենթակա է, այդ երկու տեսակի ստորոգյալները հեռանում են միմյանցից և միտքը ձգում են տարբեր կողմեր։ «Հընչերանգային ստորոգելիությունը» քերականական կատեգորիա չէ», նշում է նա (19, 171—172)։ Այն հատվածում, որտեղ Ա. Մ. Պեշկովսկին քննում է ընդարձակ և համառոտ նախադասությունների երկանդամության հարցը (19, 418), այն մենք ընկալում ենք որպես նման նախադասությունների երկատում՝ հնչերանգի օգնությամբ, որը փաստորեն նշանակում է տվյալ խոսքային կոնկրետ իրադրությունում մեր կողմից ցուցաբերվող տարբերակված վերաբերմունք՝ նախադասության այս կամ այն հատվածի նկատմամբ։ Սա փաստորեն ակտուալ հատույթավորման հարցադրումն է, որը սակայն Ա. Մ. Պեշկովսկու կողմից կոնկրետ անվանում և ձևակերպում չի ստացել։

«Տրամաբանական» կամ «հոգեբանական» ստորոգյալի մասին խոսում է նաև Լ. Վ. Շչերբան, երբ առաջ է քաշում խոսքի ռիթմական-հընչերանգային կառուցվածքի ուսումնասիրության խնդիրը։

Խոսելով միանդամ և երկանդամ ֆրազների մասին Լ. Վ. Շչերբան ներկայացնում է դրանց որպես առանձին հնչերանգային միավորներ, որտեղ հատվածներից մեկը՝ այն, որ կրում է տրամաբանական շեշտ, փաստորեն ներկայացնում է հաղորդման մեջ այն նորը, որը ցանկալի է առանձնացնել։ Այդ հատվածների միջև գոյություն ունի «տրամաբանական ենթակայի և ստորոգյալի հակադրամիասնություն» (25, 117—118)։ Հայտնի է այն փաստը, որ երկանդամ ֆրազներում իմաստային հակադրման հիմքում ընկած է հիմնականում հնչերանգի երկանդամությունը, երբ հատույթավորված հատվածներից մեկի հնչերանգը գերիշխում է մյուսի նկատմամբ։ Հայերը կառուցող ժողովուրդ են։ Այդ գրերը կարելի է կարդալ։

Մեկանդամ ֆրազները, որոնց մեջ առկա է շեշտակիր դերանուն, հնչերանգային տեսակետից հակադրիչ հատվածներ չունեն։ Ես գնացի կայարան։ Նա անցյալ տարի եղել է այնտեղ։

Բառերի դասավորությունը Լ. Վ. Շչերբան դիտում է ավելի շատ կապ-

ված ռիթմական միավորների՝ շարույթների հետ, որոնք դիտվում են որպես ինքնուրույն իմաստային ամբողջություններ։

Երկշարույթային նախադասություններում իմաստային հակադրամիասնությունը՝ կապված բառերի դասավորության հետ, միաժամանակ ընդգծում է հաղորդման այն հատվածը, որը կրելով տրամաբանական շեշտ, տալիս է նոր հաղորդում։ Երևանը հին քաղաք է։ Իր ճնությամբ այն դասվում է Հռոմի և այլ հին քաղաքների շարքը։

Այսպիսով՝ Լ. Վ. Շչերբայի մշակած պրոբլեմները՝ կապված ռիթմական-հնչերանգային իմաստային հատվածների և շարույթային հակադրամիասնությունների հետ, փաստորեն ակտուալ հատույթավորման հարցի հետ շատ ընդհանուր կողմեր ունեն։

Մինչև վերջերս բառերի ազատ դասավորությանը, բառերի ազատ տեղափոխություններին՝ նախադասության ներսում, և բառաձևերի ու օժանդակ բառերի միջոցով իմաստների արտահայտմանը հավասար արժեք էին տրվում։ Այնինչ, (ինչպես դեռ Ա. Մ. Պեշկովսկին էր նշում), դրանք հավասար արժեք չունեն, չնայած երբեմն գործառական տեսակետից կարող են փոխարինել միմյանց։

1960-ական թվականներից սկսած Վ. Մատեզիուսի, այնուհետև Ֆ. Դանեշի, Յա. Ֆիրբասի, Պ. Ադամեցի և ուրիշների կողմից բառերի դասավորության հարցը, ստանալով «ակտուալ հատույթավորում» անվանումը, դրվեց գիտական հիմքերի վրա։ Միայն, ինչպես նշում է չեխ գիտնական Վ. Մատեզիուսը, պետք էր տարբերել ակտուալ հատույթավորումը՝ նախադասության ձևական հատույթավորումից (16, 240—245)

Սովետական լեզվաբանության մեջ Վ. Մատեզիուսի նախադասության իմաստային ակտուալ հատույթավորման տեսությունը՝ միջուկի և ստորոգվող մասի, հնի և նորի, թեմայի-ռեմայի և այլն հասկացողությունների մուտքով, ըստ արժանվույն գնահատվեց։ Դրանք տարբեր հեղինակների մոտ տարբեր անվանումներ ստացան՝ «հեղաձը և նորը»— Կրուշելնիցկայա, միջուկ և ստորոգվող մաս— Ի. Պ. Ռասպոպով. վերջինս ակտուալ հատույթավորման ձևավորման կարևոր միջոցներից է համարում բառերի դասավորությունը և հնչերանգային միջոցները, և այլն (15, 14)։

Կարևորն այն էր, որ ակտուալ հատույթավորման հարցերը քննելիս մի քանի հեղինակներ (10) իրավացիորեն առաջնային նշանակություն են տալիս նախադասությունների գծային-դինամիկ կառուցվածքին, որը փաստորեն մի շարք կոնկրետ նախադասությունների ամբողջություն է։ Դրանք բնութագրվում են շարահյուսական միանման անդամներով, բառերի միանման դասավորությամբ և միանման ֆրազային շեշտով (ըստ տեղի)։ Վերջինս (ֆրազային շեշտի հետ կապված) կարևոր գործոն է

ակտուալ հատուկբավորման ընթացքում՝ նախադասության հաղորդվող տեսակը կամ ուղղվածությունը որոշելու համար։

Քանի որ ակտուալ հատուկբավորումը մատնանշում է նախադասության հաղորդակցման նպատակը, իսկ ինչպես հայտնի է նպատակադրված հաղորդակցումը իրականանում է հնչերանգային ձևավորման միջոցով, ապա սրանից ելնելով ակտուալ հատուկբավորման տեսության կողմնակիցները առաջ են քաշում ասույթ հասկացությունը, որը փաստորեն նախադասությունն է՝ խոսքային գործառնության տեսանկյունից։

Քանի որ մենք ակտուալ հատուկբավորման հարցերը շոշափում ենք միայն շարակարգի և հնչերանգի հետ կապված, ապա ասույթի տեսությունը, որը վերջին տարիներս բավական լայն տարածում է գտել (15, 22), այստեղ առանձին ուսումնասիրության նյութ չի դառնում։ Նշելով ակտուալ հատուկբավորման դերը նախադասության տարբեր հատվածների առանձնացման գործում (թեմա և ռեմա), կցանկանայինք ուշադրություն հրավիրել այն հանգամանքի վրա, որ նախադասության շարահյուսական քերականական հատուկբավորումը և ակտուալ, այսինքն՝ կոնկրետ կոնտեքստից կամ իրադրությունից բխող, հատուկբավորումը կարող են չհամընկնել։ (Հմմտ. ավանդական սուբյեկտ և պրեդիկատ, կամ ենթակայի ու ստորոգյալի հարաբերությունը)։ Ինվորները եկան... օրինակում համընկնում են շարահյուսական ենթական և ակտուալ հատուկբավորման ենթական՝ եկան զինվորները... այս դեպքում՝ ոչ. ենթակայի տեղում ստորոգյալն է, ստորոգյալի տեղում՝ ենթական։ Հենց այս դեպքում է, որ հնչերանգը հանդես է գալիս իր ամենաղորեղ՝ նախադասությունը իմաստավորելու և նպատակադրված հաղորդակցում կազմակերպելու դերով, որովհետև սոսկ բառերի դասավորությամբ, տվյալ դեպքում տեղափոխությամբ՝ առանց հընչերանգի ակտիվ մասնակցության, չի կարելի հաղորդակցումը լիարժեք և նպատակադրված կոնտեքստով կազմակերպել։ Իզուր չէ, որ Ա. Մ. Պեշկովսկին նշում է հատկապես այս տարբերությունը։ «Շարահյուսական իմաստների բոլոր տարբերակները, որոնք ստեղծվում են բառերի դասավորության փոփոխության հետևանքով (Ես վաղը կգամ քեզ մոտ։ Ես քեզ մոտ կգամ վաղը։ Ես կգամ քեզ մոտ վաղը։ Վաղը ես կգամ քեզ մոտ։ Եվ այլն), յուրաքանչյուր դեպքում նոր հնչերանգով բոլորովին տարբերվում են այն իմաստներից, որոնք ստեղծվում են բառաձևերի ու օժանդակ բառերի միջոցով։ Եվ այս առումով բառերի դասավորությունը (այսպես կոչված ազատ), որպես քերականական միջոց, ավելի քիչ դեր ունի, քան հնչերանգը։ Մենք գիտենք դեպքեր, երբ ամբողջական իմաստ արտահայտելիս հնչերանգային միջոցները ձուլվել են իսկական քերականական միջոցներին, սակայն բառերի դասավորության կապակցությամբ նման

փաստ չունենք։ Այսպիսով՝ բառերի դասավորությունը մենք կարող ենք բնութագրել ոչ միայն որպես օժանդակ միջոց, այլ միջոց, որը հնչերանգից մեկ կարգով ետ է մնում» (19, 52)։ Այսպիսով, քանի որ մեր վերջնական նպատակը հնչերանգի դերի բացահայտումն է՝ շարակարգի անդամների կապակցության դրսևորման մեջ, ապա առնչվելով ակտուալ հատկությունավորմանը, մենք շոշափում ենք նաև որոշ հարցեր կապված նախադասության իմաստային կողմի հետ։ Առանց իմաստային հատկությունավորման, շարակարգի վերլուծությունը և կապակցության ձևերի բացահայտումը ոչ միայն լիարժեք չէ, այլև անհնար է։

Հնչերանգի օգնությամբ նախադասության հաղորդակցման նպատակը բացահայտելը փաստորեն նշանակում է թեմայի և ռեմայի հարաբերության դրսևորում, այդ հարաբերության նկատմամբ խոսողի վերաբերմունքի դրսևորում։ Ինչու՞ ենք այս մասին շեշտում, որովհետև միշտ չէ, որ թեման լինում է հայտնին, իսկ ռեման՝ նորը, անհայտը, որի մասին պետք է հաղորդվի. երբեմն լինում է նաև հակառակը՝ մեկի մասին խոսվում է, հետո միայն անունն է տրվում։ Ուրեմն հնչերանգն է, որ կոնկրետացնում է հնի և նորի հարաբերությունը և իրադրությունը դարձնում պարզ։ Բառերի դասավորության և հնչերանգային փոփոխությունների հետևանքով տեղի է ունենում, այսպես կոչված, ակտուալիզացիա, այսինքն՝ տվյալ նախադասությունը (կամ ասույթը) հարմարվում է տվյալ կոնկրետ խոսքային իրադրությանը և ստանում է հաղորդման նպատակասուղղվածություն։ Ասույթների միջև ստեղծվում են շարույթային հարաբերություններ, որոնք խոսքի շղթայում հետևում են մեկը մյուսին և պայմանավորում տրամաբանական-իմաստային կապը։

Հարացույցն այս դեպքում ստեղծվում է նախադասությունների կամ ասույթների միջև, որոնք միավորվում են շարահյուսական կառուցվածքի ընդհանրությամբ և տարբերակվում միմյանցից միայն ձևական հատկանիշներով՝ բառերի դասավորությամբ և հնչերանգով։ Հնչերանգային ցուցանիշներով այն արտահայտվում է հետևյալ կերպ. թեման, որը տեղավորված է նախադասության սկզբում, առանձնանում է տոնի բարձրացմամբ, իսկ ռեման, որը տեղավորված է նախադասության վերջում, առանձնանում է ֆրազային շեշտով, որը պատմողական նախադասություններում դրսևորվում է տոնի իջեցմամբ։ Սա նախադասությունների ամենաընդհանուր տարբերակն է, երբ թեման նախորդում է ռեմային։

Տոնային այս հարաբերությունը զանազան տարբերակումներ է ստանում՝ պայմանավորված թեմայի և ռեմայի շարույթային կախվածության աստիճանից. որքան կախվածությունը թույլ է, այնքան տոնային ցուցանիշները թույլ են և հակառակը։ Դրանք կարող են ցայտունանալ միայն

խոսողի կողմից հաղորդմանը տրվող ոճային կամ նպատակային շեշտվածության շնորհիվ։ Դիտենք հետևյալ օրինակները։

1. Ամռանը կուզենայի այցելել օլիմպիական Մոսկվա։ (Չեզոք հընչերանգային պատկեր)։

2. Ամռանը կուզենայի այցելել օլիմպիական Մոսկվա։ (Շեշտվում է ժամանակային հարաբերությունը)։

3. Ամռանը կուզենայի այցելել օլիմպիական Մոսկվա։ (Ընդգծվում է օբյեկտի ձևական հատկանիշը)։

4. Ամռանը կուզենայի այցելել օլիմպիական Մոսկվա։ (Հնչերանգային հակադրման միջոցով (Մոսկվան և ոչ թե Մինսկը) օբյեկտը դառնում է մտքի կենտրոն)։

«Ամռանը կուզենայի»— թեման հնչերանգի շնորհիվ յուրաքանչյուր անգամ դառնում է նոր հաղորդման սկիզբ (ռեմա)։

Համառոտակիորեն այսպիսին է մեր պատկերացումը շարակարգի, ակտուալ հատույթավորման և հնչերանգի միջև դիտվող հարաբերության մասին։

ՇԱՐԱԿԱՐԳԸ ԶԵՎԱՎՈՐՈՂ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Հնչերանգի՝ որպես շարակարգային կապակցության միջոցի վերլուծման ընթացքում մենք գործ ունենք փաստորեն տեքստի լեզվաբանության հետ և անմիջականորեն առնչվում ենք նրա հետևյալ օղակներին. հնչաշղթա և տեքստ, հնչադասություն և նախադասություն, հնչատակտ և շրույթ, հնչաբառ և բառ, վանկ։ Վերջին երկուսը հնչերանգ կրող նվազագույն օղակներն են։ Այս առումով անհրաժեշտ է ավելի հանգամանորեն անդրադառնալ հնչերանգին և նրա հետ առնչվող մի քանի երևույթներին՝ Գ. Ջահուկյանի կողմից տրված բնութագրումներին։

Ակադեմիկոս Գ. Ջահուկյանն իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում մի փոքրիկ հատված է նվիրել հնչերանգի և հնչերանգին հարող մի քանի հասկացությունների պարզաբանմանը։ Այդ ոչ ծավալուն հատվածում հնչյունաբանական շատ կարևոր հարցեր են լուսաբանվում։ Հարցի ուսումնասիրությունը կատարելով երկու տարբեր պլաններում՝ հնչյունաբանական (որպես լեզվի միավորներ) և իմաստային շարահյուսական (որպես խոսքի միավորներ) հեղինակն առաջադրում է իր տերմինաբանությունը, որից մենք օգտվում ենք։

Հեղինակը հնչերանգը սահմանում է որպես «հնչաշղթայի վերհնչութային հատկությունների որոշ հարաբերություն, որ ուժգնության, տևողության և բարձրության տարբերությունների պարբերականության և կանոնավորության դեպքում դրսևորվում է որպես ռիթմ։ Ձափածո խոսքը ռիթմական խոսք է» (7, 90)։

Հեղինակը հիմնականում վերլուծում է հնչերանգի ֆիզիկական հատկանիշները, համառոտակի նշելով դրանց դերը խոսքի կազմավորման գործում։ «Հնչերանգը կազմող՝ ուժգնության սովորական շեշտերը տարբեր ուժի են լինում ըստ միավորների ենթադասության. պարունակող միավորների ընդհանուր շեշտը, որ ընկնում է որևէ բառի վրա (այն լինում է վերջին բառը, իսկ սաստկական շեշտ ունեցող բառ լինելու դեպքում՝ այդ բառը), ավելի ուժեղ է լինում, քան պարունակվողներինը» (7, 90)։ Կարևոր գործոն են հնչերանգի համար տոնային տարբերությունները, որոնք բարձրացումներով և իջեցումներով կազմում են տարատեսակ ալիք։ Սովորական դաւողական խոսքում՝ ավարտի պահին այդ ալիքը իջնում է։

«Եթե հնչաշղթայի մեջ կա սովորականից տարբեր տոն ունեցող բառ, ապա տոնի տարբերությունները (ելևէջումը, ինտոնացիան) որոշ յուրահատկություններ են ձեռք բերում. սպասողական խոսքը (օրինակ՝ հարցումը) սովորաբար ուղեկցվում է բարձրության աճով, որ արտահայտում է խոսողի ներքին լարումը» (7, 90)։

Գ. Ջահուկյանը խիստ կարևոր է համարում հատկապես դադարի դերծոնը հնչերանգի կազմավորման գործում։

«Հնչաշղթան կարող է բաժանվել որոշակի հատվածների, որոնք բնութագրվում են սկզբնային և վերջնային տևական դադարներով, ավարտային ելևէջումով։ Այս հատվածները երկպլանային միավորների մեջ համապատասխանում են նախադասություններին և կարող են կոչվել հնչական նախադասություններ (հնչական ֆրազներ), կամ, համառոտակի, հնչադասություններ» (7, 90)*։

Այնուհետև շարունակելով հատույթավորումը, հեղինակը հնչադասությունների մեջ առանձնացնում է հնչատակտերը (արտասանական տակտերը), որոնք համապատասխանում են ավանդական շարույթին։ «Սրանք բառեր կամ բառերի կապակցություններ են, որոնք ի տարբերություն բառերի, բնութագրվում են սկզբնային և վերջնային որոշակի հնչադասություններից ավելի փոքր դադարներով և ելևէջային որոշակի բնութագրով» (7, 81)։ Որպես հնչատակտեր կազմողներ Ջահուկյանն առանձնացնում է հնչաբառերը, որոնք հնչադասությունների մեջ մտնող վանկերը կամ վանկերի կապակցություններն են և ունեն ուժգնության մեկ շեշտ։ Երկար միավորների դեպքում առկա են մի քանի թույլ շեշտեր։ Սրանք հնչաբառերն են։ Երկպլանային միավորներից դրանք համապատասխանում են բառերին, թեև երբեմն մեկ հնչաբառ կարող է

* Ի միջի այլոց հեղինակը «ելևէջում» և «ինտոնացիա» տերմինները նույնացնում է, միաժամանակ դրանք առանձնացնելով «հնչերանգ» տերմինից։ Այս հարցին մենք կենք անդրադառնում, տե՛ս էջ 90, վերևից 3-րդ պարբերությունը։

ընդգրկել մեկից ավելի բառեր։ Օրինակ, հասնելուն պես, ազնիվ խոսք, նուաճելուն պես։

Այսպիսով հարաբերության մեջ գտնվող միավորների շղթան, որի յուրաքանչյուր օղակն իր վրա է կրում հնչերանգի բաղկացուցիչներից կամ կազմիչներից որևէ մեկի անմիջական ազդեցությունը (կամ տոնի բարձրության կամ ուժգնության շեշտի, կամ դադարի և այլն) հատուկ-բավորման ենթարկվելով՝ անջատվում է մյուսներից՝ որպես ինքնուրույն միավոր։

* * *

Հնչաշղթա հասկացությունը համեմատաբար վերջերս է մուտք գործել լեզվաբանության մեջ և անմիջականորեն առնչվում է «նախադասություն» հասկացության հետ։

Հնչյունաբան-լեզվաբանների մեծ մասը ընդունում է, որ հնչերանգը նախադասությունը վերածում է «հնչաշղթայի»։ Ֆ. Դանեշը, օրինակ, գտնում է, որ հնչերանգի հիմնական գործառույթյունը պոտենցիալ միավորները ռեալ հաղորդակցող միավորների՝ հնչաշղթաների վերածելու մեջ է (18, 27—26)։

Այս նույն միտքը գտնում ենք Շ. Բալիի մոտ, որը հնչերանգը համարում է ակտուալիզատոր, պոտենցիալ հնչաշղթաները ակտուալի վերածելու միջոց (13, 50—51)։

Քանի որ մեր ուսումնասիրության ընթացքում անմիջականորեն առնչվում ենք «նախադասություն» և «հնչաշղթա» հասկացությունների հետ, կուզենայինք քիչ թե շատ ներկայացնել մեր դիրքորոշումը։*

Ինչպես հայտնի է նախադասության վերլուծությունը իրականանում է նրա տարրերի, այսինքն՝ անմիջական կազմիչների բացահայտմամբ։

«... Շարահյուսական վերլուծության նպատակն է,— գրում է Վ. Քոսյանը,— ցույց տալ շարահյուսական միավորների դերը նախադասության մեջ։ Գոյություն ունի նաև նախադասության ակտուալ անդամատում, որի նպատակը բոլորովին այլ է, քան քերականական վերլուծությունը։ Շարահյուսական կառուցվածքի քերականական անդամատումը կախված է խոսքային իրադրությունից, հաղորդման բովանդա-

---

* Այդ հարցը, ինքնըստինքյան, բարդ է և դեռևս պրոբլեմային։ Հիշենք լեզվաբանների 9-րդ միջազգային համագումարը 1964 թ. Հաագայում, որտեղ վիճարկելու առարկա էին «նախադասություն», «հնչաշղթա» հասկացությունները։ Մասնակիցներից է. Բենվենիստը, Պ. Հարվինը, Ք. Փայքը, Շ. Խատորին և ուրիշները, ընդհանուր խոսքերով ասած, առաջարկում էին դիտել այդ երկուսը որպես ինքնուրույն մակարդակներ՝ մեկը լեզվին վերաբերող (նախադասություն), մյուսը՝ խոսքին (հնչաշղթա), մեկը՝ որպես սուբստանս (հնչաշղթա), մյուսը՝ որպես կառուցվածք (նախադասություն) և այլն։

կուբյունից, հնչերանգից։ Դա նշանակում է, որ քերականական անդամատումը կայուն է։ Մինչդեռ նախադասությունը, իբրև հարաբերականորեն ավարտուն հաղորդում, իմաստային կառուցվածք է, որն արտացոլում է որոշակի հաղորդակցական նպատակ, և դրա հետևանքով նրա իմաստային կառուցվածքը կախված է խոսքային իրադրությունից, խոսողի վերաբերմունքից հաղորդման բովանդակության նկատմամբ։ Այդ պատճառով էլ նախադասության իմաստային անդամատումը (ակտուալ անդամատումը Ա. Ա.) շարժուն է, սուբյեկտիվ։ Նախադասության ակտուալ անդամատումը նրա իմաստային կառուցվածքի վրա է հենվում (ընդգծումը մերն է— Ա. Ա. (9)։

Այսպիսով, նախադասության ձևական վերլուծությունը, որը նույնպես իմաստից անկախ չէ, կայուն է և պայմանավորված չէ խոսքային իրադրությամբ։ Իմաստային կամ ակտուալ հատուկվորումն է, որ կոնկրետ խոսքային իրադրությունում հնչերանգի միջոցով նախադասությունը ներկայացնում է որպես հնչաշղթա։ Ահա թե ինչու, մենք չենք կարող շարակարգային վերլուծությունը կտրել նրա իմաստային շարահյուսական վերլուծությունից։

Կպկին անդրադառնալով հնչաշղթային, որպես շարակարգային համակարգի և հնչերանգի ծավալման հիմնական օջախի, ավելի մոտիկից ծանոթանանք այն անմիջական բաղադրիչների հետ, որոնք մտնում են հնչաշղթայի բովանդակության մեջ և բնականորեն առնչվում հնչերանգի հետ։

Յուրաքանչյուր հնչաշղթա կազմված է ավելի փոքր օղակներից, որոնք որպես շարակարգի միավորներ, լեզվաբանության մեջ հայտնի են հնչադասություն (ֆրազ) անվանմամբ։ Վերջիններիս ձևավորման գործում կարևոր նշանակություն ունի հնչերանգը*։

Հնչադասությունը այն միջին օղակն է, որն ընկած է հնչաշղթայի և հնչատակտի միջև։ Հնչադասությունը ենթակա է ակտուալ հատուկվորման, կարող է կազմված լինել մեկ կամ մի քանի հնչատակտերից և ամենից շատ է ենթակա հնչերանգի իմաստատարբերակիչ աղդեցությանը և ամենից շատ էլ արտահայտում է այն։ Հնչադասային հնչերանգը իրականացնում է այն կապը, որ գոյություն ունի հնչաշղթայի ներսում, նրա տարբեր օղակների միջև։ Հենց հնչադասության մեջ էլ դրսևորվում է թեմայի և ռեմայի հարաբերությունը։

---

* «Գնանք միասին, տեղում ամեն ինչ կտեսնենք» (գործողությունների հաջորդականություն) և «Գնանք միասին՝ տեղում ամեն ինչ կտեսնենք» (պայման-հետևանք)։ Այս երկու հնչադասությունները իմաստային տարբեր հարաբերություններ են արտահայտում սոսկ հնչերանգի շնորհիվ, քանի որ չունեն իմաստատարբերակիչ որևէ այլ ցուցանիշ։

Մյուս օղակը, որ ստացվում է հնչերանգի հատուկթավորող գործունեության հետևանքով, հնչատակտն է՝ շարույթը։ Հայտնի է, որ շարույթի ուսումնասիրությունը լեզվաբանության մեջ կապվում է լ. վ. Շչերբայի անվան հետ։ Հնչերանգը անմիջականորեն կապելով խոսքային շղթայի արտասանական ռիթմական խմբերի առանձնացման հետ, նա գտնում է, որ շարույթները կարող են միավորվել ավելի մեծ խմբերի մեջ՝ տարբեր հնչերանգներով և կազմել ֆրազ (25, 75—86)։ Ֆրազը հնչադասության նմանակն է և որպես հնչաշղթային հաջորդող օղակ, կարող է ներկայանալ միաժամանակ մեկից ավելի հնչերանգներով՝ այսինքն հնչերանգների փոխզով։ Դա կախված է նրա մեջ մտնող հնչատակտերի (շարույթների) բնույթից։ Դրանք կարող են լինել տրոհելի և ոչ տրոհելի։

Լ. Շչերբայի տեսությունը խիստ բեղմնավոր դարձավ։ Փաստորեն դրա հիմքի վրա զարգացան շարույթի մասին ժամանակակից ըմբռնումները (25, 35—36)։

Այսպիսով՝ հնչաշղթան հնչատակտերի տրոհելու և երկանդամ հընչատակտերի միավորումից՝ հնչադասություն կառուցելու ընթացքը առանց հնչերանգը հաշվի առնելու, դառնում է անհնար։ Հնչերանգը, փաստորեն, միավորող դեր է կատարում հնչադասության ձևավորման և նրա իմաստային նպատակաուղղվածության գործում (չնայած հնչադասության մեջ մտնող կառույցները երբեմն ունենում են շարահյուսական բավականաչափ անկախ, ինքնուրույն տեսք։ Օրինակ՝ «Գարունը եկավ, ծառերը ծաղկեցին, հիվանդների վիճակը լավացավ»)։

Մտնելով հնչադասության մեջ, որպես կառույցներ, հնչատակտերը տրոհվելով հանգում են բառերի ու բառակապակցությունների, որոնք որպես անմիջական բաղադրիչներ՝ հնչաբառեր, կազմում են հնչատակտի բովանդակությունը*։

Հնչաբառերը, որպես անմիջական բաղադրիչներ իրենց ցուցանիշներով արտահայտում են կոնկրետ հարաբերություններ՝ կոնկրետ խոսքային իրադրության մեջ (հոլովման, խոնարհման վերջավորություններ, համաձայնություն և այլն)։

Հնչաբառը*, որը պարունակում է շեշտակիր վանկեր, հաճախ նպա-

---

* Բառը ձևաբանական և գործառական ինքնուրույն միավոր է, որի հիման վրա էլ որպես լեզվական միավոր այն առանձնանում է, իսկ հնչաբառի համար հիմք է ծառայում շեշտակրությունը։ Այն կարող է բաղկացած լինել մեկ շեշտակիր բառից և լինել հնչաբառ (գնացինք) և կարող է բաղկացած լինել մեկ շեշտակիր և շեշտազուրկ բառերից և նորից լինել մեկ հնչաբառ (Մի ոհմակ է..., կարմիր հրապարակն է...)։

* Բառը կամ հնչաբառը մենք դիտում ենք միայն տեքստի մեջ և գտնում ենք, որ տեքստից դուրս բառ կամ հնչաբառ չկա։

տակառուղում է ամբողջ հնչադասության կամ հնչատակտի հնչերանգը։ Դա պայմանավորված է նրանով, որ հնչադասությունում կամ հնչատակտում տվյալ հնչաբառը իմաստային ինչպիսի բեռնվածություն ունի՝ իր ինքնուրույն հնչերանգը ոչնչնալով հանդերձ, հնչաբառը մտնելով հնչապատության մեջ, լրացնում է վերջինիս արտահայտած հնչերանգային իմաստը, թուլացնելով կամ ուժեղացնելով այն։

Հնչաբառի հնչերանգը ձևավորող գործոններ են վանկերի քանակը և շեշտի դիրքը, այսինքն՝ բառի ռիթմական պատկերը, սակայն կան նաև այլ գործոններ. օրինակ՝ հնչաբառի դիրքը մնացածների նկատմամբ, հաղորդակցման տեսակը՝ հա՞րց է, հրամա՞ն, թե՞ մեկ այլ տեսակ, հաղորդակցողի վերաբերմունքը ասվածի նկատմամբ և այլն։ Երբեմն հնչաբառային հնչերանգը կարող է իրեն ենթարկել ամբողջ հընչաշղթայի կամ հնչատակտի հնչերանգային պատկերը և հաճախ հաղորդակցման ողջ իմաստը կենտրոնացնել իր շուրջը։ Օրինակ. «Պատերազմ... Մեր և մանուկ ոտքի ելան պաշտպանելու իրենց սրբազան հողը»։ Այստեղ ամբողջ հաղորդակցումը ամփոփվում է առաջին հնչաբառի մեջ, երկրորդ հատվածը լրացուցիչ պարզաբանում է։ Հնչաբառային հնչերանգը միանալով հնչադասության, հնչատակտի արտահայտած հնչերանգին, ուժեղացնում կամ թուլացնում է վերջինիս իմաստը, այսինքն՝ ծառայում է նրան և ո՛չ թե հակադրվում։

Հնչաբառի հետ է կապվում նաև լեզվական հնչերանգային մեկ այլ առանձնահատկություն, որը հաճախ համարում են ինքնուրույն մակարդակ կամ շեշտ։ Դա, այսպես կոչված, լեզվի հնչերանգային ինքնատիպությունն է։ Ամենից շատ այս գործոնը երևան է գալիս, երբ հաղորդակցումը կատարվում է ոչ մայրենի լեզվով։ Մայրենի լեզվի հնչերանգային առանձնահատկություն կարելի է համարել շեշտված վանկերի տեսական արտասանությունը, հաղորդման ելքում հնչերանգային կորագծի անկումը, կամ բարձրացող-իջնող պատկերը և այլն։ Հնչերանգային ինքնատիպության մեջ են մտնում նաև առոգանական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են մայրենի լեզվի հնչերանգային առանձնահատկությունների տեղափոխմամբ կամ տարածմամբ ոչ մայրենի լեզվի վրա։

Հնչաբառային հնչերանգն իր նվաղագույն ծավալով փաստորեն այն հիմքն է, որի վրա ձևավորվում է տվյալ լեզվի հնչերանգային ինքնատիպությունը։

Այսպիսով՝ հնչերանգի ձևավորման ու ծավալման հիմնական ուղղությունը հնչաշղթա-հնչադասություն-հնչատակտ-հնչաբառ-վանկ գծային շարքն է, որտեղ հնչերանգը դրսևորվում է իր բոլոր բնութագրող գործոններով ու գործառույթներով։

Խոսելով հնչերանգի և շարահյուսության փոխհարաբերության մասին, պետք է նշել, որ հնչերանգը, ունենալով իմաստներ հատուցավորող գործառույթ խիստ մոտիկից առնչվում է շարահյուսության հետ, երբեմն փոխարինելով կամ նույնանալով շարահյուսական այս կամ այն միջոցին։ Օրինակ հնչերանգը կարող է լիովին փոխարինել շաղկապին։ Այդ մասին մանրամասը կխոսենք ներքևում։

Նշելով հնչերանգի շարահյուսական բնույթը, հիշենք այն, ինչ Ա. Մ. Պեշկովսկին էր ասում. հնչերանգը և քերականությունը գտնվում են իրար փոխհատուցող (կոմպենսացնող) հարաբերության մեջ (21)։ Այս ընդհանուր դրույթը, սակայն, հիմքում լինելով դիտական, մինչև վերջ չի պարզում, թե ի՞նչ է հասկանում հեղինակը քերականության ասելով. լեզվի կառուցվածքային նորմավորո՞ւմը, թե՞ կառուցվածքային ձևավորման հետ նաև հաղորդակցող, իմաստավորող կողմը։ Երևի այդ անորոշությունն էր, որ Ա. Պեշկովսկուն առիթ տվեց ասելու, որ հնչերանգը թափառում է լեզվի վերին շերտերում (մակերեսում) կամ հնչերանգի և քերականության կամ շարահյուսության հետ ունեցած փոխհարաբերության մասին ի հայտ գան տարբեր, երբեմն հակադիր կարծիքներ։

Այսպես, Ս. Կարցևսկին (28) պնդում է, որ հնչերանգը քերականության հետ ոչ մի կապ չունի։ Նա գտնում է, որ հնչերանգը իրականանում է հնչաշղթայի ոլորտում, իսկ քերականության համար կարևորը նախադասությունն է։ Քանի որ հնչերանգը ծառայում է հնչաշղթային (նաև հնչադասությանը և այլն), ապա ուրեմն նա քերականության հետ գործ չունի։

Կարծիք կա նաև, որ հնչերանգը քերականական, շարահյուսական, երևույթ է։

Հայտնի է, որ հնչերանգով ձևավորված խոսքը և դրա շարահյուսական ձևավորումը հաճախ իրար չեն ծածկում։ Օրինակ՝ Նա գնաց գնացքով։ Նա գնաց գիշերը։ Նա գնաց զայրացած։ Նա գնաց զարմացած։ Սրանք նախադասություններ են, որոնք իրարից տարբերվում են սոսկ երկրորդական անդամով։ Շարահյուսական-քերականական վերլուծության ժամանակ դրանք իրարից տարբերակվում են սոսկ երկրորդական անդամի քերականական դրսևորմամբ։ Հաղորդման զգացական կողմը այս դեպքում հավասարվում է զրոյի։ Մինչդեռ ստանալով տարբեր հնչերանգային, իմաստային գունավորումներ, դրանք իրենց մեջ պարունակում են այնքան շատ հաղորդում, որ տեղեկություն է տրվում գործողու-

թյան, օբյեկտի ոչ միայն ներկա վիճակի, այլ նաև նախորդի և նույնիսկ հետևանքների մասին։

Ինչպես տեսնում ենք հնչերանգի գործունեության ոլորտն ավելի լայն է, քան այդ կարող է ներկայացվել նախադասության սահմաններում։ Հնչերանգի լիածավալ դրսևորման համար միայն շարահյուսական քերականական կառուցվածքի ուսումնասիրությունը բավարար չէ։ Քերականական կառուցվածքից բացի պետք են նաև արտալեզվային և սուբյեկտիվ այլ գործոններ (ենթատեքստ, նպատակային ուղղվածություն, հաղորդման հասցեագրում, անհատական վերաբերմունք հաղորդածի նկատմամբ և այլն), որպեսզի նախադասություն-հնչաշղթան դառնա կոնկրետ հաղորդակցում։

Այսպիսով, հնչերանգը մի մակարդակ է, որը ունենալով իր արտահին ձևավորումն ու բովանդակային իմաստը, նպատակային հատույթավորման ու իրացման (ակտուալացման) շնորհիվ ծառայում է իմաստների տարբերակմանը։ Այս ամբողջը լեզվային մի երևույթ է՝ պարուրված հնչերանգային-արտահայտչական թաղանթով։

Սա է հնչերանգի հասարակական, լեզվական կողմը, որը իրականանում է հաղորդակցման ոլորտում։

Հնչերանգն ունի նաև իր նյութական, ֆիզիկական կողմը, որի հետազոտությունն իրականանում է մի քանի պարամետրերով, որոնց անվանում ենք հնչերանգի անմիջական կազմիչներ։ Դրանք են՝ 1. հիմնական տոնի հաճախականությունը (մեղեդայնություն), 2. ուժգնությունը (ինտենսիվություն), 3. տևողությունը։

Հիմնական տոնի հաճախականությունը, որն արտահայտվում է մեղեդայնության կորագծով, հնարավորություն է տալիս հնչաշղթայի մեկ տեսակը տարբերել մեկ այլ տեսակից։ Ըստ այդ կորագծի խմբավորվում են հնչաշղթաները, որոնց հիման վրա հնարավոր է դառնում ստանալ յուրաքանչյուր հաղորդակցական տեսակի մեղեդայնության կաղապարային նմուշը։ Այսպես՝ պատմողական նախադասության համար բնորոշ է մեղեդայնության իջնող կորագիծ, իսկ հարցական նախադասության համար՝ բարձրացող կորագիծ։

Մեղեդայնության կորի շարժման հիման վրա իրականանում է հնչաշղթայի հատույթավորումը՝ ըստ իմաստային հատվածների։

Ուժգնությունը դրանցվող հնչաշղթայում առանձնացնում է առավել շեշտված հնչաբառերը, որոնք և դառնում են հիմնական իմաստ կրողները (դրանք կարող են կապված լինել և՛ ենթատեքստի, և նոր հաղորդվող տեքստի հետ)։ Երբեմն ուժգնության միջոցով արտահայտվում են զգացական ղանագան կողմեր։

Հնչաշղթայի հատույթավորման գործում մեծ դեր ունի հնչերանգի

երրորդ կազմիչը՝ տևողությունը։ Վերջինս դրսևորվում է նաև դադարի միջոցով, որը, լինելով հնչերանգը հատուցթավորող գործոն, իրականացնում է հնչերանգի ծավալումը ժամանակի մեջ։ Դադարը հենց այն իրական գործոնն է, որը իրականացնում է հատուցթավորումը՝ առանձնացնելով իմաստային տարբեր բեռնվածություն ունեցող հատվածները, և, որ կարևորն է, դրսևորում է դրանց մեջ գոյություն ունեցող կապը և կախվածությունը։

Ժամանակի հանգամանքի հետ անմիջականորեն կապվում է նաև տեմպի գաղափարը, որը դադարի հետ միասին իրականացնում է հընչաշղթայի հատուցթային հատվածների կապն ու փոխկապվածությունը և իր առավել կամ պակաս ծավալմամբ (արագ կամ դանդաղ տեմպ) կարող է դառնալ իմաստներ ընդգծող և առանձնացնող։

Հնչերանգի ֆիզիկական բովանդակության մեջ մտնող այս բոլոր անմիջական կազմիչները՝ մեղեդայնություն, ուժգնություն և տևողություն (դադար, տեմպ) կապված են գծային հարաբերությամբ և մտնում են շարակարգի կառուցվածքային բովանդակության մեջ։ Հետևաբար՝ հնչերանգը՝ ամբողջությամբ առնված և լեզվական և ֆիզիկական առումով, դառնում է հաղորդակցման մի ամբողջական միավոր, որի գործառույթները՝ հատուցթավորող, կապակցություններ իրականացնող և իմաստային հարաբերություններ արտահայտող, գտնվում են գծային-շարակարգային փոխհարաբերության մեջ։

Շարակարգ հասկացությունը վերաբերում է հնչերանգի ինչպես ֆիզիկական, այնպես էլ լեզվական ոլորտին, որոնք գտնվում են ոչ միայն փոխկապակցության, այլև փոխպայմանավորվածության մեջ։

Հենց այդ պատճառով էլ համապատասխանություն, ներդաշնակություն գոյություն ունի հաղորդակցման տեսակի (պատմողական, կամ հարցական) և նրա ֆիզիկական պատկերի միջև (մեղեդայնությունն ունի ավարտվող կամ շարունակվող կորագիծ, առկա է հնչերանգի միջուկը՝ ի դեմս շեշտված վանկի և այլն)։

Շարակարգային կապակցվածությունը, որ ինքնին ենթադրում է գծային հարաբերություն և փոխկապակցություն, այսպիսով դառնում է հնչաշղթան բնութագրող հատկանիշներից մեկը։

Կառուցվածքային տեսակետից այդ կապակցվածությունը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ։ Հնչաշղթաների մեջ մտնող հնչադասությունները կարող են.

1. շարահյուսորեն բխել մեկը մյուսից. այս դեպքում մենք կունենանք ստորադասում՝ գլխավորի և երկրորդականի հարաբերություն։

2. Կապակցվածությունը կարող է լինել շարահյուսական միջոցների առկայությամբ, սակայն իրականում մենք կունենանք համազոր ան-

դամներ, որոնք կարող են գոյություն ունենալ նաև ինքնուրույն. օրինակ. բարդ համադասությունը.

3. Կապակցվածությունը կարող է արտահայտվել միայն հնչերանգով, համապատասխան բառերի և քերականական միջոցների բացակայության պայմաններում, երբ հասկացվում է այն, ինչ ասված է նախադասությունում, և այն՝ ինչ չի ասված, սակայն որը հաստատ ենթադրվում է: Օրինակ, միանդամ նախադասություն-հնչադասությունը, որը նույնքան լիարժեք է շարահյուսորեն և իմաստի արտահայտման տեսակետից, որքան բազմանդամ կառուցվածք ունեցողը:

Յուրաքանչյուր կապակցված հնչաշղթա հաղորդակցում է դառնում դադարների և հնչերանգային տատանումների շնորհիվ, որոնք ընկալվում են և դառնում են հնչաշղթայի հատույթավորման պատճառ: Սա հնչաշղթայի ներքին կառուցվածքն է, որի բացահայտումը հանգում է նրա անմիջական կազմիչների բացահայտմանը: Վերջիվերջո ամենակարևոր քայլը, հնչերանգի դերի բացահայտման համար՝ դա ա) հնչաշղթան հատույթավորելն է՝ ըստ անմիջական կազմիչների և բ) հնչերանգի ծավալման վերջին օղակի գտնելը (դա կարող է լինել և՛ հնչատակը, և՛ հնչաբառը):

Դադարը, որն ունի հիմնականում հատույթավորող և իմաստներ առանձնացնող գործառույթ, հնչաշղթայում, ըստ նպատակադրման, առանձնացնում է այնպիսի հատվածներ, որոնց նվազագույն օղակը հանգում է հնչատակին (վերջինս կարող է դրսևորվել նաև հնչաբառով), և դա փաստորեն, դառնում է տվյալ շարակարգի վերջին իմաստակիր հաղորդակցող օղակը:

Հնչատակը կարող է կազմված լինել մի քանի հնչաբառերից, որոնք կապված են շարակարգային ստորակարգությամբ և կազմում են մեկ շարույթ: Հիմնական հաղորդում կրող հնչաբառը ավելի է շեշտված և ունի ղեկավարություն, մանավանդ, երբ այն գտնվում է հնչատակի վերջում: Օրինակ՝ այս տարի Գառնիում ծառերը վաղ ծաղկեցին: Ընդգծված հատվածները, որպես հիմնական հաղորդում կրողներ, շեշտակիր են, հնչման ավելի երկար տևողություն ունեն: Հնչման տևողության մասին խոսելիս պետք է իմանանք, որ խոսքը վերաբերվում է շեշտված վանկին: Շեշտակիր վանկը (հատկապես, եթե այն աղդարարում է հարցման ավարտը) ամենաերկարն է, կարճ է առաջին շեշտված վանկը, այնուհետև գալիս են միջին վանկերը: Նույն շարակարգային գծային հարաբերությունն ենք տեսնում նաև մեկական հնչաբառերից կազմված հնչատակներում:

Օրինակ՝ Մբենց: Շաբժվեցինք: Ամենից երկար տևողություն ունեն վերջին շեշտված վանկերը: Քանի որ հայերենում շեշտը կայուն շար-

ժական է և միշտ ընկնում է վերջին վանկի վրա, մեր դիտողությունը առաջին շեշտվող վանկի մասին ներկայացնում ենք մի քանի հնչաբառերով, որոնք, ինչպես ասվեց, կարող են կազմված լինել նաև բառակապակցություններից։ Օրինակ՝ ես ես գնալ, լաց ու կոծ դնել, թև ու թիկունք լինել և այլն, որոնք գրանցվում են յեսյես, լացուկոծ, թեվուքիկունք։ Այս հնչաբառերի գրանցված ձևերում առաջին շեշտված վանկերը կարճ են, իսկ միջին վանկերը ավելի կարճ են առաջիններից։ Այս բոլորին ավելանում է մեղեդայնության շարժումը և հնչատակը ստանում է իր կառուցվածքային պատկերը՝ ըստ հաղորդման տեսակի. եթե այն պատմողական-դատողական է, ապա ունենում է թեթևակի բարձրացող, ելքում՝ իջնող ավարտվող կորագիծ, եթե հարցական է, կորագիծը ելքում լինում է բարձրացող։

Հնչաշղթա, հնչադասություն, հնչատակ, հնչաբառ, վանկ շարքում հնչատակը, որը երբեմն համընկնում է հնչաբառին, այն հիմնային օղակն է, որտեղ իրականանում և կոնկրետանում է հնչերանգը։ Նկատի առնելով, որ հնչատակը միաժամանակ կարող է հանդես գալ և՛ որպես գծային հատույթավորման ենթակա երևույթ (օր. բարդ նախադասություն-հնչաշղթայում), և՛ որպես հատույթավորումից դուրս գտնվող երևույթ (օր. միանդամ նախադասություններում), մենք մեր ուսումնասիրության նյութը ընտրել ենք բարդ հնչադասություններից, որոնցում հնչատակները կազմված են մեկից ավելի հնչաբառերից։ Բարդ հնչադասություններից (շաղկապավոր կամ անշաղկապ) կազմված հնչաշղթաներում ձևական հատույթավորումը մեծ մասամբ համընկնում է իմաստային-շարահյուսական հատույթավորմանը։ Սակայն երբեմն, նույնիսկ բավականին հաճախ, հատույթավորման հնչերանգային և շարահյուսական սահմանները չեն համընկնում։ Այսպիսի դեպքերում հանդես են գալիս այլ իմաստային գործոններ, (ավելի խորքային), քան կարող էին դրևևորվել սոսկ հնչատակտային-շարահյուսական հատույթավորման ընթացքում։ Դրանք կարող են պայմանավորված լինել թեմա-ռեմա հարաբերությամբ՝ կապված ակտուալ հատույթավորման հետ։

Հնչերանգի ուսումնասիրումը բարդանում է նաև այլ հանդամանքների պատճառով։ Նախ՝ թվում է, թե հնչերանգը որպես լեզվական երևույթ համընդհանուր է այն առումով, որ հատուկ է բոլոր լեզուներին։ Մյուս կողմից հնչերանգը ունի դրսևորման իր յուրահատկությունները։ Այս առումով նույնիսկ նույն լեզվում առկա «Ես համոզեցի նրան չվերադառնալ» հնչաշղթան ըստ նպատակադրման կարող է ունենալ մի քանի մեկնաբանություններ և դրանց համապատասխան կետադրական նշաններ։ Այսպես. «Ես համոզեցի՛ նրան չվերադառնալ։ Ես համոզեցի նրան՝

չվերադառնալ։ Նա համոզեցի նրա՛ն. չվերադառնալ և այլն։

Պարզ է, որ նման հնչաշղթաների հատույթավորումն ըստ իրադրության բավականաչափ սուբյեկտիվ է և համեմատության համար որևէ նշր չի կարող ունենալ։ Համեմատության նշրեր գտնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրության քիչ թե շատ համընդհանուր նյութ, որը կհենթարկվի համակարգային ուսումնասիրության։

Բարդ հնչադասություն-նախադասությունները, ինչպես շաղկապավոր, այնպես էլ անշաղկապ, նույնպես դժվարություններ են ներկայացնում ուսումնասիրության համար, քանի որ դրանց անդամների հարաբերությունները կարող են տարբեր ենթատեքստերով ներկայանալ, սակայն ավելի հեն «ընդ-ում» համընդհանուր հատույթավորման, մանավանդ, եթե դրանց հնչերանգային և շարահյուսական հատույթավորման սահմանները համընկնում են։

Սա նույնպես խոսում է այն բանի օգտին, որ բարդ հնչադասությունները լինեն շաղկապով, թե անշաղկապ, ուսումնասիրության համար ավելի նպատակահարմար են, քան միանդամ կառույցները։

Մեր հետազոտության համար նպատակահարմար չեն նաև հարցական, հրամայական կամ բացականչական բնույթի հնչադասություն-նախադասությունները, քանի որ դրանց մեջ հնչերանգն ինքնըստինքյան թևշադրվում է և, կարծենք թե, նախապես պարտադրվում։

Այսպիսով հնչերանգի, որպես շարակարգային կապակցության միջոցի բացահայտման համար ամենից ավելի հարմար նյութ կարող են լինել պատմողական, դատողական, այսպես ասած, չեզոք բնույթի, շաղկապով և անշաղկապ բարդ հնչադասություն-նախադասությունները, որոնց ուսումնասիրության ժամանակ կամա թե ակամա առնչվում ենք նաև միջանկյալ պանաղան բնույթի հնչադասությունների հետ։

ՀՆՉԵՐԱՆԳԸ ԵՎ ՇԱՂԿԱՊԸ։ ՀՆՉԵՐԱՆԳԻ ՇԱՐԱԿԱՐԳԸ ԱՄԲՈՂՋԱՑՆՈՂ ԴԵՐԸՆԱԹՈՒԹՅՈՒՆԸ։ ԴԱԴԱՐԸ ՈՐՊԵՍ ՇԱՂԿԱՊԻՆ ՀԱՄԱԶՈՐ ՄԻԱՎՈՐ

Խոսելով հնչերանգի հատույթավորող և կապակցող դերի մասին հարկ է նշել, որ հնչերանգը ոչ միայն կապակցում է բարդ հնչադասություն-նախադասությունների առանձին հատվածները, որոնք իրար նկատմամբ կամ համարոր են կամ ստորադաս, այլև արտահայտում է իմաստային այն հարաբերությունը, որ կա դրանց միջև։ Այս դեպքում հնչերանգի գործառական դերը զգալի մասով փոխանցվում է շաղկապի կամ կապակցող բառի վրա։ Ա. Պեշկովսկին նշում է, որ տարբեր հնչերանգներ առընչվում են կապերի ու շաղկապների տարբեր խմբերի հետ։ Օրինակ, թվարկման հնչերանգին համապատասխանում են կապակցող շաղկապները, բացատրող հնչերանգին՝ պատճառական կա-

պերը, նախախզգուշացնող հնչերանգին՝ բացատրող շաղկապները և այլն (19)։

Կապերի ու շաղկապների մասին Գ. Ջահուկյանը գրում է. «Ինչպես հայտնի է, կապերը կապվում են առաջին հերթին գոյականների, շաղկապները՝ դիմավոր բայերի հետ։ Նրանք փաստորեն մտնում են գոյականների և դիմավոր բայերի վերլուծական հարացույցների մեջ և մեր կողմից քննվում են կամ գոյականական բառակապակցության, կամ բայական բառակապակցության ու նախադասության կաղապարների մեջ։ Սակայն նրանց բուն էությունը ոչ թե հատկանշումն է, մի գոյականը կամ մի բայը մի այլ գոյականից կամ բայից տարբերելու գործառույթյունը (ֆունկցիան), այլ դրանք հարաբերելու, դրանց հարաբերության բնույթը ցույց տալու գործառույթյունը (ֆունկցիան)։ Կապերը և շաղկապները հարացուցային արժեք են ձեռք բերում՝ հանդես գալով որպես բառերի էերակաանական տարբերիչներ և, հետևաբար, որպես խոսքի մասային պատկանելիության հատկանիշներ» (7, 48—49) (ընդգծ. մերն է, Ա. Ա.)։

Քանի որ կապերն ու շաղկապները դառնում են հնչերանգին և նրա կազմիչներին (դադար և այլն) փոխարինող ցուցիչներ, հետևաբար և նրանց բացակայության դեպքում այդ գործառույթյունը իր վրա է վերցնում հնչերանգը՝ ավելի ստույգ՝ դադարը։

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այս տեսակետից բարդ հնչադասություն-նախադասությունների կրճատված (շաղկապից և կապից ազատված) ձևերը, որոնք հաճախ ընկալվում են որպես մեկ ամբողջություն, կամ մեկ հնչաբառ կամ շարույթ։ Օրինակ «Կմեծանաս՝ կմոռանաս», (Երբ մեծանաս, այն ժամանակ կմոռանաս) «Անձրևից վախեցողը՝ ջուրը չի մտնի (Եթե անձրևից վախենում ես, ապա ջուրը չես մտնի), «Ջուրն ընկնողը՝ անձրևից չի վախենա» (Եթե ընկել ես ջուրը, ապա անձրևից պետք չէ վախենալ) և այլն։

Այս դեպքում կարելի է ասել, որ հաճախ ոչ միայն շաղկապին կամ կապին այլ նաև ցանկացած բառի փոխարեն հանդես եկած հնչերանգը հաղորդման իմաստը ավելի ուժեղ և նպատակասլաց է դարձնում, իսկ խոսքը հնչում է ավելի սահուն։ Շաղկապի վերականգնումը կամ մուտքը կենդանի խոսքում այն դարձնում է ծանր, շատ դեպքերում էլ խախտում կամ թուլացնում է հնչադասության մասերի միջև եղած կապը (երբեմն նույնիսկ այդ մասերի իմաստային հարաբերությունը)։

Նախապես շաղկապով կապակցվող հնչադասության հատվածները, որոնք մեծ մասամբ համապատասխանում են հնչատակտերին (երբեմն

հնչաբառերին), շաղկապը հանելուց հետո կապակցվում են հնչերանգով, որի կազմիչներից հիմնական դերն այստեղ պատկանում է դադարին։

Սա իրավունք է տալիս հնչերանգը դասելու քերականական, շարահյուսական միջոցների շարքում։ Ա. Պեշկովսկու փոխարինման (կոմպենսացիայի) օրենքը վերաբերվում է հնչերանգի հատկապես այս գործառույթներին։

Կապերից ազատված բարդ համադասական նախադասություն-հնչադասությունը ընկալվում է որպես մի քանի պարզ հնչադասությունների խումբ։ Դրանք միմյանցից առանձնանում են դադարով։ Օրինակ. Օրը ցուրտ էր *(և)* մարդիկ կուչ եկած էին ֆայտում *(իսկ)* արևը ճամարյա չէր տաքացնում։

Բարդ ստորադասական նախադասություն-հնչադասություններում դադարի դերը պակաս նշանակալից է, քան բարդ համադասականներում։ Վերջիններում (նույնիսկ շաղկապով կազմություններում) դադարը ավելի մեծ գործառույթ ունի, մինչդեռ ստորադասական ձևերում շաղկապները ինքնըստինքյան թելադրում են կարևոր միտքը և հնչերանգի գործառույթները թուլանում է։

Այսպիսով դադարը որպես հնչաշղթայի հատուկ կազմավորման և իմաստային հատվածների առանձնացման հիմնական միջոց, մեծ դեր ունի շարակարգային հարաբերությունները դրսևորելու և կապակցությունը իրականացնելու գործում։ Այն հանգում է հիմնականում երկուսի. առաջինը՝ հնչաշղթան հատուկ կազմավորելուն և մյուսը, որ բխում է առաջինից՝ զանազան իմաստներ առանձնացնելուն, այսինքն՝ իմաստներ հաղորդելուն։

Դադարն անմիջականորեն առնչվում է տեմպի հետ։ Հնչաշղթայի հիմնական իմաստը արտահայտող հատվածը, լինի հնչադասություն, թե հնչատակտ, արտասանվում է կամ արագ տեմպով, կամ, որն ավելի հաճախ է պատահում, դանդաղ տեմպով։ Սա հատուկ է հատկապես բարդ ստորադաս բնույթի հնչադասություններին, որտեղ կարիք է զգացվում հնչերանգային շեշտվածություն հաղորդել մտքի կենտրոնին, հիմնական հաղորդում կրող հատվածին։

Այսպիսով՝ հնչերանգի անմիջական կազմիչներից՝ դադարը և տեմպը իրենց վրա են վերցնում հնչաշղթայի գլխավոր իմաստը արտահայտող հատվածի առանձնացման գործը։

Դադարի և տեմպի միջոցով գլխավոր իմաստակիր հատվածի առանձնացման ժամանակ կարևոր նշանակություն է ստանում այդ հատվածի շեշտակրության աստիճանը։ Այստեղ արդեն մենք առնչվում ենք շարակարգի վերջին օղակի՝ վանկի հետ։

Համառոտակի անդրադառնանք շարույթ-հնչատակտային և բառ-հնչաբառային շեշտերի փոխհարաբերության հարցին։

Դրանք ինքնուրույն միավորներ են և հանդես են գալիս մեկը բառ-հնչաբառում, իսկ մյուսը՝ շարույթ-հնչատակտում։ Տարբերակվում են դրանք նաև ինչպես իրենց գործառույթամբ, բաղկացուցիչներով, այնպես էլ կիրառման օրինաչափություններով։

Շեշտ ասելով ընդհանրապես հասկանում ենք որևէ վանկի առանձնացումը, շեշտումը։

Շարույթային-հնչատակտային շեշտը (նվազ բացառություններով) առանձնացնում է բառի մեջ այն վանկը, որն իր հերթին առանձնացնում է բառային-հնչաբառային շեշտը, դրանով իսկ առանձնացնելով բառ-հնչաբառը, որպես ինքնուրույն միավոր։

Շարույթ-հնչատակտային շեշտը բնորոշվում է. 1. նախադասության-հնչադասության արտահայտած որոշակի բովանդակությամբ, բառ հնչաբառի իմաստային բեռնվածությամբ և մյուս՝ նման միավորների հետ ունեցած հարաբերությամբ։ 2. Կախման մեջ է նախադասության շարահյուսական կառուցվածքից (վերջինիս արտահայտած բովանդակությունից)։ 3. Պայմանավորված է նախադասություն-հնչադասության ռիթմական կառուցվածքով։ Այս երեք՝ իմաստային, քերականական և ռիթմական գործոնների փոխհարաբերությամբ է պայմանավորված շարույթ-հնչատակտային շեշտը։

Վերջինս ունի իր բաղկացուցիչները կամ կազմիչները։ Դրանք են. 1. Հնչյունների արտասանական լարվածությունը՝ կախված արտաշընչման ուժի և արտասանական օրգանների լարվածության աստիճանից։ 2. Ձայնի բարձրությունը և տևողությունը (երկարությունը). այսինքն՝ հիմնական տոնի փոփոխությունները։ Վերջինիս դերը չափազանց կարևոր է։ Այս բոլոր կոմպոնենտները միշտ չէ, որ միասին են գործում։ Շատ հաճախ միայն հիմնական տոնի և տևողության տատանումներով, ուժգնության ոչ ցայտունության պայմաններում, իրականանում է վանկի առանձնացումը (հատկապես պատմողական-դատողական խոսքում)։

Հարկավոր է տարբերել բառ-հնչաբառը, որպես ինքնուրույն նյութ և բառ-հնչաբառը, որպես կապակցված տեքստի (հնչաշղթայի) հատված։ Վերջինս հնչյունների գծային հաջորդականությամբ պայմանավորված մի շարակարգ է, որտեղ կարևոր դեր են ստանում հնչյունների արտասանական կապակցությունը, վանկային կառուցվածքը և շեշտը, որոնք շարակարգային հիմնական միավորներն են։ Հարկ է նշել, որ հիմնական տոնի փոփոխությունները վերաբերում են ոչ թե առանձին բառ-հնչաբառերին, այլ ամբողջ նախադասություն-հնչադասությանը, քանի որ հիմնական տոնի փոփոխությունները պայմանավորված են նախադա-

սության-հնչադասության զգացական ուղղվածությամբ, երանգավորումով և այլն։

Այսպիսով, չնայած հիմնական տոնի փոփոխությունները (մեղեդայնությունը) մեծ մասամբ տեղակայվում են այս կամ այն բառի շրջանակներում, այնուամենայնիվ այն բնութագրում է ողջ շարույթը։

Բառ-հնչաբառային շեշտը հանդես է գալիս մնացած վանկերի նկատմամբ իր կազմիչների՝ արտասանության ուժգնության, տևողության հետ ունեցած հարաբերությամբ։ Դրան ավելանում է տվյալ շարույթ-հնչատակտը բնութագրող մեղեդայնության գործոնը։ Եթե շարույթ-հընչատակտային շեշտը ամբողջությամբ ծառայում է նախադասության-հնչադասության իմաստային հարաբերություններ արտահայտելուն և ռիթմական (իմաստային) խմբերի (շարույթների) առանձնացմանը, ապա բառ-հնչաբառային շեշտը բառ-հնչաբառը առանձնացնում է որպես ինքնուրույն արտասանական-լսողական միավոր, որի ժամանակ հաշվի է առնվում բառի շեշտվող վանկի հարաբերությունը մնացած վանկերի նկատմամբ։

Ինչպես ցույց են տալիս մեր դիտողությունները հայոց լեզվում յուրաքանչյուր բառ-հնչաբառային հիմնական շեշտն ունի իրեն հարակից թույլ մեկ կամ մեկից ավելի շեշտեր, որը պայմանավորված է բառ-հընչաբառի վանկային ծավալով։ Այդ ծավալի մեջ ներառնվում է նաև «Ը»—գաղտնավանկը։ Այստեղ գործում է այն ընդհանուր դրույթը, որ յուրաքանչյուր վանկ տեսականորեն կարող է ունենալ դրսևորման տարբեր ձևեր, որոնց մեջ հիմնականը և գործոնը՝ շեշտվածությունը կամ ոչ-շեշտվածությունն է։

Պետք է նկատի ունենալ մեկ հանգամանք, որ վանկի արտասանության երկար տևողությունը շեշտված վանկի համար երբեմն նշանակություն չի ունենում։ Ի միջիայլոց հիմնական տոնի հաճախականությունը, այսինքն մեղեդայնությունը նույնպես, հաճախ շեշտված և նախաշեշտ կամ ետշեշտ վանկերի համար մեծ տարբերություններ չի ներկայացնում։ Երբեմն նույնիսկ առավել շեշտված վանկը արտասանվում է ավելի կարճ քան մյուս շեշտազուրկ վանկերը։ Սա պայմանավորված է խոսքի արտասանության ընդհանուր տեմպով և իմաստակիր հատվածի առանձնացման ոճական յուրահատկություններով։

Այսպիսով վերը շարադրածից հետևում է, որ լեզվում հնչերանգի առաջնային դերը անմիջականորեն ի հայտ է գալիս հնչաշղթայում։ Սրանով է պատճառաբանվում այն, որ շարահյուսական տարբեր կառուցվածք և իմաստային տարբեր կապակցություններ (պատճառ-հետևանք, հետևանք-պատճառ, բացահայտող և այլն) ունեցող հնչաշղթաներում առաջին հերթին ընկալվում են հնչերանգային առանձնահատկությունները.

հնում միայն բովանդակային տարբերություններ։ Սա վկայում է այն, որ հնչերանգը, որպես խոսքի հետ ծնված ու գործող երևույթ, ունի առաջնային ընկալում և ըմբռնում, ընդգրկում է լեզվի բոլոր ոլորտները առանց բացառության (2)։

Անդրադառնալով շարակարգը եղրափակող օղակին՝ վանկին, նշենք, թե վանկի հետ առնչվող հարցերից որոնք են առավել կարևորները։

«Վանկը,— գրում է Գ. Ջահուկյանը,— արտասանության (արտահայտության պլանի հնչական դրսևորման) շարակարգային նվազագույն միավորն է, հնչաշղթան՝ առավելագույնը» (7)։

Վանկերի բնութագրման ժամանակ նկատի են առնվում մի քանի հանգամանքներ. նախ՝ նրանց կազմիչների գերակշռող որակը (բաղաձայնի, թե ձայնորդի գերակշռություն), այնուհետև կազմիչների քանակը, հաջորդականությունը։ Տեսականորեն վանկային կաղապարը կարող է ունենալ բավական մեծ թվով հնարավոր տարբերակներ, այսինքն՝ բաղաձայն-ձայնավոր-ձայնորդ հնչույթների կապակցման և հաջորդականության ձևեր։

Սակայն իրականում յուրաքանչյուր լեզվում գործում են այդ հնարավորություններից միայն որոշ կոնկրետ դեպքեր։

Ջահուկյանն իր «ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատությունում անդրադառնալով «վանկ» հասկացությանը, ներկայացնում է վանկի հետևյալ կաղապարային ձևը [(C+ (C+) V) +C +C(+C)]։ Հայերենի համար հեղինակը տեսականորեն հնարավոր է համարում հետևյալ տիպերը՝ մեկ միանդամ (V), երկու երկանդամ (CV, VC), երեք եռանդամ (CCV, CVC, VCC), երեք քառանդամ, (CCVC, CVCC, VCCC), և մեկ վեցանդամ (CCVCCC)։ Այսպիսով՝ ընդամենը 12 տիպ՝ ա, կա, ակ, լյա, տար, արջ, ձյուն, դործ, անցք, կյանք, պարտք, կյանցք ձևերը, որոնցից բոլորը չեն, որ ակտիվ գործուն են (7, 87—88)։

Ինչպես ասվեց, ուժգնության մեկ շեշտ ունեցող վանկերը և վանկերի կապակցությունները կազմում են հնչաբառեր։ Վերջիններս բացի ուժգնության մեկ շեշտից, կարող են ունենալ մի քանի թույլ շեշտեր (վերևում դրանց մասին խոսվեց)։

Հնչաշղթայի հնչերանգային պատկերի և հաղորդակցական տեսակի բնութագրման համար կարևոր նշանակություն ունի այն, թե շղթան եղրափակող հնչաբառը հիմնական հաղորդում կրո՞ղն է թե՞ ոչ, և շեշտվող վանկի բնույթը (երկար կամ կարճ լինելը)։

Վանկի ուսումնասիրությունը՝ որը կարելի է կատարել ինչպես գործառական-տեսական առումով, այնպես էլ փորձառական, հնարավո-

րություն է տալիս պարզելու վերջինիս տեղը և դերը հնչերանգի և նրա մյուս կազմիչների հետ ունեցած փոխհարաբերության պրոցեսում։

Վանկի ձայնաբանական հետազոտության ժամանակ վանկաբաժան սահմանը որոշելը հիմնականում պայմանավորված է շեշտվող վանկը շրջափակող հնչյունների որակով։

Հայտնի է, որ հնչաշղթայում ձայնորդ-բաղաձայն-ձայնավոր հաջորդականության վանկաբաժան սահմանը գտնելը բավական դժվարություն է ներկայացնում, քանի որ հիմնական հնչյունական տարբերակիչ հատկանիշները, որոնք պետք է հիմք հանդիսանան այդ բաժանման համար, շատ դեպքերում գործուն չեն լինում (օրինակ, վանկի մեջ մտնող ձայնավորի երկարությունը, ձայնավորի և հարևան բաղաձայնի միջև եղած որակական ցուցանիշները, բաղաձայնի որակական ցուցանիշները հարևան՝ նախորդող կամ հաջորդող, ձայնորդ-ձայնավորների ֆոնի վրա և այլն)։

Հնչաշղթայի շեշտվող հնչաբառը, որը հիմնական հաղորդում կրողն է, կարող է հանդես գալ հնչաշղթայի տարբեր մասերում, և սկզբում, և միջին հատվածներում, և վերջում։ Այս դեպքում շեշտակիր վանկի փոխհարաբերության շրջանակները լայնանում են և վանկը կազմող կապակցությունները մտնում են նոր փոխհարաբերությունների մեջ իրենց նախորդող կամ հաջորդող հնչաբառերի սահմաններում։ Վանկաբաժան սահմանները նման դեպքերում որոշելը դժվարություն է ներկայացնում, քանի որ ի հայտ են գալիս լեզվական նոր գործոններ՝ վանկի մասնատում, առնմանություն, տարնմանություն, հնչափոխության այլ կարգի երևույթներ, որոնք իրենց հերթին որակապես փոխում են վանկերը։ Հնչաբառի շեշտակիր վանկը անմիջականորեն պայմանավորվելով տոնային ուժգնության փոփոխություններով, դառնում է իմաստային առումով ամենից կարևորը։ Մնացած վանկերը կամ զուրկ են շեշտից, կամ էլ ունեն շատ թույլ արտահայտված շեշտ և ստորադասվում են գլխավոր շեշտ կրող վանկին։

Միշտ չէ, սակայն, որ ուժգնության առավելագույնը մենք արձանագրում ենք հիմնական շեշտ կրող վանկում։ Լինում են դեպքեր, երբ հարաշեշտ վանկերը ունեն ուժգնության ավելի բարձր արտահայտված պատկեր, քան գլխավորաշեշտ վանկը։ Այստեղ դեր են խաղում վանկարար հնչյունների որակը, վանկերի բնույթը։

Այսպիսով՝ հնչերանգի շնորհիվ շարակարգի անդամների միջև ստեղծված աստիճանական ստորակարգումը և իմաստային փոխպայմանավորվածությունը իր արտացոլումն է գտնում նույն այդ հնչերանգի ֆիզիկական մի քանի կազմիչների՝ մեղեդայնության, ուժգնության և տևողության տարբեր դրսևորումների և բաշխվածության մեջ։ Դա պայ-

մանավորված է տվյալ հնչաշղթայի տարբեր հատվածների ունեցած հաղորդման կարևորության և մտքի բեռնվածության աստիճանով։

ՀՆՉԱՇՂԹԱ ԵՎ ԱՐՏԱՍԱՆԱՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հնչաշղթան մենք դիտում ենք որպես հնչյունական կապակցությունների մի ամբողջական կառույց, որն իր հերթին կազմված է իրար վրա փոխներգործող միկրոկառույցներից։ Դրանք դրսևորվում են հիմնականում հնչյունային կամ վանկային ձևերով, որոնք իրենց հերթին մտնում են զանազան կապերի մեջ՝ կապված արտասանության սկզբի, վերջի կամ միջուկի հետ և կազմում ինչպես հնչյուն-հնչույթային, այնպես էլ վանկային ռիթմական կառույցներ։

Հնչյունային միկրոկառույցը այն առաջնն է, որն ընկած է մնացած օղակների՝ վանկային կամ ռիթմական կառույցների և, վերջապես, ողջ հնչաշղթայի հիմքում։ Հնչյունային միկրոկառույցում գործ ունենք երկու բնույթի կազմիչների հետ. ա) երբ հնչյունը պահպանում է իր տարբերակիչ հատկանիշը՝ անկախ հնչյունական շղթայում նրա ունեցած դիրքին, բ) երբ կազմիչը, հնչյունական շղթայում ունեցած դիրքի հետևանքով՝ դրսևորվում է իր դիրքային տարբերակներով։

Փոփոխությունները լինում են ավելի կամ պակաս չափերի, լրիվ, մասնակի առնմանում և տարնմանում, հնչյունների հավելում կամ պակասում, ձայնավորի որակի փոփոխություն՝ անկում կամ բուլացում. երբեմն հիմնական շեշտի համեմատությամբ կողմնակի լրացուցիչ շեշտի ուժեղացում, բաղաձայնի որակի փոփոխություն՝ խլացում, բուլացում, բաղաձայնի որակի փոփոխություն՝ խլացում, բուլացում, լարվածության կորուստ և այլն։

Այսպիսով՝ առկա է բառի հնչյունական կառուցվածքի երկու տարբերակ՝ առաջնային, որին մենք հանդիպում ենք բառ-հնչաբառի մեկուսացված արտասանության ժամանակ և փոփոխակը, որն իրականանում է միայն տեքստ-հնչաշղթայում և իր հերթին կարող է ունենալ իր փոփոխակները՝ կապված հնչաշղթայի շարակարգային կառուցվածքի հետ։ Երկուսն էլ գործում են հայերենում՝ մեկը ինքնուրույն, մյուսը՝ հնչաշղթայի ոլորտում՝ արտասանության ընթացքում։

Հնչյունների նման գործառույթները, բնականաբար, իր արտացոլումն է գտնում վանկերի մեջ։ Վանկային կառույցը բնորոշվում է վանկերում՝ հնչույթների որոշակի համակցություններով։

Հնչյունների քանակը կարող է ենթարկվել որոշակի փոփոխությունների։ Օրինակ, «ը» ձայնավորի հետ կապված այն երևույթը, երբ լսվող սակայն չգրվող «ը»-ն վանկատման ժամանակ վերականգնվում է և

ստանում է լարժեք որակ։ Հնչյունային կապակցությունների միկրոկառույցը իր մեջ ներառնում է նախ հնչյունների որակը (ձայնավոր կամ բաղաձայն), այնուհետև՝ դրանց արտասանական դիրքային փոփոխությունները (սկիզբ, միջին և ելքային դիրք)։ Ձայնավորների համար նկատի է առնվում բարձրության աստիճանները, շրթնային կամ ռնգային բնույթը, երկար կամ կարճ արտասանությունը, տեղը, բաղաձայնների համար՝ հնչեղության, խլության, լարվածության աստիճանը և այլն։

Այդ միկրոկառույցի մեջ մտնում է նաև վանկատումը և դրա հետ կապված այլ հարցեր՝ հատուցվավորում և այլն։ Ռիթմական կառույցները, լինելով վանկերի որոշակի (երբեմն միայն փոփոխվող) հարաբերություններ, ենթարկվում են շեշտի աղդեցությանը։ Չնայած հայերենի շեշտի կայուն վերջնավանկային դիրքին, նրա շարժական լինելը հընչերանգային այն հիմնական միջոցն է, որի շնորհիվ առանձնանում են ռիթմական կառույցները։ Դրանք կոչված են ամբողջացնելու ողջ հնչաշղթան (տեքստը) և՛ իմաստաբանորեն, և՛ հնչյունաբանորեն։ Ռիթմական կառույցները այս առումով կարող են դիտվել որպես հարաբերական կայուն կառույցներ։ Այս կառույցները դրսևորվում են հիմնականում բառ-հնչաբառերի շարույթ-հնչատակների միջոցով։

Հնչաշղթայում հնչյունների (նաև վանկերի) միմյանց հետ ունեցած կապակցությունները ուղղակիորեն պայմանավորված են կապակցվող, կցվող ռիթմական խմբերի կամ հնչյունների բնույթով (կցույթ)։ Հիմնականում կցվում և արտասանվում է որպես մեկ ռիթմական խումբ բաղաձայն-ձայնավոր, ձայնորդ-ձայնավոր հնչյունական հաջորդականությունը։

Օրինակ՝ — Բարև՛,—
Մեկ հատիկ այս բառն եմ ասում՝
Կնքված անձնագիր ցույց տալու նման...
Կենսագրություն պատմելու նման,
կամ հարցաթերթիկ լրացնելու պես։
Եվ կուզենայի՛,
Շատ կուզենայի,
Որ այս բառն իրոք դառնար անձնագիր
Աշխարհո՛ւմ համայն,
Ամենքի համար։ (Պ. Սևակ)

Ձայնավոր-բաղաձայն (ձայնորդ) կցույթը իրականանում է շնորհիվ ձայնավորին նախորդող բաղաձայնի, որը հաճախ կցվելով ձայնավորին, վերջինս դարձնում է միջին օղակ՝ հաջորդ բաղաձայնի հետ

ոիթմական խումբ կազմելու համար։ Օրինակ՝ Ի՞նչ զարմանալի աչքեր ունես դու։

Մեր դիտողությունները ցույց են տալիս նաև, որ ձայնորդ+ձայնորդ կցույթը խիստ հազվադեպ է։ Դրանք երկուսն էլ արտասանվում են ինքնուրույն, նույնիսկ դադարով, որպեսզի պահպանեն ինքնուրույնությունը։

Նույն ձևով համեմատաբար տոկոս է կազմում բաղաձայն+բաղաձայն կապակցությունը։ Դրանք արտասանվում են կամ առանձին և ինքնուրույն (հաճախ «ը»-ի օժանդակությամբ)։

«Քո նայվածքի հետ,
Ինքըդ քեզանից զատվում-անջատվում...» (Պ. Սևակ)

կամ մեկը ձուլվում է մյուսին.

«Ճերմակ+գավաթով սև սուրճ եմ խմում...» (Պ. Սևակ)

Այս դեպքում, հավանաբար, դեր է խաղում հնչյունների որակական որոշ հատկանիշների համընկնելը (արտասանության հնչեղության, տեղի, կազմավորման եղանակի և այլն)։ Այս հարցը, փաստորեն, կապվում է արտասանվածքի վերլուծության ավանդական հարցի հետ, որը մեր կարծիքով պետք է վերանայվի։

Այս կապակցությամբ հարկ է մեկ անգամ ևս անդրադառնալ հնչաբառ, (ինչպես նաև շարույթ-հնչատակտ) հասկացությանը։ Շնորհիվ իր իմաստային ինքնուրույնությանը բառ-հնչաբառը ինքնուրույն է նաև իր հնչյունային կառուցվածքով։ Այն կարող է խոսքից դուրս արտասանվել և ընկալվել որպես հնչյունային ամբողջական միավոր։

Բառ-հնչաբառի հնչյունական կառուցվածքի փոփոխությունները տեղի են ունենում կապակցված տեքստ-հնչաշղթայում։ Այդ փոփոխությունները լինում են ավելի կամ պակաս չափով հնչյունների փոխադեցության հետևանքով։ Սակայն դա չի նշանակում, որ խախտվում է բառ-հնչաբառի կառուցվածքային ամբողջությունը։ Հիշենք հայ լեզվաբանության մեջ արտասանվածքի վերլուծության վերաբերյալ տեղ գտած կարծիքները։

Նշելով այն դրույթից, որ արտասանվածքը հնչյունաբանորեն կարելի է վերլուծել մինչև նրա ամենափոքր այլևս անբաժանելի միավորին՝ հնչյունին հասնելը, պրոֆ. Սևակը իրականում չի առաջադրում մի սկզբունք, որը կարող է չափանիշ հանդիսանալ վերլուծման համար։ Լեզվային մի խոշոր միավոր ակադ. Սևակը վերլուծում է առավել փոքր միավորների, նկատի առնելով թե ինչպես է հնչում և լսվում վերլուծման ենթակա արտասանվածքը (8)։ Այսպես՝ «Հայկին իրենց աոտի ցոռենն

է դուր գալիս»— արտասանվածքը ըստ հեղինակի լսվում է հետևյալ կերպ. «Հայկի-նիրեն-ցարտի-ցորեն-նեդուր-գալիս»։ Մեկ ուրիշի համար դա կհնչի հետևյալ ձևակերպով «Հայկինիրեն-ցարտի-ցորեննե-դուր-գալիս» և այլն։ Այստեղ նշանակություն է ստանում ոչ միայն արտասանողի վերաբերմունքը արտասանվածքի նկատմամբ, այլ նաև նրա անհատական արտասանական յուրահատկությունները, տրամադրությունը և այլն։ Հետևապես արտասանվածքի նյութական-հնչյունական վերլուծությունը կատարելիս պետք է նկատի ունենալ ինչ-որ մեկ այլ կայուն չափանիշ, որը ենթակա չէ զանազան սուբյեկտիվ անհատական հանգամանքների ազդեցություններին։

Է. Աղայանը արտասանվածքը վերլուծման է ենթարկում երեք տեսանկյունով, որոնցից առաջինը նյութական-հնչյունականն է։ Արտասանվածքը վերլուծվում է «արտասանական լսողական ավելի փոքր տարրերի, մինչև ամենանվազագույն նյութական միավորը՝ հնչյունը (1)։ Ըստ այս Աղայանը բերում է «Սևին սապոնեն ինչ անի, խևին՝ խռատը» ասացվածքը և առաջարկում է հետևյալ լսողական ու արտասանական վերլուծությունը. «սևին-սապոն-նընին-չանի-խևին-խռատը»։ Վերլուծման նման եղանակը նույնպես առարկելի է, քանի որ այդ նույնը կարելի է վերլուծել և այլ կերպ. «սևին-սապոննին-չանի, խևին՝ խռատը» և այլն։ Մեր կարծիքով հնչաշղթայի (արտասանվածքի) վերլուծության ժամանակ լսողական և արտասանական գործոնները չափանիշ ընդունելը բավարար չէ, դրանք կայուն և անփոփոխ գործոններ չեն։ Հիշենք թե ինչպես է արվում այդ վերլուծությունը։ Արտասանվածքը վերլուծման է ենթարկվում սկզբում ըստ իմաստային խոշոր միավորների, հետո դրանք ավելի ու ավելի մանրանալով հասնում են նվազագույնին՝ ձևույթներին, որոնք նույնպես իմաստային միավորներ են։ Այնուհետև արտասանվածքը վերլուծման է ենթարկվում արդեն հնչական առումով, որի նպատակն է առանձնացնել հնչյունական խմբերը, որոնք արդեն իմաստային միավորներ չեն և հետևապես կարող են ներկայացնել հնչյունական ցանկացած կապակցություն։ Ինչպես տեսնում ենք միևնույն օբյեկտի նկատմամբ կիրառվում են վերլուծության տարբեր սկզբունքներ։

Մենք առաջարկում ենք արտասանվածքի վերլուծության այնպիսի եղանակ, երբ վերլուծությունը կատարվում է մինչև իմաստային նվազագույն միավորը։ Այն մոմենտում, երբ այդ նվազագույնը դադարում է որևէ իմաստ արտահայտելուց, ավարտվում է արտասանվածքի՝ որպես լեզվական երևույթի վերլուծությունը և սկսվում է օբյեկտիվ իրականության մեկ այլ երևույթի (հնչում, ձայն և այլն) վերլուծությունը։

Հետևապես անհրաժեշտ է ընդունել մեկ կայուն չափանիշ, որի կի-

բառումը վերլուծության ժամանակ կհանգեցնի հավաստի միավորների: Որպես այդպիսին մենք առաջարկում ենք բառ-հնչաբառ հասկացությունը, որպես ամբողջական լեզվական կառույց: Արտասանվածքի (կամ շարակարգի) վերլուծության ժամանակ մենք ուղղակիորեն առնչվում ենք բառ-հնչաբառի հետ: Բառ-հնչաբառի ամբողջական կառուցվածքում մենք առանձնացնում ենք չորս փոխկապակցված գործոններ ա) հնչյուններ. բ) վանկեր. գ) հնչյունների փոխկապակցություններ և դ) ռիթմական շեշտված խմբեր կամ կառույցներ: Սրանցից յուրաքանչյուրը, ունենալով իր կայուն կառուցվածքը, կարող է ենթարկվել նաև փոփոխությունների:

Այսպես՝ հնչյունները, ունենալով իրենց կայուն որակը (իմաստատարբերակիչ հատկանիշը) դանազան հնչյունաբանական և հնչյունափոխական գործոնների ազդեցության հետևանքով շարակարգում կարող են դրսևորվել իրենց տարբերակներով: Նույն ձևով վանկային կառուցվածքն ունենալով իր կայուն կապակցություննները՝ ռիթմական-շեշտային խմբերը, շարակարգի համակարգում կարող է դրսևորել հնչյունային նոր միացություններ, որոնք առաջին հայացքից տվյալ լեզվի համար կարող են թվալ ոչ տիպական:

Վանկերի ամբողջության խախտումը բնականորեն բխում է հընչյունների կապակցությունների խախտումից, որոնցից և փոխվում են ռիթմական-շեշտային խմբերը կամ կառույցները*:

Այսպիսով՝ արտասանվածքի վերլուծության ժամանակ պետք է նկատի ունենալ բառ-հնչաբառ ամբողջական կառույցը՝ նշված չորս գործոնների ազդեցության շրջանակներում: Վերլուծության հետևանքով ստացված ռիթմական-շեշտային խմբերում հնչյունական միավորները կատարում են այդ խմբերը միմյանց հետ կապող կամ սահմանաբաժանող դեր: Վերևում մենք դրանք պայմանականորեն անվանեցինք կցույթներ:

Դիտենք Գ. Սևակի ներկայացրած նմուշը մեր տեսանկյունից: Այս դեպքում մենք ունենք երեք ռիթմական կառույց. «Հայկին(ն) իրենց արտի»՝ մեկ, «ցորեն(ն) է»՝ երկու և «դուր-գալիս»՝ երեք: Կցույթները հանդես են գալիս բառ-հնչաբառ ամբողջական կարգի ներսում (ն), (ց) և չեն խաթարում ռիթմական խմբերի ամբողջությունը:

Դիտենք է. Աղայանի ներկայացրած նմուշը:

«Սևին սապոնն ինչ անի, խևին՝ խրատը»:

Այստեղ առկա է երկու ռիթմական կառույց. Սևին սապոննինչ անի

---

* Մենք հակված ենք վանկի ձայնաբանական տեսության կողմը, ըստ որի հնչաբառը հատուկտվորվում է արտասանական առավել հնչեղ գագաթների՝ դրանք շրջապատող ավելի քիչ հնչեղ վանկերի համեմատությամբ: (Տե՛ս 23, 155):

խնին՝ խրատը։ (ն), (չ) կցույթները դործում են մեկ ռիթմական կառույցի նեղսում։

Այսպիսով՝ ուղում ենք ասել, որ արտասանվածք-շարակարգի վերլուծության ժամանակ ստացվող ռիթմական-շեշտային կառույցները պահպանում են իրենց բառ-հնչաբառային կամ շարույթ-հնչատակտային ամբողջական կառուցվածքը, որը և պետք է դիտել որպես ելակետ նման վերլուծությունների ժամանակ։

Կցույթը՝ հնչյունը կամ հնչյունների կապակցությունն է, որը միանալով վանկին կամ հնչաբառին՝ սկզբից կամ վերջից, անջատում և առանձնացնում է նրան որպես նոր ռիթմական խումբ։

Արտասանվածք-շարակարգի վերլուծության ժամանակ կցույթները չեն խախտում բառ-հնչաբառերի կամ շարույթ-հնչատակտերի ամբողջական խորքային ըմբռնումը, (որը մարդկային ուղեղի կարևոր առանձնահատկություններից մեկն է) և ընկալվում են իրենց ամբողջական կառուցվածքով, որի հիմքում ընկած է իմաստային ամբողջականությունը։

Հայտնի է, որ բառ-հնչաբառը շնորհիվ իր իմաստային ինքնուրույնության ու քերականական ձևավորման, ինքնուրույն է նաև իր հնչյունական կառուցվածքով։

Բոլոր այն փոփոխությունները, որ տեղի են ունենում բառ-հնչաբառի հնչյունական կառուցվածքի հետ արդյունք են կապակցված խոսքի, որտեղ վերարտադրվում են բառի հնչյունային կառուցվածքի բոլոր փոփոխակները։ Դրանց գործառական նույնությունը ապահովվում է իմաստային միավորների նույնությամբ։

Կարելի է ենթադրել, հետևապես, որ բառ-հնչաբառը, իր գոյությունը իրականացնում է երկու ձևով՝ առաջնային (բառարանային) և փոփոխակ (խոսքի մեջ)։ Երկուսն էլ լեզվում գործուն են և վերարտադրելի։

Բառ-հնչաբառերն ինքնուրույն գործածական են և ընկալելի. դրանք կարող են ինքնուրույն ռիթմական կառույցներ կազմել։

Սրանց կողքին կան նաև ավելի ծավալուն բառակապակցություն-հնչաբառեր, որոնք ընկալվում են որպես մեկ ամբողջական ռիթմական կառույցներ։ Օրինակ՝ գլուխ առնել— (գլուխնառնել), (խն) կցույթով, թևեր առնել (թեվերառնել), (ր) կցույթով, կուրծքը դեմ տալ— (կուրծքրդեմ տալ), (քը) կցույթով և այլն, որոնք մեկական հիմնական շեշտով կազմում են մեկական ռիթմական խմբեր։

Երբեմն հնչաբառի հնչյունական կառուցվածքի բաղկացուցիչներից մեկի փոփոխությունը (հնչյունական զանազան օրինաչափությունների ազդեցության տակ) իր ետևից բերում է ամբողջ կառույցի փոփոխություն։ Սակայն վանկատումը, որպես լեզվական երևույթ, փոփոխված

հնչաբառերի կառույցներում մտցնում է հավասարակշռություն, վերականգնելով ընկած կամ չարտասանվող (օրինակ, հայերենում չգրվող ը-ն) հնչյունը և այլն։ Օրինակ՝ ան-ընդ-հատ, աշխար-հա-կալ, շնոր-հաղուրկ և այլն)։

Փոփոխությունների սահմանները շատ լայն են, սկսած հնչյունների թվից, ռիթմական-շեշտային պատկերից, հնչերանգից, մինչև արտասանության բարձրությունը, տեմպը և այլն։ Փոփոխությունների մեջ մտնում են նաև ֆիզիոլոգիական, բարբառային, ոճական, տարածքային գործոններ և այլն։ Բառ–հնչաբառի կառուցվածքի ամբողջականությունը հիմնականում ենթվում է նրա կայուն հատկանիշների վրա, որոնք են բառ–հնչաբառի վանկաբաժանման սկզբունքը, հնչյունային հիմնական կազմը, դրանց որակը, բաճախը։

Կայուն հատկանիշների մեջ կարևոր դեր ունի բառ-հնչաբառի որոշակի իմաստաբերականական ամբողջությունը, որի անտեսումը արտասանվածքի շարակարգի վերլուծման պրոցեսում կարող է հանդեցնել ոչ ճիշտ որոհմանը։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հնչերանգի շարակարգը կապակցող և միավորող դերը շատ ցայտուն բացահայտվում է շաղկապավոր հնչաշղթայում։ Հետաքրքիր է շաղկապներ ունեցող հնչաշղթայի և նույն հնչաշղթայի անշաղկապ տարբերակի միջև կատարված համեմատության պատկերը։

Ելնելով այն դրույթից, որ հնչերանգը ոչ միայն կապակցում է բարդ նախադասության մասերը, այլև արտահայտում է իմաստային այն հարաբերությունները, որ կան դրանց միջև, մենք որպես հնչերանգով ամբողջացվող շարակարգային օղակ, նկատի ենք առել հնչատակտը (հատկապես մի քանի անդամներից կազմված) և որպես իմաստային ամբողջություն, և որպես շարակարգային կապակցություններ արտահայտող միավոր։

Այդ հարաբերության մեջ դիտենք հետևյալ տեքստ հնչաշղթաները։

Նարդիզ փոքր հորաքույրը, որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած և մի տղա ուներ, և ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել, բայց ուսումը չէր շարունակել, որովհետև սիրահարվել էր... և փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ, բայց ամաչեց ու գնաց. և մեծ հորեղբոր մեծ որդին, որ պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել աշխատելու. և նրա քույրերն ու եղբայրը՝ Սոխակը, Ելենը, Վալոդը... բոլորը, բոլորը, գրնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը (6)։

Նաև տեքստ-հնչաշղթայի անշաղկապ տարբերակը։

«Նարգիզ փոքր հորաքույրը դարձյալ Դսեղ էր ամուսնացած, մի տղա ուներ. ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել, ուսումը չէր շարունակել՝ սիրահարվել էր... փոքր հորեղբայրը կարող էր բանակ չգնալ, ամաչեց՝ գնաց. մեծ հորեղբոր մեծ որդին պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել աշխատելու, նրա քույրերն ու եղբայրները՝ Սոխակը, Ելենը, Վալոդը... բոլորը գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը»:

Ինչպես տեսնում ենք երկրորդ տեքստ-հնչաշղթայում բաց են թողնված բոլոր շաղկապները (համադասական և ստորադասական). սակայն երկուսն էլ բովանդակային նպատակաուղղվածությամբ համընկնում են, իսկ իմաստային և շարակարգային կապակցության տեսակետից ունեն տարբերություններ, որոնց բացահայտումն էլ հենց մեր առջև դրված խնդրի լուծում կնշանակի:

Նախ՝ դիտենք իմաստային տեսակետից (որից շարակարգային կապակցությունն անպայմանորեն կախում ունի):

Ա. Մ. Պեշկովսկին իրավացիորեն գտնում էր, որ կան զանազան հնչերանգներ, որոնք համապատասխանում են կապերի ու շաղկապների տարբեր խմբերի (19) այսպես, թվարկման հնչերանգը՝ կապակցող շաղկապներին, բացատրող հնչերանգը՝ պատճառական կապերին, նախադուշացնող հնչերանգը՝ բացատրող շաղկապներին և այլն: Ա. Մ. Պեշկովսկու այս դիտողությունն իր ժամանակին կարևոր խթան է եղել հնչերանգի ուսումնասիրման ասպարեզում: Բնականաբար բոլոր այդ միջոցները ծառայում են խոսքում զանազան կապեր ստեղծելուն: Այստեղ անհրաժեշտ է հիշեցնել իմաստային-բովանդակային և իմաստային-սեմանտիկական կապի միջև եղած տարբերությունը, որն անպայմանորեն պետք է հաշվի առնել խոսքի վերլուծության ժամանակ: Օրինակ. «Կառապանը սուլեց, ձիերը թռան» և «նա լավ երգեց, նրան գովեցին»— տարբեր բովանդակության խոսքեր են, սակայն դրանց ներքին իմաստային (սեմանտիկական) կապը համընկնում է, որով և նրանք միավորվում են. այդ կապը պատճառահետևանքային հարաբերությունն է, որը և արտահայտում է դրանց շարահյուսական իմաստը:

Մեր ներկայացրած շաղկապավոր տեքստ-հնչաշղթան իրենից ներկայացնում է մեկ բարդ համադասական պատճառահետևանքային, թվարկող, բացատրող և հանգման իմաստային կապ արտահայտող նախադասություն-հնչադասություն (պատճառահետևանքային հաջորդականությունը կարող է խախտվել՝ դառնալով ետադաս-առաջադաս, որը դուտ հեղինակային ոճական յուրահատկություն է): Դրանց իմաստային հարաբերությունը անմիջականորեն բխում է նախորդող կամ հաջորդող

կապի կամ շաղկապի իմաստային գործառույթությունից, որը և հնչերանգին տալիս է համապատասխան իմաստ։

Շարույթ-հնչատակտերը կարելի է միավորել մի քանի նախադասություն-հնչադասությունների մեջ, որոնք արտահայտում են տարբեր հարաբերություններ (ունեն տարբեր ենթականեր)։

Ջնայած դրանք ինքնուրույն նախադասություն-հնչադասություններ են, սակայն շաղկապների առկայության հետևանքով բավականաչափ ցայտուն ընկալվում է դրանց ներքին բովանդակային կապը, որը դրսևորվում է թվարկող հնչերանգի շնորհիվ։ Այդ բանը, ինչպես կտեսնենք, չկա այն հատվածում, որտեղ բացակայում են շաղկապները։ Վերջինում մենք ունենք առանձին նախադասություն-հնչադասություններ, չնայած միևնույն ենթակա-սուբյեկտով, որոնք ինքնուրույն ավարտված բովանդակություն ունեն, իսկ իրենց արտահայտած իմաստի կարևորությամբ գրեթե համազոր են։

Շաղկապներով պարբերության մեջ շաղկապներն իրենք թելադրում են, թե եղած շարույթ-հնչատակտերից որն է հիմնական հաղորդումը կրողը. տվյալ դեպքում «բայց» շաղկապով սկսվող հատվածը, հակադրվելով մնացածներին, իր մեջ պարունակում է հիմնական հաղորդումը, բովանդակության կորիզը։

Հետաքրքիր է, որ պատճառ-հետևանք հարաբերությունը հաճախ առանց շաղկապի ավելի ցայտուն է դրսևորվում, քան համապատասխան շաղկապի առկայությամբ։ Հետևապես միշտ չէ, որ շաղկապը բացահայտող, իմաստ տրոհող նշանակություն է ունենում. հաճախ այն ճապաղ և ձանձրալի է դարձնում ոճը, զրկում վերջինիս նպատակաուղղվածությունից ու կտրուկությունից։ Գիտական խոսքում (գեղարվեստականի համեմատությամբ) շաղկապների առատությունը ավելի է արդարացվում, նկատի առնելով երբեմն բացահայտման, վերլուծման լրացուցիչ մանրամասները ներկայացնելու անհրաժեշտությունը։

Անդրադառնալով մեր տեքստ-շարակարգին դիտարկենք մեր ներկայացրած շարույթ-հնչատակտերը, որոնք միավորվում են մի քանի նախադասություն-հնչադասությունների մեջ։ Տեսնենք թե իմաստային ինչպիսի՞ կախվածության մեջ են գտնվում դրանք և հնչերանգը ինչպե՞ս է արձագանքում իմաստային զանազան բնույթի կապերին՝ շաղկապներով և առանց շաղկապների։ Որպես ուղեցույց հիշենք Ա. Մ. Պեշկովսկու վերը հիշատակած դրույթը, որ կան զանազան հնչերանգներ, որոնք համապատասխանում են կապերի ու շաղկապների տարբեր խմբերի։

Դիտենք տեքստ-հնչաշղթան շաղկապների առկայությամբ։

Նարգիզ փոքր հորաքույրը, որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած (որ— բացահայտող)

և մի տղա ուներ (և— կապակցող)
և ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել (և— կապակցող)
բայց ուսումը չէր շարունակել (բայց— բացատրող-հակադրող)
որովհետև սիրահարվել էր (որովհետև— պատճառ, բացահայտող)
և փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ (և թվարկող), որ բացահայտող)
բայց ամաչեց ու գնաց (բայց— բացահայտող ու— կապակցող)
և մեծ հորեղբոր մեծ որդին (և բացահայտող, թվարկող),
որ պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել աշխատելու (որ— բացահայտող, պատճառաբանող),
և նրա քույրերն ու եղբայրը (և— բացահայտող, թվարկող ու— կապակցող),
և Սոխակը, Ելենը, Վալոդը (և— թվարկող),
բոլորը գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը։

Այստեղ մենք տեսնում ենք իմաստային հետևյալ հարաբերությունը. «և»-ը (նաև «ու»-ն) ունի բացահայտող, թվարկող, կապակցող իմաստ, «բայց»-ը՝ հակադրող, հետևանքային իմաստ, «որովհետև» շաղկապը՝ պատճառ բացահայտող իմաստ։

Սույն տեքստն առանց շաղկապների ներկայացնում է հետևյալ շարույթ-հնչատակտերի շարքը.

նար-գիզ փոքր հորաքույրը,
դարձյալ Դսեղ էր ամուսնացած,
մի տղա ուներ,
ասում էին,
լավ սովորող աղջիկ էր եղել,
ուսումը չէր շարունակել,
սիրահարվել էր
փոքր հորեղբայրը, կարող էր բանակ չգնալ,
ամաչեց,
գնաց,
մեծ հորեղբոր մեծ որդին պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել,
աշխատելու
նրա քույրերը, եղբայրները,
Սոխակը, Ելենը, Վալոդը,
բոլորը
գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը։

Շաղկապի առկայությունը կամ բացակայությունը որակական փոփոխություն է մտցնում ողջ տեքստ-հնչաշղթայի հնչերանգային կառուց-

վածքի մեջ, որից և բխում է որոշ շարույթ-հնչատակտերի տրամաբանական ընդգծումը կամ առանձնացումը։ Այն հատվածները, որոնք շաղկապների առկայությամբ երկրորդական իմաստ էին հաղորդում, շաղկապների վերանալուց հետո դառնում են ինքնուրույն հաղորդումներ պարունակող հատվածներ։ Շաղկապների ու կապերի գործառույթությունը հնչերանգը վերցնում է իր վրա։

Այնուհետև՝ շաղկապների առկայությունը միտքը դարձնում է անավարտ, առկախ, ավարտում ենթադրող։ Իսկ անշաղկապ տեքստում այդ չի նկատվում։ Այնտեղ մենք ունենք ինքնուրույն հաղորդումներ, որոնք կարելի է նույնիսկ հանել ընդհանուր տեքստ-հնչաշղթայից առանց ղգալի խաթարում պատճառելու վերջինիս իմաստային բովանդակությանը։ Այնտեղ, որտեղ սկզբում շաղկապ է եղել, տեղ է գտնում դադարը։ Այս տեղից էլ հետևում է այն, որ շաղկապների բացակայությունը խոսքը դարձնում է ավելի լարված, նպատակասլաց, իսկ խոսքի տարբեր հատվածները փաստորեն միանում են դադարի միջոցով, դադարը դառնում է քերականական միջոց հնչերանգով՝ բարդ նախադասություն-հնչադասությունը միավորող կապակցող միջոց։ Այսպես՝ Նարգիզ փոքր հորաքույրը, որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած, և մի տղա ուներ, և ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել, բայց ուսումը չէր շարունակել, որովհետև սիրահարվել էր...Այս նախադասություն-հնչադասությունը, որը բավականաչափ ծանր ոճ ունի, կազմված է 5 շարույթ-հնչատակտերից, այսինքն՝ ակտուալ հատույթավորումից ստացված 5 հատվածներից, որոնք միմյանց նկատմամբ ունեն և ստորադասություն, և համադասություն։

Այստեղ հիմնական հաղորդումը՝ ռեման, մեկն է։ Նարգիզ փոքր հորաքույրը... ...ուսումը չէր շարունակել։ Մնացածները, որոնք կազմում են թեման, արդեն հայտնի խոսքային իրադրությունից են բխում և բացահայտում են կամ էլ լրացնում իրար՝ «որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած» մասը լրացնում է «Նարգիզ փոքր հորաքույրը» մտքին, իսկ «և մի տղա ուներ» հատվածը բացահայտում և ծառայում է վերևի երկուսին՝ միաժամանակ։ Վերջիններիս միասին ստորադասվում են և լրացնում ինչպես «Նարգիզ փոքր հորաքույրը» մտքին, այնպես էլ նոր հաղորդումը պատճառաբանող մտքին՝ «որովհետև սիրահարվել էր»։ Այս ամբողջը բացահայտում և պատճառաբանում է ռեման. «ուսումը չէր շարունակել»։ Նոր հաղորդվող միտքը՝ ռեման ամբողջությամբ սա է. «Նարգիզ փոքր հորաքույրը ուսումը չէր շարունակել»։

Նույն հատվածն առանց շաղկապների վերլուծելիս ստանում ենք հետևյալ շարույթ-հնչատակտերը։

Նարգիզ փոքր հորաքույրը
դարձյալ Դսեղ էր ամուսնացած,

մի տղա ուներ,
ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել,
ուսումը չէր շարունակել,
սիրահարվել էր։

Շաղկապները հանելուց հետո առանձին հատվածների միջև եղած իմաստային կապը թուլանում է, թեմա-ռեմային հարաբերությունը փաստորեն արտահայտվում է հիմնականում մեկ օղակում՝ «նարգիզ փոքր հորաքույրը ուսումը չէր շարունակել. սիրահարվել էր» որտեղ նոր հաղորդումը դառնում է «նարգիզ փոքր հորաքույրը ուսումը չէր շարունակել» իր մեկ թեմայով՝ «սիրահարվել էր»։

Ակտուալ հատույթավորումից ստացված մնացած օղակները՝ «դարձյալ Դսեղ էր ամուսնացած»՝ «մի տղա ուներ», ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել»— իրենց առկայությամբ կամ բացակայությամբ էական, իմաստային փոփոխություն կամ իմաստային ճեղքում չեն մտցնում նոր հաղորդման մեջ (ուսումը չէր շարունակել) այսինքն՝ նարգիզ փոքր հորաքրոջ Դսեղում ապրել կամ չապրելը, տղա ունենալը կամ չունենալը և այլն, շաղկապների բացակայության դեպքում դիտվում և ընկալվում են որպես ինքնուրույն, կողմնակի հաղորդումներ, որոնք կարող էին և չլինել։

Նոր հաղորդման հետ անմիջականորեն կապված հատվածն է՝ «սիրահարվել էր» որը և պատճառաբանում է և իմաստի տեսակետից լրացնում է ռեման՝ նոր հաղորդումը՝ «ուսումը չէր շարունակել»։

Իմաստային բովանդակային նույնպիսի հարաբերություն ենք տեսնում նաև տեքստի մնացած օղակներում։ Մինչև դրանց վերլուծմանն անցնելն ասենք, որ այս տեքստում (ինչպես և յուրաքանչյուր տեքստում) առկա են այսպես կոչված միկրո թեմա-ռեմային հարաբերություններ, որոնք իրենց նկատմամբ ստորադաս կամ համադաս լինելուց բացի բոլորը միասին ծառայում են մակրոռեմայի։ Մեր դեպքում մակրոռեման է «թերթել էին այդ դասագիրքը»։

Այսպես, դիտենք մնացած օղակների միջև եղած հարաբերությունը՝ շաղկապներով։ Դրանք ներկայացնում են ակտուալ հատույթավորումից ստացված մի քանի շարույթ-հնչատակտեր, որոնք իրար նկատմամբ դրսևորում են այնպիսի հարաբերության մեջ, ինչպիսի իմաստ որ արտահայտում են դրանք կապակցող շաղկապները։

Այսպես.

և փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ (և—թվարկող բացահայտող, որ պատճառաբանող-բացահայտող շաղկապներով)։

«բայց ամաչեց ու գնաց» (հակադրող-հետևանք ցույց տվող բայց շաղկապով, և, ու կապակցող շաղկապներով)։

Նշված երկու հատվածները դիտում ենք թեմա-ռեմային այն հարաբերությամբ, որ վերևում մենք անվանեցինք միկրո-թեմա-ռեմային հարաբերություն։ Մնացած հատվածներում այդ հարաբերությունը կրկնվում է. կապերն ու շաղկապները ծառայում են իրարից բխող հարաբերությունները թվարկելու, բացահայտելու, հակադրող հետևանքային կապերը բացահայտելու նպատակին։

Այնուհետև.

և մեծ հորեղբոր մեծ որդին,
որ պատերազմի պատճառով դպրոցից ետ էր դարձել աշխատելու,
և նրա քույրերն ու եղբայրը
և Սոխակը, Ելենը, Վալոդը,
բոլորը գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը։

Այսպիսով իրար համադաս (ստորադաս) միկրո թեմա-ռեմաները, ակտիվ կերպով իրար լրացնելով ու բացահայտելով, գալիս հանգում են հիմնական ռեմային՝ «բոլորը գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը»։

Հիմա տեսնենք այդ հատվածն առանց շաղկապների։

փոքր հորեղբայրը,
կարող էր բանակ չգնալ,
ամաչեց,
գնաց,
մեծ հորեղբոր մեծ որդին
պատերազմի պատճառով ետ էր դարձել
աշխատելու
նրա քույրերն ու եղբայրը
Սոխակը, Ելենը, Վալոդը,
բոլորը
գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը։

Այս անշաղկապ հատվածում շարույթ-հնչատակտերը ավելի ինքնուրույն են, միկրոթեմաները բոլորը չէ, որ օրգանապես կապվում են ռեմային («փոքր հորեղբայրը կարող էր բանակ չգնալ», «փոքր հորեղբայրը ամաչեց». «փոքր հորեղբայրը գնաց»)։

Այս հատվածի ռեման՝ «փոքր հորեղբայրը... գնաց» իմաստային երանգավորվում է ստանում նախորդող միկրոթեմաներով (սակայն դրանց բացակայությունը իմաստը չի աղճատում)։

«Մեծ հորեղբոր մեծ որդին դպրոցից պատերազմի պատճառով ետ էր դարձել» և «աշխատելու» հատվածների համար թեման հետևյալն է. «մեծ հորեղբոր մեծ որդին դպրոցից ետ էր դարձել». մնացած միկրոթեմաները պատճառաբանում են այդ թեման։ Դրանց չլինելու դեպքում

համասեռի տղճատում չի լինում, միայն երանգային համատավորումը իհարկե թուլանում է։

Մնացած հատվածները «նրա քույրերն ու եղբայրը», «Սոխակը, Ելենը, Վալորը» միայն լրացուցիչ հաղորդում են տալիս ռեմայի ենթակային՝ (բոլորը)։ Այնուամենայնիվ դրանց բացակայության դեպքում էլ այդ շարույթ-հնչատակտը, որ պարունակում է նոր հաղորդում, միանդամայն ավարտված և ինքնուրույն միտք է և առկախ վիճակում չէ*։

Վերևում ասացինք, որ տեքստի իմաստային և շարակարգային վերլուծությունները իրարից բխող և իրար հետ սերտ առնչություն ունեցող երևույթներ են և նյութի վերլուծությունը միայն դրանցից մեկի տեսանկյունից կնշանակեր հարցի միակողմանի և մեխանիկական քննարկում։ Այդ իսկ պատճառով տեսնենք, թե շարակարգային կապակցության տեսակետից ինչպիսի պատկեր ունի մեր քննարկած տեքստը և որքանո՞վ է շաղկապների ու կապերի առկայությունը կամ բացակայությունը արտացոլվում այդ կապակցության սահմաններում։ Այս դեպքում մենք հիմնականում պետք է գործ ունենանք «դադար» հասկացության հետ, որը հնչերանգի ֆիզիկական կառուցվածքի մեջ մտնող գործոններից մեկն է։ Մագնիտոֆոնի ժապավենի վրա գրառնելուց հետո քննարկվող նյութերը գրանցվել են ինտոնոգրաֆի վրա։ Տեքստը կարդացվել է սովորական պատմողական, այսպես ասած, չեզոք հնչերանգով։ Հաղորդավարները նախապես անտեղյակ են եղել փորձի նպատակին։

Ինտոնոգրաֆից ստացված արդյունքներին ավելացնում ենք նաև անմիջական դիտողության, լսողական վերլուծության արդյունքները, որոնք նույնպես կարևոր նյութ են տալիս։

Որպես ընդհանուր դիտողություն նշենք, որ շաղկապավոր տարբերակում շաղկապներով միացող հնչատակտերը մեկը մյուսից անջատվում են ավելի կարճատև դադարով, քան անշաղկապ տարբերակի սույն հնչատակտերը։ Այստեղ բացատրությունը մեկն է. անշաղկապ հնչատակտերում դրանց միջև եղած դադարին միանում է նաև բացակա շաղկապին փոխարինող կամ լրացնող դադարը և արդյունքում ստացվում է բավականաչափ տևական դադար։ Ըստ որում, այս դեպքում համարյա նշանակություն չունի, թե շաղկապը ինչպիսին է՝ ստորադասական, թե համադասական։ Այստեղ նշանակություն է ստանում այն, թե որքանով հնչատակտերը կարևոր են և կարող են լրացնել տեքստ-հնչաշղթայում

---

* Նշենք, որ մեր երկու հաղորդավարների մոտ էլ պատկերը որակապես նույնն է։ Քանի որ փորձառական դիտողություններից ստացված թվային արժեքները հարաբերական են և պայմանական, մենք բերում ենք երկու հաղորդավարներից ստացված ցուցանիշների միջինը, իհարկե պահպանելով համամասնությունը։

արտահայտված նոր հաղորդումը՝ ռեման։ Որքան տվյալ հնչատակտը իր արտահայտած միկրոթեմայով շատ է լրացնում հիմնական ռեման, այնքան ավելի նրան սահմանազատող դադարները (երկու կողմերից) տևական են լինում։

Համարյա օրինաչափություն է հասնում այն դիտողությունը, որ ստորադասական շաղկապներով (որ, որովհետև և այլն) սկսվող հնչատակտերին նախորդող հատվածը մեծ մասամբ ունենում է անավարտ, լուծում սպասող հնչերանգ, որի պատկերը ունենում է բարձրացող տոնի միտում։

Այժմ առանձին-առանձին անդրադառնանք վերևում արված դիտողություններին։

Դիտենք դեպքը, երբ շաղկապավոր տեքստում շաղկապը հանդես է գալիս դադարին հաջորդող կամ նախորդող հնչատակտի հետ որպես նրա մի մասը։ Այս դիտողությունը պատահական չէ։ Հետագայում, երբ կանդրադառնանք շաղկապներին փոխարինող դադարի տևականության հարցին, կտեսնենք, որ այն հատվածները, որտեղ շաղկապը հանդես է գալիս որպես հնչատակտի հետ օրգանապես կապվող մաս, շաղկապի բացակայության դեպքում լրացվում է հնչերանգով, ավելի կոնկրետ՝ դադարով։ Հնչատակտերի մեջ ակտուալ հատուցթավորումից առանձնացված միկրոթեմաների (ռեմայի նկատմամբ) միջև եղած համամասնությունը հիմնականում կայուն է մնում և դադարների ժամանակահատվածի մեջ շաղկապավոր և անշաղկապ տարբերակներում մեծ տարբերություններ չեն նկատվում։

Դիտենք հետևյալ հատվածը։ Երկու հաղորդավարների մոտ մենք տեսնում ենք հնչատակտերի առանձնացման որակապես նույն պատկերը։ Տեքստ-շարակարգի վերլուծությունը սկսենք առաջին հնչադասությունից, որը ակտուալ հատուցթավորման ենթարկվելուց հետո ունենում է հետևյալ հատվածները. շաղկապով տարբերակում. «Նարգիզ փոքր հորաքույրը, որ դարձյալ Դսեղ էր ամուսնացած», և «մի տղա ուներ»։ Անշաղկապ տարբերակում. «Նարգիզ փոքր հորաքույրը», «դարձյալ Դսեղ էր ամուսնացած», «մի տղա ուներ»։

Շեշտակիր հնչաբառերը բավականաչափ դժվար է առանձնացնել, որովհետև ընդհանուր առմամբ, ամբողջ շարակարգը արտասանվում է համաչափ, ծավալվող հնչերանգով։ Համեմատաբար ավելի շեշտակիր հնչաբառերը, ավելի շուտ, դրսևորվում են շաղկապով տարբերակում։ Մեր կարծիքով դրանք են «հորաքույրը» և «մի տղա ուներ» (հատկապես վերջին հնչաբառը) հատվածները։ Անշաղկապ տարբերակում շեշտակրությամբ աչքի է ընկնում «հորաքույրը» հնչաբառը, իսկ ընդհանուր առմամբ հնչերանգը ունի խաղաղ ծավալվող բնույթ։

Շաղկապով տարբերակը արտասանվում է 4110 մվրկ։ Ժամանակահատվածում անշաղկապը՝ 3605 մվրկ ժամանակահատվածում։ Շաղկապով տարբերակում արտասանության ժամանակը երկարում է ի հաշիվ շաղկապների և այն դադարի, որ կա «որ» շաղկապից առաջ։ Այսպիսի հանգամանքների պատճառով շաղկապավոր հնչերանգի հտհ* ունի հատվածավոր, ընդհատվող բնույթ։

Անշաղկապ տարբերակում բացակայում է նախ՝ դադարը «որ»— շաղկապից առաջ և ինքը՝ շաղկապը։ «Որ» շաղկապին նախորդող և հաջորդող հատվածները հանդես են գալիս առանց ընդհատման, համարյա միաձուլ։ «Նվ» շաղկապի փոխարեն արձանագրվում է 130 մվրկ արտասանության ժամանակահատված։

Շաղկապով տարբերակի առաջին հնչատակտն ունի արտասանության 2760 մվրկ տևողություն, երկրորդ հնչատակտը՝ 755 մվրկ տևողություն։ Անշաղկապ տարբերակը ակտուալ հատույթավորման ենթարկվելով դառնում է երեք հնչատակտ։

Առաջին հնչատակտը դրավում է արտասանության 1260 վրկ, II-ը՝ 1380 մվրկ և III-ը՝ 695 մվրկ ժամանակահատված։

Տեսնենք հնչերանգային ինչպես ցուցանիշներ են արձանագրվում ձայնաբանական մյուս երկու՝ հտհ-ն և ուժգնության պարամետրերում։

Շաղկապով տարբերակի առաջին հնչատակտում հնչերանգի հտհ-ը (±5 հերց) ունի կայուն խաղաղ ծավալում. 150 հերցը պահպանվում է մինչև վերջին հնչաբառը՝ «հորաքույրը», որը այդ շեշտակիր հնչաբառն է։ Այստեղից հտհ-ն սկսում է աստիճանաբար բարձրանալ և հասնում է 170 հերցի, (ըստ որում, ստանում է անավարտ, շարունակություն ենթադրող երանգ նման հարցի)։ Պատճառը համարում ենք հիմնականում մեկը. հաջորդող «որ» շաղկապը իրենից առաջ ստեղծում է խոսքի անավարտություն, շարունակություն պահանջող իրադրություն, որը պետք է իր լրացուցիչ բացահայտումը կամ բացատրությունը ստանա «որ» շաղկապով սկսվող հատվածում։ Մեր այս դիտողությունը իր հաստատումն է ստանում, երբ ներքևում վերլուծման ենք ենթարկում այդ նույն հնչատակտի անշաղկապ տարբերակը։

Ուժգնությունը առաջին հնչատակտի շաղկապով տարբերակում 30 դբ է։ Չմոռանանք նշելու, որ «ը»-ձայնավորը նույնիսկ շեշտակիր, միշտ ուժգնության փոքր ցուցանիշներ ունի։ Այստեղ մեծ դեր են խաղում ձայնավորների ֆիզիոլոգիական կազմավորման յուրահատկությունները՝ արձագանքարանների չափերը, բացվածքի ձևը և այլն։ Այսպես՝ անշեշտ, «ա» ձայնավորով վանկն ավելի մեծ ուժգնություն ունի քան շեշտակիր

* Հտհ— հիմնական տոնի հաճախականություն։

«օ» կամ «ու» ձայնավորակիր վանկը։

Մեր դիտողություններից մենք սահմանում ենք ձայնավորների ուժգնության հետևյալ հաջորդականությունը՝ ըստ ցուցանիշների նվազեցման ա, ո, է, ու, ի, ը։ Այս շարքն իր առանձնահատկություններով գործուն է ամբողջ ուսումնասիրության ընթացքում։ Այսպես, ուրեմն շեշտակիր «հորաքույրը» հնչաբառում շեշտակիր վերջին վանկը ունի հտհ բարձր ցուցանիշ, իսկ ուժգնության՝ միջին ցուցանիշ։ Նույն հնչաբառի շեշտազուրկ «րա»— վանկը, կամ ասենք առաջին հնչաբառի «նար» վանկը, ունի տվյալ հատվածի համար ամենացածր հտհ-ն՝ 150 հերց, սակայն արտասանության ուժգնության բարձր ցուցանիշներ՝ 35-ականդբ։ Հտհ կորագիծը այս տարբերակում ունի ընդհատվող բնույթ. իսկ հնչատակտի շարունակությունը, որը սկսվում է «որ» շաղկապով, մեծ դադարով ժամանակի 395 մվրկ տևողությամբ, սահմանազատվում է հնչատակտի առաջին հատվածից։

Առաջին հնչատակտի «որ»-ից սկսվող հատվածը հտհ-ն առումով ավելի կայուն է և համաչափ ծավալվող բնույթ ունի. հտհ-ը կազմում է 150 հերց (±5 հերց). որևէ հնչաբառը մյուսից ավելի շեշտվածություն չունի, այնպես, որ կարող ենք ասել, որ այս հատվածը շեշտակիր հնչաբառ չունի։ Ամբողջ հատվածը արտասանվում է միաձույլ որպես մեկ հնչաբառ, առանց դադարների և այդպես էլ միանում է հաջորդ հնչատակտի հետ, որը սկսվում է «և» շաղկապով։ Սա այն միկրոթեմաներից է, որոնք նախապատրաստում և լրացնում են նոր հաղորդումը, որը պետք է տրվի ամբողջ հաղորդման վերջում։ Բոլոր հնչաբառերի շեշտվող վերջավանկերում արտասանության ուժգնությունը, պայմանավորված ձայնավորների որակով, դրսևորում է 25 դբ-ից 35 դբ-ի սահմաններում տատանվող ցուցանիշներ։

Հտհ-ը համաչափ ծավալվելով, ելքում (որպես ելք ընդունում ենք հաջորդ հնչատակտի հետ ունեցած սահմանազատման հատվածը) թեթևվակի բարձրանում է (135—140 հերց)։

Նույն հնչատակտի անշաղկապ տարբերակը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով։ Նախորդ տարբերակից սա զանազանվում է նրանով, որ նախ հտհ-ն կորագիծը այստեղ ունի համաչափ ծավալվող, ելքում թեթևակի իջնող բնույթ։ Դա դժվարացնում է առաջին և երկրորդ հնչատակտերի սահմանազատումը։ Ի տարբերություն երրորդ հնչատակտի, որը նախորդից անջատվում է փոքրիկ դադարով (180 մվրկ) սրանք արտասանվում են որպես մեկ ընդհանուր շարակարգի անդամներ, սահուն և համաչափ հնչերանգով։ Այստեղ չկա այն ընդհատումը, որ առկա է շաղկապավոր տարբերակում՝ ոբ–շաղկապից առաջ։

Հետևապես հնչատակտերի սահմանաբաժանման հատվածում դադարը կարող է պայմանավորված լինել.

ա) շաղկապի առկայությամբ, որը հնթադրում է հնչերանգի անավարտություն, շարունակելիություն.

բ) անշաղկապ տարբերակում հնչատակտերի սահմանաբաժանումը ցայտուն արձանագրվում է այն դեպքում, երբ հնչատակտը ավարտվում է ձայնավորով, իսկ հաջորդ հնչատակտը սկսվում է բաղաձայնով (հորթաքույրը դարձյալ)։ Այն դեպքում, երբ հնչատակտն ավարտվում է բաղաձայնով և հաջորդն էլ սկսվում է բաղաձայնով, հնչերանգում արձանագրվում է մեծ կամ փոքր դադար, որը արտացոլվում է նաև ձայնաբանական պատկերում (ամուսնացած–180 մվրկ)։

Անշաղկապ տարբերակի առաջին և երկրորդ հնչատակտերը արձանագրվում են համաչափ ծավալվող (100 հերցից սկսած, շեշտակիր հընչարառում՝ 125 հերց) և ելքում թեթևակի բարձրացող հնչերանգով։ Այդ հատվածում ուժգնությունը շեշտվող հնչարառում կազմում է 29 դբ, երկրորդ հնչատակտում, որտեղ բացակայում է որոշակի շեշտված հնչարառ, ուժգնությունը տատանվում է 28—34 դբ սահմաններում, իսկ հտհ-ը՝ 100—125 հերց է։

Շաղկապով տարբերակում երկրորդ հնչատակտը՝ և մի տղա ուներ դրավում է 750 մվրկ ժամանակահատված։ Անշաղկապ տարբերակում նույն հատվածը դրավում է 695 մվրկ ժամանակահատված։

Շաղկապով տարբերակում շեշտակիր են մի (125 հերց 29 դբ), տղա (125 հերց և 33 դբ), ուներ (135 հերց, 20 դբ) հատվածները։

Անշաղկապ տարբերակում նույն հնչարառներն ունեն հետևյալ ցուցանիշները. մի (100 հերց 31 դբ), տղա (85 հերց, 32 դբ), ուներ (85 հերց, 20 դբ)։

Հիմնական տոնի հաճախականությունն ունի մոտավորապես հետևյալ պատկերը, (տե՛ս գծանկար №1)։

Շարակարգի տվյալ հատվածի և հաջորդ հնչատակտի միջև գրանցվում է դադար 600 մվրկ. ժամանակահատված։ Այս և դադարից հետո եկող հնչատակտերը ունեն պատմողական, դատողական հնչերանգ, որին հետո սովելանում է նաև թվարկող, բացահայտող հնչերանգը։

Հաջորդ հատվածը ներկայացնում է հետևյալ շարակարգը.

«... Նվ ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել (դադար) բայց ուսումը չէր շարունակել, որովհետև սիրահարվել էր...»։

«... ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել (ավելի փոքր դադար), ուսումը չէր շարունակել, սիրահարվել էր»։

Ժամանակահատվածի տեսակետից շաղկապներով հատվածը գրվում է 244,5 մվրկ-ում, իսկ անշաղկապը՝ 177 մվրկ։

Մեր դիտողության արդյունքները ցույց են տալիս, որ շաղկապներին անմիջապես նախորդող հատվածում, անկախ վանկային և հնչյունային առանձնահատկություններից, դիտվում է տոնի իջեցում։ Սա, հավանաբար, կարելի է բացատրել նրանով, որ շաղկապը, փաստորեն, գտնվում է երկու հնչատակտերի սահմանազատման կետում, դառնում է դրանք իրարից անջատող օղակ՝ և՛ իմաստի տեսակետից, և՛ որպես շարակարգի կազմիչ։

Հնչատակտերի սահմանազատումը, բնականաբար, ավելի հեշտ և ցայտուն է կատարվում, քանի որ հնչատակտերը հնչերանգով առանձնանում են որպես միկրոիմաստներ, իսկ դրանց սահմանները զատվում են կամ շաղկապով, կամ դադարով։ Ինչպես տեսնում ենք շարակարգային վերլուծությունը իմաստից կտրված ոչ միայն անիմաստ է, այլև անհնար։

ԳԾԱՆԿԱՐ № 1

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ

նա րգիզ փոք(ը)ր հորաքույրը (365 մվրկ)
որդարձյալ դ(ը)ս եղերամուսնա-
ցած (60 մվրկ) և մի տ(ը)ղաուներ

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

նարգիզ փոք(ը)ր հորաքույրըդար-
ձյալ դ(ը)ս եղերամուսնացած (180 մվրկ)
մի տ(ը)ղաուներ

Այլ է հնչաբառերի վիճակը։ Դրանց առանձնացման և սահմանազատման համար դեր են խաղում ոչ միայն իմաստային գործոնները՝ կապված վանկային շեշտի ու հնչաբառային շեշտի հետ։ Այստեղ մեծ դեր ունեն հնչյուններն իրենց որակական հատկանիշներով, որոնց մեջ առաջին հերթին կարևոր նշանակություն է ստանում ձայնական-որակական հատկանիշը՝ բաղաձայն, ձայնավոր, ձայնեղ, խուլ, շնչեղ խուլ։

Հնչյունական սահմանների ձուլման, չեզոքացման դեպքերը, շատ-շատ են, և դա դժվարացնում է շարակարգի հատույթավորման գործը։ Հենց այս ժամանակ է, որ մեր վերլուծությունը առնչվում է արտասանվածքի վերլուծությանը վերաբերող մի քանի գործոնների հետ, որոնց մասին մենք համառոտակի խոսեցինք վերևում։

Այժմ դիտենք տեքստ-հնչաշղթայի մյուս հատվածը և տեսնենք, թե շարակարգային ինչպիսի՞ հարաբերություններ է արտահայտում և ինչպե՞ս են դրանք առնչվում հնչերանգային գործոնների հետ։

Ներկայացնում ենք այդ հատվածը։

«Եվ ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել, բայց ուսումը չէր շարունակել, որովհետև սիրահարվել էր»։

Առանց շաղկապի. «Ասում էին լավ սովորող աղջիկ էր եղել. ուսումը չէր շարունակել, սիրահարվել էր»։

Այս հատվածում իմաստի տեսակետից նոր հաղորդում կրող (ռեման)— «ուսումը չէր շարունակել» շարույթ-հնչատակն է. մնացած հաղորդումները կազմում են հիմնական թեմայի շարունակությունը և լրացուցիչ բացահայտում են մտցնում ռեմայի մեջ։ Հետևապես ձայնաբանական բնորոշող ցուցանիշները պետք է փնտրել հատկապես այդ հատվածում, որը և պետք է դիտել որպես համեմատության եղր։ Ամբողջ նախադասություն-հնչադասությունը շաղկապով 639 մվրկ է, առանց շաղկապի՝ 378 մվրկ։ Ինչպես տեսնում ենք շաղկապով հատվածում մոտավորապես երկու անգամ ավելի երկար է արտասանության տևողությունը։ Սա հնարավորություն է տալիս հանգելու մի շարք գործնական եղրակացությունների՝ կապված խոսքի զանազան ոճերի (գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական և այլն) մշակման հետ։ Նշված նախադասություն-հնչադասությունում առավել շեշտվում են «ասում էին» «լավ սովորող» հնչաբառերը։ «Ասում էին» հնչաբառում «մ»— ձայնորդի միաձուլումը «է»— ձայնավորին տալիս է 35 դբ հասնող ուժգնություն, որը և ամբողջ հնչադասության ամենաուժգին գագաթն է։ Այս հատվածի կոնտրաստային ուժգնության տարբերությունը կազմում է 10 դբ (ամենացածրը 20 դբ է) հտհ-ը 50 հերց։ Մյուս շեշտակիր «լավ սովորող հնչաբառի» լավ շեշտակիր վանկի ուժգնությունը կազմում է 33 դբ, հտհ-ը՝ 145 հերց։ Ամբողջ հնչադասությունում միայն այս երկու հնչաբառերն են («ասում էին» և «լավ սովորող»), որոնց հտհ կազմում է 150 հերց։ Մնացած ամբողջ շարքում հտհ տատանվում է 80-ից —110 հերցի սահմաններում։ Շեշտակիր երկու հնչաբառերն էլ արտասանվում են 510 մվրկ ժամանակահատվածում։

Այն հատվածը, որ մենք մտցնում ենք ռեմայի մեջ (ուսումը չէր շարունակել) ձայնաբանական տվյալներով մյուսներից խստորեն չի տարբերվում (ուժգնությունը մինչև 30 դբ, տևողությունը՝ 102 մվրկ է, իսկ հտհ-ը՝ 100 հերց)։ Սակայն այս հատվածը աչքի է ընկնում տոնի կայուն պատկերով։ Եթե նախորդ հատվածներում տատանումները 150—100 հերցի սահմաններում են, ապա այստեղ հիմնական տոնի հա-

ճախականությունը ունի կայուն համաչափ ծավալվող տեսք, որը ֆրազի ավարտի հետ համաչափորեն գնում է դեպի մարում («սիրահարվել էր»— հնչաբառում հտհ կորագիծը աստիճանաբար մարող տեսք է ստանում, իսկ հտհ-ը՝ 90—80 հերց է)։

Շաղկապների առկայությունը կամ բացակայությունը հիմնականում արտացոլվում է հտհ-նը ցույց տվող կորագծում։ Ուժգնության և նույնիսկ տևողության վրա (եթե նկատի չառնենք, որ շաղկապը արտասանական ավելի երկար ժամանակահատված է գրավում, քան դրան փոխարինող դադարը) շաղկապի լինել կամ չլինելը որակապես չի անդրադառնում. սակայն հտհ կորագծի վրա այդ ազդեցությունը ղգալի է։ Դա բացատրվում է նրանով, որ մեծ մասամբ շարակարգում շաղկապներին նախորդող հատվածը գրանցվում է որպես արտասանության ելք և հընչերանգային առումով առկա է իջնող, դեպի մարում գնացող հտհ։ Այնպես որ հաջորդող հատվածը սրտին դիտվում է որպես արտասանության սկիզբ և հտհ տեսակետից նույնպես ունի ընկած, իջնող պատկեր։

Այնինչ անշաղկապ շարակարգում շաղկապին փոխարինող դադարները, որոնք ավելի կարճ ժամանակահատված են գրավում, փաստորեն դառնում են շարակարգի մնացած անդամները իրարից սահմանազատող դադարների նման հատվածներ, որի հետևանքով հտհ-ը նույնպես ունենում է չընդհատվող, այլ շարունակվող, ծավալվող պատկեր։ Վերը բերած ցուցանիշները վերաբերում էին շարակարգի անշաղկապ տարբերակին և հաստատում են մեր դիտողությունները։

Այսպես. «լավ սովորող աղջիկ էր հղել (բայց), ուսումը չէր շարունակել»— շարակարգում առաջին և երկրորդ հնչատակտերի միջև հտհ որակական տարբերություններ չեն նկատվում. շաղկապին փոխարինում է փոքրիկ դադար՝ 70 հերց հտհ, 150 մվրկ տևողությամբ, հետո սկսվում է հիմնական իմաստ կրող հնչատակտը՝ 100 հերց հաճախականությամբ, որը և հավասար տարածվում է ամբողջ հնչատակտի երկարությամբ։

Երբ համեմատում ենք հտհ շարժումը շաղկապով հնչադասություններում նորից համոզվում ենք, որ լեզվում իմաստից բոլորովին կտրված որևէ երևույթի ուսումնասիրությունն ու վերլուծությունը դիտական չէ և հավաստի եզրակացություններ հանդեցնել չի կարող։ Կոնկրետացնելով մեր նյութի վրա ասենք, որ շաղկապով հատվածում ընդհանրապես շաղկապին նախորդող մասը սահմանազատվում է շաղկապով սկսվող հատվածից, որը և երևում է ձայնաբանական պատկերում։ Դրա հետևանքով հտհ պատկերն այս դեպքում ստացվում է ընդհատումներով, իսկ շաղկապին նախորդող հատվածում բացակայում է, որը մենք դիտում ենք որպես ընդհատում։ Հետո միայն շաղկապով սկսվող հատվածից հտհ-ը կրկին ըստանում է իրեն համապատասխան արժեքները։ Հտհ շարժումը,

այսպիսով, շաղկապների առկայությամբ ունենում է հատվածային, ընդհատվող պատկեր։

Ինչ վերաբերում է անշաղկապ նախադասություն-հնչադասությանը, ապա այստեղ շաղկապներից ազատ հատվածները լրացված են հնչերանգով, որն ունի իրեն համապատասխան ձայնաբանական արժեքները։ Հոհ շարժումը այս դեպքում ունի չընդհատվող (հատկապես շաղկապին փոխարինող մասում), ծավալվող պատկեր։


Երբ համեմատում ենք շաղկապով և անշաղկապ հնչադասությունների ելքային հատվածները՝ ըստ հոհ շարժման նվաղագույն ցուցանիշի, ապա տեսնում ենք, որ այստեղ դրանց մեջ որակական տարբերություններ չկան։ Հոհ-ը իջնում է մինչև 50 հերցի սահմանները (5 հերց հշտությամբ)։

Հետևապես՝ շարակարգի հոհ շարժման պատկերում շաղկապների առկայությունը կամ բացակայությունը նկատելի աղդեցություն է թողնում միայն շարակարգի այն հատվածներում, որոնք մոտ են կանգնած շաղկապներին (կամ նախադաս են կամ ետադաս)։


Այսպիսին է մեր քննած շարակարգերի հոհ մոտավոր գծային պատկերը՝ շաղկապով և անշաղկապ հնչադասություններում։ (Տե՛ս գծանկար № 2)։

ԳԾԱՆԿԱՐ №2

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ



ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ



Վերևում բերված հնչատակերի համեմատությունները ցույց են տալիս, որ հիմնական շեշտ կրող և նոր հաղորդում պարունակող հնչարտաերը շաղկապով շարակարգում անշաղկապ տարբերակի համեմատությամբ ձայնաբանական ավելի ցայտուն ցուցանիշներ են դրսևորում։ Սա բացատրվում է հետևյալ գործոններով։

Ընդհանուր առմամբ շաղկապն ինքնին իմաստաբանական տեսակետից ենթադրում է իրեն հաջորդող կախյալ մի միտք, որը կարևոր լրացում է հիմնական մտքի կամ հաղորդման համար, և դա, բնականաբար,

տրամաբանորեն առանձնացնում և ընդգծում է շաղկապին հաջորդող հատվածը. այս հանգամանքն էլ հենց իր արտացոլումն է գտնում ձայնաբանական ցուցանիշներում: Մեր դեպքում «եվ»-ը ենթադրում է մի լրացուցիչ հաղորդում, որը մտնելով թեմայի մեջ, կարևոր լրացում է դառնում նոր հաղորդման՝ ռեմայի համար (ուսումը չէր շարունակել):

Վերլուծվող նախադասություն-հնչադասության մեջ մտնող մնացած երկու հնչատակտերը մենք դիտում ենք միասին. «բայց ուսումը չէր շարունակել և որովհետև սիրահարվել էր»: Սրա անշաղկապ տարբերակն է. «ուսումը չէր շարունակել, «սիրահարվել էր» (այս տարբերակը դիտվում է որպես մեկ հնչատակտ):

Տեսնենք թե ձայնաբանական ինչպիսի ցուցանիշներ ունեն դրանք:

ԳԾԱՆԿԱՐ №3

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ

բայց ուսումը չէր շարունակել (վ)որովհետ(եվ) սիրահարվել էր (դադար 780 մվրկ)

Ինչպես նախորդ հնչատակտի ժամանակ, այնպես էլ հիմա «բայց» շաղկապը ենթադրում է իրենից հետո կարևոր լրացում, որը շեշտվում է և ձայնաբանորեն ընդգծվում:

Շաղկապների պատճառով շարակարգը արտասանվում է ավելի երկար ժամանակահատվածում՝ 2430 մվրկ.:

Հիմնական տոնի կորագիծը ունի հատվածավոր ընդհատվող պատկեր (ընդհատումները շաղկապների մեջ եղած խուլ բաղաձայների հաշվին ավելի շատ են), ծավալվում է ոչ մեծ տատանումներով՝ ելքային հատվածում ավելի թույլ ձայնաբանական տվայալներով:

ԳԾԱՆԿԱՐ №4

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

ուսումը չէր շարունակել սիրահարվել էր

Հոհ-ը սկսվում է 100 հերցով և հավասար ծավալվելով վերջին հընչաբառում դառնում է 80—70 հերց: Հիմնական տոնի կորագիծը այս շարակարգում ունի ոչ մեծ տատանումներով ծավալվող բնույթ: Շարակարգի ելքում ձայնաբանական ցուցանիշները թուլանում են, դա օրինաչափ է ելքային դիրքի համար: Ամբողջ շարակարգի համար շեշտակիր (նաև

ըստ իմաստի) հնչաբառերն են «չէր շարունակել» և «սիրահարվել էր», իսկ բայի ժխտական ձևը պատճառ է դարձել այդ հատվածի ավելի ցայտուն դրսևորմանը։

Ամբողջ շարակարգը արտասանվում է 1740 մվրկ ժամանակահատվածում։ Շաղկապների փոխարեն արձանագրվում են դադարներ, որոնք շարակարգի մյուս կազմիչների միջև եղած դադարներին հավասար ժամանակահատված են զբաղեցնում։

Հիմնական տոնի հաճախականությունը ներկայացնող պարամետրերը ցույց են տալիս, որ անշաղկապ հնչադասությունում շեշտվող հընչաբառը հնչադասության ելքում ավելի ցայտուն ցուցանիշներ ունի, քան նույն հնչաբառը շաղկապով հնչադասությունում։ Շաղկապի բացակայությունը հաջորդող հատվածի կամ անդամի համար հավանաբար, նախապատրաստում է հնչերանգային այնպիսի իրադրություն, որը նպաստում է վերջինիս ձայնաբանական ցուցանիշների ավելի ցայտուն դրսևորմանը։

Շարակարգի մյուս հատվածը վերը դիտվածից անջատվում է դադարով, որը շաղկապով տարբերակում անշաղկապի համեմատությամբ ավելի փոքր է (780 մվրկ և 10^{20}մվրկ)։ Սա, մեր կարծիքով, կարելի է բացատրել կոնկրետ շաղկապի բնույթով։ Տվյալ հատվածում եղած «և» շաղկապը բացի կապակցող հնչերանգից, ունի ամենից առաջ թվարկող, մեկ միտքը մյուսին փոխանցող հնչերանգ։ Հենց այդ պատճառով էլ «և» շաղկապով սկսվող հատվածի և դրան նախորդող հատվածի միջև մեծ դադար լինել չի կարող, քանի որ թվարկումը ինքնին ենթադրում է ոչ մեծ դադարով արտասանվածք-շարակարգ։

Անշաղկապ տարբերակում մենք գործ ունենք ինքնուրույն հնչաբառերի-հնչատակտերի հետ։ Դրանք չունենալով թվարկող հնչերանգ, կարող են միմյանցից սահմանազատվել մեծ կամ փոքր դադարով (մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ դադարին միանում է նաև բացակա շաղկապին փոխարինող հնչերանգը)։

Ներկայացնում ենք վերլուծվող հատվածը։

«(եվ) փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ, բայց ամաչեց ու գնաց»։

Շաղկապով տարբերակում մենք ունենք հետևյալ հնչադասությունները. «Եվ փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ, բայց ամաչեց ու գնաց»։

Անշաղկապ տարբերակում դրանք են. «փոքր հորեղբայրը կարող էր բանակ չգնալ», «ամաչեց», «գնաց»։

Ակտուալ հատույթավորման հետևանքով անշաղկապ տարբերակում ստացված երեք ինքնուրույն միավորների մեջ ներքին կապը կամ բա-

ցակայում է (օրինակ 1-ի և 2-ի միջև) կամ շատ թույլ է (2-ի և 3-ի միջև)։

Շաղկապով շարակարգը գրավում է 3690 մվրկ ժամանակահատված, անշաղկապը՝ 3150 մվրկ։ Շաղկապով տարբերակի մասին խոսելիս նորից պետք է անդրադառնաք իմաստային կողմին՝ շաղկապի հնչերանգային իմաստին։ Շարակարգի առաջին հնչատակտը (և փոքր հորեղբայրը, որ կարող էր բանակ չգնալ) պարունակում է հիմնական շեշտ կրող հնչաբառը՝ փոքր հորեղբայրը, որը նոր հաղորդման մեջ՝ հիմնական թեմայի (Նարգիզ փոքր հորաքույրը) նկատմամբ գործողություն կատարողն է։ Վերջինս «որ» շաղկապի շնորհիվ, որն ունի որոշիչ, բացահայտող բովանդակություն, և դրա շնորհիվ ստեղծում է շարունակական, ինչ-որ նոր բան հաղորդելու երանգ, կապվում է ռեմայի հետ։ Այս հնչերանգը ձայնաբանական պատկերում արձանագրվում է ավելի մեծ դադարով, («որ» շաղկապին նախորդող), քան պետք է լիներ։

Հտհ-ը շեշտված հատվածում ավելի բարձր է (150 հերց), քան նույն հատվածի անշաղկապ տարբերակում, իսկ ուժգնությունն պարամետրերը երկու տարբերակում համարյա հավասար են (32 դբ, 34 դբ)։ Այստեղ նշենք, որ մեր դիտողություններից հետևում է մեկ եղրակացություն. ստորադասական շաղկապները («որ», «որովհետև» և այլն) բնորոշվում են իրենց նախորդող մեծ դադարով։ Մինչդեռ համադասական շաղկապների դեպքում այդ չի նկատվում։

Քննվող շարակարգում «բայց» շաղկապին նախորդող կամ հաջորդող միավորները սահմանազատվում են այնքան դադարով, որքան սովորաբար լինում է սովորական արտասանված շարակարգի կազմիչների միջև։

Անշաղկապ տարբերակում ասացինք, որ ունենք 3 հնչատակտ։ Առաջին հնչատակտը, որտեղ բացակայում է «որ» շաղկապը, ունի ծավալվող հտհ-ի կորագիծ, որը հնչատակտի ելքում համարյա հավասար է դառնում։ Դրան հետևում է 600 մվրկ դադար. սա համընկնում է «բայց» շաղկապի հատվածին։ Սակայն մեծ դադարը միայն շաղկապի հաշվին չէ, որ ստացվում է։ Հնչատակտի վերջին բառը՝ «չգնալ», իր ժխտական ձևով թելադրում է ավարտուն միտք և այնպիսի հնչերանգ, որից հետո որևէ նոր հաղորդում կարծես չի սպասվում, հենց այստեղ էլ արձանագրվում է դադար։ Ի դեպ, ասենք, որ այս հնչատակտում «բանակ չգնալ» հնչաբառը նույնպես շեշտակիր է, շնորհիվ ժխտական մասնիկի։ Նշված շաղկապավոր տարբերակում «որ» և «բայց» շաղկապների շնորհիվ այդ հնչաբառը ստանում է ոչ ավարտուն հնչերանգ, որն արտացոլվում է նրա ձայնաբանական պատկերում. հտհ-ը շեշտակիր վանկում 170 հերց է, ուժգնությունը 30 դբ։

Անշաղկապ տարբերակում, այդ հնչաբառը ունի պատմողական, դա-

տողական չեզոք երանգ, որը ձայնաբանական պատկերում արձանագրվում է որպես ոչ շարունակելի միտք, հետևյալ ցուցանիշներով. հտհ 100 հերց, արտասանության ուժգնությունը՝ 28 դբ։

Քննվող ամբողջ շարակարգը ունի հետևյալ ձայնաբանական պատկերը. (տե՛ս գծանկար № 5)։

Հնչատակտերի հաջորդ խումբը իր հնչերանգային կառուցվածքով նախորդի հետ շատ ընդհանրություններ ունի։ Ներկայացնում ենք այդ խումբը.

«Եվ մեծ հորեղբոր մեծ որդին, որ պատերազմի պատճառով դրպրոցից ետ էր դարձել աշխատելու»։ Այս հատվածն իր կազմում ունի երկու հնչադասություն. առաջինը սկսվում է «և» թվարկող շաղկապով, մյուսը՝ «որ» բացահայտող, բացատրող շաղկապով, որին ձայնաբանական պատկերում նախորդում է մեծ դադար (480 մվրկ)։ Անշաղկապ տարբերակում այդ դադարը կազմում է 210 մվրկ։

ԳԾԱՆԿԱՐ № 5

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ

(յ)ե վ փ ո ք(ը)ր հորեղբայրը (260 մվրկ) (վ)որ կարող էր
բ ա ն ակ (150 մվրկ) չ(ը) գ նալ (600 մվրկ) բայ ց (30 մվրկ) ամաչեց
(40 մվրկ) ու գ(ը) նաց

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

փ ո ք(ը)ր հորեղբայրը կարող էր բանակ (90 մվրկ)
չ(ը) գ(ը) նալ (600 մվրկ) ա մ ա չ ե ց (180 մվրկ) գ(ը) նաց

Շարակարգում առկա է երկու հնչատակտ. 1. «մեծ հորեղբոր մեծ որդին» և 2. «պատերազմի պատճառով ետ էր դարձել աշխատելու» ամբողջ հատվածում հիմնական, իմաստակիր մասն է՝ «մեծ որդին ետ էր դարձել»։

Երկրորդ հնչատակտի ձայնաբանական ցուցանիշներն ավելի թույլ են։ Պատճառներից մեկը շարակարգում նրա դրաված ելքային դիրքն է, որտեղ սովորաբար, հնչերանգի ձայնաբանական կազմիչների ուժը թուլանում է։ Պատճառներից մյուսը «է» ձայնավորն է, որը մեր օրինակում շեշտի տակ է (չէ՞տ էր դարձել), նախորդ շեշտակիր հնչաբաժի համեմատ ավելի թույլ դրսևորումն ունի՝ հտհ 170 հերցից չի անցնում, իսկ ուժգնությունը 24—28 դբ է։

Շաղկապով տարբերակում շեշտված հնչաբաժների ձայնաբանական

ցուցանիշներն անշաղկապ տարբերակի համեմատությամբ ավելի բարձր են։ Ինչպես արդեն ասել ենք «և» և «որ» շաղկապների հնչերանգային իմաստային առանձնահատկությունները (թվարկող, շարունակական և բացատրության ենթադրող) արտացոլվում են դրանց ձայնաբանական ցուցանիշների մեջ։ Դրան համապատասխան հտհ պատկերն ունի ընդհատվող («որ» շաղկապից առաջ մեծ դադար 450 մվրկ), սակայն խաղաղ ծավալվող պատկեր։ Հարկ է նշել, որ «ը» գաղտնավանկը միշտ արձանագրվում է փոքր ուժգնությամբ՝ 20—23դբ։

Անշաղկապ տարբերակում ունենք երեք հնչադասություններ, որոնք սակայն ձայնաբանորեն արձանագրվում են ավելի միաձույլ (չնայած վերջին հնչատակտի («աշխատելու») բացակայության դեպքում էլ շարակարգի ամբողջականությունը չի խախտվում)։ Շաղկապների փոխարեն արձանագրվում են ոչ մեծ դադարներ։ Հտհ պատկերը խաղաղ ծավալվող է։ Միայն, նախորդի համեմատ, այստեղ մենք տեսնում ենք ձայնաբանական ցուցանիշների աստիճանական նվազում սկսած երկրորդ հնչադասության «դալոցից» հատվածից՝ հտհն-ը 100—110 հերցից չի անցնում, իսկ ուժգնությունը կազմում է 23—25 դբ։ Վերլուծվող հատվածի ձայնաբանական պատկերը ունի մոտավորապես հետևյալ տեսքը. (տե՛ս գծանկար № 6)։

ԳԾԱՆԿԱՐ № 6

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ

և մեծ հորեղբոր մեծ(վ) որդին (450 մվրկ)
որ պատերազմի պատճառով (40մվրկ) դ(ը)պրոցից (40մվրկ) ետ եր դարձ ել աշխատելու

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

մեծհորեղբորմեծ(վ)որդին (180 մվրկ) պատերազմի պատճառով դ(ը)պրոցից(յ)ետեր դարձել աշխատելու

Շարակարգի մյուս հատվածը, որը ենթակա է վերլուծության, կազմված է երկու հնչատակտերից։ «Ով նրա քույրերն ու եղբայրը՝ Սոխակը, Ելենը, Վալոդը...». Դրանցից առաջինը սկսվում է «ով» շաղկապով և իր մեջ ունի նաև «ու» շաղկապը, երկուսն էլ ունեն թվարկող հնչերանգ։ Մյուս հնչատակտը չունի ոչ մի շաղկապ, սակայն կարող էր ունենալ

(«և» շաղկապ), քանի որ հնչերանգը այդ հնչատակում նույնպես ունի բվարկող երանգ։

Առաջին հնչատակը անկախ է. «և» շաղկապն իր հնչերանգով ծառայում է նաև երկրորդ հնչատակին. վերջինս լրացուցիչ բացահայտում, կոնկրետացում է մտցնում առաջինի բովանդակության մեջ։

Շաղկապով տարբերակը ավելի մեծ ժամանակահատված է գրավում (3210 մվրկ)։ Միայն «և» շաղկապը գրավում է 210 մվրկ ժամանակահատված, իսկ «ու»-ն հանդես է գալիս նախորդ վանկերի հետ միաձույլ (գրավում է 35 մվրկ ժամանակ)։ Առաջին հնչատակը մյուս հընչատակից բաժանվում է 510 մվրկ ժամանակահատված ունեցող դադարով։

Անշաղկապ տարբերակն արտասանվում է 2790 մվրկ. ժամանակահատվածում, առաջին հնչատակը մյուսից անջատող դադարը այս տարբերակում երկու անգամ ավելի կարճ է։ Նշանակալից է, որ այս հատվածում որևէ շաղկապ չկա, սակայն «և» շաղկապը, որ գտնվում է նախորդ հնչատակի սկզբում, աղդում է դադարի տևողության վրա, և առաջին հնչատակը արտասանվում է ինքնուրույն, ավարտուն հնչերանգով։ Հաջորդող դադարը դառնում է ոչ թե երկրորդ հնչատակին նախորդող դադար, այլ արտասանության ավարտ։

Հենց ելքային հնչերանգն էլ թելադրում է տևական դադար։

Երկու հնչատակներում էլ ունենք շեշտված վանկեր, սակայն դժվար է ասել, թե որ հնչաբառերն են առավել շեշտված։ Արտասանության հտհ-ը տարածվում է համաչափ, ընդհանուր ֆոնի վրա աչքի են զարնում «քույրերն ու եղբայրը» հատվածը։

Ինչպես արդեն ասացինք «ու» շաղկապը դրսևորվում է երկու բառերի հետ միաձույլ։

Շաղկապով տարբերակում այդ հնչաբառը արտասանվում է 1320 մվրկ տևողությամբ, անշաղկապում՝ 1140 մվրկ տևողությամբ։

Շաղկապով տարբերակում շեշտակիր հնչարառերը արձանագրվում են հետևյալ ցուցանիշներով. «քույրերը»— 120 հերց հտհ, 32 դբ ուժգնություն, «եղբայրը»՝ 120 հերց հտհ և 33 դբ ուժգնություն։

Շեշտ չունեցող վանկերը արձանագրվում են ամենացածր՝ 90 հերց հտհ և 28 դբ ուժգնությամբ։

Անշաղկապ տարբերակում այդ հնչաբառերն ունեն հետևյալ ցուցանիշները. «քույրերն» 135 հերց հտհ, 33 դբ ուժգնություն, «եղբայրը»— 120 հերց հտհ, 28 դբ ուժգնություն։

Այստեղ պետք է նկատել, որ «եղբայրը» հնչաբառում վերջին վանկը (րը) ունի նախորդ «բայց» շեշտակիր վանկին շատ մոտ ձայնաբանական ցուցանիշներ։

Սա հնչերանգի ծավալման այն դեպքն է, երբ բառը կարծես ստանում է երկու շեշտ, մեկը իր հիմնականն է (բառավերջում). մյուսը՝ մեծ մասամբ դրան նախորդող լրացուցիչ շեշտն է։ Սա վերաբերում է համապես այն հնչաբառերին, որոնք վերջանում են «ը» ձայնավորով։ Վերջինս շեշտը ավելի թույլ է դրսևորում և այդ պատճառով դյխավոր շեշտակիր վանկ է դառնում «ը»-ին նախորդող վանկը։

Մյուս հնչատակտը՝ «Սոխակը, ելենը, Վալոդը», արտասանվում է թվարկման հնչերանգով։ Այդ հնչերանգը փոխանցվում է դեռևս նախորդ հնչատակտից, որտեղ առկա էին «և» «ու» շաղկապները։ Վերջիններիս հիմնական՝ կապակցող բովանդակության փոխարեն առաջին պլան է մղվում թվարկող բովանդակությունը։ Հնչատակտում չնայած կան առանձին շեշտված վանկեր (նախավերջին վանկերը), սակայն այդ հատվածներից ոչ մեկը առանձին շեշտված հնչաբառ չի դառնում։

Եվ շաղկապով, և անշաղկապ տարբերակներում արտասանության տևողությունը 1440 մվրկ է։ Շարակարգը արտասանվում է համաչափ ծավալվող հնչերանգով. հտհ-ը շաղկապով տարբերակում ունի կայուն պատկեր՝ 100 հերց, իսկ ուժգնությունը տարածվում է 28—32 դբ սահմաններում (բարձրանում է շեշտակիր վանկերում)։

Անշաղկապ տարբերակում հիմնական տոնի պատկերը շատ քիչ է փոխվում. հտհ-ը տատանվում է 50—110 հերցի սահմաններում, 28—32 դբ ուժգնությամբ. համեմատաբար բարձր հաճախականություն և ուժգնություն ունեն յուրաքանչյուր բառի հիմնական շեշտակիր վանկերը։

Ամբողջ շարակարգի (երկու հնչատակտերը միասին) հիմնական տոնի հաճախականությունը շաղկապով տարբերակում ունի ընդհատվող պատկեր՝ հնչատակտերի սահմանազատման տեղում։ Մնացած մասերում արդեն ասվեց, համաչափ ծավալվող է։

Անշաղկապ տարբերակում հտհ-ը համարյա չի ընդհատվում։ Դիտվող ընդհատումը հնչատակտերի սահմանազատման տեղում հավասար է բացահայտիչի և բացահայտյալի միջև եղած հնչերանգային դադարի, իսկ ամբողջ պատկերի համար բնորոշ է հավասար համաչափ ծավալումը։

Դիտենք դա գծանկարի վրա. (տե՛ս գծանկար № 7)։

Շարակարգը եզրափակող հնչադաստիյունն է «բոլորը, բոլորը, գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը»։

Այն հնչադաստիյան բովանդակային տեսակետից կազմում է ամբողջ տեքստ հնչաշղթայի նոր հաղորդումը՝ ռեման, հաղորդման գագաթը։ Նախորդ բոլոր հաղորդումներն իրենց միկրոթեմաներով ու միկրոռեմաներով նախապատրաստում էին այս հիմնական հաղորդումը։

Շարակարգում առկա են երկու հիմնական շեշտ կրող հատվածներ. «բոլորը» և «թերթել էին այդ դասագիրքը»։

Չնայած այստեղ շաղկապները չկան, սակայն նախորդ հատվածներում եղած շաղկապների հաշվին, արտասանության քիչ ավելի երկար ժամանակահատված է գրանցվել (30 30 մվրկ)։

Ինչպես նախորդ վերլուծվող հատվածներում շաղկապով տարբերակի ձայնաբանական ցուցանիշներն ավելի ցայտուն են՝ անշաղկապ տարբերակի համեմատությամբ։ Ամբողջ հնչատակտի առաջին հատվածի (բոլորը, բոլորը) վրա նախորդող շաղկապների ազդեցությունը ավելի զգալի է։

Առաջին հնչաբառի «բոլորը, բոլորը» շեշտակիր վանկերում հետևյալ պատկերն ենք տեսնում. շաղկապավոր տարբերակում. 175 հերց հտհ, 32 դբ ուժգնություն և 175 հերց հտհ, 30 դբ ուժգնություն։ Անշաղկապ տարբերակում նույն վանկերում գրանցվում է. 125 հերց հտհ 28 դբ ուժգնություն և 110 հերց հտհ, 25,5 դբ արտասանության ուժգնություն։

ԳԾԱՆԿԱԳ ՏԻ 7

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ

և Ն(Ը)ՐԱՔՈՒՅՐԵՐ(Ը)Ն ՈՒ(Յ)ԵՂԲԱՅՐԸ (510 մվրկ)

ՍՈՒՏԱԿԸ (Յ)ԵԼԵՆԸ ՎԱԼՈՒԴԸ

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

ՆՐԱ ՔՈՒՅՐԵՐ(Ը)Ն ՈՒ(Յ)ԵՂԲԱՅՐԸ (240 մվրկ) ՍՈՒՏԱԿԸ

(Յ)ԵԼԵՆԸ ՎԱԼՈՒԴԸ

Շաղկապով տարբերակում այս հնչաբառը գրավում է 930 մվրկ ժամանակահատված, անշաղկապ տարբերակում՝ 630 մվրկ ժամանակահատված։

Առաջին տարբերակում «բոլորը, բոլորը» հնչաբառի երկու կազմիչները միմյանցից բաժանվում են որոշ դադարով (90 մվրկ)։ Դա նույնությամբ նախորդ շաղկապների թողած հնչերանգային ազդեցության արդյունք է. այդ դադարը չկա կամ չնչին է (15 մվրկ) անշաղկապ տարբերակում։

Ցույց հնչադասության մեջ «դոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը» առանձնանում են «մի» «թերթել էին» և «այդ դասագիրքը» շեշտված հնչաբառերը։

Շաղկապով տարբերակում հնչատակտն ունի 1950 մվրկ տևողություն, անշաղկապ տարբերակում՝ 1800 մվրկ տևողություն։

Շեշտված հնչաբառերն ունեն հետևյալ ձայնաբանական ցուցանիշները. շաղկապով տարբերակում «մի» հնչաբառը արտասանվում է 120, 5 մվրկ, ունի 120 հերց հտհ, 35 դբ արտասանության ուժգնություն, «թերթել էին» 430 մվրկ տևողություն, 105 հերց հտհ, 26 դբ ուժգնություն, «այդ»՝125 հերց հտհ, 120 մվրկ տևողություն, 26 դբ ուժգնություն, «դասագիրքը»՝ 600 մվրկ արտասանության տևողություն, 150 հերց, հտհ, 9 դբ ուժգնություն։

Անշաղկապ տարբերակում. «մի»՝ 90 մվրկ տևողություն (հետո հետևում է շատ կարճ դադար՝ 60 մվրկ), 105 հերց հտհ, 27 դբ ուժգնություն, «թերթել էին» 480,5 մվրկ տևողություն, 110 հերց հտհ, 25 դբ ուժգնություն, «այդ»՝ 120,5 մվրկ արտասանության տևողություն, 100 հերց հտհ, 25,5 դբ ուժգնություն, «դասագիրքը»՝ 480, 5 մվրկ տևողություն, 150 հերց հտհ, 9 դբ ուժգնություն։

ԳԾԱՆԿԱՐ №8

ՇԱՂԿԱՊՈՎ ՏԱՐԲԵՐԱԿ (նկատի ունենք ամբողջ տեքստը)

բոլորը (60մվրկ) բոլորը գոնեմի անգամ
թերթել էին այդ(դ)աս ագիրքը

ԱՆՇԱՂԿԱՊ ՏԱՐԲԵՐԱԿ

բոլորը բոլորը գոնեմի անգամ թերթել
էին (15մվրկ) այդ(դ)աս ագիրքը

Ինչպես տեսնում ենք ձայնաբանական տվյալներից այս դեպքում հնչատակտերում շաղկապով շարակարդի շեշտվող հնչաբառերի ցուցանիշները հիմնականում (բացի մեկից՝ «թերթել էին», որտեղ համարյա հավասար են) բարձր են անշաղկապ տարբերակի համեմատությամբ։ Մեկ անգամ ևս սա ցույց է տալիս, որ շաղկապների առկայությունը հընչերանգի վրա թողնում է իր որոշակի ազդեցությունը, խոսքը դարձնում է ձգված, խոսքի միավորների ստորադասությունը և կախվածությունը մեկը մյուսից դրսևորվում են ավելի ցայտուն։

Անշաղկապ տարբերակում խոսքի միավորներն ավելի անկախ ինքնուրույն հնչերանգ ունեն, ասես միմյանցով քիչ պայմանավորված։

Դիտենք գծանկարը (տե՛ս գծանկար № 8)։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձառական նյութի ձայնաբանական քննությունը հնարավորություն է տալիս անելու հետևյալ եզրակացությունները։

1. Կատարելով տեքստ-հնչաշղթայի կամ շարակարգի վերլուծություն և դիտելով շարակարգը որպես օբյեկտիվ իրականության հարաբերություններ արտահայտող օղակ, մենք գտնում ենք, որ վերլուծությունը պետք է կատարել անպայմանորեն իմաստավորված, օբյեկտիվ իրականության կապերն ու օրինաչափությունները արտացոլող, տվյալ լեզվական իրադրության մեջ նվազագույն իմաստային հատվածների սահմաններում։ Այդ պրոցեսում որպես մեկնակետ նկատի է առնվում մարդու ուղեղի այն յուրահատկությունը, որ վերջինս միշտ ընկալում և անջատում կամ առանձնացնում է իմաստավորված, հնարավորին չափ միաձույլ, օբյեկտիվ իրականության հարաբերություններ արտահայտող միավորներ։ Սա ուղեղի՝ իրականության կապերը խորապես ընկալելու և վերարտադրելու ունակությունն է։

2. Հայ լեզվաբանության մեջ ընդունված արտասանվածքի վերլուծությունը, որը մենք առաջարկում ենք անվանել շարակարգի վերլուծություն (քանի որ այն ուղղակիորեն ենթադրում է հնչական միավորների շարքի վերլուծություն), պետք է կատարվի վերը նշված հիմքի վրա. վերլուծվող լեզվական նյութը պետք է լինի նվազագույն, իմաստավորված, ռեալ իրականության կապեր և օրինաչափություններ արտահայտող օղակ։

3. Հնչերանգի որպես շարակարգը ամբողջացնող, կապակցող միջոցի բացահայտման համար ընտրվել է բարդ կառուցվածքի տեքստ-հնչաշղթա, որտեղ առկա են շաղկապներ, և համեմատական ուսումնասիրություններ են անցկացվել նույն տեքստի անշաղկապ տարբերակի հետ։ Տեքստը ենթարկելով ակտուալ հատուվածավորման, մենք ստացել ենք շարակարգի ավելի փոքր իմաստավորված օղակներ՝ նախադասության-հնչադասություններ, շարույթ-հնչատակտեր, վերջապես բառ-հնչաբառեր, որոնք մի դեպքում ունեցել են շաղկապային կապակցություն (շաղկապով տարբերակ), մյուս դեպքում՝ անշաղկապ կապակցություն (անշաղկապ տարբերակ)։ Այս վերջին տարբերակում ուշադրության կենտրոնում եղել է շաղկապներին փոխարինող դադարը, որպես հնչերանգը ներկայացնող և շարակարգը կապակցող կարևորագույն գործոն։

4. Փորձառական վերլուծությունը ցույց է տալիս, որ բարդ նախադասություններում շաղկապներից առաջ նկատվում է արտասանության հիմնական տոնի բարձրացում, որը ենթադրում է մտքի անավարտություն, այն շարունակելու հնարավորություն։

Սա բնորոշ է հատկապես ստորադասական շաղկապներին։

Նույն հատվածների անշաղկապ տարբերակում նկատվում է տոնի հավասար ծավալում։

5. Ընդունելով այն, որ շաղկապները իրենց հնչերանգային բովանդակությամբ կարող են լինել բազմազան, մենք մեր ուսումնասիրության նյութի մեջ դասդասել ենք օգտագործվող շաղկապները՝ (բվարկող, բացահայտող, պատճառ-հետևանք արտահայտող) և եկել ենք այն եզրակացության, որ բվարկող շաղկապներին նախորդող հնչատակում նկատելի է հիմնական տոնի բարձրացում և դադար։ Ինքը՝ շաղկապը հաճախ հանդես է գալիս շարակարգի մյուս անդամների հետ ձուլված։

Նույն հնչատակի անշաղկապ տարբերակում բարձրացող տոնի փոխարեն առկա է խաղաղ ծավալվող տոն, իսկ դադարը դառնում է նվազադույն։

Պատճառ-հետևանք կամ լրացուցիչ բացահայտում արտահայտող (հիմնականում ստորադասական բնույթի) շաղկապներին նախորդող հատվածներում դադարը ավելի մեծ է լինում, իսկ շարակարգի հնչերանգը արտահայտում է անավարտություն, լուծում պահանջող։

6. Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շաղկապով նախադասությունները երկսարաշունչ են և հաճախ ծանրաոճ, մինչդեռ սրանց անշաղկապ տարբերակին բնորոշ է ոչ միայն ավելի հատու, նպատակասլաց հնչերանգ, այլև փոքր ծավալ։

Շաղկապներին փոխարինող դադարները խոսքը դարձնում են հատու, կտրուկ։ Սա ավելի բնորոշ է գիտական տեքստին։

Մյուս ոչ պակաս կարևոր հանգամանքն այն է, որ անշաղկապ խոսքում, որտեղ հնչերանգի դերը կրկնապատկվում է, տեքստ-հնչաշղթայի ակտուալ հատույթավորումը ավելի հստակ է կատարվում, որի հետևանքով տրվածի և տրվողի սահմանաբաժանումն ու առանձնացումը առավել ճշգրիտ պատկեր է ստանում։

Այսպիսով՝ հնչերանգի շարակարգը ամբողջացնող և կապակցող գործառույթյունը խիստ կարևոր դերծոն է ինչպես ձայնաբանական վերլուծության, այնպես էլ նրա լեզվական իմաստային վերլուծության տեսանկյունից։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Աղայան Է. Բ. Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 112։

2. Աբամյան Ա. Մ. Պարզ նախադասության հնչերանգը, Երևան, 1977, («Ժամանակակից հայերենի հնչերանգը» ժողովածու)։

3 Թոխմախյան Ռ., Խաչատրյան Ս., Ջահարյան Ն. Հայերենի խոսքի տեմպը, Լրաբեր, 1974, № 6։

4 Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1975, № 3, 1978, № 5, Հնչերանգը և շեշտը հայերե-

նում, Երևան, 1978, Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974 և այլն։

5 Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1975, № 3, էջ 167—189։

6 Մարեւոսյան Հ. «Մեր վազքը» ժողովածու, Երևան, 1978, էջ 113։

7 Ջահուկյան Գ. Բ. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։

8 Սևակ Գ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955։

9 Քոսյան Վ. Ս. Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976։

10 *Адамец П.* Порядок слов в современном рус с ком языке. Прага, 1966.

11 *Артёмов В. А.* Психология речевой интонации, лекции к спецкурсу, I и II ч., М., 1976.

12 *Артёмов В. А.* Принципиальное положение метода структурно-функционального анализа речевой интонации, Сб. Звуки, слоговой акцент, интонация, Вильнюс, 1972.

13 *Балли Ш.* Общая лингвистика и вопросы французского языка, М., 1955.

14 *Брызгунова Е. А.* О смыслоразличительных возможностях русской интонации, В. Я. 1971, № 1.

15 *Крушельницкая К. Г.* К вопросу о смысловом членении предложения, В. Я., 1956, № 5.

16 *Матезиус В. О.* О так называемом актуальном членении предложения, П. Л. К., М., 1967.

17 *Мартине А.* Основы общей лингвистики, Новое в линг., вып. 3, М., 1963.

18 *Николаева Т. М.* Фразовая интонация слав. языков, М., 1977.

19 *Пешковский А. М.* Русский синтаксис в науч. освещении, изд. 7, М., 1956.

20 *Пешковский А. М.* Избранные труды, М., 1959.

21 *Пешковский А. М.* Грамматика и интонация, М., 1949.

22 *Распопов И. Г.* Актуальное членение предложения, Уфа, 1961.

23 *Реформатский А. А.* Введ. в языкознание, М., 1955.

24 *Фортунатов Ф. Ф.*, О преподавании грам. руссокого языка в сред. школе, Избранные труды, т. 2, М., 1957.

25 *Щерба Л. В.* Фонетика франц. языка, М., 1948.

26 *Daneš F.*, Sentence intonation from a functional point of view, word, v. 16, № 1, 1960.

27 *Faure G.*, Contribution á l'étude du status phonologigue des structures prosodematiques. Prosodic tenture analytique. Ottawa. 1970.

28 *Karcevckij S.*, Sur la phonologie de la phrase. T. G. C. p. IV. 1931.

Վ. Ն. ՀԱՑՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՐԴՈՐԱԿԱՆ (ԴՐԴԶԱԿԱՆ) ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԹԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Փորձառական եղանակով ուսումնասիրման համար նախապես ընտրվել է նյութը, որը կազմված է միակազմ և երկկազմ նախադասություններից։ Այն սկզբնապես ձայնագրվել է ժապավենի վրա (չորս հաղորդավարների արտասանությամբ), այնուհետև գրանցվել հատուկ սարքի՝ ինտոնոգրաֆի միջոցով։ Ստացված ինտոնոգրամների վերլուծությամբ հանգել ենք որոշակի եզրակացությունների։ Հայտնի է, որ ժամանակակից հայերենում հնչերանգային հաղորդակցական տիպի նախադասությունների, ինչպես նաև դրանց միանշանակ բնութագրման հարցում միասնական կարծիքներ չկան։ Այս առումով էլ, հնչերանգային իմքերի կամ տիպերի սահմանման և դասակարգման գործում ժամանակակից հայերենում առաջ է քաշվում մերթ նախադասության ըստ բնույթի (բայի եղանակային ձևերի) (5, 84), մերթ ըստ երանգի (ինտոնացիոն առանձնահատկությունների) (2ա, 341) մերթ էլ ըստ արտահայտության նպատակի (եղանակի) կամ ըստ խոսողի վերաբերմունքի (եղանակավորման) (4,13) դասակարգման սկզբունքները։ Այս առումով նկատելի և բնորոշ գործոն է համարվում խոսողի վերաբերմունքն իրականության նկատմամբ, որը լավագույն դեպքում կարելի է որակել որպես սուբյեկտիվ-եղանակավորող նշանակությունների արտահայտություն։ Շատ ուսումնասիրողներ հենց այդ գործոնով են առավել չափով բնորոշում հորդորական տիպի հնչերանգային կառույցները՝ հատկապես միկազմ նախադասությունների կազմում։

Մեր կարծիքով հնչերանգային հաղորդակցական տիպերի դասակարգման ժամանակ այդի հայերենում համեմատաբար միասնական մոտեցում չի դրսևորված։ Ուսումնասիրողներից շատերը չեն առանձնացնում հորդորական կառույցները որպես առանձին հաղորդակցական տիպ։ Առավել տարածված է այն տեսակետը, թե նախադասություններն ըստ բնույթի լինում են չորս տեսակի՝ պատմողական, հարցական, բացականչական և հրամայական։ Մենք, ելնելով նախադասության տեսակնե-

րի դասակարգման հնչյունաբանական առանձնահատկություններից, հաշվի առնելով սրանցում հնչերանգի օբյեկտիվ գործոնի խիստ նշանակությունը, սահմանել ենք երեք կարգի հնչերանգային հաղորդակցական կառույցներ. պատմողական, հարցական և դրդչական կամ հորդորական։ Կարծում ենք, որ վերջինիս առանձնացման համար կան լեզվական, արտասանական օբյեկտիվ գործոններ (8,29)։ Այստեղ մենք կուզենայինք ավելացնել հետևյալը։ Հորդորականի կամ դրդչականի հարցը սերտորեն կապված է մյուս հաղորդակցական տիպերի մեկնաբանության հետ, իսկ այն կարող է իր լուծումն ստանալ միայն հնչերանգային տիպերի ամբողջական ըմբռնման ու մոտեցման տեսանկյունից։ Մինչդեռ ավանդորեն հաղորդակցական մի տեսակին վերագրվում է տրամաբանական հասկացություններին բնորոշ հատկություններ, իսկ մյուսներին հուզականության տարրերի խիստ հագեցվածություն։ Վերջին հանգամանքը վերագրվում է հատկապես դրդչական տիպի նախադասություններին և ամենացավալին այն է, որ հուզարտահայտչական բոլոր դրսևորումները կապում են առանձին անհատի, այլ ոչ թե լեզու կրողի գործողությունների հետ, այսինքն օբյեկտիվ գործոնին իրականում վերագրվում է սուբյեկտիվ գործոնի գործառություն և՛ խոսքում, և՛ վերջին հաշվով՝ լեզվում։

Ինչևիցե, բացականչական նախադասության ըմբռնման մեջ ևս նկատելի է տրամաբանական մոտեցումը։ Ընդունված է, որ այդ ենթատիպին պատկանող կառույցները կարող են դիտվել որպես բացականչական նախադասություններ, եթե ընկալվեն որպես «գեղչված» կազմություններ, որոնցում ստորոգման անմիջական դրսևորումը բացակայում է, սակայն այն կարելի է «վերականգնել»։ Օրինակ, «Հրդեհ՜հ» բացականչությունը պետք էր համալրվեր մինչև «(Սա) հրդեհ (է)» բաղադրիչներից կազմված կառույցի, որ ընկալվեր որպես դատողություն։ Բայց ինչպես տեսնում ենք այս դեպքում դիտվում է հաղորդակցական առանձին խմբերի խառնում, որն էլ բացասական դեր է խաղում նման կառույցների դասակարգման հարցում։

Հնչերանգի պրոբլեմը սերտորեն կապում են ստորոգման հարցի հետ։ Գտնում են, որ հնչերանգն ու ստորոգումը հանդես են գալիս որպես նախադասության երկու գլխավոր հատկանիշներ (10, 76, 542)։ Սակայն հայտնի է, որ նախադասության որոշ տիպերում կարող են ստորոգման ցուցանիշները բացակայել. միաժամանակ այդ կառույցներում հաղորդակցական գործառությունը պահպանվում է։ Սա վերաբերում է հատկապես քերականորեն չանդամատվող բացականչական տիպի այն նախադասություններին, որոնք հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից լիակատար կառույցներ են, օժտված են հաղորդ-

ման գործառույթամբ (10, 77) և ընկալվում են որպես լիարժեք նախադասություններ։ Դրանցից են հուզական տարբերով հագեցված զանազան բացականչությունները, օրինակ՝ Ա՜յ ես քեզ բան, Այն է՛լ ոնց... և այլն։

Բազմաթիվ դեպքերում թեև ընդգծվում է հնչերանգի դերը լեզվում և խոսքում, նշվում, որ հնչերանգի տարատեսակներով է բնորոշվում նախադասության հաղորդակցական գործառույթը, սակայն հնչերանգային խմբերը դասակարգելիս այնուամենայնիվ ելնում են նախադասության քերականական կառույցներից։ Այսպիսին է և Պեշկովսկու սկզբունքը. թե՝ «Ինչ էլ որ մենք խոսենք, մենք այն արտահայտում ենք կամ պատմողականով, կամ հարցականով, կամ էլ բացականչականով։ Ինչքան էլ կարևոր չլինի մեզ համար տարբերությունը խոսքի այդ երեք տեսակների միջև, միևնույն է. այն ոչ թե հյութական, այլ ձևական է, ինչ էլ որ ասենք. նա այստեղ է, կամ՝ նա այստե՞ղ է, կամ՝ նա այստե՞ղ է, միևնույն է, մեր մտքի հյութը մնում է նույնությամբ... փոխվում է միայն մեր վերաբերմունքը տվյալ մտքի նկատմամբ...» [10, 77]։

Այսպիսով դրդչական հնչերանգային կառույցների հարցում միասնական մոտեցում չկա։ Հարցը բարդանում է նրանով, որ դրդման արտահայտման եղանակները լեզվում տարբեր են։ Այսպես. կան բացականչական նախադասություններ, որոնք կառուցվում են նաև ձայնարկությունների միջոցով։ Այս տիպի նախադասությունները բազմազան ու բազմատեսակ են, և չնայած հուզարտահայտչական տարրերի հագեցվածությանը, հանդես են գալիս որպես օբյեկտիվ հնչերանգային հաղորդակցական կառույցներ։ Սուբյեկտիվ գործոնը տվյալ կառույցներում երևան է գալիս միայն այն դեպքում, երբ նախադասությունն արտասանվում է չափազանց բարձր կամ հակառակը՝ ցածր ձայնով կամ շշուկով։ Այս դեպքում միայն կարելի է խոսել առանձին անհատի ներքին հոգեկան վիճակի և նրա առոգանական առանձնահատկությունների մասին։ Բացի այդ, չպետք է մոռանալ նաև այն, որ այսպես կոչված հուզարտահայտչական մասնիկները կամ եղանակավորիչները բոլոր տեսակի ձայնարկություններ հետ մեկտեղ լեզվում հանդես են գալիս որպես օբյեկտիվ կազմություններ։

Դրդչական բնույթի նախադասության տարատեսակ պետք է համարել նաև հրամայական հնչերանգային ենթատիպը։ Այս ենթատիպի առանձքային միավորը սովորաբար արտահայտվում է բայի հրամայական եղանակով, որին երբեմն փոխարինում են կամային արժեք ունեցող ձայնարկությունները, օրինակ՝ Դո՛ւս։ Ձա՛յնդ։ և այլն։

Հայ լեզվաբանները երբեմն հրամայականի փոխարեն օգտագործել են հորդորական տերմինը։ Սակայն գլխավորն այստեղ տերմինի հարցը չէ։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սկզբնապես հրամա-

յական են համարել այն դրսևորումները, որոնք բացառապես արտահայտվում են բայի հրամայական եղանակով։ Այսպես, Գ. Սևակը գրում է, որ հրամայական նախադասություններն արտահայտվում են նաև «հրամանի իմաստ պարունակող որևէ բառով» (6, 16)։

Բացի բայի հրամայական եղանակի երկրորդ դեմքով արտահայտված ձևից Վ. Առաքելյանը որպես հիմնական քերականական ձև է ճանաչում նման կառուցվածքներում նաև անորոշ դերբայով արտահայտված հրամայականի կիրառությունները (3, 123, 4, 24)։ Ս. Աբրահամյանը հատուկ նշում է, որ «Հրամայական նախադասության կառուցվածքի մեջ վճռական դերը պատկանում է ստորոգյալին» (2 ա, 333), Ս. Աբրահամյանը և մյուս հայ լեզվաբանները հատուկ ընդգծում են հրամայականների, այսպես կոչված, իմաստային առանձնահատկությունները, նշելով նրանց բաղմազանությունը։ Ընդորում, նրանք սուբյեկտիվ եղանակավորող միջոցներ ճանաչում են որպես հրամայականների դասակարգման հիմնական գործոն։ Դրդչական տիպի իմաստային առումների տակ հասկանում են կամային ու հուզաարտահայտչական դրսևորումների ողջ համրորդաշարքը, այսինքն հրաման, կարգադրություն, առաջարկ, ցուցում, հորդոր, խնդրանք, դրդում, հրահրում, հրամայում, համոզում և այլ կամային ու կոչական (աղերսական) բնույթի հաղորդման միջոցներ։ Ուշագրավ է, որ հրամայական ու բացականչական խմբերում դիտվում է հիշյալ միջոցների կամ երանգների խաչաձևում։ Օրինակ, հրամանի, կարգադրության, կոչի ու պահանջի երանգների դրսևորումներ կարելի է դիտել և «Գնացե՛ք, կռվեցե՛ք» (Դ Դ) և «Գնա՛նք, զարկե՛նք, ջարդե՛նք, կրակենք... Հա՛յ, հա՛յ, առա՛ջ, դե ձեղ տեսնե՛մ» (Թում.) նախադասություններում։ Այնուհետև խնդրանքի ու աղերսանքի երանգավորման տարբեր են ցուցաբերվում ասենք, «Օ՛հ, խնայեցե՛ք, մի՛ հիշեցնեք ինձ» (Թում.) և «Հա՛յ, օգնեցեք, Մեռած հո չե՞ք» (Թում.) օրինակներում, և այլն, և այլն։

Դրդչական նախադասությունների գործառությունն ուղղված է խոսակցին որպես որևէ գործողություն կատարելու թելադրանք, դրդում։ Այս տեսակետից դրդչական նախադասություններն իրենց հնչերանգային կառուցվածքով որոշակիորեն տարբերվում են պատմողական և հաբեցական նախադասություններից։ Եվ քանի որ քերականական հարացուցային ձևերի և նախադասության հնչերանգային տիպերի միջև մեծ տարբերություն է նկատվում, ուստի և լեզվի քերականական միջոցների և խոսքի հնչերանգային առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակները, այնուամենայնիվ պետք է տարբերվեն, թեև հնչերանգային կառուցվածքները ձևավորվում են նույն քերականական ձևերի կամ միջոցների առկայությամբ։

Հնչերանգային հաղորդակցական տիպերի դասակարգման հարցում հայագիտության մեջ զգալիորեն տարբերվում է ակադեմիկոս Գ. Ջահուկյանի մոտեցումը։ Նա հետևողականորեն տարբերում է արտահայտության և բովանդակության պլանները, դրանք քննում է առանձին-առանձին, ապա պարզում սրանց ներքին փոխհարաբերությունը։ Անդրադառնալով եղանակավորման հարցին, նշում է, որ «իմացահաղորդակցային ակտը ըստ հաստատատա-ժխտականության եռակողմանի պրոցես է՝ աշխարհի միջնորդված ընկալման պրոցես», մինչդեռ «եղանակավորումը անմիջական շփման պրոցես է» (6, 352)։

Մեր ուսումնասիրության մեջ փորձում ենք ըստ էության հաշվի առնել արտահայտության և բովանդակության պլանների սերտ փոխհարաբերությունը։ Ուսումնասիրությունը տարվել է նախադասությունների արտահայտության պլանի դրսևորման ուղղությամբ, սակայն հնչերանգային կառույցներում ենթադրվում է նաև բովանդակության կողմը։ Ընդ այդմ դրդչական հնչերանգային հաղորդակցական տիպի մեջ միավորվել են այն բոլոր նախադասությունները, որոնք ունեն մի կողմից հնչերանգային միատեսակ պատկերներ, մյուս կողմից՝ կամային դրսևորման յուրատեսակ օբյեկտիվ ուղղվածություն, որը բնորոշ է լեզու կրողներին առանց բացառության։

ՀՆՉԵՐԱՆԳԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԴՐԴՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԴՐԴՉԱԿԱՆ ՏԻՊԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հնչերանգի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, հատկապես օբյեկտիվ գործոնի առանձնահատկությունները, լեզվաբանական գրականության մեջ համեմատաբար քիչ են ուսումնասիրվել, թեև որոշակի միտումներ դիտվել են թե՛ բուն քերականագիտական և թե՛ համապատասխան մասնագիտական աշխատություններում։

Սուբյեկտիվ և օբյեկտիվ տերմինները փիլիսոփայական կարգի հասկացություններ են. դրանք բացահայտում են որոշակի իմացաբանական հարցեր, ինչպիսիք են՝ հասարակական կեցության և գիտակցության հարաբերակցությունը, գիտակցության էությունը և այլն։ Լեզվաբանությունը չէր կարող շրջանցել այդ հասկացությունները, որովհետև լեզուն իր էությամբ արտացոլում է գիտակցության և իրականության հիշյալ հարաբերակցությունը, որը հիմնականում իրագործվում է հաղորդակցման ընթացքում։

Դեռևս անտիկ լեզվաբանության մեջ գործածվել են սուբյեկտ, օբյեկտ, պրեդիկատ (ստորոգում) տերմինները, որոնք ծագումով տրամաբանական հասկացություններ են։ Տրամաբանական մոտեցումը դեռևս նկատելի է լեզվաբանության մեջ։ Պատահական չէ, որ նման տերմին-

ները, թեև այլ ըմբռնմամբ, մինչև այժմ էլ գործածական են լեզվաբանության մեջ։ Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել, որ տվյալ հասկացությունները կամ տերմիններն առաջին հերթին պատկանում են տրամաբանությանը, որը հանդիսանում է որպես փիլիսոփայական առանձին ծավալում ու ճանաչված մի գիտակարգ։ Այս գիտակարգի հիմնական, առանցքային միավորներից է դատողությունը, որը որոշակիորեն հարաբերում է լեզվաբանության մեջ կիրառվող և դրանից ոչ պակաս արժեքավոր հասկացության՝ նախադասության սահմաններին։ Դիալեկտիկական մատերիալիզմի ըմբռնմամբ դատողությունը լայն առումով ընդգրկում է յուրաքանչյուր ասույթ կամ բնորոշում որևէ առարկա կամ երևույթ։ Իսկ տրամաբանության մեջ դատողությունը ճանաչված է որպես առարկայի կամ երևույթի շուրջ արտահայտվող մի ամփոփ միտք, որը հարուցում կամ ժխտում է տվյալ երևույթը (առարկան)։ Այլ կերպ ասած, դատողությունն ընկալվում է որպես միտք՝ արտահայտված պատմողական նախադասության ձևով, որի մեջ որևէ պնդում է արվում օբյեկտների մասին և որն օբյեկտիվորեն կամ ճշմարիտ է, կամ կեղծ։ (9, 103)։

Այսպիսով, իր ձևային առումներով դատողությունն իրենից ներկայացնում է երկու հասկացությունների կապ կամ շղթա, ուր հասկացություններից մեկն ընկալվում է որպես սուբյեկտ (տրամաբանական ենթական), իսկ մյուսը՝ պրեդիկատ (տրամաբանական ստորոգյալ)։ Հարկ չկա, ըստ երևույթին, նշելու, որ տրամաբանության մեջ գործածվող սուբյեկտ և պրեդիկատ տերմինները ոչ մի առնչություն չունեն լեզվաբանական ենթակա և ստորոգյալ հասկացությունների հետ։

Եթե դատողություն և նախադասություն հասկացությունները որոշակիորեն հարաբերվում են միմյանց, ապա դրանց կազմող ներքին իմաստները խիստ տարբերվում են միմյանցից և դրանցից օրևէ մեկի մեխանիկական ընդօրինակումը զգալի վնաս կարող է հասցնել հիշյալ այդ գիտակարգերից որևէ մեկի ըմբռնումներին։ Մինչդեռ հենց նման ծայրահեղություններ հաճախակի դիտվում են հատկապես լեզվաբանության ոլորտում։ Կոնկրետ մի օրինակ. եթե նախադասությունը մենք ընկալենք որպես «պատմողական միտք», այսինքն միտք՝ արտահայտված հնչերանգային միայն մի տարատեսակով, ապա լեզվի հնչերանգային մյուս տարատեսակները տրամաբանական չեն կարող համարվել։ Ճիշտ այդպես էլ վարվում են ռուսերենի ակադեմիական քերականության հեղինակները, որոնք այն հնչերանգային կառույցները, որ պատմողական չեն, լավագույն դեպքում համարում են եղանակավորող կառույցներ (10, 67) վերագրելով դրանց հուզականության (սուբյեկտիվ) նշանակություններ։

Մյուս կողմից նշվում է, որ լեզվաբանները ձգտել են այդ տիպի նախադասություններն այնուամենայնիվ նմանեցնել այսպես կոչված «մաքուր» տրամաբանական կառույցների, մինչդեռ հենց իրենց վկայությամբ տրամաբանների ջանքերը նախադասության և դատողության միջև համապատասխանության նշան դնելու ուղղությամբ բոլոր ժամանակամիջոցներին ապարդյուն են եղել։

Մի քանի խոսք նաև սուբյեկտ և օբյեկտ հասկացությունների վերաբերյալ։ Տվյալ հասկացությունները մարքսիստական ուսմունքի տեսակետից նույնպես ճանաչվում են որպես փիլիսոփայական կատեգորիաներ, կարգեր։ Ընդօրինակված լատիներենից (subjectum ենթակա և objectum առարկա, երևույթ) այս հասկացությունները փիլիսոփայության և տրամաբանության ոլորտում գործառության մեջ են դրված մարդու իմացականության պրոցեսը արտացոլելու նպատակով։ Սակայն չպետք է մոռանալ, որ մարդու (անհատի) գործունեությունը պայմանավորված է օբյեկտիվ աշխարհով, մատերիայի շարժումով, որի (մատերիայի) մասն է կազմում նաև մարդու ուղեղը։ Հետևաբար սուբյեկտի գործունեությունը դա օբյեկտիվ մատերիայի գործունեության մի մասնիկն է և սուբյեկտի իմացականության պրոցեսը, արտահայտված լեզվի միջոցով դա պարզապես համամարդկային իմացականության պրոցեսի մասնավոր դրսևորումներից մեկն է։ Այս առումով սուբյեկտիվ վերաբերողական մոտեցումը լեզվական երևույթների նկատմամբ, երևույթների, իրողության գնահատումը առանձին անհատի կողմից, երբ շեշտվում է հատուկ ասույթի կամային հագեցվածության աստիճանը և այլն, այս ամենը կարելի է դիտել որպես միայն սուբյեկտիվ գործոնի վերլուծություն։ Նման լեզվագիտական մեկնաբանությունները, որոնց միջոցով մեզանում որոշ հեղինակներ փորձում են բացատրել եղանակավորության էությունը կամ կատարել որոշ տեսակի հնչերանգային կառույցների բնորոշումը՝ նման գործողությունները լավագույն դեպքում կարելի է որակավորել որպես միակողմանի ուսումնասիրության մի փորձ, ուր կարելի է դիտել մատերիալիստական ըմբռնմանը հակասող որոշակի տարրեր։ Եվ այս բացը համալրելու նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին լեզվական բոլոր երևույթներում դիտել այն օբյեկտիվ պրոցեսը, այն օբյեկտիվ գործոնը, որով էլ պայմանավորված է լեզվի գործառությունը ողջ հասարակության մեջ։ Այս դեպքում սուբյեկտիվ դրսևորումներ կճանաչվեն լեզվի այն դրսևորումները, որոնք հակադրվում են լեզվական (խոսքային) նորմային։ Նման երևույթների շարքին են պատկանում հնչերանգի նորմայի նկարագրման տեսակետից անզուսպ բացականչությունները, դոզդոցը, աֆեկտային խոսքը և հուզականության այն դրսևորումները, որոնք գրական լեզվի (խոսքի) արտահայ-

տում չեն կարող համարվել և ուսումնասիրման ենթակա են միայն լեզվաբանությանը հարակից և ոչ հարակից գիտակարգերում։

Այսպիսով, լեզվի բազմակողմանի դրսևորումների ուսումնասիրման հարցում խիստ ծայրահեղ կարծիքները (և հաճախ, ցավոք, որոշակի «դպրոցների» պատկերմամբ) հազիվ թե նպաստեն ուսումնասիրվող առարկայի բուն էության և նրա օրինաչափությունների բացահայտման գործին։ Սա նշանակում է, որ հետազոտությունների ընթացքում անհրաժեշտ է ընտրել ուսումնասիրման մեթոդիկայի այն օպտիմալ տարբերակը, որը կնպաստի նյութի ճշգրիտ վերլուծությանը և պրոբլեմի հանգամանալից լուսաբանմանը։

Հնչերանգի ուսումնասիրումը կապված է որոշակի դժվարությունների հետ. Ա. Ռեֆորմատսկու վկայությամբ հնչերանգի վերաբերյալ (ներառյալ մինչև 1940 թվականը) տպագրվել են շուրջ 570 աշխատություններ (17, 5), սակայն հարցի միասնական ըմբռնում, հարցի պարզաբանում չի դիտվել։ Հնչերանգը քննվել է տարբեր դիրքերից՝ հաճախ լեզվաբանության ու հարակից գիտակարգերի տեսանկյունից։ Մի դեպքում քննության են առնվել հնչերանգի ֆիզիկական հատկանիշները՝ հիմնական տոնի հաճախականություն, հնչման ուժգնություն, տևողություն, դադար և այլն։ Մյուս դեպքում հիմք են ընդունել անհատի հոգեկան վիճակը՝ նրա խառնվածքը, և այս դիրքերից լեզվաբանական երևույթները դիտվել են որպես առանձին անհատի գործունեության դրսևորումներից մեկը։ Լեզվաբաններից շատերն են ընդօրինակել այս սկզբունքը, դիտելով հնչերանգը որպես խոսողի վերաբերմունք իրականության նկատմամբ (2, 58, 5, 84, 10, 355 և այլն), սրանով իսկ առաջնահերթ համարելով հնչերանգում սուբյեկտիվ գործոնը։ Մինչդեռ օբյեկտիվ գործոնի ակտիվ գործառությունը լեզվում ակնհայտ է։ Հնչերանգի օբյեկտիվ գործոնի առկայությունը կայանում է նրանում, որ խոսքում կամ լեզվում անկախ ձևով գործառության մեջ են դառնում հնչերանգային առանձին հաղորդակցական տիպերը (պատմողական, հարցական և այլն), ծնունդ առնելով լեզվի ծագման ժամանակաշրջանից։ Եվ իրոք, այն, ինչ որ ազդարարվում է անհատի կամքից կախյալ, իրականում հանդես է գալիս որպես օբյեկտիվ գործոն, որովհետև հաղորդակցման այն հատվածը, որը պարունակում է հարցում կամ դրդում, անհնար է հաղորդել պատմողական հնչերանգային կառույցի միջոցով և հակառակը։ Սա նշանակում է, որ հնչերանգային կառույցներն ինքնատիպ են, օբյեկտիվ և խոսողից՝ որպես առանձին վերցված անհատից անկախ։

Իսկ կարելի՞ է արդյոք, հնչերանգում սահմանել սուբյեկտիվ գործոնը։ Անշուշտ. խոսքին ուղեկցող այն հուզական արտահայտչական դրսևորումները, որոնք որոշակի կախման մեջ են խոսողի հոգեկան վի-

ձակից, նրա խառնվածքից, և արտահայտում են զգացմունքների ողջ գամման (քաղաքավարի խնդրանքից մինչև զայրույթն ու սպառնալիքը ներառյալ վախի և սարսափի զգացմունքներ, աղերսանք, հորդոր, պահանջ և այլն), այս բոլորը սուբյեկտիվ գործոնի արտահայտություններն են։ Այստեղ է, որ իր լայն դրսևորումն է գտնում հնչերանգի միջոցով խոսողի վերաբերմունքը՝ իրադարձությունների նկատմամբ։ Ուշագրավ է, որ նույնիսկ խոսողի հուզականության աստիճանի, համապատասխան հնչերանգային կոլի ֆիզիկական չափանիշները հաղորդակցման նույնական պայմաններում տարբեր են. և սրանով էլ պայմանավորված են սուբյեկտիվ գործոնի առանձնահատուկ դրսևորումները՝ հնչերանգային կառույցներում։ Բացի այդ, և ամենագլխավորը, սուբյեկտիվ գործոնի առկայությունը չի նպաստում և չի ազդում խոսքի ստույգ հաղորդակցական տիպերի կազմավորմանը՝ նրանց քանակի որոշմանը։ Միաժամանակ այս կամ այն հնչերանգային տիպին հարելով և որոշակի ազդեցություն ներգործելով տվյալ տեսակի ձայնաբանական պատկերի վրա, սուբյեկտիվ գործոնն այնուամենայնիվ չի նպաստում նոր տիպի առաջացմանը։ Այստիսին են օբյեկտիվ և սուբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների փոխհարաբերության կանոնները։

Սակայն ո՞րն է հնչերանգի դերը խոսքում։ Հնչերանգի հարցը առաջին հերթին ծառանում է նախադասության բնույթը քննելու կապակցությամբ։ Լեզվաբանական բազմաթիվ աշխատություններում հնչերանգին անդրադառնում են միայն այն դեպքում, երբ ուսումնասիրման ընթացքում հարակից խնդիրներ են առաջանում։ Առաջին հերթին այդ անհրաժեշտությունը առաջ է քաշվում շարահյուսական հարցեր լուծելիս։

Հնչերանգը դիտվում է որպես նախադասության երկու բնորոշ հատկանիշներից մեկը (մյուսը համարվում է ստորոգումը)։ Եվ իրոք, ստորոգումը սահմանվում է որպես նախադասություն կազմավորող կարեվորագույն գործոններից մեկը՝ պայմանավորված եղանակային ձևերի գործառությամբ։ Մինչդեռ բայի եղանակային ձևերը հնչերանգային կառույցներում երկրորդական դեր են խաղում, քանի որ և նախադասության բնույթի (իմա՝ հնչերանգի) և բայի եղանակային ձևերի միջև որոշակի համապատասխանություն չկա։ Ակնհայտ է, որ ստորոգման և հնչերանգի գործառությունները միանգամայն տարբեր են այս տեսակետից։ Թերևս այդ է պատճառը, որ մինչև այժմ էլ որոշակիորեն չեն սահմանված հնչերանգային հաղորդակցական տիպերի քանակն ու տեսակները։ Իրոք, քանի՞ հաղորդակցական տիպ կարելի է սահմանել հնչերանգային կառույցներում, ո՞րն է դասակարգման ճշգրիտ սկզբունքը։ Այստեղ անկյունաքարային պետք է համարվի ոչ թե արտալեզվաբանական

(экстралингвистические) երևույթները՝ ինչպիսիք են խոսողի վերաբերմունքը իրողության նկատմամբ, կամ՝ նույն իրադրության նկատմամբ հասցեատիրոջ վերաբերմունքը և նրա գործողությունները, այլ հնչերանգի այն գործառույթունը, որը նպաստում է խոսքի ճիշտ կազմավորմանը այն առումով, որ վերջինիս միջոցով իրագործվեն հաղորդակցման բոլոր նպատակադրումները։ Այսպես, հաղորդում, պատմություն, անվանում պարունակող նախադասությունները կազմում են պատմողական հաղորդակցական տիպ, ընդ որում հնչերանգային այս տարատեսակին հատուկ է ինքնատիպ հնչերանգային կայուն կառույց։ Հընչերանգային այն կառույցները, որոնք իրենց մեջ պարունակում են հարցում՝ հաղորդակցման յուրովի գործառույթ, ապա այս տիպի նախադասությունները դասվում են հարցական հաղորդակցական տիպի կազմում։ Իվ վերջապես, այն տիպի նախադասությունները, որոնք ուղղված են հաղորդակցին կամ հաղորդակիցներին, նպատակ ունենալով հարկադրել, դրդել նրանց որևէ գործողությունների, համախմբվում են դրդչական հաղորդակցական տիպի շրջանակներում։ Հենց այս հանգամանքը, որը դրսևորում է հնչերանգային երևույթի օբյեկտիվ գործոնը, լեզվաբանների կողմից երբեմն ընկալվում ու մեկնաբանվում է իբրև ոչ առաջնահերթ երևույթ։ Առաջնային համարելով լեզվի քերականական ձևերը, լեզվաբանները հնչերանգի հարցում ելնում են հենց այդ ձևերից։ Հայագիտության մեջ ակադ. Մ. Աբեղյանը անդրադառնալով խոսքերի տեսակներին, տարբերակում չի մտցնում հնչերանգի և բուն շարահյուսական կարգեր հասկացությունների միջև և հաջորդաբար քննում է նախադասության քերականական և հնչերանգային տեսակները։ Վերջինիս կազմում նա սահմանում է հիմնականում երկու՝ հաստատական և հարցական խոսքերը [1, 553]։ Ինչ վերաբերում է բացականչական բնույթի նախադասություններին, ապա սրանց Մ. Աբեղյանը դիտում է որպես հաստատուն կամ հարցական խոսքերի մի տարատեսակ։ Ռուսերենի ակադեմիական քերականության (1970 թ.) հեղինակները ևս անտեսում են դրդչական օբյեկտիվ հաղորդակցական տիպը։ Ինչ վերաբերում է հնչերանգային մյուս տիպերին, ապա այստեղ սահմանված են հիմնականում երկու խումբ կամ դաս՝ ըստ հաղորդման նպատակադրման՝ պատմողական և հարցական տիպի նախադասությունները։ Այստեղ հատուկ ընդգրծվում է հնչերանգի «սուբյեկտիվ» գործոնը, ի տարբերություն օբյեկտիվ եղանակավորող նշանակությունների կամ օբյեկտիվ եղանակավորությանը (11, 542)։ Այնուհետև նշվում է, որ «Թեև օբյեկտիվ եղանակավորող նշանակությունը արտահայտում է հաղորդման հարաբերակցման բնույթը իրականության նկատմամբ, ապա սուբյեկտիվ եղա-

նակավորող նշանակությունը բացահայտում է խոսողի վերաբերմունքը կամ հարաբերակցումը՝ հաղորդման նյութի նկատմամբ» (Ն. տ.)։

Առաջնայինը համարելով բայի եղանակային ձևերը, մի շարք հեղինակներ փորձ են կատարում հնչերանգային տիպերի քանակը «համալրել» հնչերանգային նոր տեսակներով։ Այսպես, Հ. Հարությունյանը պատմողական, հարցական, հրամայական, բացականչական և խառը հնչերանգով նախադասությունների թվին ավելացնում է նաև կոչական տարբերակը (հմմտ. Հ. Հարությունյան, Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Ե., 1970, էջ 45)։

Հնչերանգի ուսումնասիրման հարցում ինքնատիպ մոտեցում ունի ակադ. Գ. Ջահուկյանը։

Ճանաչելով հնչերանգի կազմում որպես կայուն բաղադրամասեր տևողությունը, տոնի բարձրության պարբերությունները, և ուժգնությունը՝ որպես շեշտի դրսևորում (6, 90, 355), Գ. Ջահուկյանը մանրամասնորեն բնութագրում է սրանց հատկանիշները։ Հնչերանգը նա բնորոշում է որպես «հնչաշղթայի վերահնչութային հատկությունների որոշ հարաբերություն» (6, 90), որոնց կանոնավորությամբ կազմվում է ռիթմական խոսքը։ Դասակարգելով նախադասության եղանակային տիպերը, Գ. Ջահուկյանը արտահայտության պլանում առանձնացնում է բացականչական, շեշտական, հարցական և չեզոք տիպերը և բովանդակության պլանում տալիս նրանց իմաստային արժեքները։ Ջահուկյանը միաժամանակ ցույց է տալիս, որ իրականում լեզվում կարող են տեղի ունենալ արտահայտության և բովանդակության պլանների տարբեր անցումներ, քանի որ հոգեկան պրոցեսները «մաքուր» ձևով հանդես չեն գալիս։

Նշելով, որ հնչերանգը և շեշտը բառերի օբյեկտիվ իմաստների տարբերակման համար չեն օգտագործվում, Ջահուկյանը սրանց հիմնական գործածությունը համարում է ստորոգական-հաղորդակցական նպատակներով՝ հաղորդման նկատմամբ արտահայտվող անձի սուբյեկտիվ հարաբերությունը արտահայտելու համար։

Այսպիսով, թեև բազմաթիվ աշխատություններում այս կամ այն կերպ արծարծվում է սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների հարցը, սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է հնարավորին չափ որոշակիություն մտցնել սրանց գործառության սահմանների միջև։ Մինչդեռ նախադասության հնչերանգային տեսակների դասակարգման ընթացքում շատ հեղինակների մոտ հատուկ շեշտվում է առավելապես սուբյեկտիվ գործոնի նշանակությունը։

Հնչերանգի և քերականական ձևերի փոխպայմանավորվածության մասին շատ է խոսվել։ Հնչերանգը հիմնականում դիտվել է որպես լեզ-

վական միավորների արտահայտման լրացուցիչ կամ՝ նրանց փոխարինող մի միջոց։ Այս մոտեցմամբ հնչերանգին վերագրվում են այնպիսի հատկություններ, որոնցով նա, իբր, կարող է փոխարինել շարահյուսական իմաստատարբերակիչ հատվածների առանձնահատկությունները։ Այսինքն, ենթադրվում է, որ հնչերանգի գործառությունը կայանում է նրանում, որ այն նպաստում է բառերի միջոցով նախադասության կազմավորմանը, նախադասության տեսակների բնորոշմանը և նախադասության անդամների միջև գործող հարաբերակցության բացահայտմանը։ Այսպես, Ե. Բրիդդունովան, Տ. Նիկոլաևան, Լ. Բոնդարկոն և ուրիշներ, հաշվի առնելով հնչերանգային (հիմնականում՝ մեղեդայնության) կորը, սահմանում են հետևյալ հնչերանգային կարգերը կամ տեսակները. ավարտվածության (հարցական, հատկացական) և անավարտվածության տարատեսակներ։ Ե. Բրեզգունովան իր ռուսերենի ուսուցողական ձեռնարկում պատմողական նախադասությունների կազմում սկզբնապես սահմանել էր երեք լրացուցիչ հնչերանգային տարատեսակներ. պարզաբանման, համեմատության և թվարկման։ Բացի այդ տարատեսակներից նույն աշխատությունում նա անդրադարձել էր միայն հարցական տիպի նախադասությանը, գրեթե չհիշատակելով հաղորդակցական հընչերանգային մյուս տիպերը։ Հետագայում, համախմբելով բոլոր հնարավոր հնչերանգային տարատեսակները (այսպես կոչված հնչերանգային կառույցների—ИК) թիվը հինգից աստիճանաբար հասցրել է 7-ի (21, 217—223)։

Ուսումնասիրման ելակետային նյութ ճանաչելով խոսքը և նրա միջոցով գործառող հնչերանգի հաղորդակցական առանձնահատկությունները, մենք ժամանակակից հայերենում առանձնացնում ենք հիմնական հնչերանգային կառույցներ՝ պատմողական, հարցական և դրդչական։ Այստեղ առաջին հերթին հաշվի է առնվում հնչերանգի կայուն տարատեսակներից մեկի՝ դրդչականի օբյեկտիվ գործառությունը խոսքում։ Այն հանգամանքը, որ դրդչական հաղորդակցական տիպը խոսքում և լսվում հանդես է գալիս որպես օբյեկտիվ, այլ ոչ թե սուբյեկտիվ գործոն, մեզանում ոչ մի կասկած չի հարուցում։ Փորձառական եղանակով ստացած տվյալները մեզ համոզում են, որ դրդչական արտասանվածքների հնչերանգային կառույցները, անկախ քերականական ձևերից, միատեսակ են և հակադրվում են հարցական և պատմողական հնչերանգային կորերին կամ ձայնաբանական կառույցներին։ Դրդչական տիպի հնչերանգային առանձնահատկությունները կայանում են նրանում, որ նման կառույցներում հնչերանգային բաղադրամասերից (հիմնական տոնի հաճախականությունից, ուժգնությունից և տևողությունից) տոնային ցուցանիշները հնչման ավարտին խիստ անկում չեն կրում, ինչպես,

ասենք, պատմողական տիպի նախադասություններում։ Բացի այդ, թե՛ ուժգնության ցուցանիշներով և թե՛ հնչերանգային կառույցների ուրվագծերով դրդչական նախադասությունները ակնհայտորեն տարբերվում են պատմողական և հարցական հնչերանգային օբյեկտիվ տարատեսակներից։ Այսպես, եթե հարցական նախադասության ձայնաբանական ելևէջումը բացարձակ ցուցանիշներով հանդես է գալիս միայն այն հատվածում, որը հարցում է պարունակում, ապա դրդչական նախադասությունների կազմում այդ ցուցանիշները երևան են գալիս առավելապես հնչման եզրափակիչ հատվածում՝ վերջին վանկում, որն էլ այդ տիպի կառույցներում հանդես է գալիս որպես միջուկային հատված։ Այս առումով մենք միավորել ենք դրդչական կառույցների կազմում ավանդական հրամայական (հորդորական) և բացականչական տիպի նախադասությունների, դիտելով սրանց որպես մեկ ընդհանուր՝ դրդչական հնչերանգային տիպի օբյեկտիվ ենթատեսակներ։ Հավանորեն, սրանց կազմում պետք է դիտել նաև կոչական տիպի նախադասությունները, որպես դրդչականների առանձին ենթատիպ։ Ինչ վերաբերում է այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են հորդոր, իղձ, պահանջ, հանդիմանություն, առաջադրանք և այլն, ապա նման իմաստներ արտահայտող նախադասությունները, ինչպես և նրանք, այն որ արտացոլում են խոսողի հոգեկան վիճակը (ուրախություն, զայրույթ, սարսափ, վիրավորանք, չավակցական վերաբերմունք, խնդրանք և այլն) դիտվում են որպես սուբյեկտիվ տարատեսակներ, որոնք կարող են հանդես գալ դրդչական և այլ տիպի (օբյեկտիվ) հնչերանգային կառույցներում, սակայն չառաջացնելով որևէ առանձին հաղորդակցական տիպ։ Բերենք մի օրինակ պատմողական տիպի նախադասություններից, ուր առկա է սուբյեկտիվ տարրը կամ գործոնը և չնայած սրան, տվյալ նախադասությունը մնում է նույն՝ պատմողական հաղորդակցական տիպի շրջանակներում։ Այսպես, օրինակ, «Մի սրբազան ոգևորությամբ արտասանեց. Անի՞ն...» (Լեո, էջ 100) նախադասության երկրորդ մասը միադեմ ֆրազ է, կառուցով՝ միակազմ, բնույթով՝ պատմողական։ Առոգանության նշանից անկախ այս ֆրազը դասվում է պատմողական նախադասությունների շարքում, որովհետև հնչման ավարտին հնչերանգային, հատկապես մեղեդայնության կորը կրում է որոշակի անկում, որը բնորոշ է պատմողական տիպի նախադասություններին։ Ինչ վերաբերում է խոսողի հոգեկան վիճակին, որը բավականաչափ արտահայտված է հուզաարտահայտչական միջոցներով և ցուցաբերված համապատասխան տրոհման նշաններով, ապա այստեղ ապրումների դիապազոնը, իրոք, չափազանց լայն է. այս բառով խոսողը արտահայտում է և՛ վիշտ, և՛ ափսոսանք, նաև հիացմունք պատմական անցյալի նկատմամբ և այլն։ Սակայն բոլոր այս

հոգեկան դրսևորումները լեզվաբանի համար կարող են ծառայել միայն որպես ստոկ սուբյեկտիվ գործոնի արտահայտման միջոց (քեպեետև այն հոգեբանների համար առաջնահերթ գործոն է)։ Նույնը մոտավորապես կարելի է ասել նաև մեկ այլ օրինակի վերաբերյալ։ Այսպես, «Շքեղ մի ղղյակ կար, բարձր, բա՜րձր արծվի թևերի վրա» (Իս. Աէ, էջ 35) նախադասությունը իրոք պատմողական տիպի կառույց է, որն ինչպես ճիշտ բնորոշում է Ս. Աբրահամյանը, արտահայտված է բացականչական որոշ թույլ երանգով (2, 67)։

Եթե դրդչականի հնչերանգային բաղադրամասերի ձայնաբանական ցուցանիշներում դիտվում է զգալի տեղաշարժ, իսկ հնչերանգային կառույցը հիմնականում անփոփոխ է, ապա այս դեպքում մենք գործ ունենք սուբյեկտիվ գործոնի մասնակի արտահայտության հետ։ Երևույթն այս կայուն է տվյալ խմբին պատկանող որոշ օրինակներում և պայմանավորված է նաև քերականական կառույցի առանձնահատկություններով ու լեզվական այլ հանգամանքներով։

Պատմողական հաղորդակցական տիպի շրջանակներում նույնպես կարելի է սահմանել կամ միավորել օբյեկտիվ հնչերանգային ենթատեսակներ, օրինակ, հաստատական ու ժխտական նախադասությունները. այնուհետև՝ բուն պատմողական, անվանական, պատասխանական և այլ հնչերանգային տարատեսակներ, որոնք ըմբռնվում են որպես կայուն հնչերանգային ենթատիպեր։ Նույն սկզբունքով հարցական հաղորդակցական տիպի սահմաններում կարելի է ճանաչել հարցաժխտական ու հարցահաստատական նախադասությունները նաև՝ ճարտասանահարցական (3, 119—120), երկընտրանքային, կրկնահարցումի և այլ ենթատեսակներ կամ ենթատիպեր։ Ինչ վերաբերում է դրդչական հնչերանգային տիպի տարատեսակներին, ապա այն, ինչպես հայտնի է, հանդիսացել է մեր ուսումնասիրման հատուկ առարկան։ Նախնական տվյալներով դրդչական տիպի սահմաններում մենք համախմբել ենք երեք օբյեկտիվ ենթատիպեր. հրամայական, բացականչական և կոչական։ Հնարավոր է, որ հետագայում սրանց թիվը ընդլայնվի, սակայն բոլոր դեպքերում անհրաժեշտ է ստույգ տարբերակում մտցնել կայուն ենթատիպերի և հուզաարտահայտչական սուբյեկտիվ տարատեսակների միջև, որը հնարավոր է թե՛ դրդչական և թե՛ մյուս հնչերանգային հաղորդակցական տիպերի կազմում։

Մի քանի օրինակներով կցանկանայինք տալ դրդչական հաղորդակցական տիպին բնորոշ առանձնահատկությունները։ Նախ նշենք, որ դրդչական նախադասություններից հատկապես՝ բացականչականները, այ բոլոր դեպքերում են ճանաչվում որպես օբյեկտիվ տարատեսակ, որը կարող է զերծ լինել սուբյեկտիվ վերաբերմունքից կամ նրա հոգեկան

ապրումներից։ Այսպես, օրինակ, պրոֆ. Ս. Աբրահամյանը գտնում է, որ բացականչական նախադասությունները սոսկ սուբյեկտիվ արտահայտություններ են։ Նա գրում է. «Բացականչական նախադասությունը, ինչպես ամեն մի նախադասություն, բնականաբար մի միտք է արտահայտում, բայց այդ միտքը չի արտահայտում որպես, այսպես ասած, օբյեկտիվորեն արված դատողություն, այլ ընդգծված կերպով կրում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի կնիքը» [2, 98]։

Մենք գտնում ենք, որ փորձառական տվյալները սա չեն ապացուցում։ Եթե դրդչական նախադասությունները հանդես են գալիս խոսքում ձայնաբանական բացարձակ ցուցանիշներով, ապա այս չի նշանակում, թե տվյալ երևույթը պայմանավորված է անհատի դրգռման աստիճանով և նրա հաղորդակցի նկատմամբ բռնի ներազդման պահանջով։ Սա պարզապես անհատի զգացմունքներից անկախ օբյեկտիվ՝ հասարակական բնույթի երևույթ է, որը հատկանշական է բոլոր խոսակիցներին՝ հաղորդակցական որոշակի պայմաններում։ Այսպես, շքերթներին ու զորահանդեսներին բնական են բացականչություններ ու կոչեր, զորամասերի ու կայազորների առօրյա կյանքում՝ հրահանգներ, հրամաններ և այլն։ Այստեղ, տվյալ դեպքում, դրդչական հնչերանգային տիպին պատկանող կառուցների համար կարևոր նշանակություն չունի, թե որ քերականական ձևերով է այն արտահայտված։ Այսպես, դրդչականների շարքից հրամայականները կարող են արտահայտված լինել և հրամայական (դիմավոր) եղանակի բայաձևերով ու նրանց շրջապատող բառերով, օրինակ՝ «Երգիր, սեր, երգիր», (ՍԱՀ, 96) կամ «Հեռացի՛ր, գնա՛, հանգի՛ստ թող ինձ...» (Ն Դ 111) և այլն, և անորոշ դերբայով արտահայտված դերբառաս անդամի առկայությամբ հատկապես անդեմ նախադասությունների կազմում օրինակ՝ «Կոտորե՛լ բոլորին... ողջ չթողնե՛լ ոչ մեկին», (Անե՛, 133) «Կանգնեցնե՛լ ըստ հասակի» (ն. տ., 145) և այլն։ Հրամայական բնույթի հնչերանգային կառուցով են օժտված նաև անվանական նախադասությունները, օրինակ՝ «Մուրենը հրամայեց. Կռա՛կ» (ԱՀՍ, 483), «Դո՛ւռս,— հրամայեց Գյուտը բարձրագոչ» (ԴԴ, 3, 483), «Քայլով առա՛ջ... մա՛րշ» (ԴԴ, 1, 699) և այլն։ Այս ամենը կարելի է վերագրել նաև բացականչական և կոչական նախադասություններին։ Օրինակներ՝ «Վիլիե, կյանքս, ինձ ների՛ր» (Իս., 321), «Լավ, սիրելիս, չերկարացնենք» (ԹՌՀ, 427), «Վա՛հ ինչքան նման է» (Թում., 3, 299), «Որքա՛ն անփորձ, որքա՛ն հիմար եմ եղել առաջ» (ՆԴ, 3, 39), «Է՛յ կանաչ ախպեր, է՛յ ճանաչ ախպեր... (Թում. 1, 234)», «Հավատացե՛ք, ընկերներ, հավատացե՛ք» (ԹՌՀ, 56), «Տագնա՛պ, տագնա՛պ,— գոռում է նա» (ԲՀՍՋ, 3) և այլն։

Մեջբերված օրինակների հնչերանգային առանձնահատկություննե-

րն իրենց բնույթով ու կառույցով միատեսակ են այն առումով, որ հընչերանգային այս կամ այն բաղադրամասի ցուցանիշները մինչև հնչման ավարտը գրեթե նույնությամբ պահպանում են իրենց մակարդակը (օրինակ՝ «Ջգա՛ստ» կտրուկ հրահանգի դեպքում բարձր են ուժգնության ցուցանիշները, «Օգնեցեք, հե՛յ» խնդրանք-կոչի դեպքում՝ ուժգնության և տևողության ցուցանիշները, իսկ «Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր» (Անթ. 15), կամ՝ «Բագրատ, ապա նայիր, նայի՛ր» (ԱՀՍ, 230) և նման կարգի օրինակներում՝ տոնայնության կամ՝ մեղեդայնության և տևողության ցուցանիշները։ Այսպիսով, կազմությամբ միատեսակ հնչերանգային կորով կամ կառուցվածքով, որը մենք անվանել ենք պարաբոլիկ, դրդչական նախադասությունները համախմբվում են մեկ ընդհանուր հաղորդակցական տիպի շրջանակներում, չնայած քերականական կառուցվածքով և միջուկային կամ հատվածների կազմությամբ մեջբերված և նման օրինակները խիստ տարբերվում են միմյանցից։ Ավելին, քերականական որոշակի տիպի նախադասությունները, որոնք կազմությամբ նմանեցնում են դրդչականներին, բոլորովին զուրկ են այդ տիպին բնորոշ հնչերանգային կառույցների առանձնահատկություններից։ Այսպես, «Գնա ու մի ասա», «Արի դու տես» և այլն նման արտահայտությունները, ուր գերադաս, միջուկային հատվածը ներկայացված է բայի հրամայական եղանակով, ամենևին էլ չեն արտահայտում դրդչականին բնորոշ դործառույթյունը, ուստի չեն պատկանում դրդչական հնչերանգային տիպին։

Իսկ բնորո՞շ են, արդյոք, դրդչական նախադասություններին սուբյեկտիվ դրսևորումները և ինչպե՞ս են այս դեպքում տարբերակվում սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնները տվյալ հաղորդակցական խմբում։ Սուբյեկտիվ գործոնն, անշուշտ, բնորոշ է բոլոր հնչերանգային հաղորդակցական տիպերին, այդ թվում նաև՝ դրդչականին։ Հատկապես դրդչականների դեպքում անհամեմատ դժվար է սահմանել օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների դրսևորման եղերը, ուստի և այս պատճառով արվում են զանազան մեկնաբանություններ, որոնց հետևանքով ողջ հնչերանգային տարատեսակի ըմբռնման ու ճանաչման հարցը թերևս մնում է բաց։

Այնուամենայնիվ դրդչական նախադասություններ կազմող այն կառույցներում, որոնք հարուստ են զգացմունքային դրսևորումներով, առավել չափով կարելի է սահմանել սուբյեկտիվ գործոնի արտահայտությունը։ Այսպես, եթե դրդչական հաղորդակցական կառույցներում դիտվում է հնչերանգային կորի մի այնպիսի ուրվագիծ, որը սովորաբար մինչև հնչման ավարտը կրում է աննշան անկում, հենց սկզբից էլ պատկերելով բարձր բաղադրամասային ցուցանիշներ, ապա սուբյեկտիվ գործոնների աղդեցությունը նկատելի նման տիպի կառույցներում բոլորովին այլ բնույթի է։ Այսպես, երբեմն դիտվում է ձայնաբանական ողջ պատկե-

րի խիստ անկում (հիմնականում՝ մեղեդայնության և ուժգնության ցուցանիշներով)։ Օրինակ, «Օ՛, ինչ խորամանկություն... (Սուեդ. 226) և նման տիպի նախադասություններում, որոնք արտաբերվում են խորհրդավոր ձայնով և ցածր առոգանությամբ (տեմբրով)։ Ձայնարկությունները և եղանակավորող բառերը ոչ միայն «հարստացնում են» հուզարտահայտչական միջոցներով հագեցված դրդչական նախադասությունների հնչերանգային պատկերը, այլ հանդես են գալիս որպես որոշակի հավելյալ՝ հաղորդակցական խմբին ուղեկցող երևույթ։ Սրանք գտնվելով հընչադասության սկզբում, իրենց վրա են կրում հնչման բարձրակետի ցուցանիշները, որոշակի աղավաղում մտցնելով հնչերանգային կորի պատկերի մեջ։ Սրանով են պայմանավորված այն դժվարությունները, որոնք առաջանում են հատկապես դրդչական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունների բացահայտման և բնութագրման ընթացքում։

Երբեմն խոսքի տպավորությունն ուժեղացնելու նպատակով, կամ խիստ հուզված լինելու պահին բացականչությունները արտաբերվում են մի այնպիսի լարված ձայնով, որ տվյալ անձնավորության առոգանական ծավալի սահմաններում ի վիճակի չէ ընդգրկելու տոնային հաճախականության դիապազոնը՝ նրա ելևէջումը։ Այս դեպքում խոսողի ձայնը փոխվում է, որի հետևանքով հաճախականության ու հզորության ձայնաբանական տվյալներն հանդես են գալիս աղավաղված ձևով և փորձառական ուսումնասիրության ընթացքում անտեսվում և հաշվի չեն առնվում։ Հընչման տևողության խախտումը խիստ նկատելի է հատկապես այն դեպքում, երբ խոսքը կամ նախադասությունը ներկայացված է վանկաբաշխ տեսքով։ Օրինակ՝ «Մինչև տուն լսեց բոլորից.— Պատերա՜զմ, Պատերազմ, Պա-տե՜-րա՜զմ։ (Զար., 287)։ Այս օրինակը, նույնպես, բացահայտում է հնչերանգի սուբյեկտիվ գործոնի իրականացումը խոսքում։ Անհրաժեշտ է նշել, որ կարևորը այն է, որ այս երևույթը մեծ տարածում է գտել նաև առօրյա խոսակցական լեզվում։ Ուրեմն հնչերանգի սուբյեկտիվ գործոնի՝ որպես ձայնաբանական երևույթի էությունը և նրա դրսևորումը կայանում է նրանում, որ առավելապես դրդչական տիպի նախադասության կառույցներում հնչերանգային ցուցանիշները (սուբյեկտիվ գործոնի դրսևորման ընթացքում) խիստ տատանումներ են ցուցաբերում՝ օբյեկտիվ որոշակի ձայնաբանական մակարդակի համեմատությամբ։ Մինչդեռ օբյեկտիվ գործոնը դիտվում է որպես արտասանական նորմա, իսկ բոլոր շեղումներն այդ նորմայից՝ որպես սուբյեկտիվ գործոնի արտահայտություն։ Այսպիսինն են հնչերանգի օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների փոխհարաբերությունն ու փոխադարձ կապը, հատկապես դրդչական կառույցներում։

Այսպիսով, հնչերանգի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների բացահայտման և ըմբռնման հարցը լեզվաբանական կարևորագույն խնդիրներից մեկը պիտի համարել։ Այս հարցում ո՛չ բովանդակության և արտահայտության պլանների սահմանումն ու տարբերակումը, ո՛չ լեզվի օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների հարաբերակցության բացահայտումը, ո՛չ էլ լեզու և խոսք հասկացությունների հակադրումն վճռական դեր չեն խաղում հնչերանգային օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների ստույգ սահմանազատման հարցում։ Հնչերանգային հաղորդակցական տիպերի քանակը որոշելու, նրանց բնույթն ու գործառությունը բացահայտելու, հնչերանգային տիպերի ձայնաբանական առանձնահատկությունները նկարագրելու գործում անհրաժեշտ է նախ և առաջ տարբերակում մտցնել հնչերանգի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների գործառության միջև, բացահայտել այդ հասկացությունների հարաբերակցությունն ու փոխադարձ կապը խոսքում։ Անհրաժեշտ է նաև լիովին վերականգնել օբյեկտիվ գործոնի գաղափարը, նրա գործառության եղերը՝ տվյալ հնչերանգային տարատեսակներին հատուկ ձայնաբանական առանձնահատկությունների նկարագրման միջոցով։ Սույն աշխատության մեջ առաջ քաշված որոշակի դրույթները փորձառական առումով ստուգված է մեր կողմից և ինքնին հետաքրքրություն են ներկայացնում նրանց համար, որոնք հատուկ զբաղվում են հնչերանգի ուսումնասիրման հարցերով։

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴՐԴԶԱԿԱՆՆԵՐԻ (ՀՈՐԴՈՐԱԿԱՆ) ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

Ուսումնասիրման մեր սկզբունքները որոշ չափով տարբերվում են ավանդական հայեցակետից այն առումով, որ մենք անկյունաքարային ենք համարում հնչերանգային կառույցների նույնականությունը, անկախ քերականական կազմությունից։ Այսինքն, հաշվի է առնվել միայն հնչերանգային կորի պատկերը, ուր պահպանվում են ձայնաբանական ցուցանիշների միատեսակությունը թե՛ միակազմ, և թե՛ երկկազմ կառույցներում։ Հաղորդավարների առոգանության ձայնաբանական ցուցանիշների տարբերությունը բացահայտվում է ձայնի (տոնի) տարբեր հաճախականության մակարդակով. կանանց և երեխաների մոտ բարձր և տղամարդի մոտ համապատասխանորեն՝ ցածր մակարդակով։

Փորձառական եղանակով հետազոտությունները կատարվել են Երևանում և Մինսկում՝ ինտոնոգրաֆ կոչվող սարքի միջոցով։ Ինտոնոգրաֆային գրանցումներին նախորդել են նյութի ձայնագրումները, որոնք կատարվել են չորս հաղորդավարների —(երկու տղամարդ և երկու կին) արտասանությամբ։ Փորձառական նյութը բաղկացած է երկու մասից. մի մասը կազմում են միակազմ (անդեմ և անվանական) դրդչական նախա-

դասութ յունները, իսկ մյուսը՝ երկկազմ դրդչական նախադասութ յուններ։ Բոլոր դեպքերում կորերի պատկերները նույնական են և տարբերվում են միայն ձայների դիապազոններով, որը բնական է սեռերի տարբերութ յան պայմաններում։ Ինչ վերաբերում է ձայնաբանական ցուցանիշների որոշակի փոփոխութ յուններին և սուր ելևէջումներին, ապա այդ բացատրվում է միայն հաղորդավարի խառնվածքից, և այստեղ է, որ երևան է գալիս հնչերանգի սուբյեկտիվ գործոնը։

Փորձառական նյութում առկա են հրամայական, բացականչական և կոչական տիպի նախադասութ յուններ։ Միակազմ կառուցվածքից ձայնագրվել և գրանցվել են շուրջ քսան նախադասութ յուն՝ երկու հիմնական (կին և տղամարդ) և մեկ լրացուցիչ (կին) հաղորդավարների արտասանութ յամբ։ Օրինակների մի մասը կազմում են անվանական, իսկ մյուսը՝ անդեմ (բայական) նախադասութ յուններ։ Միակազմ նախադասութ յունների ընդհանուր քանակը (երեքական հաղորդավարների արտասանութ յամբ) կազմում է 60 դրդչական կառուցվածքներ, իսկ երկկազմ կառուցվածքների հետ միասին՝ շուրջ 120 նախադասութ յուն։ Դրդչական կառուցվածքներն իրենց յուրահատուկ գործառութ յան շնորհիվ բարդութ յուններ չեն ներկայացնում։ Այսպիսով, դրդչական նախադասութ յուններ ասելով մենք միշտ նկատի ենք ունեցել դրդչական ֆրազները, որոնց շրջանակներում է դրսևորված դրդչական հնչերանգային կառուցվածքների բնույթն ու գործառութ յունը։

Միակազմ դրդչական հնչերանգային կառուցվածքները փորձառական տվյալներով

ա) Անվանական հնչերանգային կառուցվածքներ

Անվանական դրդչական նախադասութ յունները մեր փորձառական տվյալներով ներկայացված են հետևյալ օրինակներում. «Ո՛չ մի գիշում։ Բոլորս կկործանվենք, եթե չմիանանք» (ԴՎ, 105), «Ա՛յ ձեզի դե՛ղ, ա՛յ լավ ձեզի դե՛ղ» (Թում., 3, 254), «Առա՛ջ,— հրամայեց լեյտենանտը» (Անթ., 317), «Առա՛ջ դեպի ձախ, մտնել գլխավոր փողոցը» (Անթ., 316), «Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր» (Անթ., 15), Ջգա՛սա։ Այս բառը կրկնվեց վաշտառ վաշտ։ «(Անթ., 490), «Եղբայրական ողջո՛յն Կուբայի սոցիալիզմ կառուցող հերոսական ժողովրդին» («Ավանգարդ», 1965 թ., № 48), «Գառո Շահյան, մի փաժակ էլ...» (ՆԴՊ, 27), «Իմ ձագուկս, իմ Վարդանի՛կս, ուրախանում էր Ռեհանը» (Մ. Ջ, 7, 344), «Համբուրվե՛լ, այո՛ համբուրվե՛լ, Եվվիվա, հուռռա՛, հուռռա՛» (Ք, 7), «Դադար, դադա՛ր,— գոչում էին սեպուհները» (ԴՎ, 17), «Լռութ յո՛ւն,— սաստեց դատարանի նախագահը» (Անթ., 427)։

Քննված օրինակներում հատուկ ընգծվում են այն հատվածները,


որոնք հանդես են գալիս դրդչականի գործառութ յամբ։ Իմաստով դրանք ավարտուն կառույցներ են, թեև որոշ դեպքերում բաղկացած են ընդամենը մեկ բառից (համմտ. Զգա՜ստ։ Առա՛ջ և այլն)։ Այս առումով հիշյալ կառույցները, անկախ շրջապատող կազմություններից, ընկալվում և դիտվում են որպես դրդչական հնչադաստություններ, իսկ շրջապատող հատվածները տվյալ դեպքում հանդես են գալիս որպես կոնտեքստ։

Ներկայացված նյութից պարզ է, որ մենք ոչ մի սահմանադատում չենք մտցրել այսպես կոչված հրամայականների և բացականչականների միջև։ Սրանց մեջ թերևս կարելի է առանձնացնել հրամայական հնչերանգային ենթատիպը բնորոշող մի շարք կառույցներ, որոնց հատուկ և հատկապես ուժգնության ցուցանիշների խիստ ելևէջումը։ Այսպես, օրինակ, «Ո՛չ մի զիջում», «Առա՛ջ», «Առա՛ջ դեպի ձախ», «Զգա՜ստ», «Լուսյո՛ւն» և այլ նման դրդչական անվանական կառույցներում կարելի է դիտել բավականաչափ բարձր ուժգնության ցուցանիշներ (տե՛ս գծանկարներ 1—4)։ Այստեղ, Առա՛ջ հնչադաստության դեպքում 1-ին կին հաղորդավարի մոտ ձայնի ուժգնության ցուցանիշները որոշ հատվածներում հասնում են մինչև 47 և 50 միլիմետրի, 2-րդ հաղորդավարի մոտ մինչև 43 և 47, իսկ 1-ին տղամարդ հաղորդավարի արտասանությամբ մինչև 40 միլիմետր բարձրության (գծանկարներ 1—2)։ Այս ցուցանիշները գրեթե նույնական մակարդակի են այստեղ թերևս անհատական աննշան տարբ կարելի է նկատել 1-ին կին հաղորդավարի արտասանության մեջ։ Այս օրինակում հիմնական տոնի հաճախականության ցուցանիշները նույնպես բարձր են (260 և 280 հերց 1-ին կին, 255 և 300 հերց՝ 2-րդ կին և 165 ու 200 հերց՝ 1-ին տղամարդ հաղորդավարների մոտ։ Սակայն այս ցուցանիշները համեմատաբար բարձր չեն, որքան կարելի էր սպասել բացականչական հաղորդակցական ենթատիպի դեպքում։ Ուշագրավ է նաև այն, որ վերլուծվող գրեթե բոլոր օրինակներում նման առավելագույն ցուցանիշները պահպանվում են մինչև հնչադաստության ավարտը։ Եվ դա է այն գլխավոր հատկանիշը, որը տարբերակում է դրդչական հնչերանգային հաղորդակցական տիպը մյուս հնչերանգային խմբերից։


Դրդչական հնչերանգային խմբի մեջ մտնող հրամայական ենթատիպը աչքի է ընկնում ոչ ծավալուն՝ կարճ տևողությամբ, որով սովորաբար բնորոշվում են սեղմ, կարուկ հրամաններն ու հրահանգները։ Այսպես. «Ո՛չ մի զիջում» (գծանկար 3) հնչադաստության ընդհանուր տևողությունը մի դեպքում եղել է 300 (1-ին կին հաղորդավոր), մյուսում՝ 840 և վերջապես 1260 միլիվարկյան տևողություն՝ տղամարդի արտասանությամբ այն պահին, երբ բացականչականների օրինակներում միայն մեկ՝ շեշտակիր վանկում ձայնավորի տևողությունը հասնում էր երբեմն մինչև 220—250 միլիվայրկյանի։ Ինչ վերաբերում է առաջին (Առա՛ջ) օրինա-

կին, ապա այստեղ այդ ցուցանիշները նվազագույն են (1-ին կին՝ 400, 2 կին՝ 440, 1-ին տղամարդ 820 մվրկ) (գծանկար 1)։ Մինչդեռ Առա՛ջ, դեպի ձախ հրամայական ֆրազում ձայնաբանական ցուցանիշները բաշխված են փոքր ինչ այլ կերպ (գծանկար 2), որովհետև առանցքային բառի դիրքը այստեղ փոխված է։ Չնայած գրությամբ այն շեշտակիր է և հնչադասության կազմում առաջին բառը, սակայն այս օրինակում մենք ունենք հղորության կամ ձայնի ուժգնության հետևյալ ցուցանիշներ. 1-ին կին՝ առաջին ա ձայնավորի սահմաններում 40 մմ, երկրորդ (շեշտված) ա ձայնավորի մասում՝ 42 մմ։ Այնուհետև 2-րդ կին և 1-ին տղամարդ հաղորդավարների արտասանությամբ համապատասխանորեն՝ 40(36) և 36(40) միլիմետրեր։ Իսկ հնչադասության վերջին (ձախ) բառի հատվածում ուժգնության ցուցանիշները բարձրակետերով հավասար են. 1-ին կին՝ 44, 2-րդ կին՝ 40 և 1-ին տղամարդ՝ 40 միլիմետրերի, ընդ որում այստեղ, բնականաբար, պետք է հաշվի առնվեն ոչ թե բացարձակ ցուցանիշները, այլ բառերի դիրքը՝ նրանց հաջորդականությունը և հնչադասությունում ըրաղեցրած տեղը։ Այս առումով հավասար կամ նվազագույն անկումներով ցուցանիշների դեպքում նախապատվությունը տրվում է հնչման ավարտին մոտ հատվածին, որովհետև հավասար պայմաններում այդ հատվածի ցուցանիշները անհամեմատ բարձր կլինեին։ Մյուս բաղադրիչի՝ տոնի հաճախականության տվյալներով նույնպես բացահայտված է քննվող կառույցի պատկանելիությունը դրդչական հաղորդակցական խմբին։ Հարաբերական ցուցանիշներն այս պարագայում դասակարգված են այնպես, որ գերադասություն նույնպես կարելի է տալ հնչադասության եղրափակիչ հատվածին։ Տոնի ելևէջումն Առա՛ջ, դեպի ձախ օրինակում մեծ է և հաճախականության փոփոխությունները բավականաչափ զգալի։ Սրա հետևանքով առաջացել է երկու կենտրոն, մեկը՝ Առաջ բառի սահմաններում, ուր դիտվել են հաճախականության բարձրակետեր 250 հերց (1-ին կին), 310 հերց (2-րդ կին) և 205 հերց (1-ին տղամարդ) դիապազոնում։ Այնուհետև դիտվում է տատանումների հաճախականությունների խիստ անկում, որից հետո տոնի կորագիծը կրկին բարձրանում է, հասնելով 240 հերց (1-ին կին), 220 հերց (2-րդ կին) և 190 հերց (1-ին տղամարդ)։ Հաճախականության տատանումներ այստեղ շատ բարձր չեն, բացի այդ էլ հրամայականների դեպքում կարևորագույն նշանակություն ունեն ձայնի ուժգնության ցուցանիշները (գծանկար 2)։

Անդրադառնալով Ո՛չ մի զիջում հնչադասության ձայնաբանական առանձնահատկություններին, նշենք, որ այս վերլուծվող օրինակում ձայնի շարժումը (ճնշման, ուժգնության արժեքներով) հնչման ավարտին համեմատաբար ցածր է 1-ին կին հաղորդավարի արտասանությամբ։ Այսպես, առաջին ո ձայնավորի 37 մմ մակարդակի դիմաց մենք ունենք




Դծանկար 1 «Ա՛ռ՛ջ,— [հրամայեց լեյտենանտը]»։ «Նախադասություն դրչյան կառույցի ձայնաբանական բաղադրիչների՝ մեղեդայնության, ձայնի ուժգնության և տեվողության կորագծերն ու ցուցանիշները ինտոնոգրամների տվյալներով։



Դիագրամ 2 «Առա՛ջ դեպի ձախ» որդչական կառույցի ձայնաբանական բուզադրիչների ցուցանիշները ինտոդրամների տվյալներով։

ընդամենը 17 մմ, սակայն այստեղ ևս նկատելի է մեկ այլ երևույթ. ձայնային ճնշումը ոչ թե նվազում է, այլ դնալով աճում է (գծանկար 3)։ Հաջորդ մի բառի սահմաններում այն արդեն հասնում է 47 մմ ցուցանիշի։ Հետագայում, շնչառության ռիթմի խախտման հետևանքով, նկատելի է ձայնի ուժգնության խիստ անկում, որը արտահայտված է վերը նշված ցուցանիշով (17 մմ)։ Սա անշուշտ ոչ կանոնական, սուբյեկտիվ բնույթի արտասանության հետևանք է և մյուս հաղորդավարների արտասանությամբ չի պրանցվել։ Այսպես, 2-րդ կին հաղորդավարի արտասանությամբ հիշյալ հատվածի ուժգնության չափումները հետևյալ արդյունքներ ունեն. հնչադասության սկզբում նշվել են 36 և 40 մմ բարձրակետեր, այնուհետև 43 և 35 մմ բարձրակետեր։ Այս ցուցանիշները վկայակոչում են, որ ձայնի ուժգնության մակարդակը մնում է գրեթե անփոփոխ, դիտվում է ցուցանիշների բավականաչափ խոր անկում և վերջապես հնչման ավարտին («դիջում» բառի հատվածում) ուժգնության ցուցանիշը կրկին բարձրանում է մինչև 45 միլիմետր մակարդակի։ Պետք է ասել, որ հնչման ավարտի համար այս մակարդակը (ձայնի ճնշման ելևէջումի ցուցանիշներով) բավականաչափ բարձր է (գծանկար 3)։ Հաճախականության ցուցանիշները քննվող օրինակում նույնպես բարձր են. արտասանությամբ այն տատանվում է 240, 235 և 220 հերց սահմաններում։ Հատկանշական է, որ երեք հաղորդավարների արտասանությամբ անվանական հրամայական կառույցներում հնչման սկզբի ու ավարտի մակարդակը տոնի հաճախականության ցուցանիշներով գրեթե նույնական են։ Այդ նշանակում է, որ հրամայականների դեպքում ձայնալարերը լարված են հենց հնչման սկզբից։ Հրամանը, հրահանգը արտասանվում են սովորականից անհամեմատ բարձր տոնով և հնչման այդ մակարդակը պահպանվում է մինչև հնչադասության ավարտը (գծանկարներ 1—3 և մյուսները)։ Այս է դրդչականների կազմում հրամայական հնչերանգային ենթատիպի առանձնահատուկ հատկանիշներից մեկը։ Մյուս հատկանիշներից են կարճ տևողությունը և հատկապես ձայնի ուժգնության աճումը հնչադասության վերջում, որն էլ ապահովում է այս հաղորդակցական տիպին բնորոշ պարաբոլիկ կորի ուրվագիծը։


Այսպիսով, անվանական (միակազմ) դրդչական կառույցներին հատուկ են հնչերանգային այնպիսի ցուցանիշներ, որոնք կազմում և արտահայտում են ողջ դրդչական հաղորդակցական տիպին բնորոշ առանձնահատկությունները և այս առումով որոշակիորեն կարելի է ասել, որ դրդչական և, թերևս, մյուս հնչերանգային տիպերին պատկանող կառույցների նկատմամբ խիստ անհրաժեշտություն չի կազմում այն հանգամանքը, թե որ խոսքի մասով է արտահայտված նախադասության գերադաս անդամը։



Գծանկար 3 «Ո՛չ մի դիջում» դրդչական կառույցի ձայնաբանական ցուցանիշները ինտո-գրամներով։

Ինչպես ասացինք, անվանական խմբին պատկանող դրդչական կառույցները բացի հրամայականներից կազմում են նաև բացականչական հնչերանգային ենթատիպ։ Այս հնչերանգային կառույցները ցուցաբերում են ձայնաբանական այնպիսի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են ընդհանրապես դրդչականներին։ Տարբերությունը նրանում է, որ այստեղ հրամայական ենթատեսակին պատկանող կառույցներին բնորոշ ցուցանիշները դրսևորված են ոչ այնքան հիմնական տոնի կորագծով, որի ելևէջումը ձգտում է դեպի հաճախականությունների վերին մակարդակը, այլ հիմնականում կենտրոնացված են ձայնի ուժգնության կորում։

Ստորև անցնենք մի քանի անվանական բացականչական կառույցների վերլուծությանը, որոնք այսպես կոչված հրամայականների հետ մեկտեղ ներկայացված են այս ենթաբաժնի ընդհանուր ցանկում։ Բացականչական անվանական նախադասությունների կազմում մենք առանձնացրել ենք Ա՛յ ձենի դե՛ղ, ա՛յ լավ ձենի դե՛ղ։ Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր։ Եղբայրական ողջո՛ւյն Կուբայի սոցիալիզմ կառուցող հերոսական ժողովրդին։ Իմ ձագուկրս, իմ Վարդանի՛կս... Դադար, դադա՛ր... և էվվիվա, հուռռա՛, հուռռա՛։ կառույցները։ Արտահայտչականության, բայց ոչ հուզականության բարձր աստիճանի դրսևորման տեսակետից այս կառույցները, բնականաբար, միատեսակ ու միատարր չեն. մի դեպքում դրանք արտահայտում են խնդրանք, աղաչանք, աղերսանք (Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր), մյուս դեպքում՝ պահանջ, հանդիմանություն, (Դադա՛ր, դադա՛ր), մեկ այլ դեպքում՝ ողջույն, կոչ (Եղբայրական ողջո՛ւյն Կուբայի սոցիալիզմ կառուցող հերոսական ժողովրդին) և այլն։ Սակայն այնուամենայնիվ բոլոր օրինակներն էլ պատկանում են դրդչական հաղորդակցական խմբին։ Այսպես, Ջո՛ւր, մի կաթիլ ջո՛ւր (գծանկար 4) օրինակում երեք հաղորդավարների արտասանությամբ կարելի է դիտել դրդչականին հատուկ կորագծերը, թեև թվում է, թե աղերսանքը պետք է արտասանվեր թույլ ձայնով։ Սակայն հակառակ սպասածին, ստացվում է բոլորովին մի այլ պատկեր։ Այսպես. 1-ին կին հաղորդավարի ձայնի ցուցանիշների համաձայն մենք ունենք տոնի բարձրացում առաջին ջո՛ւր բառի ձայնավորի հատվածում մինչև 285 հերց մակարդակը։ Այսուհետև այս թվային ցուցանիշները ավելանում են, հասնելով մի բառի հատվածում մինչև 315 հերց մակարդակի, այնուհետև դիտվում է տոնի հաճախականության որոշակի նվազում, սակայն երկրորդ՝ ջո՛ւր բառի հատվածում այն կրկին բարձրանում է մինչև 280 հերց տատանումների մակարդակը, որն էլ տրվյալ հաղորդակցական ոճը բնորոշող ցուցանիշ է։ Ձայնի ուժգնության ցուցանիշները, թեև բարձր չեն, սակայն իրենց բարձրակետով հասնում են մինչև 23 միլիմետր ցուցանիշի (գծանկար 4) և, հարաբերական տրվյալներով այստեղ ևս (համմտ՝ հնչման սկիզբ՝ 26 մմ և ավարտ՝ 21 մմ)



Դծանկար 4 «Ջո՞ւր, մի կաթիլ ջո՞ւր» միակազմ դրդչական հնչերանգային կառույցի ձայնաբանական պատկերը ինտոգրամների կորագծերով։

առկա է դրդչական կառույցներին հատուկ պատկերը։ Այնուհետև վերլուծվող Ա՛յ ձեռի դեղ՛, ա՛յ լավ ձեռի դե՛ղ բացականչական նախադասությունը անվանական է. ա՛յ ձայնարկությունը առանձնապես մեծ դեր չի կատարում դրդչական հնչերանգային ողջ կառույցի կազմավորման ընթացքում, թեև ձայնաբանական ցուցանիշները տվյալ հատվածում բավականաչափ բարձր են։ Այսպես, եթե 1-ին կին հաղորդավարի արտասանությամբ ձայնի ուժգնության ցուցանիշը հնչման եղրափակիչ հատվածում հավասար է 36 մմ-ի (գծանկար 5), ապա սկզբում՝ առաջին ա՛յ ձայնարկության հատվածում հասնում է մինչև 53 մմ մակարդակի։ Թվում է, թե հենց այս ցուցանիշն է իր առավելությամբ բնորոշում ողջ կառույցը, մինչդեռ 36 մմ մակարդակը հնչեղրափակիչ հատվածում բավականին բարձր ցուցանիշ է, բացարձակ, որովհետև ձայնի ուժգնությունը սահրածական առանցքով պահպանելը առանձնապես որոշակի ջանքեր է պահանջում։ Սրանով է պայմանավորված արտասանության այն լարվածությունը, որը դիտվում է դրդչականների արտաբերման ընթացքում։


Նույն օրինակի ձայնաբանական տվյալները մյուս հաղորդավարների արտասանությամբ նմանապես ցուցաբերում են այն ֆիզիկական պատկերը, որը հատուկ է դրդչական տիպի կառույցներին (գծանկար 6)։ Եվ եթե որոշ հատվածում դիտվել են ձայնային ազդակների հավելյուկորեն արժեքներ, ապա դրանք հենց սուբյեկտիվ գործոնի դրսևորումներն են։

Սուբյեկտիվ գործոնը կարող է դրսևորվել նաև մեղեդայնության (հիմնական տոնի ելևէջումների) և ձայնի ուժգնության կորերում։ Այսպես, Ա՛յ ձեռի դե՛ղ... օրինակում բարձր ցուցանիշ կարող է համարվել 2-րդ կին հաղորդավարի արտասանությամբ 5 մմ մակարդակը՝ առաջին դե՛ղ բառի հատվածում, իսկ երրորդ (1-ին տղամարդ) հաղորդավարի արտասանությամբ՝ 37 մմ ուժգնության բարձրակետը երկրորդ ա՛յ ձայնարկության հատույթի սահմաններում (գծանկար 6)։ Նույնը կարելի է ասել նաև հիմնական տոնի հաճախականության՝ 250 հերց (տղամարդու առոգանությամբ) մակարդակի վերաբերյալ (գծանկար 5), որոնք որոշակի շեղումներ են ներմուծել հնչերանգի արտահայտության մեջ։

Այսպես, հատուկ ուշադրության է արժանի Իմ ձագուկս, իմ վարդանի՛կս,— ուրախանում էր Ռեհանը նախադասությունը, որը մենք համարում ենք անվանական բացականչական նախադասություն։ Փորձառական տվյալներով հիշյալ կառույցը պահպանում է դրդչականին բնորոշ հատկությունները, օժտված է հնչերանգային կորի հիպերբոլիկ ձևով, թեև չունի ձայնաբանական բարձր ցուցանիշներ։

Այս նախադասության հնչերանգային կորի ձայնաբանական պատկերը ներկայացված է հետևյալ ցուցանիշներով։ 1-ին կին հաղորդավարի արտասանությամբ մեղեդայնության կորը սկիզբ առնելով 260 հերց մակար-


դակից և չկրելով առանձնապես զգալի ելևէջում, հնչման ավարտին իջնում է մինչև 200 հերց հաճախականության տատանումների մակարդակը։ Սակայն այս ելևէջումը, որը պայմանավորված է մեղեդայնության կորի անկմամբ, ամենևին չի արգելակում տոնի բարձրացմանը տվյալ հատ-





Գծանկար 5 «Ա՞յ ձենի դեղ, ա՞յ լավ ձենի դե՞ղ» բացականչական (դրդչական) հնչերանգային կառույցի հնչրափակիչ ա՞յ լավ ձենի դե՞ղ հատվածի ինտոգրամները ա) հաղորդավար Ռ. Ս.-ի (2 կին) և բ) հաշ. Ս. Մ.-ի (1 տղամ.) արտասանությամբ։

վածներում։ Այսպես, հիշյալ հատվածին հաջորդող իմ Վարդանի՞կս շարույթում որոշակի դադարից հետո (մոտ 900 մվրկ) տոնի հաճախականու-



Գծանկար 6 «Իմ ձագուկս, իմ Վարդանի՜կս» դրդչական ֆրազի ձայնաբանական կոր-

րագծերը ինտոգրամներով։

թյան կորը կրկին ունի բարձր ցուցանիշներ։ Այստեղ դիտելի են 290, 230, 255, 240 հերց հաճախականության բարձրակետեր, ընդ որում վերջին ցուցանիշը վերաբերում է նախավերջին ի ձայնավորին՝ Վարդանի՞կս բառում (գծանկար 6)։ Ցուցանիշների նույնական բաշխումը որոշակի հարաբերությամբ դիտվում են նաև մյուս հաղորդավարների մոտ։ Այսպես, 2-րդ կին հնչերանգի արտասանությամբ իմ Վարդանի՞կս շարույթի սահմաններում գրանցվել են հետևյալ ցուցանիշները. հատվածի սկզբում ունենք 220 հերց, իսկ հնչման ավարտին՝ 230 հերց ցուցանիշներ, և սա դիտվել է այն պայմաններում, երբ ողջ հնչադասության սկզբից առաջին՝ իմ հատվածում գրանցվել էր 270 հերց մակարդակը։ Սա նշանակում է, որ 4 կիսատոն անկումից հետո մենք հնչման ավարտին ունենք ևս 3 կիսատոն հաճախականությունների աճում, երբ ողջ կառույցը եղել է 230—240 հերց միջին հաճախականության դիապազոնում (գծանկար 6)։ Ինչ վերաբերում է ձայնի ուժգնության ցուցանիշներին, ապա այստեղ եթե հաշվի չառնենք հնչադասության սկզբի ցուցանիշները, ուժգնության կորը արտահայտում է դրդչականներին հատուկ պատկերը։ Այսպես. իմ Վարդանի՞կս հատվածում դիտվել են 30 և 28 մմ բարձրակետեր, ի հակադրումն 48 մմ ուժգնության ցուցանիշի, որը դիտվել է հնչադասության սկզբում, իսկ 28 մմ բարձրակետը վերջին վանկի ցուցանիշն է (գծանկար 6)։ Այնպես որ ձայնաբանական բոլոր բաղադրիչներով քննվող նախադասությունները հանդես են գալիս որպես դրչական կառույցներ։

բ) Անդեմ հնչերանգային կառույցներ

Փորձառական ուսումնասիրության են ենթարկվել անդեմ դրչական նախադասությունների հետևյալ օրինակները· «Մի րոպե հետո եղավ երկրորդ հրամանը.— Ցրվե՛լ, պառկե՛լ...» (ՀՔՄՏՋ), «Պահե՛լ այս ռազմակարգը, չշփոթել իր՝ Վարդանի շարժումներից» (ԴԴվ), «Բաթը կռացավ, գրկեց պապին և հրամայեց ներսը գտնվող իր զինվորներին.— Կոտորե՛լ բոլորին... ողջ չթողնե՛լ ոչ մեկին։ Պահակներ դնել, դուռը փակել և փախչել ցանկացողներին սատակել անմիջապես» (ՍԳԱ, 133), «Հեծյալները, որ Վարդանի կողմից էին, հրաման բերին նրանց.— Կրովով ֆաշվե՛լ աչակողմյան լեռնակիրճը» (ԴԴվ, 435), «Կազմակերպե՛լ լեզվի ճարտերին ևվիրված հաղորդումներ հեռուստատեսությամբ ու ռադիոյով» («Ավանգարդ», 8. 2. 1961), «Բարձրանա՛լ, միշտ բարձրանա՛լ, անդադար բարձրանա՛լ» (ԾԴ), «Համբուրվե՛լ, այո, համբուրվե՛լ, էվվիվա՛, հուռա՛, հուռռա՛» (Ք)։ Այս նախադասությունները նույնպես կարդացվել են երեք (երկու կին և մեկ տղամարդ) հաղորդավարների արտասանությամբ։ Անդեմ հնչերանգային կառույցների վերլուծությունը ներկայացնում ենք հիմնականում (1-ին կին և տղամարդ) հաղորդավարների ար-

տասանական ցուցանիշներով, քանի որ մյուս հաղորդավարների մոտ գրեթե նույն կորերն են ստացվել և կարևոր կամ անհրաժեշտ ինֆորմացիա թերևս չեն պարունակում։

Անդամ նախադասության վերլուծությունը ցույց է տալիս, որ նախադասության գլխավոր անդամը իր վրա է կրում հնչերանգի գործառության ողջ ծանրությունը, միաժամանակ կարգավորելով ձայնի ելևվէջավորումը նախադասության մյուս անդամների նկատմամբ։

Անդամ նախադասությունների շարքում մեծ թիվ են կազմում դերդչական հաղորդակցական խմբին պատկանող նախադասությունները։ Սրանցից է վերոհիշյալ Ցրվե՛լ, պառկե՛լ... նախադասությունը, որին նախորդող Մի բոպե ձեռս եղավ երկրորդ նրամանը նախադասությունը հանդես է եկել որպես կոնտեքստ։

Վերլուծվող նախադասությունն ունի հետևյալ ձայնաբանական տրվյալները։ Ցրվե՛լ— (ցրվել) հատվածում ձայնի հզորությունը (ը) ձայնավորի սահմաններում հասնում է մինչև 30 միլիմետր բարձրությանը, իսկ հիմնական տոնի բարձրակետի ցուցանիշը նույն հատվածում հավասար է 235 հերցի։ Առաջին վանկի ձայնավորի տևողությունը տվյալ հատվածում չի անցնում 70 միլիվայրկյանից։ Երկրորդ շեշտակիր վանկում տոնային է-ի դեպքում ցուցանիշը հասնում է մինչև 340 հերցի, որն էլ վերլուծվող երկու նախադասությունների սահմաններում (Ցրվե՛լ, պառկե՛լ...) հանդես է գալիս որպես մեղեդայնության առավելագույն ցուցանիշ։ Տոնային կորի անկումն ունի հիմնական տոնի հետևյալ ցուցանիշները՝ սկզբնապես 260—240, յանուհետև՝ 300 և նորից 260 հերց։ Ուժգնության դիապազոնը (է)հնչյունի սահմաններում 25 միլիմետրից չի իջնում, ուստի և կարելի է նշել, որ այստեղ ձայնի հզորության անկումը նվազ է և հնչման ավարտի հարաբերական ցուցանիշներով այն բավականաչափ բարձր է։

Երկրորդ՝ «պառկե՛լ» ֆրազի ձայնաբանական ցուցանիշները հետևյալն են. առաջին վանկի (ա) հնչյունի սահմաններում հիմնական տոնի բարձրությունը հավասար է 180 հերցի, ձայնի հզորությունը՝ 21 միլիմետրի, իսկ տևողությունը՝ 190 միլիվայրկյանի։ Շեշտակիր (է) հնչյունի հատվածում դիտվել է 170 հերց հիմնական տոնի ցուցանիշ, իսկ ուժգնության դիապազոնն այս հատվածում հավասար է համապատասխանորեն 21, 20 և 15 միլիմետրի։ Ձայնավորի հնչման տևողությունը 160 մվրկն է, իսկ բառի հնչման ընդհանուր տևողությունը՝ 470 մվրկ։

Տրամարդ հաղորդավարի արտասանությամբ այստեղ դիտվել են բավականաչափ սուր ելևէջումներ՝ և՛ ձայնի ուժգնության, և՛ մեղեդայնության կորերում։ Այստեղ պարզորոշ երևում են հուզականության,

անհատական տարրերը։ «Պահե՛լ» անդամ նախադասության հնչերանգային ցուցանիշները տղամարդու առոգանությամբ հետևյալն են. նախադասության ընդհանուր տևողությունը հասնում է մինչև 820 մվրկ. առաջին ձայնավորի (շեշտընթեր ա-ի) տևողությունը հավասար է 100 մվրկ, շեշտակիր է-ինը՝ 140 մվրկ, իսկ դադարի տևողությունը՝ 480 մվրկ։ Ուժգնության դիապազոնը շեշտակիր վանկում հասնում է մինչև 55 միլիմետրի։ Սա՝ վկայում է այն մասին, որ ձայնի ուժգնությունը հրահանգների դեպքում գնալով ոչ թե նվազում, այլ աճում է։ Ինչ վերաբերում է մեղեդիության կորին, ապա այն անշշան տատանվում է 150—160 հերցից մինչև 200—210 հերցի սահմաններում, որն էլ համընկնում է տղամարդու առոգանության դիապազոնի միջինից բարձր մակարդակին։

Հաջորդ անդեմ նախադասությունը՝ «Պահե՛լ այս ռազմակարգը, շշփոթվել իր՝ Վարդանի շարժումներից» հրամայական նախադասությունն է, որն ամբողջությամբ պատկանում է դրդչական հաղորդակցական տիպին։

Առաջին կին հաղորդավարի արտասանությամբ հիշյալ հրամայական նախադասության հնչերանգային առանձնահատկությունները հետևյալներն են։ Ողջ նախադասության հնչերանգային կառուցվածքը բաղկացած է երկու առանձին և թերևս՝ անկախ հնչերանգային կորերից։ Սա բնական է, որովհետև այն բարդ համադասական նախադասություն է։ Մենք քննության ենք առել միայն առաջին հատվածը, դիտելով այն որպես առանձին միավոր (ֆրազ)։

Այստեղ նախադասության գերադաս անդամը «Պահե՛լ» բառն է, որը գտնվելով նախադասության սկզբում ունի մեղեդիության և հնչերանգի գործոնների առավելագույն ցուցանիշներ։ Այսպես, եթե նախադասության վերջում՝ (ը) հնչյունը ռազմակարգը բառում ձայնի ուժգնության մակարդակը հավասար է 15 միլիմետրի, ապա առաջին՝ (Պահե՛լ) բառում (ա) հնչյունի սահմաններում այն հավասար է 32 միլիմետրի։ Նույն բառի միջին հատվածում ուժգնության կորը իջնում է մինչև 15 միլիմետրի, այնուհետև կրկին բարձրանում է՝ հասնելով մինչև 25 միլիմետր մակարդակի։ Մեղեդիության ցուցանիշներն այստեղ հետևյալն են. հիմնական տոնի բարձրությունը ա ձայնավորի սահմաններում հասնում է մինչև 233 հերց մակարդակի, ըստ որում տոնային կորը անմիջականորեն բարձրանում է հենց բառի սկզբից։ Այնուհետև հիմնական տոնի մակարդակն իջնում է մինչև 250 հերց։ Նախադասության կենտրոնական անդամի ընդհանուր տևողությունը 240 մվրկ է. այդ ցուցանիշը նվազագույն է այն առումով, որ թեև տևողության ցուցանիշները կարուկ հրահանգներում սովորաբար աչքի չեն ընկնում, ապա այս-

ունեն կարևոր նշանակություն առաջին հերթին ձայնի ուժգնության, այնուհետև՝ հիմնական տոնի բարձրության (մեղեդայնության) ցուցանիշները։ Իսկ ուժգնության այն մակարդակը (15 միլիմետր), որը մենք պիտակել ենք նախադասության վերջում, հենց բավական է հնչման եզրափակիչ հատվածի համար և համեմատաբար բարձր ցուցանիշ է։ Այս առումով էլ տվյալ նախադասությունն իր հիպերբոլիկ հնչերանգային կորով տիպիկ դրդչական հնչերանգային կառույց է։

Այս բաժնում քննվող նախադասություններից է «Բաթը կռացավ, գրկեց պապին և հրամայեց ներսը գտնվող իր զավակներին.— Կոտորե՛լ բոլորին... ողջ չթողնե՛լ ոչ մեկին։ Պահակ դնել և փախչել ցանկացողներին սատակել անմիջապես» նախադասության հրամայական կառույցներից մենք փորձառական ուսումնասիրության համար գրանցել ենք միայն առաջինի՝ հատվածը։

«Կոտորե՛լ բոլորին, ողջ չթողնել ոչ մեկին» հնչերանգային կառույցը ուսումնասիրվել է երեք հաղորդավարների արտասանությամբ։ Այստեղ հնչերանգի հիմնական «բեռը» ընկած է առաջին (Կոտորե՛լ) բառի վրա, որն էլ հանդես է գալիս որպես նախադասության գլխավոր անդամ։ Մեղեդայնության կորը տվյալ հատվածում առաջին հաղորդավարի մոտ կրում է զգալի փոփոխություններ՝ բառի առաջին վանկում հիմնական տոնի բարձրությունը հասնում է 360 հերցի։ Այնուհետև տոնի կորագիծը սուր կեռպով իջնում է, հասնելով մինչև 250, հետո 110 և վերջապես՝ 60 հերց մակարդակի։ Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ առաջին վանկի (О) ձայնավորին հաջորդում է խուլ պայթական հնչյուն՝ (ա-ն), որի արտասանման պահին, ինչպես նաև մյուս խուլերի դեպքում դիտվում է ձայնի վերարտադրման կանոնական ընթացքի խախտում, ուստի և հիմնական տոնի կորը նման անկում ունի։ Սակայն միջանկյալ խուլ բաղաձայնները չեն կարող դադարեցնել հիմնական տոնի ելևէջավորումը, և այդ պատճառով էլ տոնային ցուցանիշները այդ պահից անմիջապես սկսում են արագ աճել։

Երկրորդ՝ շեշտընթեր (о) ձայնավորի հատվածում հիմնական տոնի բարձրությունը նույն հաղորդավարի արտասանությամբ հասնում է ամենաբարձր մակարդակին՝ 380 հերցի։ Ձայնի ուժգնությունը տվյալ վանկում նույնպես առավելագույնն է՝ 43 (25,30) մմ ի տարբերություն նախորդ վանկի՝ 40 (25,28) միլիմետրի։ Եվ, վերջապես, երրորդ շեշտակիր վանկում մեղեդայնության կորի գագաթ հայտնվում է 210 հերցի սահմանում, ուժգնության մակարդակ հավասար է 30 (25) միլիմետրի, տևողությունը՝ 120 մվրկ, ի տարբերություն նախորդ ձայնավորների ձայնապատկերի որոնց ցուցանիշները համապատասխանորեն հավասար էին 100 և 90 միլիվայրկյանի։ Կոտորե՛լ բոլորին հրամայական նախա-

դասության ընդհանուր տևողությունը 1-ին կին հաղորդավարի արտասանությամբ հավասար է 1000 մվրկ-ի։

Երկրորդ կին հաղորդավարի արտասանությամբ նույն նախադասության տվյալները գրեթե չեն տարբերվում վերևում նշված տվյալներից, միայն այս հաղորդավարի ձայնը մի փոքր ցածր է և մեղեդայնության կորը բարձր մակարդակ բնականաբար չունի։ Այսպես՝ եթե առաջին հաղորդավարի մոտ հիմնական տոնի ելևէջման մակարդակը 380 հերց է, երկրորդ հաղորդավարի մոտ այն 330 հերց դիապազոնից վեր չի անցնում։ Այժմ անդրադառնանք նույն օրինակի տղամարդ հաղորդավարի արտասանությամբ առաջին հրամանին («Կոտորե՛լ բոլորին...»)։ Այստեղ ընդհանուր տևողությունը հասնում է մինչև 1800 մվրկ-ի, այսինքն 800 մվրկ-ով ավելի, քան նախորդող երկու հաղորդավարների մոտ։ Կոտորե՛լ բոլորին և դրան հաջորդող՝ ...Ողջ չթողնել ոչ մեկին կառուցվածքներն արտասանվել են որոշ կոնտեքստից հետո (անուղղակի խոսք), պահպանելով դրդչականին բնորոշ կառուցվածքը և այդ բոլորը արտասանվել է գրեթե մեկ շնչով։ Պարզ է, որ այս դեպքում ոչ բոլոր դրդչական հատվածները կարող էին արտաբերվել նույնարժեք ձայնաբանական ցուցանիշներով։ Ուստի այստեղ անհրաժեշտ է նկատի առնել հարաբերական տվյալները, որոնք, ասենք հնչման ավարտին կարող են ավելի վճռական դեր խաղալ, քան արտահայտման սկզբնամասում։ Եվ այս տեսակետից ուշագրավ են այն ձայնաբանական ցուցանիշները, որոնք դիտվել են «...ողջ չթողնել ոչ մեկին» հատվածում։ Վերլուծվող նախադասության այդ հատվածներում ձայնի ուժգնությունը առաջին հաղորդավարի մոտ հանդես է եկել բարձր ցուցանիշներով՝ 43, 41, 36 մմ։ Ինչ վերաբերում է հիմնական տոնի ցուցանիշներին, ապա այստեղ ձայնի դիապազոնի ելևէջավորումը չափազանց բարձր է, այսինքն՝ հաճախականության բնութագրերի տարբերությունը խիստ մեծ է, որը կարելի է դիտել որպես հուզական-արտահայտչական դրսևորումներից մեկը։ Մեղեդիության կորը նույնիսկ դուրս է գալիս գրանցման տիրույթից։ Այս ևս, անշուշտ, անհատական գործոնի դրսևորումներից է։ Սակայն ինտոնագրումը իր պատկերով ճանաչվում է որպես ստույգ դրդչական հնչերանգային կառույց։

Նման սկզբունքով վերլուծության ենք ենթարկել նաև «Հատակին չքքե՛լ, այստեղ չծխե՛լ, չաղմկե՛լ», «Կաղմակերպե՛լ լեզվի հարցերին նվիրված հաղորդումներ հեռուստատեսությամբ ու ռադիոյով», «Համբուրվե՛լ, այո՛, համբուրվե՛լ, էվվիվա՛, հուռա՛, հուռռա՛» և այլ հրամայական նախադասությունները։ Եթե առաջին օրինակում («Հատակին չքքե՛լ...») ինտոնոգրամի պատկերով դրանցված է դրչականին հատուկ ստույգ պատկերը՝ մեղեդայնության և հատկապես՝ ձայնի ուժգնության

ցուցանիշներով, ապա երկրորդ օրինակում (կազմակերպե՛լ...) այդ պատկերը փոքր ինչ թուլացած է, ըստ երևույթին, այն պատճառով, որ հնչադասույթյունը չափազանց երկար է և ձայնի ուժգնության մակարդակը հաղորդավարներին չի հաջողվում պահպանել մինչև արտաբերման ավարտը։ Բացի այդ, առանցքային (միջուկային) հատվածը կազմակերպե՛լ..., կառույցում հանդես գալով այստեղ նախադասության հենց սկզբնամասում, իր վրա է կրել ձայնաբանական բարձրադուչն ցուցանիշները և այդ առումով էլ նախադասության հնչման ավարտին առանձնակի բարձր ցուցանիշներ՝ մեղեդայնության և ձայնի ուժգնության կորերով չեն դրսևորված։ Սակայն իր բնույթով ու դործառույթյամբ այս նախադասությունը մտնում է դրդչական անդեմ կառույցների մեջ։

Կոչական նախադասությունների ուսումնասիրությունները վկայում են այն, որ սրանց հնչերանգային կառուցվածքը փոքր ինչ տարբերվում է դրդչական հաղորդակցական խմբին պատկանող մյուս ձևերից։ Այսպես՝ նթե հրամայականների դեպքում հնչման առավելագույն էներդիան կամ հնչերանգի բաղադրիչներից մեկի՝ հիմնական տոնի հաճախականության, առավելագույն ցուցանիշները կենտրոնացված են նախադասության միջուկային հատվածում, ապա կոչականների դեպքում հնչունային էներդիան նախադասության գրեթե ամբողջ տևողությամբ մնում է անփոփոխ բարձր մակարդակի վրա։ «Կազմակերպել լեզվի հարցերին ավիրված հաղորդումներ հեռուստատեսությամբ և ռադիոյով» նախադասության մեջ առաջին հաղորդավարի արտասանությամբ հիմնական տոնի հաճախականության մակարդակը առաջին իսկ վանկում հասնում է 230 հերցի, իսկ ուժգնությանը՝ 21(29) միլիմետրի։ Այնուհետև նույն բառի կազմում հաջորդող ձայնավորների հատվածներում նկատելի են ձայնաբանական այդ ցուցանիշների փոքր ինչ նվազում։ Երկրորդ վանկի ա ձայնավորի հատվածում ձայնի տոնը իջնում է մինչև 190 հերցի, իսկ հաջորդ է-ի դեպքում կրկին հասնում 220—230 հերցի։ Ձայնի ուժգնության դիապազոնն այստեղ ներկայացված է համապատասխանորեն՝ 20 և 24 (15,20) մմ ցուցանիշներով։ Շեշտակիր վանկում հաճախականության դիապազոնը հասնում է մինչև 265 հերց հաճախականության մակարդակի, թեպետև ուժգնության ցուցանիշները շարունակում են նվազել՝ 18(11,15) մմ և այլն։ Այստեղ հետաքրքրական է նաև այն, որ տվյալ նախադասության մեջ հնչերանգային կամ ձայնաբանական առավելագույն ցուցանիշները դիտվել են ոչ թե գերադաս անդամի շրջանակներում, որն ի դեպ հանդես է գալիս միաժամանակ որպես հնչերանգի միջուկային միավոր, այլ հաջորդող բառի սահմաններում։ Այսպես օրինակ, լեզվի բառի առաջին (նախաշեշտ) է ձայնավորի հատվածում հիմնական տոնի հաճախականության մակարդակը հասնում է մինչև 390

հերցի, իսկ ձայնի ուժգնությունը մինչև 45 միլիմետրի, տևողության ցուցանիշն այստեղ նույնպես առավելագույնն է՝ 170 մվրկ, այն ժամանակ, երբ նույն նախադասության մյուս հատվածներում այն փոփոխվում է 70—150 մվրկ սահմաններում։ Նախադասության հնչերանգային մյուս ցուցանիշները այնքան կարևոր չեն, և չեն քննվում։ Սակայն պետք է նշել այնուամենայնիվ այն, որ տվյալ նախադասության մեջ ցանկացած հատվածի ձայնաբանական ցուցանիշները էապես չեն տարբերվել մյուսներից, այսինքն, հնչյունային էներգիան դրսևոե հավասար չափով տարածվել է ողջ նախադասության վրա, որն էլ տիպական է դրդչականների համար։ Այսպես օրինակ, նախադասության վերջին բառերի սահմաններում դիտվել են մինչև 250 հերցի մակարդակին հասնող հիմնական տոնի հաճախականության տատանումներ և 16—20 մմ ուժգնության մակարդակ։ Հնչերանգային առանձնահատկությունների տեսակետից սա նշանակում է, որ մեղեդության կորն այստեղ երկարաձիգ է և չի վերաբերում հնչերանգային կառուցվածքի միայն միջուկային բառին, այլ տարածված է ողջ նախադասության վրա։ Ուրեմն այստեղ վճռական և օբյեկտիվ գործոն են հանդիսանում բարձր ցուցանիշները ժամանակի (հնչման տևողության) ողջ առանցքով։ Սրանով էլ, մեր կարծիքով, կոչական նախադասությունները որպես հաղորդակցական ենթատիպ տարբերվում են դրդչական նախադասությունների խմբին պատկանող մյուս ենթատիպերից կամ ենթատեսակներից, ուր ձայնաբանական առավելագույն ցուցանիշները հիմնականում սևեռված են զեղադաս անդամի շրջանակներում։

Դրչական նախադասությունների խմբին պատկանող հաղորդակցական ենթատիպ է ճանաչվում նաև բացականչական նախադասությունը։ Բացականչական անդեմ նախադասությունները ոչ միայն իրենց հաղորդակցական ֆունկցիայով, այլ նաև հուզական-արտահայտչական միջոցներով, այսպես կոչված արտահայտման երկրորդ (սուբյեկտիվ) պլանով արտահայտում են ցանկություն, իղձ, որևէ երևույթի դնահատական, հիացմունք, զարմանք, ողջույն, բարեմաղթություն, հեգնանք և այլն։ Այստեղ է, որ կարելի է դիտել կայուն հնչերանգային կառույցներում որոշակի տատանումներ, պայմանավորված խոսողի կամ հաղորդավարի անհատական վերաբերմունքով։ Այս դեպքում որպես երկրորդական գործոններ են հանդես գալիս նաև հաղորդավարի խառնվածքը և նրա հոգեկան վիճակը խոսելու պահին, սակայն գլխավոր դերը նման կառույցներում այնուամենայնիվ պատկանում է սրանց օբյեկտիվ գործառության ինչպես խոսքում, այնպես էլ լեզվում։

Երկկազմ դրչական հնչերանգային կառույցները փորձառական տվյալներով

Դրչական հնչերանգային կառույցներում, ինչպես նաև հնչերանգային մյուս հաղորդակցական տիպերում նախադասության քերականական կազմությունը վերջին հաշվով էական դեր չի խաղում, ուստիև ձայնագրելով մեծ քանակությամբ փորձառական նյութ, մենք, հասկանալի պատճառով, ոչ հավասար չափով ենք ուսումնասիրել փորձառական եղանակով միակազմ և երկկազմի կառույցները, որովհետև ձայնաբանական առանձնահատկությունների տեսակետից այն պարզապես կրկնություններ են ուստիև մենք երկկազմերից քննել ենք ընդամենը 48 նախադասություն։

Մի քանի խոսք փորձառական եղանակով աշխատանքների վերաբերյալ։ Երկկազմ դրչական կառույցների փորձառական նյութը փոքր ինչ տարբերվում է Մինսկում ստացված միակազմ նախադասությունների գծապատկերներից՝ տարբեր սկզբունքով մշակված առանձին սարքերի կիրառման հետևանքով։ Այսպես, օրինակ, ձայնի ուժգնության ցուցանիշների հաշվարկումը կատարվում է ոչ թե հարաբերական միավորներով՝ միլիմետրերով, այլ դեցիբելներով (դրոյից մինչև քառասուն դեցիբել սանդղակով), որը ընդգրկում է մարդու ձայնի ծավալը մաքսիմալ ցուցանիշներով։ Սակայն ընդհանուր առմամբ երկու սարքերի միջոցով ստացված ինտոնոգրամները բոլոր դեպքերում ձայնաբանական ցուցանիշներով նույնական են և այստեղ փորձառական տվյալների շեղումները բացառված են։

Երկկազմ քերականական կառույցները հրամայականի կամ բացականչականի գործառությամբ չունեն ներքին քերականական ստորաբաժանում, ինչպես միակազմները (հմմտ., օրինակ, անդեմ, անվանական և այլ շարահյուսական կազմություններ)։ Երկկազմները դրչականի գործառության առումով զատվում են միմյանցից միայն հնչերանգային խմբերի ստորաբաժանման շնորհիվ (հրամայական, բացականչական և այլ ենթախմբեր) և նման կառույցների գործառության ընթացքում միակ քերականական չափանիշն է ճանաչվում բայի դիմավոր ձևը։ Սակայն այստեղ է, որ հնչերանգի գործառության առումներով որոշակի հակասություններ են առաջանում նախադասության միջուկային միավորների և նրանց կազմի ենթադրվող գործառության միջև։ Այսպես, հայտնի է, որ հրամայականի առանցքային բառը (միջուկային միավորը) սովորաբար արտահայտված է լինում հրամայական եղանակի բայաձևով և այն էլ անխտիր երկրորդ դեմքով։ Սակայն հրամայական եղանակով բայաձևերը ոչ բոլոր դեպքերում են արտահայտում հրամայականի հնչե-


բանգային գործառույթն։ Այսպես, «Բայց արի դու տես, Թարսը պատահեց» (ՆՁՀ, 161) օրինակում թեև հիշյալ միավորը ներկայացված է նույնիսկ երկու բայաձևերով (արի և տես), և գծապատկերում նույնիսկ կարելի է դիտել ձայնաբանական ցուցանիշների աճ (մեղեդայնության և ձայնի ուժգնության կորերում), սակայն դրդչական հաղորդակցական խմբին այս օրինակը չի կարող պատկանել, որովհետև իր գործառույթյամբ ոչ մի գործողության չի կոչում։ Բանն այն է, որ այս նախադասությունը երկխոսության միավոր չէ և չի ուղղված խոսակցին որևէ գործողության մղելու այլ ավելի շուտ մենախոսական արտահայտություն է, ուստիև չի ընկալվում որպես դրդչական կառույց։

Ուսումնասիրման համար ընտրվել են հետևյալ երկկազմ դրդչական նախադասությունները. «Գնա՛,— ասում է,— բանի լուս լուս է ճնճի, որ մութը բնկնի կգաս», «Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի է...», «Տ՛ո, վեր կաց է, մինչև է, ուրիշները հնձեցին, մեր արտը մնաց» (ՀՔԵ, 151—153), «Հը, դե տեսեմ ինչ է ասում էս անզգամը,— կոկին մեջ է ընկնում տանտիկինը», «Բազրատ, ապա նայիր, նայիր,— ասաց Մուսայելյանը» (ԱՀՍ, 230), «Գնա՛, fարավան, մեղմ հնչյուններդ հյուսելով երկնի լույս ղողանջի հետ» (ԱԻԱՀՄ, 48), «Լռի՛ր, անզգամ,— կատաղած գոռաց դեներալը» (ԱՆԹ, 272), «Լռի՛ր, օ՛ձ,— աղաղակեց Մանեն անդուսպ կատաղությամբ» (ՆԴՊ, 107), «Աղջի՛, ձայնդ fեզ պահիր» (ՍԽՀ, 158), «Դե լավ, ձայնդ կտրի՛ր... (Շիրվ), «Դու մի հավատա՛ ժպտուն աչերին» (ՀՔԵ, 120), «Կմտնեք fաղամ, իմաց կտամ ներսում եղած մեր մարդկանց» (ԱՀՍ, 239), «Լա՛վ, համեցեք գնանք» (ՀՔԵ, 83), «Կազմի՛ր պատմվածք, այս նկարներով» (Հայոց լեզվի դասագիրք), «Հրամա՛ն տուր, տեր մարզպան» (ԴԴ, 47)։ Ուշադրավ է, որ սրանց ճնշող մեծամասնությունը հրամայական տիպի նախադասություններ են, որոնց միջուկային մասը ներկայացված է բայի հրամայական եղանակով։ Միջուկային մաս կա նաև մեր ընտրած օրինակներում, ուր հատկապես բացականչականների կազմում այն հանդես է գալիս կոչականով, առանձին մասնիկներով, ձայնարկություններով և այլն, և, կարծես, լրացնում են դրդչականի այդ հատվածի գործառույթը։ Այնուհանդերձ հրամայական և բացականչական կառույցների համեմատաբար հեշտ մերձեցման հնարավորությունները ևս մեկ անգամ հաստատում են այն միտքը, որ նման ենթատիպերը հնարավոր և անհրաժեշտ էր համախմբել մեկ ընդհանուր՝ դրդչական հնչերանգային հաղորդակցական տարատեսակի կազմում։ Փորձը ցույց տվեց, որ նման երկկազմ կառույցները ներքին ստորաբաժանում չունեն. այն հնարավոր չէ ստույգ բաժանել հրամայական և բացականչական տարատեսակների։ Այստեղ թերևս գերիշխում է հրամայական բայեղանակային ձևը, երբեմն էլ ըղձական և հարկադրական


նշանակները՝ ներկա և անցյալ ժամանակի ձևերով։ Դրդչականի հրամայական և բացականչական ենթատիպերի միջև եղման միտումը դիտվել է նաև միակազմ հնչերանգային կառույցներում։ Այսպես՝ Ո՛չ մի քայլ ետ, դիրքավորվե՛լ։ Համբուրվե՛լ այո՛, համբուրվե՛լ և այլ օրինակները կազմում են միաձույլ դրդչական հնչերանգային կառույցներ։

Վերլուծվող նախադասությունների քննությունը ցույց տվեց, որ հնչերանգային հաղորդակցական օբյեկտիվ տարատեսակի վրա քիչ ազդեցություն են գործում սուբյեկտիվ որոշ տարրերի անկանոն դրսևորումները, որոնք որակ չեն կազմում հնչերանգի բնույթի կազմավորման ընթացքում։ Այնուհետև հնչերանգային որևէ կոնկրետ հաղորդակցական տարատեսակի համար կարևորագույն նշանակություն չունեն ո՛չ նրանց բերականական կառուցվածքը, ո՛չ բառերի դասավորությունը կամ հերթականությունը, ո՛չ էլ վերջին հաշվով, շարակարգային և շարահյուսության այլ օրինաչափությունները։ Այսպես, անկախ այն բանից, թե տվյալ դրդչական կառույցները միակազմ են թե երկկազմ, օժտված են բերականական այս կամ այն միջոցային միավորով, թե՛ ոչ, դրդչականները ցանկացած կոնտեքստում պահպանում են իրենց հատուկ՝ հիպերբոլիկ հնչերանգային կառուցվածքը, որի շնորհիվ էլ հակադրվում են հաղորդակցական մնացած տիպերին և նրանց ձայնաբանական առանձնահատկություններին։ Նույնիսկ հնչերագայի տարբեր ենթատեսակներին (բացականչականներին, հրամայականներին) պատկանելիությունը վճռական դեր չի խաղում դրդչականի ձայնաբանական առանձնահատկությունների դրսևորման համար։

Երկկազմ դրդչական հնչերանգային կառույցների քննությունը մենք կցանկանայինք ավարտել հրամայական կառույցների մի շարքով, ուր դրդչական տիպին հատուկ առանձնահատկություններն արտահայտվում են մերթ մեղեդայնության կորի ձայնաբանական ցուցանիշների, մերթ էլ դինամիկ կորի գծանկարներով։ Այստեղ ձայնաբանական բաղադրիչները փոխարինելով մեկը մյուսին, պահպանում են այդ կառույցներում դրդչական բնորոշ ձայնաբանական պատկերը։ Եթե ասենք, հնչերանգային կորը չի ստանում դրդչականին հատուկ հիպերբոլիկ կառուցվածք հիմնական տոնի տատանման բարձր մակարդակի ցուցանիշներով, ապա այն համալրվում է հնչերանգի մյուս բաղադրիչի՝ ձայնի ուժգնության բավականաչափ հզոր մակարդակով։ Եվ հակառակը՝ եթե դրդչական կառույցներում ուժգնության կորի պատկերը չի ներկայացված համապատասխան բարձր ցուցանիշներով, հատկապես միջուկային հատվածում, կամ՝ հնչման եզրափակիչ մասում, ապա այդ բացը համալրվում է տոնայնության բարձր ցուցանիշներով՝ դրդչական յուրովի հնչերանգային կառուցվածքը պահպանելու նպատակով։ Հաճախ դրդչական կառույցը



Նկանկար 7 «Բադրատ, ապա նայիր, նայի՛ր, [սասց Մուսայելյանը»] երկկազմ նախադասության հրամայական (հորդորական) հնչնրանգային կառույցի գծապատկերը։



Դիագրամ 8 «Աղջի՛կ, չայ բերիք, հաց բերիք... «հրամայական (երկաղմ) հնչերանգային կառույցի ձայնաբանական կորագծերը ինտոգրամների տվյալներով։

ներկայացված է լինում և մեղեդայնության և ձայնի ուժգնության կորերի բարձր ցուցանիշներով. այս դեպքում արդեն ձայնաբանական ցուցանիշների փոխըրացման անհրաժեշտություն չի զգացվում և դրդչական կառույցը հանդես է գալիս խոսքում իր սովորական ձայնաբանական առանձնահատկություններով։ Երկկազմ դրդչականների ձայնաբանական ստույգ ցուցանիշներն ավելի պարզ ներկայացված են հրամայական ենթատիպի կազմում։

Այսպես՝ ընտրած հրամայական կառույցների ցուցակը հետևյալն է. «Լռի՛ր, աղաչում եմ քեզ, մի՛ հիշիր նրա անունը...», (Մուր., 165), «Ների՛ր ինձ սիրելի Արամ...», (Ն. տ.), «Դե լավ, ձայնդ կտրի՛ր...» (Շիրվ., 3, 137), «Հը՛, դե տեսնք ինչ է ասում էս անզգամը...» (Թում., 1, 167), «Գնա՛, քանի լուս լուս է հնձի...» (Ն. տ., 151), «Եվ հավատա՛, որ ես կլինեմ արդար դատավոր» (Շիրվ. 3, 282), «Սարգիս, դո՛ւ գնա և ոչ Քե Սուրենը» (Թում., 164), «Հրաման տո՛ւր, տեր մարզպան» (ԴԴ, 1, 47), «Հրաման տուր, մի խոսք... (Ն. տ.), «Ո՛չ, ո՛չ Աննա, մի ասա այդ բանը, մի ասա...» (Շիրվ., 3, 189), «Իմ կողմից ներողություն խնդրիր (Ռ., 4, 127), «Չհամարձակվե՛ք հարձակվել անզեն մարդկանց վրա» (ԱՀՍ, 230), «Բագրատ, ապա նայիր, նայիր...» (նույն տեղում) (գծանկար 7) և վերջապես, «Լավ, համեցեք, գնանք» (Թում., 1, 83) կառույցը։ Ընտրված օրինակներում դրդչական ձայնաբանական առանձնահատկությունները թեև հանդես են եկել տարբեր ձևով, սակայն վերջին հաշվով հանգում են մեկ ընդհանուր հաղորդակցական տիպի հնչերանգային պատկերի։ Ի դեպ, ձայնաբանական այս տարբերակված առանձնահատկություններն առանձին դրդչական կառույցներում պայմանավորված են նաև նրանց իմաստային գործառույթով։ Այսպես, օրինակ, այն կառույցները, որոնք արտահայտում են առաջարկ, հրավեր (լա՛վ, համեցեք, գնանք), կա՛մ համառ խնդրանք վճռականության երանգով (Ո՛չ, ո՛չ, Աննա, մի՛ ասա այդ բանը) կա՛մ էլ այն օրինակներում, ուր հրամանը ստորոգյալով (միջուկային հատվածով) արտահայտված է շատ մեղմ շեշտով՝ գրեթե խընդրանքի կամ առաջարկի երանգով (Բագրատ, ապա նայիր, նայիր) և այլ՝ նման տիպի հնչադասություններում դրդչականի բնույթը բացահայտվում է մեղեդայնության կորի բացարձակ ցուցանիշներով։ Իսկ այն կառույցները, որոնք դրսևորում են հրաման, կարգադրություն (Գնա՛, քանի լուս լուս է հնձի՛, Դե լավ, ձայնդ կտրի՛ր), պահանջ, դիմում կամ թախանձանք (Աղջի՛, չայ բերեք, հաց բերեք... Հրաման տո՛ւր, տեր մարզպան... Հրաման տուր, մի՛ խոսք...), հանդիմանություն (Չհամարձակվե՛ք հարձակվել անզեն մարդկանց վրա), հեգնանք որոշակի արհամարհանքով (Հը՛, դե տեսնք, ինչ է ասում էս անզգամը) և այլն, դրդչականի ձայնաբանական առանձնահատկությունները դրսևորված են ձայնի ուժ-

դնության կորով կամ մեղեդայնության և ձայնի ուժգնության կորերի միատնական բացարձակ ցուցանիշներով։ Տևողության ցուցանիշներով նման տիպի կառույցներում ինչպես միշտ ստուգվել են սուբյեկտիվ տարբերի դրսևորումները։ Ձայնաբանական ցուցանիշները հնչերանգային այս բաղադրիչներով սովորաբար չափվել են ձայնավորների (շեշտված և անշեշտ) հատվածներում և ըստ այդմ որոշվել, թե արդյոք տեղի են ունեցել առոգանական բնույթի որևէ շեղումներ օբյեկտիվ կառույցներում, թե ոչ։

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ժամանակակից հայերենի դրդչական կառույցների սույն ուսումնասիրությունը հնարավորություն տվեց որոշակի ճշգրտումներ մտցնել հնչերանգային կառույցների ըմբռնման հարցում։ Մենք գտնում ենք, որ հաղորդակցական այդ տիպի հատուկ հնչերանգային կառույցը հայոց լեզվի համար օբյեկտիվ իրողություն է, որը լեզվաբանության մեջ դիտվում է որպես խոսողի անհատական վերաբերմունքի արտահայտություն։ Դրա հետևանքով կարծես չեն դիտվում բոլոր հնարավոր հնչերանգային խմբերը լեզվում որպես միատեսակ օբյեկտիվ հաղորդակցական տիպեր։ Մեր ուսումնասիրության առաջնահերթ խնդիրներից է եղել գտնել և քննության ենթարկել նախ և առաջ այն օբյեկտիվ ձայնաբանական առանձնահատկությունները, որոնք հատուկ են տվյալ՝ դրդչական հնչերանգային հաղորդակցական տիպին, իսկ այնուհետև բնորոշել այն հավելյալ ձայնաբանական ցուցանիշները, որոնք սովորաբար ուղեկցում են նման կառույցները և ակնհայտ են դառնում լսողական վերլուծությամբ։ Ուսումնասիրման ընթացքում հանգամանորեն անդրադարձել ենք այս հարցի շուրջ եղած տեսակներին և հանգել հետևյալ եզրակացություններին։

1. Ինտոնոգրամների տվյալներով կարելի է սահմանել դրդչականին հատուկ և բնորոշ հնչերանգային կորագիծ՝ ձայնաբանական յուրահատուկ ցուցանիշներով, որի համաձայն դրդչականները տարբերակվում են պատմողական ու հարցական կառույցների պատկերից սուր կորով, որը մենք անվանել ենք հիպերբոլիկ կոր (ի տարբերություն պարաբոլիկ կորի, որը հնչման ավարտին որոշակի անկում է կրում)։ Դրդչականների դեպքում հնչերանգային կորագիծը յուր բաղադրիչներով (հատկապես ձայնի ուժգնության և հիմնական տոնի ելևէջներում) մինչև հնչման ավարտը պահպանում է հարաբերականորեն ձայնաբանական բարձր ցուցանիշների մակարդակը։ Այս բնութագիրը հիմնականում առկա է բոլոր դրդչական կառույցներում և մեր կողմից ճանաչվում է որպես օբ-

յեկտիվ ձայնաբանական չափանիշ, որով էլ բնորոշվում է նման հնչերանգային հաղորդակցական տիպի օբյեկտիվ գործառութիյունը լեզվում։ Հուզարտահայտչականութիյան գործոնը, մենք թեև չենք ժխտում, սակայն օբյեկտիվ չափանիշ չենք ճանաչում՝ հնչերանգային հաղորդակցական տիպի սահմանման համար։

2. Չարգացնելով այն թեզը, որ հնչերանգային խմբերի ճանաչման համար անհրաժեշտ գործոն է ոչ թե քերականական կամ ղգացական, այլ հաղորդակցման գործառութիյունը, որի շնորհիվ հաղորդակիցները միմյանց հայտնում են որևէ ինֆորմացիա (պատմողական հնչերանգային տիպ), կա՛մ հաղցում են կատարում՝ ստանալու որևէ տեղեկութիյուններ իրողութիյան վերաբերյալ (հարցական հնչերանգային հաղորդակցական տիպ) և կա՛մ վերջապես, դրդում, ոգևորում են հաղորդակցին կատարելու որևէ գործողութիյուն կամ ակտիվորեն ընկալելու իրողութիյունը (դրդչական հաղորդակցական տիպ), մենք վերջինիս բոլոր հնարավոր (միակազմ և երկկազմ) հնչերանգային կառույցները (նախադասութիյունները կամ հնչադասութիյունները) համախմբել ենք մեկ ընդհանուր՝ դրդչական հնչերանգային հաղորդակցական տիպի կազմում։ Այս խմբում ընդգրկել ենք հրամայականները, բացականչականները, հրահանգներն ու կոչերը, դիտելով դրանք որպես դրդչականի օբյեկտիվ հնչերանգային ենթատեսակներ։ Այսպիսով, հենվելով այս թեզին հայերենի համար պաշտպանում ենք երեք հնչերանգային հաղորդակցական՝ պատմողական հարցական և դրդչական տիպերի տեսակետը։

3. Հնչերանգի օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների խիստ սահմանազատումն ու տարբերակումը հնարավորութիյուն է տալիս հետազոտողին ոչ միայն նորովի ըմբռնել յուրաքանչյուր հնչերանգային տիպի հաղորդակցական գործառութիյունը, այսինքն՝ ընկալել ցանկացած հնչերանգային կառույցի օբյեկտիվ գործառութիյունը լեզվում, անկախ անհատի՝ հաղորդակցի առոգանական առանձնահատկութիյուններից, այլև թույլ է տալիս նորովի ըմբռնել այսպես կոչված սուբյեկտիվ դրսևորումների երևույթը լեզվում և խոսքում։

Անհրաժեշտ է նշել, որ այդ դրսևորումները բնորոշ են ոչ միայն դրդչական տիպի նախադասութիյուններին՝ հուզականութիյան տարրերը թերևս կարելի է դիտել նույնիսկ պատմողական տիպում կասլված ուժեղ ներգործելու գործառութիյանը, որ երբեմն իմացականը մղում է երկրորդ պլան (7, 359)։ Ուրեմն ղգացմունքների և զանազան կարգի հոգեկան սպրումների, այսինքն սուբյեկտիվ գործոնի դրսևորումները հատուկ են ոչ միայն դրդչական, այլ նաև պատմողական ու հարցական հնչերանգային կառույցներին, այսինքն լեզվում գործածվող բոլոր հաղորդակցական տիպերին։ Այնպես որ ղգացմունքային դրսևորումները մեկ հաղորդակ-

ղական տիպում ամենևին էլ որակ չեն կազմում և յուրաքանչյուր տիպի համար որպես օբյեկտիվ չափանիշ այնուամենայնիվ մնում է իր հաղորդակցական գործառութիւնը։ Այս ամենը հավասար չափով վերաբերում է նաև դրդչական հնչերանգային հաղորդակցական խմբին կամ տեսակին։

4. Փորձառական տվյալներով դրդչական հնչերանգային կառույցները գծապատկերներում ներկայացված են ուրույն ձայնաբանական կառուցվածքով։ Դրդչական նախադասությունների ձայնաբանական հատկությունների ինքնատիպությունը կայանում է նրանում, որ հնչերանգի բաղադրիչներից հիմնական տոնի տատանման հաճախականության կամ մեղեդայնության, նաև ձայնի ուժգնության (ինտենսիվության) կորերը հնչման ավարտին առանձնապես մեծ անկում չեն ապրում։ Այստեղ ձայնաբանական ցուցանիշների տարբերությունը հնչադասության սկզբի և եղրափակիչ հատվածների համեմատությամբ աննշան է։ Մինչդեռ հաղորդակցական մյուս տիպերին պատկանող կառույցներում դիտվում են ձայնաբանական ցուցանիշների խիստ տատանումներ։ Պատմողականի դեպքում հնչերանգային կորի անկումը սովորաբար դիտվում է հնչադասության ավարտում, որով էլ պատմողական նախադասությունների տոնը սահմանվում է որպես բարձրացող-իջնող։ Նույնը վերաբերում է նաև հարցական հաղորդակցական խմբին պատկանող կառույցներին՝ մի տարբերությամբ, որ այս դեպքում հնչերանգային ցուցանիշների անկումը երկու՝ վերը նշված բաղադրիչների կորերով դիտվում է ոչ թե պարտադիր հնչման ավարտի հատվածում, ինչպես պատմողական բնույթի կառույցներում, այլ հարցում կրող առանցքային հատվածից անմիջապես հետո։ Սրանք են դրդչական, պատմողական և հարցական հնչերանգային կառույցների ձայնաբանական առանձնահատկությունները, որը մեզ հիմք է տվել պատմողական և հարցական հնչերանգային կառույցներին որպես օբյեկտիվ չափանիշ վերագրել պարաբոլիկ (բարձրացող-իջնող) բնույթի ձայնաբանական կորեր, իսկ դրդչականին՝ հիպերբոլիկ (բարձրացող) հնչերանգային կոր։

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀՍ — Ա. Հովսեփյան, Սիրտը, Երևան, 1957։
ԱՆՔ — Սովետահայ գրականության անթոլոգիա, Երևան 1950։
ՍԻԱՀՄ — Ա. Խաճակյան, Աբու-Լալա-Մահարի, Երևան, 1946։
ՐՀՍՋ — Բաղիշ Հովսեփյան, Սերմնացանները չվերադարձան, Երևան, 1962։
ԴԴՎ — Դ. Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1951։
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 1—6, Երևան, 1955—1957։
ԲՈՀ — Ք. Թափալճյան, Ոսկե հովիտ, Երևան, 1955։

Թում. — Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 1—5, Երևան, 1940—1951։
Ալ. Ա է — Ա. Խաչատրյան, Արձակ էջեր, Երևան, 1946։
Լեո — Լեո, Հայոց պատմություն, 2, Երևան, 1946։
ՀԹԵ — Հ. Թումանյան, Երկեր։
Մուր. — Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 1—3, Երևան, 1951—1953
ՆԴՊ — Նար-Դոս, Պայքար, Երևան, 1957։
ՆԴ — Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 1—3, Երևան, 1955։
ՆՋՀ — Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1947։
Շիրվ. — Ա. Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, Հ. 1—6, Երևան, 1950—1951։
ՍԱԼ — Ս. Այվազյան, Լեռնցիներ, Երևան, 1955։
ՍՋ — Ս. Զորյան, Երկերի ժողովածու, 1940։
ՍԽՀ — Ս. Խանզադյան, Հողը, Երևան, 1954։
Ք — Ա. Շիրվանզադե, Քաոս, Երևան, 1947։
Ր — Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 1—7, Երևան, 1955—1956։
ՀՔՄՏՋ — Հր. Քոչար, Մեծ տան զավակները, Երևան,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Մաեուկ Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երևան, 1965։
2 Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր*, Երևան, 1962։
2 ա Ս. Գ. Աբրահամյան, *Ժամանակակից հայերենի քերականություն*, Երևան, 1975
2 բ *Լեզվի և ոճի հարցեր*, հ. 1, Երևան, 1960՝։
3 Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաֆելյան, Վ. Ա. Քոսյան, *Հայոց լեզու, 2-րդ մաս (Բ)*, Երևան, 1975։
4 Վարուժ Առաֆելյան, *Հայերենի շարահյուսություն*, հ. Ա, Երևան, 1958։
5 *Լեզվի և ոճի հարցեր*, հ. 1, Երևան, 1960։
6 Գուրգեն Սևակ, *Հայոց լեզվի շարահյուսություն*, Երևան, 1976։
7 Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմքեր*, Երևան, 1974։
8 Վ. Ն. Հայրապետյան, *Դրդչական նախադասությունների հնչերանգային առանձնահատկությունները ժամանակակից հայերենում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 5, 1978)*։
9 *Փիլիսոփայական բառարան*, Երևան, 1975։
10 Грамматика русского языка, т. II, ч. 1, М., 1954.
11 Грамматика современного русского литературного языка, М., 1970.
12 *Г. В. Колшанский*, Соотношение субъективных и объективных факторов в языке, М., 1975.
13 Материалы коллоквиума по экспериментальной фонетике и психологии речи, М., 1966.
14 Общее языкознание, М., 1970.
15 *М. И. Матусевич*, Современный русский язык. Фонетика, М., 1976.
16 *Е. А. Брызгунова*, Практическая фонетика и интонация русского языка, М., 1963.
17 *А. А. Реформатский*, Фонологические этюды, М., 1975.

В. В. АРАКЕЛЯН

ОСОБЕННОСТИ СИНТАКСИЧЕСКОЙ СТРУКТУРЫ ПОЭМЫ КАЛИДАСЫ «ОБЛАКО-ВЕСТНИК»

ГЛАВА I

КАЛИДАСА И ЕГО ПОЭМА «ОБЛАКО-ВЕСТНИК»

Объектом нашего исследования является поэма великого древнеиндийского поэта и драматурга IV—V вв. Калидасы. «Meghadūta» («Мегхадута»— «Облако-вестник»).

О личности и биографии Калидасы нам в сущности ничего не известно. Многочисленные рассказы о его жизни относятся к разряду легенд.

Кроме поэмы «Мегхадута» Калидасе приписываются еще одна лирическая поэма-„Ṛtusaṃhāra („Времена года"), две эпические поэмы - Kumārasaṃbhava („Рождение бога войны„) и Raghuvaṃśa (Род Рагху) и три пьесы - Mālavikāgnimitra („Малявика и Агнимитра"), Vikramorvaśīya („Мужеством завоеванная Урваши„) и Abhijñāna Śākuntala („Узнанная по кольцу Шакунтала"), принадлежность которых Калидасе не вызывает сомнений.

Поэма «Мегхадута»—вершина поэтического творчества Калидасы. Профессор Г. С. Джхала называет поэму «жемчужиной лирической поэзии» [61, с. 49]. Гете посвятил «Мегхадуте» восторженное двустишие и тепло отозвался об английском переводе [35, с. 216]. Из всех санскритских поэм подражания ей как на санскрите, так и на других индийских языках наиболее многочисленны [67, с. 4]. В средневековье «Мегхадута» породила целый жанр «поэм-посланий» (dūta—kāvya).

Поэму толковали приблизительно 40 комментаторов, среди которых наиболее известны Валлабхадева (X в.), Стхирадева (приблизительно XII в.), Дакшинаварта (XIII в.) и Маллинатха (XV в.).

Критическое издание профессора Сушила Кумара Де [62], которым мы пользовались в ходе нашей работы, во многом ориентируется на комментарий Валлабхадевы. Де проделал скрупулезную работу по установлению вероятностно наиболее близкого оригиналу варианта. Он следовал принципу: найти не априори лучший вариант среди разночтений, а апостериори наиболее достоверный. Критический текст Де определяет сопоставительным изучением и оценкой существующих вариантов.

Количество строф Де согласует с Валлабхадевой и Стрихадевой (111), считая наиболее вероятным, что оригинальный текст Калидасы содержал не более 110 или 111строф.

Поэма Калидасы много переводилась. В 1893 г. в Коломбо был издан найденный Уильямом Гунатилаком дословный сингальский пересказ «Мегхадуты» явно позднего происхождения. Известен также тибетский перевод «Мегхадуты» в «Танджуре», изданный и переведенный на немецкий Германом Беком в 1907 г. [57]. Бек датирует тибетский перевод XIII-м веком.

Поэма «Мегхадута» впервые была переведена на английский язык и издана вместе с оригиналом известным индологом Г. Г. Уильсоном [63]. Впоследствии «Мегхадута» многократно переводилась как на английский, так и на немецкий, французский, итальянский и другие языки.

Первый перевод «Мегхадуты» с санскрита на русский язык опубликовал П. Г. Риттер в 1914 г. [20, с. 257—275]. В 1974 г. опубликован перевод С. Липкина (с подстрочника Б. Захарьина) вместе с переводом других произведений Калидасы [21, с. 301—332].

Нами поэма «Мегхадута» переведена с санскрита на армянский язык [22, с. 32—44].

Творчество Калидасы, и, в частности «Мегхадута», были объектом изучения многих исследователей.

Наряду с общими работами по истории санскритской литературы, где Калидасе и его поэме посвящены отдельные страницы, предисловиями и примечаниями к переводам, о Калидасе и его творчестве написаны отдельные труды индийских и европейских индологов [61, 65, 67, 69, 70]. В этих работах литературоведческому анализу подвергается также «Мегхадута».

К Калидасе и его творчеству часто обращались и русские, и советские индологи. До революции о Калидасе писал в частности

индолог П. Г. Риттер [35]. Из общих работ, написанных в советское время, примечательны книги И. Д. Серебрякова о древнеиндийской литературе, где отдельные главы посвящены Калидасе [38, с. 84—113; 39, с. 124—144]. Калидасе посвящены специальные труды советских индологов [23, 28]. Заслуживает внимания недавно изданная книга известного советского санскритолога В. Г. Эрмана [51], где обобщен накопленный богатый материал о Калидасе. В книге одновременно с анализом содержания и литературных достоинств произведений Калидасы дается прозаический перевод многих отрывков, в том числе и более половины строф «Мегхадуты»; этим переводом мы пользовались в ходе работы над буквальным переводом поэмы.

«Мегхадуте» посвящены отдельные статьи. Интересный и богатый текстологический материал приведен в диссертации Г. Бека [53], являющейся приложением к изданию и переводу на немецкий тем же автором тибетского перевода «Мегхадуты».

Литературоведческая работа индийского критика Рангачарьи [68] и книга В. К. Паранджпе о «Мегхадуте» [66], к сожалению, остались нам недоступны.

Исследователи касались также вопроса творческого мастерства поэта. Так, например, в обширном труде индийского ученого Сабниса отдельная глава посвящена разнообразным поэтическим фигурам, употребляемым в произведениях Калидасы [71, с. 262— 288]. Труд индийского ученого Пиллаи К. Челаппана [55] посвящен сравнениям Калидасы. Некоторым особенностям творчества Калидасы и его языка посвящен сборник, опубликованный в Тирупатхи в 1962 г. [64]. Как видим, поэма Калидасы привлекала исследователей в нашей стране и за рубежом в основном в литературоведческом и текстологическом плане, в синтаксическом она пока не изучалась.

Героем своей поэмы Калидаса избрал якшу (так назывались мифические полубоги, служащие богу богатства Кубере).

Сюжет поэмы прост. Кубера ссылает провинившегося якшу нести свое наказание в кущах горы Рамагири. Якша уже несколько месяцев находится вдали от любимой жены. Увидев облако, окутавшее вершину горы Рамагири, полубог, потерявший разум от любви, просит облако лететь в Алаку, столицу Куберы, к жене якши, сообщить весть о муже и придать этим силы страдающий в разлуке женщине. Для якши облако как бы живое существо, ве-

ликодушное, наделенное высшей духовной сущностью, которое способно понять его горе и посочувствовать. Вся поэма, за исключением первых пяти строф—это речь якши, обращенная к облаку, где он описывает дорогу, которую должно пройти облако до далекой мифической Алаки, где якшу ждет осиротевший дом. И томимый тоской любви полубог своим воспаленным воображением создает неповторимые образы природы Центральной и Северной Индии.

Описания природы становятся средством раскрытия душевного состояния героя поэмы—якши. Речь якши, обращенная к облаку, в сущности, трагический монолог любящего и насильно разлученного с любимым существом человека, который изливает свое горе, тоску, любовь, надежду и отчаяние, но остается без ответа. Облако до конца остается на вершине Рамагири, молчаливое и отчужденное.

Поэма Калидасы относится к жанру «малой поэмы» (khaṇḍa—kāvya) и сравнительно невелика по объему. Она содержит по критическому изданию 111 строф.

ГЛАВА II

СИНТАКСИЧЕСКАЯ СТРУКТУРА СТРОФЫ В ПОЭМЕ КАЛИДАСЫ «МЕГХАДУТА» И ЕЕ СТИЛИСТИКО-СЕМАНТИЧЕСКИЕ ФУНКЦИИ

1. ПРОБЛЕМЫ ИЗУЧЕНИЯ СИНТАКСИСА СТРОФЫ. О МЕТОДАХ, ПРИМЕНЯЕМЫХ В ИССЛЕДОВАНИИ

Синтаксическая стилистика—стремительно развивающийся в последнее время раздел лингвостилистики, изучающей социально-функциональные и ситуативно-индивидуальные варианты. В число индивидуальных вариантов входит и литературно-художественное произведение в прозе или в стихах.

Изучение синтаксиса стихотворного текста может вестись по двум основным направлениям: 1) изучение синтаксиса строфы (в строфическом произведении); 2) изучение синтаксиса целого текста.

Изучение синтаксиса строфы вообще охватывает проблемы связи ритмических и синтаксических явлений, которым много

внимания уделялось в 10—20-ые годы нашего столетия [3, 5, 18, 43, 45, 50].

Хотя работы теоретиков в основном посвящены особенностям русского стиха, некоторые теоретические положения можно распространить на стихотворную речь вообще. Одним из основных положений является мысль о том, что «стих складывается не просто по законам синтаксиса, а по законам ритмического синтаксиса, т. е. такого, в котором обычные синтаксические законы усложнены ритмическими требованиями» [5]. Исследователи справедливо отмечают также, что «синтаксис стихотворного языка всегда остается единым, это синтаксис sui generis, и стих не деформирует уже готовую прозаическую речь, а формирует речь особым образом и не только ритмически, но и синтаксически» [32, с. 5].

Среди проблем, так или иначе связанных с изучением синтаксиса строфы, есть также следующие:

а) разработка понятия стихового ряда или строки как основной стиховой единицы. С этим связан вопрос совпадения/несовпадения поэтической строки и регулярного синтаксического отрезка;

б) влияние строфической/астрофической формы поэтического произведения, стихотворного размера и типа рифм, а также типа стиха (напевный/говорной) на синтаксическую структуру;

в) явления переноса (enjambement), как несовпадения ритмических и синтаксических единиц;

г) влияние ритма и интонации на порядок слов в стихотворном тексте;

д) наконец, вопрос об основной синтаксической единице, релевантной для стихотворной речи. Вслед за Г. Н. Акимовой [1, с. 98...], мы принимаем за основную синтаксическую единицу предложение.

